

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

**NEAR EAST**

**IV**

*Sponsored by*  
**SAMVEL STEPANYAN – USA**

**YEREVAN – 2007**




The book is recommended for publication by the Scientific Council of  
the Institute of Oriental Studies, National Academy of Sciences,  
Republic of Armenia

## ***EDITORIAL BOARD***

G. Gevorgyan (Chairman), E. Grekyan, L. Harutunyan,  
G. Iskandaryan, A. Pashayan (Responsible Secretary),  
V. Ter-Matevosyan

The book includes articles presented at the 28<sup>th</sup> Scientific  
Conference of Young Orientalists of Armenia  
(14-15 June, 2007)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

IV

Մեկնաստորյամբ  
ՍԱՄԿԵԼ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ - ԱՄՆ

A 92513

ԵՐԵՎԱՆ - 2007



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգյան Գ. (մախագահ), Գրեկյան Ն.,  
Խականդարյան Գ., Հարությունյան Լ.,  
Տեր-Մաթևոսյան Վ.,

Փաշայան Ա. (պատասխանատու քարտուղար)  
Համակարգչային շարժանքը՝ Ն.Վ. Կարախանյանի

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտու-  
տում կազմակերպված երիտասարդ արևելագետների հանրապետա-  
կան XXVIII գիտական մտաշրջանի նյութերը (2007թ. հունիսի 14-15):

Ժողովածուում բնագիտական առումով ներառված են հոդվածներ, ո-  
րոնք ըննության են առնում Սեմավոր և Միջին Արևելքի երկրների ու ժո-  
ղովուրդների պատմության, քաղաքականության, միջազգային հարաբե-  
րությունների, ինչպես նաև լեզվաբանության և գրականության մի շարք  
հիմնահարցեր:

Նախատեսվում է արևելագետների, հայագետների, բուհերի ու  
սամոլների և ընթերցող լայն շրջանակների համար:

---

Ստորագրված է տպագրության՝ 08.06.2007թ.:

Չափսը՝ 60X84 <sup>1</sup>/<sub>32</sub>: Թուղթ օֆսեթ №1:

Տառատեսակը՝ «Times Armenian»:

Տպագրությունը՝ օֆսեթ: 9.5 տպ. մանուկ:

«ԳԵՎՈՐԳ - ԻՐԱՅՐ» ՍՊԸ

**ԼՈՒՍԱԿՆ**

Հրատարակչություն  
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Ֆեռ.՝ 52.79.74, 52.79.47  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ՀՀ ԳԱՍ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների  
Ազգային Ակադեմիա  
ԱԻ – ՀՀ ԳԱՍ Արևելագիտության ինստիտուտ  
ԳԻ – ՀՀ ԳԱՍ Գրականության ինստիտուտ  
ՀՅԹԻ – Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ  
ԵՊՀ – Երևանի պետական համալսարան  
ՌՀԱՀ – Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան  
ՀՀՀ – Հայաստանի Հանրային Հեռուստատեսություն  
ՀՀՌ – Հայաստանի Հանրային Ռադիո  
ԵԳՀ – Երևանի «Գլաճոթ» կառավարման համալսարան  
ՔՀԻ – Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ  
ՀՀ ԳԱՍ ԳԿՄԿ – ՀՀ ԳԱՍ Գիտակերպական միջազգային կենտրոն

## ABBREVIATIONS

- NAS RA – National Academy of Sciences, Republic of Armenia  
IOS – Institute of Oriental Studies, NAS RA  
IL – Institute of Literature, NAS RA  
MIAG – Museum-Institute of Armenian Genocide  
YSU – Yerevan State University  
RASU – Russian-Armenian Slavonic University  
PTCA – Public Television Company of Armenia  
PRA – Public Radio of Armenia  
IPR – Institute of Political Research  
YGU – Yerevan «Gladzor» Management University  
NAS RA ISEC – International Scientific-Educational Center, NAS RA

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<b>Արթանայան Մարիաննա (ԵՊՀ)</b>	
Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունը Կասպից ծովի տարածաշրջանում .....	12
<b>Անուժյան Մելինե (ՀՀՈ)</b>	
Հայոց բնաջնջումը Տրապիզոնի մահանգում տեղահանության ու կոտորածների դատական վավերագրերի համաձայն .....	17
<b>Արշակյան Գրիգոր (ԱԻ)</b>	
«Երկնագույն հոսք» գործարքը որպես ռուս-թուրքական մերձեցման նախադրյալ .....	23
<b>Գրիգորյան Սոնա (ԱԻ)</b>	
Ակադեմիկոս Գ. Ղափանցյանը և Վանի բազմադրության դիցարանի դիտարկումները .....	29
<b>Գևորգյան Գոռ (ԱԻ)</b>	
2007թ. սահմանադրական բարեփոխումները Եզիպտոսում, ժողովրդավարություն թե՛ պատերազմ .....	36
<b>Ջաքարյան Տիգրան (ՀՅԹԻ)</b>	
ԱՄՆ-ի ներառվող ներգրավումը առաջին աշխարհամարտում 1915-1916 թթ. և Հայոց ցեղասպանությունը .....	42
<b>Իսկանդարյան Գոհար (ԱԻ)</b>	
Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի ԱԻ-ի (2006-2007թթ.) ընդունած բանաձևերի շուրջ .....	46
<b>Կարապետյան Արշակ (ԵՊՀ)</b>	
Ջնմաբանական շարժումը և Թուրքիայի Հանրապետության կայացման փուլերը .....	52
<b>Կմբազյան Դավիթ (ԱԻ)</b>	
Արտաքին քաղաքականության համաձայնեցման և համադաշնության ստեղծման հարցերը անդրկովկասյան հանրապետությունների 1920 թ. խորհրդաժողովում ու Ադրբեջանի դիրքորոշումը .....	56
<b>Հակոբյան Արսեն (ԱԻ)</b>	
«Շիրվան» երկրամվան ծագման հարցի շուրջ .....	61
<b>Հարությունյան Աղավնի (ԱԻ)</b>	
ԱՄՆ-ի դիրքորոշումը 1975 թ. լիբանանյան քաղաքացիական պատերազմի նկատմամբ նրա սկզբնական փուլում .....	66



<b>Հովհաննիսյան Մերի (ԵԳՀ)</b>	
Թողոր Հերց-Արդու Համիդ հարաբերությունների հարցի շուրջ .....	73
<b>Հովսեփյան Լևոն (ԹՀԻ)</b>	
Թուրք-աղբյուրեղնական ռազմական համագործակցությունն Աղբյուրեղնի զինված ուժերի քարեփոխումների համատեղությամբ .....	77
<b>Միքայելյան Գոհար (ԵՊՀ)</b>	
Մշակութային հեղափոխությունն Իրանում 1980-1987 թթ. ....	82
<b>Նահապետյան Հայկարամ (ՀՀՀ)</b>	
Միացյալ Նահանգների թուրքական եւ աղբյուրեղնական կազմակերպությունների գործունեությունը .....	87
<b>Նավասարդյան Նազելի (ՄԻ)</b>	
Իրանում երկաթուղային շինարարության հարցի շուրջ (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ) .....	92
<b>Չավիկյան Պետրոս (ԵՊՀ)</b>	
Հանրապետության մախազահիլ թուրքական սահմանադրական համակարգում .....	97
<b>Պետրոսյան Ամնա (ՀՀ ԳԱԱ ԳԿԵՄԿ)</b>	
Աղբյուրեղնի զինված ուժերի սպառազինության և արդիականացման հարցի շուրջ .....	103
<b>Պողոսյան Ամնա (ՄԻ)</b>	
Նապ-Էդ-Նին շահի այլը Գերմանիա 1873 թ. ....	108
<b>Սաֆարյան Մնացական (ՄԻ)</b>	
Հարավային Կովկասի նկատմամբ Չինաստանի արտաքին քաղաքական ռազմավարության ուսումնասիրության արդիականության մասին .....	111
<b>Ստեփանյան Լուսինե (ՄԻ)</b>	
Դատաիրավական քարեփոխումների ազդեցությունն իրանական հասարակության վրա XX դարի առաջին կեսին .....	115
<b>Վարդերեսյան Արևն (ՄԻ)</b>	
Իրան-Աղբյուրեղն հարաբերությունների պատմությունից Արուստահ Էլիթիի մախազահության շրջանում .....	121
<b>Փաշայան Արաքս (ՄԻ)</b>	
Մատղան Արաբիան պահպանողականության և արդիականության միջև .....	126

# ԼԵԶԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Խաչատրյան Էմմա (Ռ-ՀԱՀ)

Ի՛րաքի շրջանակները դասական  
արարներնի լեզվաբանական ազանդություն ..... 132

## Հարությունյան Լիլիթ (ԵՊՀ)

Նախադասության շարահյուսական բաղադրիչների  
ստորադասական հարադրումը ըստ զերադաս  
բաղադրիչի al-İmil-ի ազդեցության ..... 135

## Սափրատյան Լիլիթ (ԵՊՀ)

«Կատուցելով տունը երկնքի մեջ». վտարանդիության  
խնդիրը Գուլի Թարադիի արձակում ..... 139

## Մինոնյան Մարթա (ԵՊՀ)

Անժաղ Շամլուի պոեզիան ..... 144

## Փաշայան Անի (ԳԴ)

Արևելյին Աղասի Այվազյանի ստեղծագործություններում ... 149

# C O N T E N T S

## HISTORY

- Marianna Abrahamyan (YSU)**  
The policy of the Islamic Republic of Iran in the  
Caspian region ..... 15
- Meline Anumyan (PRA)**  
Extermination of Armenians in Trabzon province  
according to deportation and trial documents ..... 20
- Grigor Arshakyan (IOS)**  
"The Blue Stream" deal as a prerequisite for  
warming Russian-Turkish relations ..... 27
- Sona Grigoryan (IOS)**  
Academician Grigor Kapantsyan and the observations  
of the Pantheon of the kingdom of Van ..... 33
- Gor Gevorgyan (IOS)**  
The constitutional Reforms in Egypt in 2007:  
Democracy or illusion? ..... 39
- Tigran Zakaryan (MIAG)**  
The US possible involvement into the First World War  
in 1915-1916 and the Armenian Genocide ..... 44
- Gohar Iskandaryan (IOS)**  
On the resolutions of UN Security Council  
on Iran (2006-2007) ..... 50
- Arshak Karapetyan (YSU)**  
The Kemalist movement and the formation phases  
of the Republic of Turkey ..... 54
- David Knyazyan (IOS)**  
The issues of coordination of foreign policy and creation  
of a confederation in the 1920 conference of  
transcaucasian republics and the position of Azerbaijan ..... 59
- Arsen Hakobyan (IOS)**  
On the origin of the countryname «Shirvan» ..... 63
- Aghavni Harutyunian (IOS)**  
The USA's position on the Lebanese 1975  
Civil War at its first stage ..... 70

<b>Mery Hovhannisyan (YGU)</b>	
On the relations of Teodor Herzl and Abdul Hamid .....	75
<b>Levon Hovsepian (IPR)</b>	
Azerbaijani-Turkish military cooperation in the context of the reforms of the Azerbaijan's armed forces .....	80
<b>Gohar Mikaelyan (YSU)</b>	
Cultural Revolution in Iran between 1980 and 1987 .....	85
<b>Haykaram Nabapetyan (PTCA)</b>	
Activities of the US's Turkish and Azerbaijani Organizations .....	90
<b>Nazely Navasardyan (IOS)</b>	
On the issue of the railway construction in Iran (late 19th and early 20th Century) .....	95
<b>Petros Chavikyan (YSU)</b>	
The president of the republic in the Turkish Constitutional System .....	100
<b>Anna Petrosyan (NAS RA ISEC)</b>	
The problem of armaments and the modernization of the Azerbaijan's armed forces .....	106
<b>Anna Poghosyan (IOS)</b>	
The visit of Nasr-Ed-Din Shah to Germany in 1873 .....	109
<b>Mnatsakan Safaryan (IOS)</b>	
The importance of research on China's foreign policy strategy towards the South Caucasus .....	114
<b>Lusine Stepanyan (IOS)</b>	
The influence of judicial reforms on the Iranian society in the first half of the 20th Century .....	119
<b>Aren Varderesyan (IOS)</b>	
From the history of Iran-Azerbaijan relations during the presidency of Abulfaz Elchibei .....	124
<b>Araks Pashayan (IOS)</b>	
Saudi Arabia between conservatism and modernity .....	129

## LINGUISTICS AND LITERARY CRITICISM

<b>Emma Khacshatryan (RASU)</b> The frames of I'rab in the linguistic tradition of classic Arabic language .....	133
<b>Lilit Harutyunyan (YSU)</b> The subordinate combination of syntactical constituents of the sentence according the influence of the preferable constituents of a <i>'amil</i> .....	137
<b>Lilit Safrastyan (YSU)</b> "Building a mansion in the sky": the problem of exile in the prose of Goli Taraggi .....	142
<b>Marta Simonyan (YSU)</b> The poetry of Ahmad Shamlu .....	147
<b>Ani Pashayan (IL)</b> The easterner in the writings of Aghasi Ayvazyan .....	151

ԱՐԲԱՆԱՅԻՆ ՄԱՐԻՆՆԱ  
(ԵՊՀ)

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ  
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՈՒՄ

Խորհրդային Միության փլուզումից հետո արմատապես փոխվեց կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքը: Կասպից ծովի ավազանի նոր հանրապետությունների ձևավորումը զգալիորեն մեծացրեց այդ տարածաշրջանի նշանակությունը: Միաժամանակ նավթային խոշոր ընկերությունների և օտարերկրյա ներդրողների առջև յանցվեցին կասպյան ավազանի «ոյարպասները»: Ոչ տարածաշրջանային ուժերը սկսեցին անտուն հետաքրքրություն դրսևորել էներգա-կիրներով հարուստ այդ շրջանի վրա, որը կարող էր դառնալ Պարսից ծոցի ածխաջրածնային պաշարների լուրջ մրցակիցը<sup>1</sup>: Բնական է, որ այդ ամենի կապակցությամբ Իրանի Իսլամական Հանրապետություն (ԻԻՀ) իր առանձնահատուկ դիրքով, համաշխարհային նշանակություն ունեցող կոնոմիկացիաներով, վիթխարի տարածքով և իր քաղաքական կշռով տարածաշրջանում ձեռք էր բերում առաջնակարգ նշանակություն<sup>2</sup>: Ավելին, ԽՍՀՄ փլուզման հետևանքով նա Եվրոպայի և Ասիայի միջև ստանձնեց մի յուրատեսակ կապող օղակի և կամրջի դեր<sup>3</sup>:

ԻԻՀ-ը ակտիվորեն ներգրավվեց Կասպից ծովի ավազանի շուրջը սկսված միջազգային «ֆսադի» մեջ՝ փորձելով չափազրգիտ պետություններին թելադրել իր պայմանները:

Անկասկած, ԻԻՀ կասպյան քաղաքականության մրբերանգների մեջ խորամուխ լինելու համար առաջին հերթին կարևոր է պարզել նրա դիրքորոշումը Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցում: Այդ հարցի կապակցությամբ իրանական կառավարության ընդհանուր դիրքորոշումը հետևյալն էր. «Մենք պետք է ստեղծենք այնպիսի պայմաններ, որ ապագա սերունդները կարողանան օգտվել Կասպից ծովի պաշարներից իրենց տնտեսությունը զարգացնելու համար»<sup>4</sup>: Իսկ ավելի կոնկրետ թե՛հրանց պահանջում էր ճշտել ու կանոնակարգել ծովի հան-

քային ռեսուրսների օգտագործման կարգը: Հինգ քնդուներով 1921 և 1940թթ. խորհրդա-իրանական պայմանագրերը, Իրանը լիովին պաշտպանում էր Կասպից ծովի միասնական օգտագործման սկզբունքը բոլոր ավանները պետությունների կողմից<sup>5</sup>:

Դեռևս 1992թ. Իրանն առաջ քաշեց մերձկասպյան երկրների համագործակցության կազմակերպություն (ԷԿՕ) ստեղծելու առաջարկը: Թեև Իրանը գտնում էր, որ մինչև մերձկասպյան պետությունների դիրքորոշումների համաձայնեցումը և Կասպից ծովի կարգավիճակի շուրջ նոր պայմանագրի կնքումը մերձկասպյան պետությունները պետք է ձեռնպահ մնան ծովի ռեսուրսների շահագործմանն ուղղված միակողմանի գործողություններ իրականացնելուց:

Հարկ է նշել, որ ի սկզբանե ԻԻՀ և Ռուսաստանի Դաշնության շահերը համընկնում էին Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցում: Թեև հանդես գալով մեծան դիրքորոշմամբ, Թեև Իրանն, անկասկած, ակնկալում էր Ռուսաստանի աջակցությունն այլ խնդիրների հարցում<sup>6</sup>: Սակայն նրանց դիրքորոշումներում ի հայտ եկան տարածայնություններ այն րանից հետո, երբ Ռուսաստանը պայմանագրեր կնքեց Կազախստանի և Ադրբեջանի հետ, ինչը դուր չէր գալիս Իրանին<sup>7</sup>: Համաձայն այդ պայմանագրերի, Իսլամական Հանրապետությանը քաժին էր հասնում կասպյան հարավային ավանները գտնու միայն տասներեք տոկոսը<sup>8</sup>, այնինչ պաշտոնական Թեև Իրանը հավակնում էր այդ եկամտաբեր տարածքի քսան տոկոսին:

Իրանը սկզբում հանդես էր գալիս կոնցեսիոնմի, այսինքն մերձկասպյան բոլոր պետությունների կողմից ծովի և նրա պաշարների քնդհանուր օգտագործման օգտին<sup>9</sup>: Սակայն կոնցեսիոնմի սկզբունքներն անընդունելի էին մերձկասպյան մյուս պետությունների համար: Ուստի Իրանը մշակեց մեկ այլ տարբերակ: Նա պատրաստ էր քնդունել Կասպից ծովի ազգային հատվածների բաժանման տարբերակը, սակայն պայմանով, որ քաժանումը կատարվի հավասարության սկզբունքով, յուրաքանչյուր ավանները պետությանը տրամադրելով ծովի քսան տոկոսը<sup>10</sup>: Այդ ձևով Իրանը փորձում էր բռնակցել ադրբեջանական Ցավթով հարուստ հատվածի մի մասը<sup>11</sup>: Սակայն այս տարբերակը նույնպես ղժվար իրագործելի էր: Ինչպես ցույց տվեց մերձկասպյան հինգ պետությունների՝ 2002թ. ապրիլյան առաջին զագաթաժողովը, ոչ Իրանը և ոչ էլ մերձկասպյան մյուս պետությունները փոխզիջման չէին հասել: Իրանի այդ դիրքորոշման հետևանքով կողմերը միասնական փաստաթուղթ այդպես էլ չստորագրեցին:

Ռուսաստանն ամենևին էլ չէր ձգտում քացահայտ փչացնել հարաբերությունները Թեև Իրանի հետ Կասպյան խնդրի պատճառով: Այդ է վկայում 2001թ. մարտի 12-ին Իրանի նախագահի՝ Մեհդիվա այջը, որի ժամանակ ստորագրվեց համատեղ հայտարարություն Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ<sup>12</sup>: Փաստաթղթի համաձայն, մինչ Կասպից

ծովի իրավական կարգավիճակի սահմանումը կողմերը պաշտոնապես չեն ճանաչում որևէ գործողություն ծովում, իսկ բոլոր նոր որոշումները և պայմանագրերը ուժ կունենան միայն ավաններ Կենտրոնականի ընդհանուր համաձայնության դեպքում:

Ընդհանրացնելով վերաբարդրայել, հարկ է նշել, որ ինչպես ցամկացած նավթարդյունահանող այլ խոչըր երկիր, Իրանը նույնպես չի կարող դիտարդի դերում լինել նավթային շուկայի ձևավորման համաշխարհային գործընթացում: Իրանը ցամկանում է դատնալ տարանցիկ երկիր Կասպից ծովի ածխաբրածմային պաշարների փոխադրման հարցում: Իրանը միևնույն ժամանակ Մոսկվայի պետենցիալ գործընկերն է՝ դիմակայելու ԱՄՆ-ի շահերին Կենտրոնական Ասիայում և Մերձավոր Արևելքում:

Ըստ Իրանի նավթային նախարարության Կասպից ծովի նավթի և գազի հարցերով բաժնի գլխավոր տնօրեն Մահմուդ Հադիանիի, Իսլամական հանրապետությունը «ոսկյա դարպասներ է»<sup>13</sup>, որոնց միջոցով անեղածիչտ է ներդրումներ կատարել կասպյան նավթի արդյունահանման մեջ: Այս դիրքորոշումը մերժում է Վաշինգտոնը, որը հակայական ջանքեր է գործադրում իրանական նավթամուղներով աղբբքամական և դազախական նավթի փոխադրման հնարավորությունը խոչընդոտելու համար: Այդուհանդերձ փորձագետների հաշվարկները ցույց էին տալիս, որ իրանական երթուղին ավելի էժան է (50ժն դոլար), քան Բացու-Յրիլիսի-Ջեյհան խողովակաշարը (3-3,5ժն դոլար):

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա վերջինը Իրանը դիտում է որպես քշնամի երկիր և ապառնում է պատժամիջոցներ կիրառել բոլոր այն պետությունների նկատմամբ, որոնք տնտեսական հարաբերություններ կհաստատեն ԻԻՀ հետ<sup>14</sup>: ԱՄՆ-ի այս քաղաքականությունն Իրանին մղում է դեպի Ռուսաստան: Վերջինի վերադարձը տարածաշրջան թեհրանի համար առավել ընդունելի է, քան ԱՄՆ-ի ազդեցության հնարավոր ուժեղացումը: ԱՄՆ Իսլամական հանրապետության նկատմամբ վարում է զսպման քաղաքականություն<sup>15</sup>: ԱՄՆ ձգտում է Իրանին մեկուսացնել համատեղ նախագծերում նավթի ձեռքբերման և արտահանման մասնակցությունից<sup>16</sup>: ԱՄՆ-ի, Թուրքիայի և ՆԱՏՕ-ի այլ երկրների ներխուժումը կասպյան տարածաշրջան չի կարող չանհանգստացնել ԻԻՀ դեկավարությանը: Թեհրանը խուսափում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի լիակատար ներկայությունից<sup>17</sup>: Հնարավոր է, որ հենց այդ պատճառով էլ Կասպից ծովի բաժանման հարցում Իրանը զբաղեցնում է անզիջում և ոչ կառուցողական դիրքորոշում, ավելին, խոչընդոտում է Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերջնական սահմանմանը՝ չցանկանալով, որ այդ տարածաշրջանի նավթը հայտնվի ԱՄՆ-ի և Եվրոպական երկրների ձեռքերում<sup>18</sup>:

Այսպիսով, տարածաշրջանում Իրանը նպատակ ունի խոչընդոտել Արևմուտքի ներկայությունը և թուլացնել նրա ազդեցությունը: Մոս-



կույան բանակցությունների ժամանակ /2001թ. մարտ/ քննարկելով տարածաշրջանի և կասպյան նավթի հետ կապված հարցերը՝ Ռուսաստանը և Իրանը հայտարարեցին, որ «...տարածաշրջանում արևմուտքի կարիքը շունենա»<sup>19</sup>: Իրանը կասպյան նավթի և գազի արտահանման հետ կապված տնտեսական ծրագրեր է նախատեսում Ղազախստանի, Թուրքմենստանի և Ադրբեջանի հետ: Իրանը պնդում է, որ նավթի հիմնական խողովակաշարերն անցնեն իր տարածքով՝ դա էինմնավորելով կասպյան նավթը համաշխարհային շուկաներ հասցնելու այդ տարրերակի առավել էժան ու արդյունավետ լինելու համզամանքով<sup>20</sup>:

**MARIANNA ABRAHAMYAN  
(YSU)**

**THE POLICY OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN  
IN THE CASPIAN REGION**

As the second most powerful Caspian state after Russia, Iran is a major actor in the region's political arena. Iran's policy in the Caspian sphere will be shaped by the nature of its developing relationship with the West and Russia. Isolated by the West, Iran recognized the benefits of friendly relations with Russia. Iran and Russia view with suspicion the growth of American influence in the Caspian region. Despite the friendly tenor of Iranian-Russian relations, it should not be forgotten that the two countries remain competitors for the transit of Caspian oil and gas.

Thus, Iran's Caspian policy revolves around these main objectives: the development of bilateral links with all regional states; the limitation of Western and other outside influences in the region; the creation of regional cooperation; the promotion of its role as a transit spot for energy resources; and upholding the 1940 Iranian-Soviet Treaty until the states agree on a new legal status for the Caspian sea that would give Iran an 'equitable' (20 percent) share of the sea's resources.

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Дорре Мирзاییзар и Талери Шамранг, Геополитика Каспийского моря/ "Аму-Дарья". - Осьезь 2001., с. 137.
2. Բայրության Վ., Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձևաբերումից հետո, Մերմալոր և Միջին Արևելքի երկրներ և

- ժողովարարներ, XVII ժողովածու, ՀՀԳՄՍՍ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 1998թ., էջ 9:
3. Куртов А.А., Иран и проблемы Каспия, Иран в современном мире, под редакцией Е. М. Кожокина, М., 2003, с. 55.
  4. Caspian Oil and Gas Resources/Conference proceedings, Second International Conference-Tehran, Institute for International Energy Studies, 1998, November 7-8, p. 5-6; տես նաև՝ Куртов А.А., Բշլվ. աշխ., էջ 52-53:
  5. Жильцов С.С., Зоян И.С., Ушков А.М., Геополитика каспийского региона, М., 2003, с. 98.
  6. Гусойнов В., Каспийская нефть, М., 2002, с.182.
  7. Dekmejian R. H. and Simonian H. H. Troubled Waters: The Geopolitics of the Caspian Region, New York, St. Martin's Press, 2001, p. 79.
  8. Musa Al-Reza Vehidi, Russian Foreign Policy in the Caspian Region// "Amu Darya", Spring, 2001, Vol. 6, No. 8, p. 68, Տես նաև՝ [www.iranian.org](http://www.iranian.org): 19.03.2006. Bahman Aghai Diba, Iran's National Interests in the Caspian Sea.
  9. Козин А. США: Задача в сфере защиты безопасности каспийских углеводородов от посягательства Ирана//Центральная Азия и Кавказ, Швеция, 2002, N 1(19), с. 44, Տես նաև՝ Musa Al-Reza Vehidi, Բշլվ. աշխ., էջ 68:
  10. Bahman Aghai Diba, The law and politics of the Caspian Sea in the twenty-first century, Tehran, 2003, p. 265., Տես նաև՝ Musa Al-Reza Vehidi, Բշլվ. աշխ., էջ 68:
  11. Raczka W. A sea or lake? The Caspian's long Odyssey//Central Asia Survey, USA, June 2000, Volume 19, Number 2, p. 210.
  12. Марков К., Москва между Вашингтоном и Тегераном// Азия и Африка сегодня-2003, N 5, с. 26.
  13. Куртов А.А., Բշլվ. աշխ., էջ 56:
  14. The Iranian Journal of International Affairs, The Institute for Political and International Studies (IPIS), Fall/Winter 1993, Vol. V, N. 2, p. 213-215.
  15. Эбель Э. Р. Политическое и экономическое значение закавказской нефти// Закавказье сегодня: перспективы региональной интеграции, (отрадактированные тексты выступлений), Американский университет Армении, Ер., 1997, 23-25 июня, с. 90.
  16. Чигоев Э., Влияние Турции на развитие государств Центральной Азии//Центральная Азия и Кавказ, Швеция, 2003, N 2(26), с. 81, տես նաև՝ Dekmejian R. H. and Simonian H. H. Բշլվ. աշխ., էջ 138:
  17. Даузмулин М., Центральная Азия после 11 сентября//Центральная Азия и Кавказ, Швеция, 2002, N 4 (22), с. 41.
  18. Куртов А.А., Բշլվ. աշխ., էջ 63:
  19. «Ազգ», 15, ժամանակ 2001թ:
  20. Tevzadze Z., Caspian Oil: Its export routes and Transportation problems// Central Asia and the Caucasus, Center for Social and Political Studies Sweden, 2004, No. 1(25), p. 95.

ԱՐՈՒՄՅԱՆ ՄԵԼԻՆԵ  
(ՀՀՌ)

ՀԱՅՈՑ ԲՆԱՋՆՁՈՒՄԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ  
ՏԵԴԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՏՈՐԱՄԵՐԻ ԳԱՏԱԿԱՆ  
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՉԱՅՆ

Ինչպես հայտնի է, հայոց կոտորածների խնդիրը բուրջական ռազմական արտակարգ առյաճների կողմից քննվել է մաս՝ ջրտ Օսմանյան կայսրության շրջանների: Հողվածն անդրադարձ է Տրապիզոնի դատավարությանը, որի ամրաստանագիրն ու դատական նիստերում լաված վկաների որոշ ցուցմունքներ գիտական շրջանատության մեջ են դրվում առաջին անգամ:

Տրապիզոնի հայ բնակչության տեղահանման ընթացքում կատարված քարոզիչ վկայվել են ոչ միայն հայ և օտար ականատեսների հուշագրություններում, այլև 1919թ. մարտի 26-ից մայիսի 20-ը թվով 20 նիստի շրջանակներում իրականացված Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատաքննության նյութերում:

Տրապիզոնի դատավարության սկզբում ամրաստանվել են 7 հոգի՝ հարկային տեսուչ, Ահմեդ Ալին, ռուսիկանապետ Նուրին, գաղտնի գործակալ Մուստաֆան, գավառապետ Թալաաթը, հյուրանոցատեր Նիսպին, քիչլ Ալի Սաիրը և երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Յուսուֆ Ռոզան: Վերջինիս գործը Տրապիզոնի դատաքննության 16-րդ նիստում (1919թ. մայիսի 5) առանձնացվել է քննվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատական գործընթացում: Տրապիզոնի դատավարության ժամանակ հեռակա կարգով քննվել են մաս Տրապիզոնի մահանգապետ Ջեմալ Ազմիի և «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիքահիլեյի Նայիլի գործերը:

Տրապիզոնի դատաքննության զլխավոր առանձնահատկություններից մեկը, բերևս, դատարանին գրավոր կամ բանավոր ցուցմունքներ տված վկաների, մեծ մասամբ, բուրջ կամ այլազգի մահմեդական լինելն էր:

Տվյալ դատաքննության ընթացքում քաղմաթիվ վկայություններ են եղել հայոց քարավանների՝ ճանապարհներին կոտորածների ենթարկված լինելու և ծովում ջրահեղձ արվելու մասին: Մասնավորապես, 1919թ. ապրիլի 1-ին կայացած նիստում հանդես եկած վկաներից Նևարեթի ցուցմունքների համաձայն՝ հայոց քարավանները «պահպանելու» նպատակով որպես ուղեկցող էր նշանակվել 50 ժանդար, որոնք, զանազան ճանապարհին սպանողի էին ենթարկել անդամալուծության և ժողովրդի հանդեպ:

A 92573



գարավոր մարդկանց, իսկ պարկերի մեջ լցված երեխաներին՝ գետերում խեղդել<sup>7</sup>: Դատարանության ակտիի 3-ի միտում ընթերցվել է քաղաքավոր Սիրանուշի գրավոր ցուցմունքը, ըստ որի՝ «Մյուրյուն և առաջադեմություն» կուսակցության որոշ անդամներ կոտորել էին հայ տղամարդկանց<sup>8</sup>: Մինույն նիստում ներկայացվել է նաև մեկ այլ քաղաքավոր կնոջ ցուցմունքները, համաձայն որոնց՝ Ջեմալ Ազմիի հրահանգով Ջուլֆայի ուղարկելու պատրվակով ձերբակալված տղամարդկանց ունչացրել էին՝ մի ժապի գնդակահարելով, իսկ մյուսներին՝ ջրախեղ ափնելով<sup>9</sup>: Ապրիլի 5-ին տեղահանության ընթացքում ժանդարմների կատարած բռնությունների մասին վկայություններ է տվել Քահրաջյան Էֆենդին<sup>10</sup>: Մեկ այլ նիստի ընթացքում վկայությամբ հանդես եկած ժանդարմներիցիցից ակազ լեյտենանտ Մյունիրը ցուցմունքներ է տվել առ այն, որ «Պետական պարտքի» գրասենյակի տրասպիզոնյան մասնաճյուղի պաշտոնյայից իրեն հասած տեղեկությունների համաձայն՝ հայերին բռնակցելու են լատանավերը և ծովը նետելով՝ խեղդել<sup>11</sup>:

Մույն դատարանության ընթացքում որպես վկա ցուցմունքներով հանդես եկած քարծրատոհման պաշտոնյաներից պետք է հատկապես առանձնացնել Վանի նախկին մահանգապետ Նազըմ բեյին և Օսմանյան կայսրության ռազմածովային նախարար Ավնի փաշային: Վանի կուսակալը դատարանին տեղեկություններ է տվել Ջեմալ Ազմիի կատարած բռնությունների, ինչպես նաև՝ Նուրի և Մեհմեդ Ալի բեյերի՝ հայ կանանց ու երեխաներին ջրահեղձ անելու վերաբերյալ: Ըստ Նազըմ բեյի՝ 18 հայ ծերունի էլ ջրախեղ էին արվել Օրդուի գավառապետ Ֆաիքի հրամանով<sup>12</sup>: Նույն նիստում վկայություններ է տվել նաև Տրասպիզոնի վերաբնիչ դատարանի նախագահ, հայոց «Լքված գույքի» հանձնաժողովի անդամ Հիլմի բեյը, ըստ որի՝ տարագրված հայերը քնազնջվել են ճանապարհներին և խեղդվել ծովում<sup>13</sup>: Նույն օրը հայերի՝ մակույկավարների պետ Յահյայի կողմից ջրախեղ արվելու մասին վկայություններ է տվել Տրասպիզոնի «Դազմական առաքումներ» հանձնաժողովի նախագահ Էրհեմը<sup>14</sup>: Մայիսի 5-ին ընթերցվել է ռազմածովային նախարար Ավնի փաշայի գրավոր վկայությունը, համաձայն որի՝ Ջեմալ Ազմին հայերին կոտորելու նպատակով հատուկ շքերհներ էր կազմել ու ապանել տվել հայ բոլշևիկների և առողջապահական պաշտոնյաների<sup>15</sup>: Ավնի փաշայի տված գրավոր վկայություններից առանձնահատուկ հիշատակման է արժանի այն ցուցմունքը, ըստ որի՝ Կուվկասից փախած մահմեդական և քրիստոնյա վրացիներից Տրասպիզոնում կազմվել է "Légion Géorgienne" («Վրացական լեգիոն») անունով հատուկ մի գունդ, որը հարձակումներ է գործել հայոց քարավանների վրա<sup>16</sup>: Նույն նիստում ցուցմունքներ տված Հյուսիսի խաչքերով՝ Տրասպիզոնի գլխավոր քանոսպահ Սուլեյմանը շքերհներ էր կազմել հայերին կոտորելու նպատակով, իսկ Օրդուի գավառապետ Ֆաիքը 2 «մավումա»<sup>17</sup> էին ու երեխա ջրախեղ անելու հրաման էր տվել: Ականատեսը հայտնում էր, որ

Նրանց լատատամով էին նստեցրել իբրև թե Սամսոն ուղարկելու պատրվակով, մինչդեռ հաջորդ օրը ծովագնաց լի էր նրանց դիակներով<sup>15</sup>։ Հայերին ջրահեղձ անելու միջոցով կոտորելու մասին վկայություններ է տվել նաև դատական ընկիչ Քենանը, ըստ որի համոզմունքի՝ վերոնշյալ դեպքերի բուն հեղինակն է եղել հենց ինքը՝ մահանգապետը<sup>16</sup>։

Տրասպիզոնյան դատավարության ընթացքում քաղում վկայություններ են եղել այն մասին, որ 42 դաշնակցականների հետ բողոքների կողմից ջրասույզ արված ռուսահպատակ Վարդանը ալիքների դեմ պայքարելով՝ հաջողացրել էր ափ դուրս գալ։ Ապաքինելու պատրվակով վերջինիս տարել էին «Կարմիր մահիկ» հիվանդանոց, որտեղ էլ թունավորել<sup>17</sup>։ Ապրիլի 7-ին դատարանին ցուցմունքներ տված վկաներից ֆրանսահպատակ Վիտալիի խոսքերով՝ Վարդանը հիվանդանոց էր տարվել ոստիկանների ուղեկցությամբ և այնտեղ թունավորվել Ալի Սաիբի կողմից<sup>18</sup>։ Ցնև վերջինիս կողմից կատարված թունավորումների մասին վկայություններ են տվել նաև Տիգրան Նարդիյանը<sup>19</sup>, տիկին Մանիկը<sup>20</sup>, Տրասպիզոնի վերաքննիչ դատարանի նախագահ Հելմին<sup>21</sup> և շատ ուրիշներ, սակայն դատարանը թունավորումների մասին Ալի Սաիբի դեմ եղած վկայությունները օրավարարը չի համարել։ Այս համատեքստում անդրադառնալով նաև դատախազ Ֆերիդունի կազմած մեղադրական եզրակացությանը, որն ընթերցվել է ապրիլի 15-ին կայացած նիստում։ Ֆերիդունը որպես Ալի Սաիբի կատարած ռոքազորությունների «մեղմացուցիչ հանգամանք» ամբաստանագրում նշում էր, թե մանուկների թունավորման դեպքերը կարող էին ի հայտ գալ դեղերի չափաբաժնի խախտման արդյունքում<sup>22</sup>։ Դատախազը կարծում էր, որ Ալի Սաիբին պետք է հանցավոր ճանաչել միայն երեխաներին պարկեղծում խեղդելով սպանելու մեջ, ինչ վերաբերում է թունավորման դեպքերին, ապա Ֆերիդունն առաջարկում էր կատարել դատարժշկական փորձաքննություն<sup>23</sup>։ Ցեքրև, հետագայում այն կատարվել է, քանի որ 1919թ. հուլիսի 8-ին Ալի Սաիբի դեմ նոր դատաքննություն է սկսվել՝ Տրասպիզոնի «Կարմիր մահիկ» հիվանդանոցում գազի և այլ միջոցներով հայերին թունավորելու մեղադրանքով<sup>24</sup>։

Տրասպիզոնի հայոց տեղահանությանն ու կոտորածներին վերաբերող ամբաստանագրում ընդգծվում էր տվյալ մահանգում կատարված ահատարտուղ կոտորածների զանգվածային բնույթը. «...նախ հայ տղամարդկանց և ապա կանանց ու երեխաներին նշանակված վայրերը տեղափոխելիս նրանց մի մասն անզբաբար սպանվել է (birahmane kati) Դեֆթմենդերեի կողմերում, իսկ կանայք ու երեխաներն էլ բռնավորվել են մավակները և ջրախեղղ արվել։ Հայերի մի մասին էլ, իբր բռնամահ սպատակով, թունավորել են տարրեր միջոցներով։ Ողջ մարդկության կողմից անձեռքով ու սողկանքով հիշվելիք նման ամամոթ արարքների հանդգնած, այժմ փախուստի մեջ գտնվող Տրասպիզոնի մահանգապետ Ջեմալ Ազմիի և կուսակցության պատասխանատու քարտուղար Յեմիթաիլի

Նայիլի, ինչպես նաև դատարանում մերկա գտնվող մյուս հանցակիցների մասնակցությունն այդ վիթխարի կոտորածին (azim kitai) իմք են տալիս պատիժ սահմանելու համար: Եվ ի վերջո, ովքե՞ր են Ազմին ու Նայիլը: Սրանք ոչ թե պետական կամ վարչական պաշտոնյա են, այլ ինք տարի առաջ պետության դեկլ պատահաբար ձեռք գցած, առանձին կամ միասին կատարված բռնությունների, կոտորածների արդյունքում ստրկամական կատարարությանն այսօրվա ռոբալի վիճակին հասցրած կործանիչ ձեռքերից ու վայրենի ուղեղներից բաղկացած «Միություն և առաջադիմություն» կոչեցյալ ավազակախմբի հանցագործ մեղսյալուցիչներն են Տրապիզոնում: Բնականաբար, միայն Ջեմալ Ազմին ու Նայիլը չէին կարող այդ ահռելի սպանող իրականացնել: Վերոհիշյալ ավազակախմբի մտանդացուները կյանքի կոչելու համար բազմաթիվ գործիքների կարիք էր զգացվում: Գաղափարը և կիրառվող մեթոդն էլ այն էր, որ որպես գործիք ընտրվեին սահմանափակ, ազդեցության տակ ընկնող, սեփական ջանքերով առաջընթաց գրանցելուն անկարող մարդիկ: Անկասկած է, որ քիչ թե շատ զարգացած մեկը չէր կարող ողջ մարդկությանը հուզած այդ ճեղքների մասնակիցը դառնալ»<sup>25</sup>:

Վերջում նշենք, որ թուրքական ռազմական արտակարգ առյանք 1919թ. մայիսի 22-ին կայացրած դատավճռով Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազմին և կուսակցության պատասխանատու քարտուղար Յենիբախչեի Նայիլին հետևյալ կարգով դատապարտել է մահվան, Մեհմեդ Ալիին՝ 10, իսկ Մուստաֆային ու Նուրիին՝ 1 տարվա ազատազրկման<sup>26</sup>:

Այսպիսով, Տրապիզոն նահանգի հայ բնակչության տեղահանության ու կոտորածների դատաքննության վավերագրերը նոր մանրամասներ են հաղորդում 1915թ. դեպքերի մասին:

MELINE ANUMYAN  
(PRA)

### EXTERMINATION OF ARMENIANS IN TRABZON PROVINCE ACCORDING TO DEPORTATION AND TRIAL DOCUMENTS

It is acknowledged that the Turkish Military Tribunals held trials on Armenian massacres in different regions of the Ottoman Empire. The present article examines the Trabzon Trial, the indictments and several testimonies of witnesses of which are being researched for the first time.

The Trial on Trabzon Deportation and Massacres was conducted by the Turkish Military Tribunal from March 26 through May 20, 1919. The documents of the Trabzon Trial, including testimonies of witnesses and indictments, reveal that the true intent of deportation was extermination of Armenians.

## ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փափազյան Ա., Հայերի ցեղասպանությունը ըստ նրիստոսրբերի դատավարական փաստաթղթերի, Լու ԱՅՃԷԿԻ, 2005, 236-237:
2. Генцида-преступление против человечества (Материалы I Московского Международного Симпозиума 18-19 апреля 1995 г.), Дадрич В., Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, Москва, 1997, с. 32.
3. Divan-i Harb-i Örfi'de Trabzon Tehcir Muhâkemesi, Alemdar, Istanbul, 2 nisan, 1919.
4. Divan-i Harb-i Örfi: Trabzon Taktîl ve Tehcir Muhâkemesi, Alemdar, 4 nisan, 1919.
5. Նույն տեղում:
6. Trabzon Tehcir ve Taktîl Muhâkemesi, Alemdar, 6 nisan, 1919.
7. Divan-i Harb-i Örfi'de Trabzon Tehciri Muhâkemesi, Alemdar, 13 nisan, 1919.
8. Trabzon Tehcir Muhâkemesi, Alemdar, 1 mayıs, 1919.
9. Ժողովուրդի ծայրը (յապարական և հասարակական օրաթերթ), Կ.Պոլիս, խմբագրատան՝ Տրքյան Տառն, 1-ը մայիսի, 1919, N 77-168:
10. Նույն տեղում:
11. Նույն տեղում:
12. Երկու «մալումա» կին ու տղայ ծովը կը բափեն, Ժողովուրդի ծայրը, 6-ը մայիսի, 1919, N 81-172:
13. Նույն տեղում: Այդ մասին այնի մանրամասն տե՛ս մեր հրատարակումը (Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, Անույան Ա., Յոզղատի և Տրապիզոնի անդառնությունն ու կոտորածների դատավարություններն ըստ «Ալեմդար» օրաթերթի, N 9, Եր., 2004, էջ 69):
14. Թուրքերենից բարձրամասշտաբ՝ բնոմանակ, լատանակ:
15. Երկու «մալումա» կին ու տղայ ծովը կը բափեն, Ժողովուրդի ծայրը, 6-ը մայիսի, 1919, N 81-172:
16. Divan-i Harb-i Örfi'de Trabzon Tehciri Muhâkemesi, Alemdar, 11 mayıs, 1919. Այդ մասին նաև տե՛ս ԺՁ դատավարույնի Տրապիզոնի ցարտարարներում, Ժողովուրդի ծայրը, 11-ը մայիսի, 1919, N 86-177:
17. Այդ մասին տե՛ս Ալեմդար օրաթերթի 1919թ. ապրիլի 4-ի, 8-ի, ինչպես նաև մայիսի 1-ի համարները:
18. Trabzon Tehcir ve Taktîl Muhâkemesi, Alemdar, 8 nisan, 1919.
19. Divan-i Harb-i Örfi'de Trabzon Tehcir Muhâkemesi, Alemdar, 2 nisan, 1919.

20. Divan-ı Harb-i Örfi'de Trabzon Tehcir ve Taktik Muhâkemesi, Alemdar, 27 nisan, 1919.
21. ժողովուրդի ծագելը. 1-ը ծագիւի, 1919, N 77-168:
22. Trabzon Taktik ve Tehcir. İddianamenin Kıraatı, Alemdar, 16 nisan, 1919.
23. Նույն տեղում:
24. Akçam T., Ermeni tabusu aralarken Diyalogtan başka çözüm var mı? İstanbul, 2002, s. 90.
25. Trabzon Taktik ve Tehcir. İddianamenin Kıraatı, Alemdar, 16 nisan, 1919.
26. Փափազեան Ա., նշվ. աշխ., էջ 236-243:



## ԱՐՇԱԿՅԱՆ ԳՐԻԳՈՐ (ԱԻ)

### «ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ՀՈՍՔ» ԳՈՐԾԱՐՔԸ ՈՐՊԵՍ ՌՈՒՄ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԵՐՉԵՑԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

1990-ական բվականների առաջին կեսին ռուս-թուրքական ծարարերություններում առկա էր ակնհայտ լարվածություն: Թուրքիան, օգտվելով այն հանգամանքից, որ Ռուսաստանը Խորհրդային Միության փլուզումից հետո զգալիորեն թուլացել էր և երկրի ներսում լուրջ խնդիրներ ուներ, ձգտում էր իր ազդեցությունը տարածել ոչ միայն միջինասիական նորասկախ հանրապետություններում, այլ նաև Հարավային Կովկասում: Հատկանշական է, որ ռուս-թուրքական հարաբերությունները ժամանակ առ ժամանակ հասնում էին լարվածության բարձրակետի, քանի որ Թուրքիան, առանաջով Արևմուտքի աջակցությունը, հետխորհրդային հանրապետություններում ծավալում էր հակառուսական գործունեություն՝ ձգտելով հանդես գալ որպես Ռուսաստանին հակակշռող գործոն:

Սակայն 90-ականների երկրորդ կեսին նկատվեց որոշակի մերձեցում ռուս-թուրքական հարաբերություններում: Ռուսաստանի և Թուրքիայի ղեկավարները ձգտում էին համագործակցության եզրեր գտնել հատկապես առևտրատնտեսական բնագավառում և շահագրգռվածություն էին ցուցաբերում երկկողմ տնտեսական համագործակցությունը բարելավելու հարցում: Այդ հարաբերությունների բարելավման հարցում կարևոր ազդեցություն ունեցավ երկու երկրները իրար ամփոփականորեն կապող գազամուղ տեղծելու գաղափարի իրականացումը, որի իրականացման շուրջ ակտիվ բանակցություններ սկսվեցին: Թուրքիա ռուսական գազի առաքման հարցում մեծ նշանակություն ունեցավ «Երկնագույն հոսք» (Blue Stream) բազմամիջխորդանոց գործարքը, համաձայն որի գազատար էր կառուցվելու ՄԼ ծովի հատակով, ինչն ապահովելու էր ռուսական գազի անմիջական առաքումը Թուրքիա: Այս նախագծի իրագործման պարագայում Թուրքիայի կախվածությունը ռուսական գազից անհամեմատ մեծանալու էր: Մասնավորապես «Երկնագույն հոսք» նախագծի իրականացման դեպքում Թուրքիան դառնալու էր Գերմանիայից հետո ռուսական գազը ներկրող երկրորդ ամենամեծ երկիրը՝

Թե Ռուսաստանը, և թե Թուրքիան բավականին լուրջ քաղաքական և տնտեսական շահեր էին հետապնդում վերոհիշյալ գազամուղի կառուցմանը: «Երկնագույն հոսք» գազամուղի կառուցման արդյունքում Մոսկվայի հետապնդած քաղաքական և տնտեսական գլխավոր նպատակն էր էներգետիկ կախվածության մեջ պահել ոչ միայն Թուրքիան,

այլ նաև որը հարավ-արևելյան եվրոպան: Քանի որ Ռուսաստանը չի կարող մրցակցել ԱՄՆ-ի հետ որպես անվտանգության ապահովող և տարածաշրջանափն զերտերություն, ուստի նախատեսում էր այս նախագծի միջոցով դառնալ հիմնական էներգետիկ մատակարարը թե՛ հարավ-արևելյան եվրոպայի, և թե՛ որը եվրոմիության համար<sup>2</sup>: Քացի այդ Ռուսաստանի համար «Երկնագույն հոսք» նախագծի քաղաքական նպատակներին էր՝ կանխել մրցակից երկրների ջանքերը՝ օգտագործել Թուրքիայի տարածքը Միջին Արևելքից և Կասպիական տարածաշրջանից գազ հասցնել եվրոպա:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա Թուրքիան 1990-ականներից սկսած հսկայական ջանքեր էր գործադրում տարածաշրջանային կենտրոններին մեկը դառնալու համար: Թուրքական կառավարությունը միշտ էլ շահագրգռված է եղել քնական գազ արտահանել եվրոպա մասնավորապես Հունաստան, Բուլղարիա, Իտալիա և Բալկաններ: Ըստ եւրոյան, «Երկնագույն հոսք» գազամուղի կառուցումը թիտմ էր Ռուսաստանի և Թուրքիայի ռազմավարական շահերից:

Ռուսաստանը Թուրքիային կապող «Երկնագույն հոսք» գազամուղը իր քնույթով եզակի է: 1213 կմ երկարությամբ գազամուղը, որը սկիզբ է առնում Ռուսաստանի «Վոլդիլնոյե» գազի հանքավայրից և հասնում է մինչև Թուրքիայի Սամսուն նավահանգիստ, քաղկացած է երեք հատվածներից՝ ցամաքային հատվածներ (Ռուսաստանի և Թուրքիայի տարածքներում) և ստորջրյա հատվածը (485 կմ), որը միացնելու է Ջուրգա և Սամսուն նավահանգիստները: «Երկնագույն հոսքն» աշխարհի ամենամեծ ստորջրյա գազամուղն է, որով տարեկան փոխադրվելու է չորս 16 մլրդ խորանարդ մետր գազ<sup>3</sup>:

«Երկնագույն հոսք» գազամուղը ռուսական քնական գազը անմիջականորեն Սև ծովի հատակով մատակարարելու է Թուրքիա՝ խոսափելով երրորդ երկրների հետ առնչվելուց: Այս նախագիծը համդիսանում է մի նոր, լրացուցիչ՝ Ռուսաստանից Թուրքիա մատակարարող գազամուղ ի հակակշիռ արդեն տարիներ ի վեր գոյություն ունեցող գազամուղի, որն անցնում է Ուկրաինայի, Մոլդովայի, Ռումինիայի և Բուլղարիայի վրայով:

«Երկնագույն հոսք» գազամուղի կառուցման վերաբերյալ Ռուսաստանի և Թուրքիայի միջև միջպետական պայմանագիրը ստորագրվեց 1997թ. դեկտեմբերի 15-ին Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չիրնոմիրոյի և Թուրքիա կատարած այցի շրջանակներում: Համաձայնագրի ստորագրման կապակցությամբ Թուրքիայի վարչապետ Մետուք Յըլմազը հայտարարեց. «Թուրքիան ցանկանում է քննարկել ցանկացած հարց և նախընտրում է համագործակցել, քան թե մրցել իր մեծ հարևանի հետ»: Իր հերթին Վիկտոր Չիրնոմիրոյինը ընդգծեց, որ «Երև Թուրքիան սեղմի Ռուսաստանի կողմից մեկնած մեռող, ապա մեծ տնտեսական ուղբում 21-րդ դարում կդառնանք ռազմավարական գործընկերներ...

Մենք ի վիճակի կլինենք միասին ավելի շատ քան ամեն կրթորդ երկրներում և ազգացել տարածաշրջանի կայունությանը և խաղաղությանը»<sup>4</sup>։

Եւշենք, որ ըստ ձեռք բերված պայմանավորվածության, ռուսական «Գազպրոմ» ընկերությունը թուրքական «Ֆոթաշ» ընկերության հետ կնքել է առևտրական պայմանագիր, համաձայն որի «Գազպրոմ» ընկերությունը պարտավորվում է 25 տարվա ընթացքում մատակարարել 365 մլրդ խորանարդ գազ։ Գազամուղի ընդհանուր արժեքը կազմում է 3.2 միլիարդ դոլար<sup>5</sup>։ Ներառյալ գազամուղի ծովային հատվածի կառուցման համար նախատեսված 1.7 մլրդ. դոլարը<sup>6</sup>։

Ամիրաժեշտ է հիշատակել այն փաստը, որ «Երկնագույն հոսք» նախագիծը լուրջ քննադատության և դժգոհության արժանացավ ոչ միայն ԱՄՆ և Թուրքմենստանի, այլ նաև Թուրքիայի որոշ շրջանակների կողմից, որոնք վերոհիշյալ նախագիծը դիտում էին որպես մրցակից Տրանս-կասպիական գազամուղին, որով նախատեսվում է թուրքմենսկան գազը հասցնել Թուրքիա։ Մասնավորապես այս նախագիծը հատկապես ուրվագծենք թուրքական պետական կառույցների և կուսիցիոն կառավարության ներսում առկա տարածայնությունները Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ։

Կուսիցիոն կառավարության ներսում «Երկնագույն հոսք» նախագծի վերաբերյալ տարածայնություններն ավելի ակնառու դարձան Թուրքիայի վարչապետ Բյուլենթ Էլճիթի<sup>7</sup> 1999թ. նոյեմբերին Մոսկվա այցելության ժամանակ։ Կուսիցիոն կառավարության մաս կազմող Ազգային շարժում կուսակցությունը մերկայացնող որոշ նախարարներ հայտարարեցին, որ Ժողովրդավարական ժախ կուսացությանը և Մայր Հայրենիք կուսակցությունը մերկայացնող նախարարների մասնակցությամբ Մոսկվայում ռուս ղեկավարներին հետ համոզիչման ժամանակ իրենց չիրավիքված լինելու գլխավոր պատճառը եղել էր այն, որ վերոհիշյալ կուսակցությունները չէին ցանկացել ռուսական կողմին տեղյակ պահել «Երկնագույն հոսք» նախագծի վերաբերյալ ԱՇԿ-ի մտահոգությունների մասին<sup>8</sup>։

Ուշագրավ է այն փաստը, որ բնև ԱՇԿ նախարարները կտրակահարած ղեմ չէին «Երկնագույն հոսք» նախագծին, այնուամենայնիվ, ակնհայտորեն իրենց նախապատվությունը տալիս էին թուրքմենսկական քնական գազի նախագծին։ Դրա վառ օրինակներից էր ԱՇԿ-ն մերկայացնող Թուրքիայի պետնախարար Սուայիի Ուսեմնեզի հայտարարությունը։ Նա մասնավորապես նշել էր. «Մենք ղեմ չենք «Երկնագույն հոսքին», սակայն մեզ համար թուրքմենսկական քնական գազի նախագիծն ավելի նախընտրելի է։ Մենք «Երկնագույն հոսք» նախագծի իրականացման հարցում կասկածներ ունենք։ Մե ծովի հատակում կառուցվելիք 2200 մետր երկարությամբ գազամուղը թավակամին քարը գործընթաց է, որի համար ձեզ ամիրաժեշտ կլինի հատուկ տեխնոլոգիաներ»<sup>9</sup>։

Թուրքական որոշ լրատվամիջոցներ նույնպես քննադատեցին նախագծը: Այսպես, համաձայն թուրքական «Մարախ» օրաթերթի մեկ-նարան Մեդյաթ Մերքոզլուի «Երկնագույն հոսք»՝ նախագիծը Թուրքիային ամբողջովին ենթադետիկ կախման մեջ էր գցելու Ռուսաստանից: Ըստ նրա՝ նախագիծը միայն ծառայելու էր տարածաշրջանում ռուսական գերիշխանության վերականգնման համար և կարող էր քայքայական ազդեցություն ունենալ ԱՄՆ և Թուրքմենստանի հետ Թուրքիայի հարաբերությունների վրա<sup>9</sup>: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ Թուրքիայի ենթադետիկայի նախարարությունն էապես չանագրված էր «Երկնագույն հոսք» նախագծի իրականացման հարցում: Այդ կապակցությամբ իր տեսակետն էր հայտնել Թուրքիայի ենթադետիկայի նախկին նախարար Ջուհուր Էրսուլմեռլը, նշելով, որ «Երկնագույն հոսք» նախագծում որևէ պրոբլեմ չկա: Թուրքիան մինչև 2020թ. Ռուսաստանից գնելու է իրեն անհրաժեշտ գազի 56 տոկոսը: Բացի այդ, Թուրքիան մասնակցում է գնել քնակյան գազ Թուրքմենստանից»<sup>10</sup>:

Այս համատեքստում անհրաժեշտ է հիշատակել, որ քեև որոշակի հակազդեցության առկայությանը, այնուամենայնիվ, «Երկնագույն հոսք» գազամուտի աշխատանքները լայն թափով սկսեցին ընթանալ: Գազամուտի կառուցման աշխատանքների շրջանակներում 1999թ. փետրվարին «Գազպրոմ» ընկերության և իտալական «ԵՆԻ» ընկերության միջև ստորագրվեց «Փոխըմբռնման Մեծորամբում», ըստ որի վերոհիշյալ ընկերությունները փոխադարձ ջանքերով իրականացնելու էին «Երկնագույն հոսք» նախագիծը<sup>11</sup>: Փաստենց, որ նախատեսվում էր 2002թ. ամռանը ավարտել գազամուտի ծովային հատվածի շինարարությունը, իսկ մինչև 2002-ի վերջը «Երկնագույն հոսք» գազամուտի շինարարական աշխատանքները պետք է ամբողջովին ավարտված լինեին: Հավելենց, որ գազամուտի կառուցման աշխատանքները ընթանում են նախատեսված ժամանակացույցի համաձայն:

Ծնայած պատմական դարավոր մրցակցությանը և հետխորհրդային առաջին տարիներին նկատվող թուրք-ռուսական մեծ լարվածությանը, միջազգային և տարածաշրջանային փոփոխությունները 90-ականների երկրորդ կեսին համգեցրեցին Թուրքիայի և Ռուսաստանի միջև մի շարք ողորտներում և հակուսպես տնտեսական ողորտում սեփու հարաբերությունների հաստատմանը: Այս գործում շատ կարևոր դերակատարություն են ունեցել հատկապես թուրքական և ռուսական գործարարներն ու խոշոր կազմակերպությունները, որոնք մուտք գործելով ռուսական և թուրքական շուկաներ՝ ակտիվ քաջեր ձեռնարկեցին ազդելու Թուրքիայի և Ռուսաստանի արտաքին հարաբերությունների վրա: Ինչ խոսք, թուրք-ռուսական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման գործընթացում հսկայական նշանակություն է ունենալու «Երկնագույն հոսք» գազատարը, որի շահագործումից հետո լուրջ նա-

խաղըյալներ կարող են ստեղծվել երկկողմ հարաբերություններն էլ ավելի սերտացնելու համար:

GRIGOR ARSHAKYAN  
(IOS)

**"THE BLUE STREAM" DEAL AS A PREREQUISITE FOR  
WARMING  
RUSSIAN-TURKISH RELATIONS**

"The Blue stream" gas pipeline is intended for deliveries of the Russian natural gas to Turkey going under the Black Sea, avoiding third countries. The project presumes an additional new way of gas delivery from Russia to Turkey in contrast to gas transportation via the Ukraine, Moldova, Romania and Bulgaria being under operation for years. Russia-Turkey gas pipeline is the unique gas transmission facility which unparalleled in the world. Building the Blue Stream pipeline was intended to be the foundation for a "strategic partnership" between Russia and Turkey, with joint participation in oil, energy, and transport projects. The political decision to sell Russian gas to Turkey was made in December 1997, when the two sides signed a corresponding inter-governmental agreement in which Russia undertook to supply 364.5 billion cubic meters of gas to Turkey between 2000 and 2025. The total cost of the Blue stream pipeline is USD 3.2 billion. The success of the Blue Stream highlights once again the major economic and strategic stakes of the broad area linking the southeastern Balkans, the Black Sea region and the Caspian Sea. Russia, Turkey, the E.U. powers and the U.S. are all involved in a complex geo-economics competition. The Blue Stream will increase the dependence of Turkey on Russian energy carriers, and new projects in this area will strengthen this tendency even more. It will inevitably affect the foreign policy of Ankara and affect negatively its attitudes with the USA.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ИТАР-ТАСС, 20.07.1998.

2. Economic Brief: The Blue Stream Gas Pipeline, The Power and Interest News Report (PINR), 22.11.2005, [www.pnr.com/report.php?ac=view\\_report&report\\_id=403&language\\_id=1](http://www.pnr.com/report.php?ac=view_report&report_id=403&language_id=1)
3. Project: Blue Stream Natural Gas Pipeline, [www.rigzone.com/data/projects/project\\_detail.asp?project\\_id=66](http://www.rigzone.com/data/projects/project_detail.asp?project_id=66)
4. Duygu Bazoğlu Sezer, Turkish- Russian Relations a Decade Later: From Adversity to Managed Competition, *Perceptions: Journal of International Affairs*, March - May 2001, p. 10.
5. Asim Oku, Blue Stream Victory of Putin Over the USA, 20.11.2005, [www.aziaslobe.com/article.asp?article=489](http://www.aziaslobe.com/article.asp?article=489)
6. Turkish Weekly, 13.10.2004.
7. Milliyet, 09.11.1999.
8. Sabah, 23.02.1998.
9. Turkish Weekly, 13.10.2004.
10. [www.gazprom.com/eng/articles/article8895.shtml](http://www.gazprom.com/eng/articles/article8895.shtml)

## ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒԱ (ԱԻ)

### ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՐԱԾԱՆՅՅԱՆԸ ԵՎ ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԻՑԱՐԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Անգմահատելի է ակադեմիկոս Գրիգոր Դևփանցյանի ներդրումը Վանի թագավորության ռազմաքաղաքական պատմության, տեղանունների, լեզվաբանության, ինչպես նաև դիցարանի ուսումնասիրության բնագավառում, ընդարձակ են նրա հետազոտության աստիճանները: Ժամանակի հրամայականն է նորոշի վերանայել և արժեքավորել ակամավոր արևելագետի ներդրումը նաև ուրարտական դիցարանի քննադատում, ջանգի անցել են բազում տասնամյակներ, և նրա կողմից կատարված շատ վերլուծություններ կարիք ունեն մոր լրացումների: Ներկա հոդվածում փորձ է արվում արժեքավորել Դևփանցյանի ուսումնասիրությունները, առաջարկված էիմանավորումները՝ համադրելով դրանք հետազայում մասնագիտական գրականության մեջ արտահայտված կարծիքների հետ, մատնանշել դրանց տեղն ու դերը գիտության առաջընթացի համար:

Վանի թագավորության դիցարանի ուսումնասիրության բնագավառում առանձնահատուկ աղյուր է Իշպոտինի և Մեմուս թագավորների համատեղ գահակալության տարիներին (մ.թ.ա. IX դարի վերջին քառորդ) փորագրված Մեծի դրան պաշտամունքային արձանագրությունը:

Հիշյալ արձանագրությանը, բնականաբար, իր աշխատություններում անդրադարձել է նաև Գր. Դևփանցյանը: Նա առաջինն էր հայ իրականության մեջ, որ ուրարտական պանթեոնի դիցանունները բաժանեց վեց խմբի, որոնցից առաջին երեքը՝ արական, մյուս երեքը՝ իգական: Առաջին խմբում մա հաշվել է երեք, երկրորդում՝ ըսամվեց, երրորդում՝ ըսամհինգ, չորրորդում՝ չորս, հինգերորդում՝ երկու, վեցերորդում՝ յոթ աստվածություններ:

Ստորև բերում ենք Մեծի դրան ուրարտական դիցարանի աստվածությունների անուններն ըստ Գր. Դևփանցյանի բաժանման:

#### *Աստվածներ*

I խումբ՝ Նադի, Թելլեթա, Շիվինի:

II խումբ՝ Խուտուինի, Տուրանի, Ուա, Նալաինի, Արսինվա:

III խումբ՝ Անաշա, Դիդուաինի, Շելարդի, Աբինի, Կուտա, «Աստված, որը ձողիներ է տեղափոխում», Ալափթուշինի, Էրինա, Շինի-րի, Ունինա, Այրաինի, Ջուզումարու, Խարա, Արածա, Ջիուկունի, Ուրա, Արծիբեղինի, Աոնի, Ըորա, Էլիալա, Թալափուրա, Կիլիրանի:

#### *Դիցուհիներ*

I խումբ՝ Վարուք(ա)ինն, Բաբա, Տուչպունա<sup>2</sup>, Առի:

II խումբ՝ Սարդի, Ծիմույարդ:

III խումբ՝ Իշխարի, Բարծիա, Սիլիա, Արուա, Աղիյա, Ույա, Արդի<sup>3</sup>:

Այժմ անդրադառնանք ուրարտական պանթեոնի այն աստվածներին և դիցուհիներին, որոնք տեղ են գտել Գր. Ղափանցյանի տեսադաշտում:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ «աստված» և «աստվածուհի» բառերի բացահայտմանը և մորույն մեկնաբանմանը: Մենքի դրան դիցազանկում դիցուհիներին զոհարեբզող զոհարեբությունների թվարկումը ավարտվում է <sup>4</sup>ի-ու-ա-ոս-ն-ե XVII UDU արտահայտությամբ<sup>4</sup>: Մասնագիտական գրականության մեջ <sup>4</sup>ի-ու-ա-ոս-ն-ե-ն համարել են թե հատուկ և թե հասարակ անուն: Նրա նշանակության քննադատումը կատարել է Ն. Հարությունյանը՝ այն մեկնաբանելով որպես հասարակ անուն: <sup>4</sup>ի-ու-ա-ոս-ն-ե-ն հանդիսանում է իսա հասարակ անվան հոգնակի տրականը (հոգնակի ուղղականն է իսառու-ն-ն), ինչը մույնական է խոտ. օտ «աստված» բառի հետ: Հետևաբար, իսա բառի տակ ենթադրվում է «դիցուհի», իսկ իսա(ռու) ուրարտ. բառի տակ՝ «աստված, աստվածություն» բառերը<sup>5</sup>:

Ըստ Գր. Ղափանցյանի՝ Խաղին՝ դիցաբանի գերագույն աստվածը, սկզբում եղել է Մուսասիրի (Արդինի) քաղաքի տեղական աստվածը: Սակայն, հետագայում պետության կազմավորմանը զուգահեռ, նա ստացել է համաուրարտական նշանակություն, ուստի «խաղյան» լինելը՝ Խաղինն պաշտելը, համազոր էր ուրարտական լոյալ քաղաքացի լինելուն<sup>6</sup>: Խաղինի կնոջ անունը հայտնի է Վարուքանի (ուրարտական աղբյուրներում) և Բագրարտու/Բագժաշտու ձևերով: Գր. Ղափանցյանը գերադասում է ասորեստանյան սեպագիր աղբյուրներում հիշատակվող Բագրարթու ձևը և նրան վերագրում իրանական ծագում՝ իր հիմքում ունենալով Bag-bar, և ոչ թե՛ Bag-tad ձևը<sup>7</sup>: Ավելի վաղ Գր. Ղափանցյանը կապ էր տեսնում Մենքի դրան արձանագրությունում հիշատակված Բարծիա և Բագրարթու դիցանունների միջև<sup>8</sup>: Խաղին և նրա կնոջ պաշտամունքի կենտրոնն էր Արդինին՝ ասորեստանյան աղբյուրների Մուսասիր-Մուծածիրը (Ուրմիա լճից հարավ-արևմուտք)<sup>9</sup>: Հարկ ենք համարում նշել, որ Ուրարտուի տեղանունների մեջ ամենուրեք հանդիպում ենք անվանումներ, որոնք կազմվել են այս կամ այն աստծու անունից, սակայն, մասնագիտական գրականության մեջ դրանց չեն անդրադարձել պատշաճ կերպով<sup>10</sup>:

Թեչլեբա աստծուն Գր. Ղափանցյանը քննորոշել է որպես երկնքի, անձրևի, ամպրոպի, ջրի և կայծակի աստվածություն: Այս աստծու կիճն է Բարա դիցուհին: Ըստ Գր. Ղափանցյանի՝ հայերը Թեչլեբա աստծու անունը փոխառել էին փոյուզական Մարածիոս ձևով, որը այնուհետև դարձել է հասարակ անուն՝ «աստված», իսկ նրա կնոջ անունը՝ Հնայիտ



(«Հնայիտ սրանչեյի», «Չյտար սրանչեյի») պահպանվել է հայ. «ժաշտ, հպտանք, իտպիտ, հպտիմ/իտպտիմ» բառերում)<sup>17</sup>: ԹԵԼԼԵՐԱ աստծու պաշտամունքային կենտրոնն էր Կումենուն, որը տեղայնացվում է Հայկական լեռնաշխարհի ծայր ծարավում՝ Նիբուր (Ջուղի դաղ) լեռան շրջանում<sup>12</sup> և ԹԵԼԼԵՐԱԲՆԻ քաղաքը մերկայիս Երևանի մարզի տարածքում<sup>13</sup>:

Առնի դիցանունը Գր. Ղափանցյանը բացատրել է «լեռ, բարձրություն» նշանակությամբ<sup>14</sup>: Ն. Վ. Հարությունյանը այս աստծու անունը համեմատում է ուրարտերեն՝ արու «ուժ» և արու(ս)նունի «արիություն, սխրագործություն» բառերի հետ<sup>15</sup> (Գր. Ղափանցյանն արու(ս)նունի բառին տալիս է «շինարարություն, կառուցում» իմաստը)<sup>16</sup>: Հետևաբար, Առնի աստվածը համարվում է ուժի, առնականության և սխրագործության աստվածություն: Նրա անվան հետ է կապված նաև ուրարտական Արնա (Arna) քնակավայրի անունը, որը գտնվում էր Արմարիյի նահանգում՝ Վանա լճի արևելյան ափից ոչ հեռու (պատմական Վասպուրական)<sup>17</sup>:

Գր. Ղափանցյանը Շեքիբու դիցանունը դասել է ուրարտական պանթեոնի սեմական ծագում ունեցող աստվածների շարքը և այն համադրել միջագետքյան Šidari դիցուհու Մարիբու անվան հետ<sup>18</sup>: Իսկ Ն. Աղոնցը Շեքիբու դիցանունը համադրում է Արևելյան Եփրատի աջ ափին՝ այժմյան Քալուի մոտ տեղադրվող Շեքեթերիա քաղաքի հետ՝ այն համարելով Շեքիբուի պաշտամունքային կենտրոնը<sup>19</sup>:

Կունեսա դիցանունը Գր. Ղափանցյանը համադրում է ուրարտ. զի(ս)րա բառի հետ՝ «երկիր, ցամաք, հող» նշանակությամբ՝ նրան համարելով «երկրի, ցամաքի» աստվածություն<sup>20</sup>: Այս դիցանվան հետ է առնչվում Մարդուրի II-ի Իզդղուի արձանագրության՝ Կունեսայի ընծա (<sup>1811</sup>Querai tade) քաղաքի անունը: Արզիես հիշվում է <sup>1811</sup>Taše քաղաքից հետո<sup>21</sup>: Ըստ Ն. Վ. Հարությունյանի՝ Ուեսա II-ի Չվարթնոցի արձանագրությունում հիշատակվող և ըստ երևույթին Արարատյան դաշտավայրի մի մասը կազմող Կուառիենի անվանված հովիտը՝ <sup>1818</sup>Quarlini hubi, ինչպես նաև Ույթուզահենի ցեղի Կուարզանի (<sup>1819</sup>Quarzeni) արքայի անունները առնչվում են այս դիցանվան հետ<sup>22</sup>:

Ադարուրա աստծուն Գր. Ղափանցյանը քնորոշում է որպես ծնունդն ու սերունդը հովանավորող աստվածություն և նրան համադրել է ասուրա-արամեական Աբար՝ սիրո, պտղաբերության, բուժող և ծնունդ հովանավորող աստվածության հետ<sup>23</sup>:

Նոես 1930-ական թվականներին Գր. Ղափանցյանը Արածա (Arza) դիցանունը կապում էր արտասովայրերի հետ՝ ի նկատի ունենալով հայ. «արած-ել» և «արատ» («արած») բառերը՝ նրան քնորոշելով որպես արտասովայրերի աստված<sup>24</sup>: Այս դիցանվան հետ է հազամարաբ առնչվում Արևելյան Եփրատի ասորեստանյան սեպագիր աղբյուրների Արծամիա և հայ. Արածանի գետանունը<sup>25</sup>:

Նուտոնի աստծուն Գր. Ղափանցյանը բնորոշել է որպես «առողջության» աստված և այս դիցանունը ստուգարանել է ուրարտ. *խսաւո*՝ «իշխանություն» բառով<sup>26</sup>։ Ս. Հմայակյանի կողմից Նուտոնին նամադրվել է հայ ժողովրդական հավատալիքների մահվան հրեշտակ Գրողին, որի իշխանությունը տարածվում էր կյանքի և մահվան վրա<sup>27</sup>։

Գր. Ղափանցյանը անդրաբժրել է նաև Երեմիա Մեղրեցու քառասունամեծ հիշատակված հայ. Սեղարդ՝ «լուսին» և ուրարտեերեն Եղարդի կարգապետ Լուսնի աստծո անունների մեանության վրա։ Նա այս դիցանունը տատարածում է Եղարդի ձևով և գտնում է, որ Սեղարդը Սեղարդ բառի ձևն է և արդյունք է երկարագիր Ս և Մ տառերի չփոփոխման<sup>28</sup>։ Ըստ նրա՝ *\*Sielardi-ն* քարոջ բառ է, կազմված է *šei*՝ «պիշեր» և *ardi*՝ «արև» բառերից, այսինքն՝ լուսինը պատկերացվել է որպես՝ «պիշերվա արև»։ Նման կազմություն ունի նաև *Šimairdi* դիցանունը<sup>29</sup>։ Այս դիցանուններով տեղանունների ծանոցում ենք Արմարիի երկրում՝ Մին-ու-մակ, Արդ-ու-մակ ձևերով<sup>30</sup>։ Ս. Հմայակյանը հակված է այս աստծո անունը ըմբերել *\*Me-e-la-ar-di-e* ձևով, որտեղից և հայերեն Սեղարդ բառը։ Նա իր կարծիքը հիմնավորում է այն փաստով, որ հնարավոր է բժում դիցանվան հետ առնչել Ուրարտուի արքա Սելարտուա Ռուսայորդու անունը<sup>31</sup>։

Միերի դրան և Կարախանի արձանագրություններից հայտնի է Ուրա աստվածը<sup>32</sup>։ Հնարավոր է, որ նրա անունից է ծագում Սրա լեռան անունը<sup>33</sup>, որը գտնվել է, ամենայն հավանականությամբ, Վանա լճից հյուսիս<sup>34</sup>։ Գր. Ղափանցյանը այս աստվածությանը տալիս է շումերապարզական ծագում և նրան Ուրաշ ձևով համադրում քարոնյան գարնան և կռփ աստված Ուրայի հետ<sup>35</sup>։

Սարդի դիցունտ անունը դեռևս Ա. Մեյլը կապել է լիդիական *Σάρδις*՝ «տարի» կամ «արևի աստված» բառի հետ<sup>36</sup>։ Գր. Ղափանցյանը հետևելով Սեյսին՝ բերում է նույն մեկնաբանությունը, և այս դիցանունը իր հերթին համադրում իրանական *sard*՝ «տարի» բառի հետ։ Ըստ նրա մեկնության՝ ուրարտացիները Սարդուրիի (*\*Sarduri*)՝ *Sardi* դիցանվան առաջին վանկում կարդացել են Իշխար աստվածուհու անունը<sup>37</sup>։

Արժեքավորելով Գր. Ղափանցյանի ներդրումը այս բնագավառում կարող ենք արձանագրել.

- ա) նա է դասակարգել ուրարտական աստվածությունները արական և իգական ճ խմբերի,
- բ) ճիշտ է բնորոշել Նալդի աստծու դերն Ուրարտուում՝ որակելով այն որպես «խաղաղություն», ինչն այսօր էլ հիմք է տալիս անելու նոր եզրակացություններ,
- գ) առաջինն է եղել ուրարտագիտության մեջ, որ բնորոշել է դիցարանի՝ *\*Išari*, *\*Aia*, *\*Bargia*, *\*Uia*, *\*Arua* և *\*Aini* աստվածությունների իգական լինելը։

ACADEMICIAN GRIGOR KAPANTSYAN AND THE  
OBSERVATIONS OF THE PANTHEON  
OF THE KINGDOM OF VAN

In the article we have tried to evaluate and to show the analyses of Gr. Kapantsyan in the sphere of the Urartian pantheon by comparing them with the hypotheses (opinions) which expressed in Urartology in previous years and nowadays. It is the inscriptions of Mher's Door which were made in the years of reign of the kings Išpuni and Menua (the last quarter of the ninth century B. C.) and of which Gr. Kapantsyan made use, that are a special source for the investigation of the Kingdom of Van. Gr. Kapantsyan has divided the names of the divinities of the Urartian pantheon into six groups, three masculine and three feminine. He is the first scholar who defined that Դրփարի, Գալա, Գարջա, Գալա, Գարա, Գալա divinities are feminine.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մերի դռան արձանագրության ուշարտական տեքստի անթղթաբանական և Մելիքիշվիլի Գ.Ա., Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, N 27, ինչպես նաև Արտյոնյան Н.В., Корпус урартских клинообразных надписей (այսուհետև՝ КУКН), Ер., 2001, N38:
2. Տարրերակ՝ Տալվինի: Տիս՝ Salvini M., Ayanis, I, Roma, 2001, էջ 254, սկզբից II, տող 2:
3. Դափանցյան Գր., Ուրարտուի պատմությունը (այսուհետև՝ ՈւՊ), Եր., 1940, էջ44-46:
4. УКН, N27, 1<sup>23</sup>; КУКН, N38, 1<sup>23</sup>:
5. Այժմ գիտությանը արդեն հայտնի է նաև «թիցոմի» խոստովանության ուշարտական ղրգոնիկների շարքում: Տիս՝ Արտյոնյան Н.В., Эду66а, Санкт-Петербург, 2005, էջ 15; նույնի К чтению и интерпретации урартской культовой надписи "Мхери Дур", Мировая Культура и Современность (далее МКТС), М., 1991; с. 127; КУКН, с. 449:
6. Դափանցյան Գր., ՈւՊ, էջ 16:
7. Капанцян Г.А., Об урартском божестве Шебиту, «Տեղեկագիր», 1947, с. 4: ինչպես նաև Խաչիկի և Վարդապետի գոյգի նախնի տիս G.Melikishvili "Die Götterpaartrias an der Spitze des urartäischen Pantheons", "Orientalia", vol. 34, fasc. 4, 1965, էջ 442, Л. Биягов, К вопросу об интерпретации Халди и Арубани-Багбарту, Вестник Общественных Наук, № 11, 1974, 98-101; И.М. Дьяконов, К вопросу о символе Халди, "Древний Восток", 4, 1983: 190-194;

- Հծայակյան Ա., Ուրարտական ծաղիկ և Արարածի աստվածությունների մասին, ՊԲՀ, թիվ 2, 1982:127-139; նույնի՝ Վանի բազալիտերյան պեղանկան կտոր, Եր. 1990, էջ 33-41:
8. Ղափանցյան Գր., Եջվ աշխ., էջ 47:
  9. Арутюнян Н.В., КУКН, с.496-497, նույնի Топономика Урарту, Ер., 1985, с. 33-34, 144-145, 234-235:
  10. Այս խնդիրը նույնի լուսարանի է Ն. Հարությունյանը: Տես նրա Биайткли-Урарту, С.-П., 2006, с. 273-280: Հծծռ. նաև գրքի աստիճան հրատարակությունը, Եր., 1970, էջ 352-361:
  11. Ղափանցյան Գր., ՈւՊ, էջ 48:
  12. Арутюнян Н.В., ТУ, с.119-120; Г.А. Меликишвили, Нанри-Урарту, Тбилиси 1954, с. 165-168:
  13. Арутюнян Н.В., БУ, с. 274, նույնի՝ КУКН, с. 525:
  14. Ղափանցյան Գր., ՈւՊ, էջ 47:
  15. Арутюнян Н.В., Заметки по урартской клинописи, «Տեղեկագիր» ՀԳ, 1956, թիվ 7, с. 90-93; նույնի՝ КУКН, с. 436-437:
  16. Капанцян Г.А., Историко-лингвистическое значение топонимики древней Армении (далее ИЛТДА), Ер., 1940; с. 94:
  17. Арутюнян Н.В., БУ, с. 279:
  18. Капанцян Г.А., Об урартском божестве Шебиту, «Տեղեկագիր», 1946, № 11-12, էջ 13-14; տես նաև Ա. Հծայակյան, Վանի բազալիտերյան պեղանկան կտոր, էջ 14:
  19. Adont N., Histoire d' Arménie, Paris, 1946, էջ 226; ինչպես նաև УКН, N 39,<sup>1,2</sup> КУКН, № 56<sup>1,2</sup>:
  20. Ղափանցյան Գր., Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 140: Ա. Հնգաբլան, «Եռանկա-Չուստ աստվածության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում», ՊԲՀ, N1, 1990:
  21. УКН, N158<sup>20-31</sup>; КУКН N244<sup>20-31</sup>:
  22. Арутюнян Н.В., БУ, с. 274 и прим. 57; նույնի ТУ, с. 114:
  23. Капанцян Г.А., "Об урартском божестве Adarutha", «Տեղեկագիր» ՀԳ, 1944, N6-7; с. 27-31:
  24. Капанцян Г., Общие элементы между урартским и хеттским языками, Эривань, 1936: с. 53 и прим. 2; նույնի՝ ՈւՊ, էջ 47:
  25. Арутюнян Н.В., БУ, с. 176-177:
  26. Ղափանցյան Գր., ՈւՊ, էջ 43, 46-47:
  27. Հծայակյան Ա., Եջվ աշխ., էջ 48:
  28. Ղափանցյան Գր., ՀԼՊ, էջ 140:
  29. Ղափանցյան Գր., ՈւՊ, էջ 46:
  30. Арутюнян Н.В., БУ, с. 275:
  31. Հծայակյան Ա., Վանի բազալիտերյան լուսաստվածը եղեմիա Սեդեցու քարտանում, «Հայրենի եզիր», 1991, N8, էջ 36:
  32. КУКН, с. 492:
  33. Арутюнян Н.В., БУ, с. 276:
  34. КУКН, с. 529:
  35. Ղափանցյան Գր., ՈւՊ, էջ 48-49:

16. Sayce A.H., The Cuneiform Inscriptions of Van, *JRAS*, vol. XIV, part 3, 4, London, 1882; p. 487.
17. '𐎠𐎡𐎢𐎣𐎤𐎥 𐎦𐎧, 𐎨𐎩, 𐎪 49; Г. А. Меликишвили, Наири-Урарту, с. 374.

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՌ  
(ԱԻ)

2007Թ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ  
ԵԳԻՊՏՈՍՈՒՄ.  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵ՛՛ ՊԱՏՐԱՆՔ

Վերջին շրջանում գիտական և փորձագիտական հանրության կողմից քննարկման առարկա են դարձել արաբական աշխարհում քաղաքական համակարգի արդիականացմանն ուղղված գործընթացները, որոնք շատ դժգոհություն տվյալ երկրների քաղաքական ընտրանու կողմից ներկայացվում են իբրև ժողովրդավարությանն ուղղված քայլեր: Այդ տեսանկյունից ուշագրավ է Եգիպտոսի փորձը, որը սոցիալ-քաղաքական, տնտեսական և ժողովրդագրական առումով համաբովում է արաբական աշխարհի ամենամեծ ներուժ ունեցող երկրներից մեկը:

Վերջին տարիներին երկրում իշխող «Ազգային-դեմոկրատական» կուսակցությունը, ի դեմս մախագահ Մուհամմադ Հոսնի Մուբարաքի, երկրում իրականացնում է ժողովրդավարացմանն ուղղված գործընթացներ, որոնք պայմանավորված են թե՛ ներքին եւ թե՛ արտաքին գործունեիով: Ասվածի սպագույցն են 2005թ. սեպտեմբերի 7-ին Եգիպտոսի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցած մախագահական այլընտրանքային ընտրությունները, երբ վերջնատրվեց 77-ամյա Հոսնի Մուբարաքը՝ ով այդ պաշտոնը զբաղեցնում է 1981թ. հոկտեմբերից, երբ ահաբեկչական գործողության արդյունքում սպանվեց Եգիպտոսի մախագահ Ամվար Սադաթը՝:

Այլընտրանքային մախագահական ընտրություններ հնարավոր դավ անցկացնել միայն 2005թ. մայիսի 25-ին Եգիպտոսի սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն անցկացնելուց հետո՝, ինչը հնարավորություն էր ընձեռում գործող կուսակցություններին՝ մախագահի թեկնածուներ առաջադրել: Համաձայն փոփոխության՝ սկսած 2011-ից մախագահական ընտրություններին թեկնածուներ առաջադրելու իրավունք կունենա միայն այն կուսակցությունը, որն առնվազն իննգ տարիների ընթացքում Եգիպտոսի ազգային ժողովում կազմակերպի պատգամավորական մանդատների հինգ տոկոսը՝:

Դեռևս 2005թ. մախագահական ընտրություններից առաջ երկրում ակտիվորեն քննարկվում էր գործող մախագահ Հոսնի Մուբարաքի որդուն՝ Գամալ Մուբարաքին իշխանությունը փոխանցելու հարցը, ինչը, քննականաբար, հակազդեցության արձագանք է գտնում ընդդիմադիր դաշտում: Եգիպտոսի ընդդիմադիր կուսակցություններից ամենամանրակշիռ դեռևս 1928-ին հիմնված «Մուսուլման եղբայրներն» են, որի գործունեությունը պաշտոնապես արգելված է 1954-ից՝: Կրոնաքաղա-

քական այս շարժումը սակայն գործում է կիսաօրինական ձևով և վայելում քնակչության մի զգալի հատվածի համակրանքը: Անվաճի ապացույցն է այն փաստը, որ «Միասուլման եղբայրներին» համակիր անկախ պատգամավորները կազմում են Եգիպտոսի ազգային ժողովի 1/5-ը<sup>7</sup>: 2005թ. ընտրություններում նրանք հավաքեցին ձայների 20 տոկոսը և կարողացան ձևավորել Եգիպտական ազգային ժողովի ֆրակցիաներից մեկը<sup>8</sup>: Հատկանշական է, որ քաղաքական մեծ փորձ ունեցող շարժումը, որի մասնաճյուղերը գործում են աշխարհի տարբեր անկյուններում, ձգտում է իշխանության գալ և որոշակիորեն փոխել երկրի ներկայիս աշխարհիկ համակարգը՝ հօգուտ իսլամականի<sup>9</sup>: Երկար տարիներ է, ինչ Եգիպտական իշխանությունները խստորեն վերահսկում են շարժման գործունեությունը՝ պարբերաբար իրականացնելով ակտիվիստների ձերբակալություններ, կիբրանելով յուրօրյուններ ու պատժամիջոցներ:

2007թ. Հունի Մութարաշն ատաջարկեց 1971-ից գործող սահմանադրության մեջ շուրջ 34 փոփոխություն անցկացնել, որոնք, ըստ նրա, ուղղված են երկրի «ժողովրդավարացմանը»: Փոփոխությունները հիմնականում նկատի են առնում կրոնական հիմքի վրա կուսակցությունների և շարժումների գործունեության արգելումը, ինչպես նաև անվտանգության նոր համակարգի ձևավորումը, ռազիկական և հասուկ ծառայությունների իրավունքների ու լիազորությունների ընդլայնումը, դատավորների լիազորությունների նվազեցումը և այլն<sup>10</sup>:

Ընդդիմադիր գործիչները քարեփոխումները համարեցին անընդունելի՝ որպես ժողովրդավարությանը, քաղաքական ազատություններին և ժարդու իրավունքներին ուղղված քայլ<sup>11</sup>: Նման մտավախություն հայտնեցին նաև միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները: 2007թ. մարտի 8-ին իրապարկվեց նաև ԱՄՆ-ի պետդեպարտամենտի՝ Եգիպտոսում սահմանադրական քարեփոխումների վերաբերյալ քննադատություն պարունակող զեկույցը<sup>12</sup>: Դրան հետևեցին Եգիպտոսի պաշտոնական արձագանքները: Արտաքին գործերի նախարար Ահմադ Աբու Ալ-Ղեյտի համոզմամբ՝ սահմանադրական քարեփոխումները Եգիպտոսի ներքին գործն է<sup>13</sup>:

Մարտի 18-ին Եգիպտոսի խորհրդարանական ընդդիմությունը փորձեց տասալել Ազգային ժողովում նախագծի քննարկումը: Այդ օրը խորհրդարանի նիստին 454 պատգամավորներից չէին ներկայացել 102-ը, ինչը, սակայն, արդյունք չունեցավ, չնայած ընդդիմությանը՝ «Միասուլման եղբայրներ», ազատական «Կաֆր», աջ կողմնորոշում ունեցող «Ֆազաամու», մասերական «Ալ-Քարամե», կուսակցություններին հաջողվել էր միավորվել<sup>14</sup>:

Մարտ ամսին իշխանություններն ուժեղացրին անվտանգությանն ուղղված միջոցառումները, քանի որ այդ շրջանում Եգիպտոսում առավել քան նախկինում առկա էր կրոնական ծայրահեղական կազմակերպությունների կողմից ահաբեկչություններ իրականացնելու վտանգ:

Մարտի 3-13 երկրում հերթական անգամ ձեռքակալվեցին «Մուսուլման եղբայրների» ակտիվիստներ, իսկ 2007թ. ապրիլին ձեռքակալված շարժման 100 ակտիվիստների ազատազրկման ժամկետը երկարացվեց: Նրանցից 9-ը, այդ թվում՝ «եղբայրների» աստիճանակարգում երրորդ տեղը զբաղեցնող Մուհամմադ Խալաթ Ալ-Խաբեբը, պետք է դատապարտվի գինվորական դատարանով<sup>15</sup>: Մարտի 13-ին ձեռքակալվեց նաև շարժման ղեկավար Մահմուդ Գոզլանը: «Մուսուլման-եղբայրների» իրավապաշտպան Մուհամմադ Մահդի Ալեյի համոզմամբ՝ այդ ձեռքակալությունները տեղի ունեցան այն րանից հետո, երբ շարժումը կոչ արեց չմասնակցել հանրաքվեին<sup>16</sup>:

Սահմանադրական քառեփոխումների հանրաքվեում տեղի ունեցավ 2007թ. մարտի 26-ին մախճիմում հայտարարված ապրիլի 4-ի փոխարեն: Ժամկետն ամենայն հավանականությամբ առաջ քննվեց այն րանից հետո, երբ լուրեր տարածվեցին, որ ԱՄՆ-ը ծրագրում է հարվածել Իրանին<sup>17</sup>:

Սահմանադրության մեջ տեղ գտած ամենակարևոր դոկտրիններից մեկը ահաբեկչության վերաբերյալ նոր խմբագրմամբ 179 հոդվածն է, որը թույլ է տալիս ուժային կառույցներին՝ ձեռքակալել ահաբեկչության մեջ կասկածվող ցանկացած մարդու, խուզարկել նրա բնակարանը, հետևել նրա նամակագրությանը և լսել հեռախոսային գրույցները՝ առանց համապատասխան դատական որոշման: Այսպիսով, օրենսդրական այս նոր դրույթը փոխարինեց դեռևս 1981թ. ընդունված «հատուկ իրավաձեռնարկների մասին» օրենքին, ինչն արգելում էր նրկրի իշխանություններին անցկացնել չարտոնված ձեռքակալություններ<sup>18</sup>:

Նոր խմբագրմամբ 88-րդ հոդվածը կրճատում է դատավորների իրավունքները մասնավորապես քվեարկությունները վերահսկելու դեպքում, որը պետք է իրականացնի մախճնորական անկախ հանձնաժողովը: Այս նոր դրույթի ընդունումը կապված է այն փաստի հետ, որ վերջին շրջանում անկախ համարվող դատական համակարգի և իշխանությունների միջև հարաբերություններում լարվածություն էր նկատվում<sup>19</sup>: Նոր խմբագրմամբ 5-րդ հոդվածն արգելվում է քաղաքական ակտիվություն ցուցաբերել այն ուժերին, որոնք իրենց գործունեության մեջ հիմնվում են կրոնի վրա կամ հղում են ամուսն կրոնը: Նոր խմբագրմամբ 136-րդ հոդվածը նախագահին լիազորում է լուծարել խորհրդարանը առանց հանրաքվե անցկացնելու<sup>20</sup>:

Հատկանշական է, որ սահմանադրության նոր տեքստից դուրս մնացին սոցիալիզմի մասին հիշատակումները, որոնք ամբողջով էլին առջիախառական կողմնորոշում ունեցող Եզիպտոսի մախագահ Գամալ Աբդել Նասերի կողմից 1950-ականներին<sup>21</sup>:

Համաձայն պաշտոնական տվյալների՝ հանրաքվեին մասնակցել է ընտրողների 27,1 տոկոսը: Նման ցածր ցուցանիշն օգնել է իշխանություններին՝ ստանալ պահանջվող արդյունքը: Քառեփոխումների օգ-



տին քվեարկել են ընդհանուր մասնակիցների 75, 9 տոկոսը: Ոչ պաշտոնական տվյալների համաձայն՝ հանրաքվեին մասնակցել է քվեարկելու իրավունք ունեցողների 5-9 տոկոսը<sup>22</sup>: Եգիպտոսում քվեարկելու իրավունք ունի 34-36 միլիոն մարդ<sup>23</sup>:

Սպիտակ տամ մամուլը քաղաքացիների տեղակալ Դաննա Պերինոն քվեարկության հաջողությամբ հայտարարեց, որ Վաշինգտոնը թերահավատ է հրապարակված արդյունքների հարցում, և որ Եգիպտոսը դառնում է ուսուցանական վարչաձևավարդ ունեցող պետություն<sup>24</sup>:

Հանրաքվեի օրը Կահիրեում տեղի ունեցան բազմաձայնակարանային ցույցեր, որոնք կազմակերպել էին «Մուսուլման եղբայրները» և իրափապապաշտպան կառույցները: Ի պատասխան ցույցերի՝ եգիպտական իշխանությունները ձեռքարկությունների մոր ալիք սկսեցին<sup>25</sup>:

Ընդդիմությունը մարտի 26-ը համարեց սև օր, որն ուղղված է Եգիպտոսի քաղաքացիների պաշտությունների դեմ: *Amnesty International* իրափապապաշտպան կազմակերպության կարծիքով՝ մարտի 26-ի սահմանադրական բարեփոխումները վերջին 26 տարիների ընթացքում, այսինքն՝ Անվար Մադաթի սպանությունից հետո, երկրում մարդու իրավունքների ռդրոտում արժանագրված ամենամեծ խախտումներն են<sup>26</sup>:

Այնուհայտ է, որ Մուբարաքը ցանկանում է առավելագույնս սահմանափակել այն ուժերի մասնակցությունը Եգիպտոսի քաղաքական դաշտում, ուրիշ ցանկանում են օգտագործել կրոնը քաղաքական մպատակներով: Այդ ուժերի հիմնական առաջատարը «Մուսուլման եղբայրներներն» են: Մյուս կողմից, Մերձավոր և Միջին Արևելքում բարեփոխումների պահանջով հանդես եկող Վաշինգտոնին առանձին դեպքերում ձեռնտու չեն ժողովրդարավարացման գործընթացներն արարական երկրներում, այդ թվում՝ Եգիպտոսում, ինչը կարող է իշխանության բերել ԱՄՆ-ի (մասն՝ Իսրայելի) համար անցանկալի վարչակազմի: Այս համգամանքը նպաստում է Մուբարաթի դիրքերի ամրապնդմանը:

GOR GEVORGYAN  
(IOS)

## THE CONSTITUTIONAL REFORMS IN EGYPT IN 2007: DEMOCRACY OR ILLUSION?

The paper deals with the issue of constitutional reforms in Egypt /March, 27/ initiated by the president of Egypt Hosni Mubarak. The new constitution bans political parties or groups to use religion in their political activity. It is evident, that Hosni Mubarak wants to block the way of the most popular political power in country- "Muslim Brothers". This fact was

strongly criticized by Egyptian opposition, international human right organizations, State Department. At the same time, the demand of reforms in Arabic world coming from Washington, is not gainful just for him. The democratization in Egypt would bring into power the "Muslim Brothers" or any other undesirable regime, which would not be acceptable for both USA and Israel. That is why the White House will not pressure on Mubarak, who tries to bring into power his son-Gamal Mubarak.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ներքին գործոց ներառում է եգիպտական հասարակության կողմից նկղ պահանջները: Արտաքին գործոց պայմանավորված է Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականությամբ: 2005թ. եգիպտոսում նախագահական ընտրություններից առաջ ԱՄՆ-ի պետքարտուղար Կ.Լայպը Կահիրեում հայտարարեց, որ «Լաշինգտոնն ամեն կերպ կաջակցի եգիպտոսի ժողովրդավարական գործընթացներին: Sbn՝ Восточнч Б.В., О планах демократизации Ближнего Востока, [www.iimes.ru](http://www.iimes.ru); Коэнн Египетские, Коммерсант 122, М., 06.06.2005
2. Գնորվյալ Գ., եգիպտոսում 2005թ. կայացած նախագահական ընտրությունների շուրջ. Մերձավոր Արևելք. եր., 2006թ., էջ 47:
3. Игнатенко А.А., Халифы без Халифата, М., 1988, с.6.
4. եգիպտոսի գործը պահանջարկները ընդունվել է 1971թ.: Սանճան տեղ՝ Арабская Республика Египет, М., 1990, с. 223.
5. Գնորվյալ Գ., նշվ.աշխ., էջ 47:
6. «Միաշխման եղբայրների» ստեղծման նւ գործունեության մասին մանրամասն տեղ՝ Mitchell R., The Society of the Muslim Brothers. – L., 1969; Раквадинов М.З., Организационные аспекты движения "Братьев-мусульман" в Египте в начале и середине 90-х годов, [www.iimes.ru](http://www.iimes.ru)
7. Куделев В.В., Ситуация в Египте, октябрь-ноябрь 2005, [www.iimes.ru](http://www.iimes.ru)
8. Конституция с поправкой на сына, Коммерсант 217, М., 21.11.2006.
9. Սմերման տեղ՝ Кеппель. Ж., Джихад: Экспансия и закат исламизма, М., 2004, с.33.
10. Египетскую конституцию сурово поправили, Коммерсант 49, М., 27.03.2007.
11. [www.albawaba.com/cn/countries/Egypt/211310](http://www.albawaba.com/cn/countries/Egypt/211310)
12. Египетскую конституцию сурово поправили, Коммерсант 49, М., 27.03.2007.
13. В.В. Куделев, Ситуация в Египте: март 2007 года, [www.iimes.ru](http://www.iimes.ru)
14. Նույն տեղում:
15. Նույն տեղում:
16. Նույն տեղում:

17. Նույն տեղում:
18. Նույն տեղում:
19. Նույն տեղում:
20. Նույն տեղում:
21. Египетскую конституцию сурово поправили. Коммерсант 49, М., 27.03.2007.
22. [www.albawaba.com/en/countries/Egypt/211310](http://www.albawaba.com/en/countries/Egypt/211310)
23. Мамед-Заде П.Н., Об итогах первых альтернативных выборов в Египте. [www.iipca.ru](http://www.iipca.ru). Независимая газета, 27.03.2007
24. Египет превращается в полицейское государство, [www.misnews.ru](http://www.misnews.ru)
25. Куделев В.В., Ситуация в Египте, март 2007, [www.iipca.ru](http://www.iipca.ru)
26. [www.albawaba.com/en/countries/Egypt/211310](http://www.albawaba.com/en/countries/Egypt/211310)

## ՋԱԶԱՐՑԱՆ ՏԻԳՐԱՆ (ՀՅԹԻ)

### ԱՄՆ-Ի ՀՆԱՐԱՎՈՐ ՆԵՐԳՐԱՎՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ 1915-1916 ԹԹ. ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1915-1917թթ., երբ Օսմանյան կայսրությունում տեղի էին ունենում հարյուր հազարավոր հայերի տեղահանություններն ու կոտորածները, ակնկալվում էր, որ ԱՄՆ-ն իրրև համաշխարհային պատերազմում չնգոջ պետություններից ամենակարևորը, որը նշանակալից կրոնա-մշակութային ավանդն ուներ արևմտահայության շրջանում, եռանդագին կմիջամտի նրանց օգտին: Այն իսկապես միջամտեց, սակայն համարյա քաջատապան մարդասիրական ասպարեզում. ռազմական ճնշման տարբերակը, որ ԱՄՆ-ը բանեցնում էր աշխարհի այլ մասերում իր նպատակին հասնելու համար, ինչպես օրինակ՝ Լատինական Ամերիկայում, ԱՄՆ-ի կատավարող շրջանների կողմից մերժվեց ի սկզբանե:

Ամերիկյան դիվանագիտությունն իր համար համարյա ի սկզբանե քաջատեց ուժի գործադրումը: Հ. Մորգենթաուն Պետ. դեպարտամենտին ուղղված իր գնկուցազրերից մեկում նշում է, « [...] ոչինչ, քացի ուժից, որն ԱՄՆ-ն ակնհայտորեն ի վիճակի չի գործադրել, չի կարող չտակել իրավիճակը»<sup>1</sup>, գծելով այն սահմանը, որից այն կողմ ամերիկյան միջամտությունը չէր կարող տարածվել:

Մինչդեռ ԱՄՆ-ում անգիջում ընդդիմադիր նախկին նախագահ Թ. Ռուզվելտը քննադատում էր Վիլսոնի վարչակազմը իր նպատակներում իր անկարողության համար և ըստ էության պահանջում պատերազմի մեջ մտնել Թուրքիայի և Գերմանիայի դեմ<sup>2</sup>:

Իրականում, սակայն, այդ տարիներին ԱՄՆ-ը պատերազմին պատրաստ չէր ոչ նյութապես և ոչ էլ հասարակական կարծիքի տեսանկյունից:

Դժվար էր պատկերացնել, որ ամերիկյան բանակը մի քանի տասնյակ՝ զուցե և հարյուր հազարավոր զինվորներով առանց մեծ բարդությունների ինարավոր կլիներ տեղափոխել օվկիանոսից այն կողմ և զինվորական առումով ամփոքր կարգերով կարող էր հեշտ հաղթանակ տանել թուրքական փորձված և գերմանական սպաների կողմից դեկավարվող քանակի կողմից, որոնք կատաղի դիմադրություն էին ցույց տալիս քրիտանական զորքերին՝ Դադդամեի մատույցներում:

Հարկ է նշել, որ ամերիկյան հասարակությունը դեմ էր ԱՄՆ-ի առաջին աշխարհամարտում մերզավմանը՝ Ամտամտի կողմից: Նշենք մաս, որ 1916թ. նախագահական ընտրարշավում երկու թեկնածուներն

էլ՝ թե՛ Վիլսոնը և թե՛ Հյուզնի իրենց ընտրողներին խոստանում էին շարունակել ԱՄՆ-ի շեղծությունը առաջին համաշխարհային պատերազմում:

Ամերիկյան միսիոներները, նյնելով իրենց իսկ շահերից, ընդդիմացել են ոչ միայն Թուրքիայի դեմ հնարավոր պատերազմին, այլև ամեն կերպ փորձել են կանխել հարաբերությունները սրող ցանկացած գործողություն: 1917թ. Գերմանիային պատերազմ հայտարարելուց հետո ամբողջ ԱՄՆ-ը միտք չունի խզել հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ և միայն Գերմանիայի ճնշման տակ օսմանյան կատաղությունը գնաց այդ ցայլին<sup>2</sup>:

ԱՄՆ-ի կողմից պատերազմի մեջ մտնելուն խանգարող հանգամանք կարող է լինել նաև այն փաստը, որ 1915թ. ընթացքում և 1916 թ. առաջին կեսին Անգլիայի և Ֆրանսիայի միջև Ասիական Թուրքիայի քաժանման մասին քանակություններ էին ընթանում, որոնց ավելի ուշ միացավ Ռուսաստանը, Օսմանյան կայսրության քաժանման վերաբերյալ:

Մեր տրամադրության տակ կան փաստացի ապացույցներ, որ 1917թ. ապրիլին արդեն Վիլսոնը և գնդապետ Հատսը քննարկել են Դաշնակիցների միջև կնքված գաղտնի համաձայնագրերը, որոնց բովանդակությունը հնարավոր է, որ ընդհանուր գծերով ԱՄՆ-ում հայտնի է եղել դեռ դրանից առաջ<sup>3</sup>:

Ավելի, իրենց հերթին դաշնակիցները «խանդով» էին մտածում ամերիկյան որևէ մախաձեռնության, որը կարող էր խոչընդոտել Մալթա-Պիկոյի համաձայնագրի կենսագործմանը, կամ ամրապնդել ամերիկյան դիրքերը Օսմանյան կայսրությունում: Ելնելով այդ փաստից, ամերիկյան միջամտությունը մերձավորարևելյան պատերազմական քառերաբնույթ կլիներ խնդրահարույց իր իսկ՝ ԱՄՆ-ի համար, քանի որ համագործակցությունը Դաշնակիցների հետ ռազմական առումով մեծ հարցակահանի տակ կլինի, իսկ այնուամենայնիվ նրա իրագործման դեպքում ԱՄՆ-ը Դաշնակիցների համար կրակի միջից չազանակներ դուրս բերողի դերում կլինի:

Այսպիսով, ԱՄՆ-ի կողմից Օսմանյան կայսրության դեմ չպատերազմելը բխում էր իր իրավաքաղաքական շահերից, որոնք հանգում են հետևյալին.

- պատերազմ վարելու ԱՄՆ-ի անպատրաստությունը մերձավորարևելյան ճակատում
- երկիրը պատերազմի մեջ ներդաշխելու ամերիկյան հասարակության անպատրաստությունը՝ ԱՄՆ-ի պատերազմի մեջ մասնակցելուն
- «միսիոներական շահերը» և նրանց եզրը լոբբինգը Վիլսոնի վարչակազմում
- Անտանտի երկրների միջև կնքված համաձայնագրերը, որոնցում ԱՄՆ-ին որևէ դեր չէր հատկացվում

Այդ տարիներին ԱՄՆ-ի հասարակական որոշ շրջաններում ծավալված քննարկումները՝ Օսմանյան կայսրության դեմ պատերազմելու հնարավորության շուրջ (որի ցայտուն օրինակներից էր Ք. Ռուզվելտ-Վ. Վիլսոն կարծիքների հակադրությունն այս հարցում) ցույց տվեցին ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունում ռեալ-քաղաքական տեսակետի հաղթանակը քարոյա-քաղաքական տեսակետի նկատմամբ:

Ինչ վերաբերում է մերսն, թե այս շահերից որ մեկն էր հայասպաստ, ապա մեր կարծիքը հետևյալն է. 1915-1917թթ., քանի դեռ Օսմանյան կայսրությունում գտնվում էին տաքազիր արևմտահայության հոծ զանգվածներ, որոնց համար փրկության հույսի մի նշույլ էր ամերիկյան օգնությունը: Պատերազմի դեպքում ԱՄՆ-ի մարդասիրական գործունեությունը անմիջապես կդադարեր, իսկ կենդանի մնացած հայերը թերևս նոր հալածանքների կենթարկվեին: Այդ իսկ պատճառով կարելի է պնդել, որ ԱՄՆ-ի կողմից Օսմանյան կայսրությանը պատերազմ չհայտարարելը մինչև որոշակի փուլ առնվազն չէր հակասում արևմտահայության շահերին:

TIGRAN ZAKARYAN  
(MIAG)

## THE US POSSIBLE INVOLVEMENT INTO THE FIRST WORLD WAR IN 1915-1916 AND THE ARMENIAN GENOCIDE

This paper deals with the problem of the US humanitarian intervention in favor of the Ottoman Armenians in the years of the Armenian Genocide of 1915-1917 and its prospective extension into a full-fledged military campaign in fashion of today's US-led armed interventions for saving those threatened by genocide and ethnic cleansing. With all the Wilsonian rhetoric, this however did not happen and there were a number of reasons for this. Among the most prominent ones the following three should be singled out: the US was not ready for military actions in remote areas such as the Near East; the US public opinion throughout the indicated period (with the exception of the end) was opposed to war; a US military involvement would not have been favored by Entente Powers signatories of the Sikes-Picot agreement; and last but by no means the least was the strong negative attitude of the US missionaries who had both large investment in the Ottoman Empire and were engaged in relief efforts and also had an intense influence on the Wilson administration. In a sentence, we are inclined to think that by 1917 the US

could not effectively help Armenian survivors by declaring war on Ottoman Turkey.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. RG 59, 867.4016/76
2. Roosevelt Th., *Fear God and Take Your Own Part*, T. R. Doran Co.: New York, 1916, pp. 377-383 (Theodore Roosevelt to Samuel Dutton, 24 November, 1915) մեջբերվում է ըստ Peter Balakian, *From Ezra Pound to Theodore Roosevelt: American Intellectual and Cultural Responses to the Armenian Genocide*, in *America and the Armenian Genocide of 1915*, ed. by Jay Winter, Cambridge: Cambridge University Press, 2003, p. 246.
3. U. Trumpener, *Germany and the Ottoman Empire, 1914-1918*, New York: Caravan Books, 1989, p. 156.
4. Տես զնոյապես Հատախ օրագրի 1917թ. ապրիլի 28-ի զրաման մեջ, «Դաշնակիցների միջև կնքված գաղտնի պայմանագրերը առաջիկ ակնհայտորեն են զժազրվում: Նրանք համաձայնել են Ռուսաստանին Հայաստանում տալ ազդեցության գոտի»: Մեջբերվում է ըստ John Milton Cooper, Jr., *A Friend in Power? Woodrow Wilson and Armenia*, in *America and the Armenian Genocide of 1915*, ed. by Jay Winter, Cambridge: Cambridge University Press, 2003, pp. 105.

## ԻՄԿԱՆՂԱՐՅԱՆ ԳՈՎԱՐ (Ա)

### ԻՐԱՆԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՄԱԿ-Ի ԱՆ-Ի (2006-2007թթ.) ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱՉԵՎԵՐԻ ԸՈՒՐՁ

Արդեն քանի տարի է՝ համաշխարհային հանրության ուշադրությունը անելված է Իրանի Իսլամական Հանրապետության և նրա միջուկային ծրագրի վրա: Այն զարգացման իր զագարնակետին հասավ, երբ Ատոմային Էներգիայի միջազգային գործակալությունը (այսուհետև՝ ԱԷՄԳ) զեկուցեց, որ երեք տարվա ուսումնասիրություններից հետո ԱԷՄԳ-ն չի կարող վերբնականապես հայտարարել, թե Իրանում չկան չեայտարարված միջուկային նյութեր:

Ելնելով վերոնշյալ եզրակացությունից՝ որոշվեց Իրանի միջուկային ծրագրի հարցը քննարկման դեմը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում: Այս ենթատեքստում ուշազուրկ է այն հանգամանքը, որ 2005թ. վերջին Իրանի Մեջիսն ընդունեց օրենք, ըստ որի՝ եթե ԱԷՄԳ-ն իրանական հարցը հանձնի ՄԱԿ-ի ԱՆ-ին, ապա Իրանը կդադարեցնի համագործակցությունը ԱԷՄԳ-ի հետ: Դեկտեմբերին այդ օրենքը վավերացվեց մախսազանի կողմից: Հատկանշական է, որ Իրանի հարցը ՄԱԿ-ի ԱՆ-ի օրակարգ բարձրացնելուն դեմ էին 5 մշտական անդամներից երկուսը՝ Ռուսաստանի Դաշնությունը և Չինաստանը: Ռ-Ղ-ը միշտ էլ դեմ է արտահայտվել Իրանի՝ միջուկային զենք ունենալու հնարավորությանը, սակայն, միևնույն ժամանակ, նշել է, որ Իրանը իրավունք ունի զարգացնել խաղաղ միջուկային էներգիայի ծրագրերը, և որ պատժամիջոցները հարցի լուծման լավագույն ձևերը չեն: Համաձայն Ռ-Ղ ԱԳՆ-ի պաշտոնական ճեղքայացուցիչ Կամիինի հայտարարության, «Գլխավորն այս պահին կույնկտիվ աշխատանքն է, որն ուղղված կլինի Իրանի միջուկային ծրագրի խնդրի կարգավորմանը բանակցությունների միջոցով»:

Բայց քանի որ ԱԷՄԳ-ն գոհ չէր ԻԻԷ-ի հետ համագործակցությունից և մի քանի անգամ հանդես էր եկել մտահոգիչ հայտարարություններով, ի վերջո ՄԱԿ-ի ԱՆ-ի մշտական մյուս երկրները կարողացան հանդուրդել Ռ-Ղ-ին և ՉԺԷ-ին, որպեսզի Իրանի հարցը քննարկվի ԱՆ-ում: Դրան նպաստեց նաև ԱԷՄԳ-ի տնօրեն Մուհամմեդ Էլ-Բարադեյի 2006 թ. հունիսի 8-ի զեկույցը: Համաձայն զեկույցի 16-րդ պարագրաֆի՝ 2006թ. հունվարին ԱԷՄԳ-ի տեսչկները Իրանում տեխնիկական համալսարանի համապատասխան սարքերի վրա հայտնաբերել էին քմական և բարձրեարտացված ուրանի հետքեր: Իրանն այդ կապակցությամբ բացատրություններ տվեց, նշելով որ այդ սարքավորումը չի օգտագործվել միջուկային գործունեության շրջանակներում և այժմ պաշտոնական թեհրանը իրականացնում է հետազոտություն, պարզելու, թե ինչպե՞ս -



կարող էր հարստացված ուրանի հետքեր հայտնվել այդ արքայազորում-  
ների վրա: Պարագրաֆ 17-ում էլ նշվում էր, որ, այդ ամենով հանդերձ, Ի-  
րանը բուլլ չի տալիս զրուցել վերոհիշյալ կենտրոնի նախկին տնօրենի  
հետ<sup>1</sup>:

Երկար քանակություններից և քննարկումներից հետո, 2006թ.  
հուլիսի 31-ին ԱՆ-ի 5500-րդ նստաշրջանի ժամանակ ընդունվեց թիվ  
1696 քանաձևը Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: ԱՆՄԳ-ն հայ-  
տադարեց. «Երեք տարվա աշխատանքներից հետո չենք կարող եղաչ-  
լաձորել, որ Իրանում չկան շիադավադարանցված միջուկային նյութեր և  
որ Իրանը դադարեցրել է ուրանի հարստացման աշխատանքները»:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ քանաձևը քավակամ մեղմ էր շա-  
րադրված: Կոչ էր արվում Իրանին անհապաղ դադարեցնել ուրանի  
հարստացման աշխատանքները, ամբողջական տեղեկատվություն  
տրամադրել ԱՆՄԳ-ի աշխատակիցներին, ինչը կնպաստի Իրանի  
նկատմամբ վստահության բարձրացմանը:

Միևնույն ժամանակ, քանաձևի 5-րդ կետով կոչ էր արվում բոլոր  
պետություններին լինել աշախույժ և կամիսել Իրանի՝ ուրանի հարստաց-  
ման և քայլառիկ հրթիռների համար ցանկացած նյութերի, տեխնոլո-  
գիաների, մասերի փոխադրումը իրենց տարածքով: Քանաձևի 8-րդ կե-  
տով հայտարարում էին, որ Իրանի կողմից քանաձևի չկատարման դեպ-  
քում, նշված ժամանակահատվածում, կարող են համապատասխան մի-  
ջոցներ ձեռնարկվել՝ հենվելով ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխի 41-րդ  
հոդվածին<sup>4</sup>: Քանաձևի վերջում նշվում էր, որ հավելյալ միջոցառումներ  
ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում հարկ կլինի կայացնել լրա-  
ցուցիչ որոշում<sup>5</sup>:

Իրանական կողմը չուտով հանդես եկավ պատասխան հայտա-  
բարությանը, որտեղ նշում էր. ՄԱԿ-ի ԱՆ-ն ընդունել է անօրինական ո-  
րոշում, քանի որ Իրանը, հենվելով Միջուկային զենքի չտարածման  
պայմանագրի IV կետի II ենթակետի վրա, ինչի համաձայն՝ յուրաքանչ-  
յուր երկիր իրավասու է խաղաղ ճանապարհներով օգտագործել միջու-  
կային էներգիա, չարմատկելու է իր գործունեությունը<sup>6</sup>: Միևնույն ժամա-  
նակ, Իրանը հայտարարում էր, որ «Միջուկային զենքի չտարածման  
պայմանագրի II հոդվածի համաձայն չի ձգտել և չի ձգտում ունենալ մի-  
ջուկային զենք»<sup>7</sup>:

Այդ ամենով հանդերձ՝ Իրանին տրվեց ողորակի ժամանակ, իրա-  
կանացնելու թիվ 1696 քանաձևը: Սակայն չուտով միջազգային հան-  
րությունը տեղեկացավ, որ Իրանն անտեսում է ՄԱԿ-ի ԱՆ-ի թիվ 1696  
քանաձևը: Գործին փորձեցին միջամտել ՌԴ-ը և Չինաստանը՝ աշխա-  
տելով զայ որոշակի համաձայնության: Սակայն էական ձեռքբերումներ  
չգրանցվեցին:

2006թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի ԱՆ-ում կրկին քննարկման դրվեց Ի-  
րանի միջուկային ծրագրի հարցը, որի ժամանակ ԱՆՄԳ-ի ներկայացու-

ցիլը գեկուցեց, որ Իրանը չի իրականացրել թիվ 1696 բանաձևի պահանջները և, որ ամենակարևորն է, չի դադարեցնում ուրանի հարստացման աշխատանքները, ինչն անշուշտ կնպաստե՞ր վստահության մակարդակի բարձրացմանը<sup>6</sup>: Այդ գեկույցի և մի շարք այլ ուսումնասիրությունների ու քննարկումների արդյունքում, ղեկավարների 23-ին ՄԱԿ-ի ԱՆ-ն ընդունեց թիվ 1737 բանաձևը: Բանաձևի 3-րդ կետում նշվում էր, որ թուրք պետությունները համապատասխան միջոցներ կձեռնարկեն, որպեսզի կամխան Իրանի ուրանի հարստացման, ծանր ջրի արտադրության, ինչպես նաև տեղափոխման սարքերի մշակման աշխատանքների համար անհրաժեշտ թուրք տեխնիկայի նյութերի կամ պարագաների տեղափոխումը իրենց տարածքով: 3-րդ կետով կոչ էր արվում Իրանին անհասպաղ վավերացնել «Հավելյալ արձամազրույթումը»<sup>7</sup>: 10-րդ կետով դիմում էր աշխարհի թուրք երկրներին ուշադիր լինել իրենց տարածքը հատող ֆիզիկական այն անձանց նկատմամբ, ովքեր կապ ունեն Իրանի միջուկային ծրագրի զարգացման հետ ևստավել կասկածելիների անունները կցված են բանաձևին: 12-րդ կետով որոշվեց թուրք երկրներում ստեղծել ֆիզիկական և իրավաբանական այն անձանց բանկային հաշիվները, ում անունները կցված են գործին: 17-րդ կետով կոչ էր արվում թուրք երկրներին Իրանի քաղաքացիներին մասնագիտացված ուսուցում չցուցաբերել միջուկային գործունեության տարածման և միջուկային զենքի տեղափոխման սարքերի շուրջ<sup>8</sup>:

ԻԻՀ-ը մախազահ Մահմուդ Ահմադինեժադը այդ բանաձևի ընդունման վերաբերյալ հայտարարեց, «Իրանի հետ հարաբերությունները կարգավորելու իր շանսը Արևմուտքը կորցրեց: Այդ թղթի կտորով նրանք ուզում են վախեցնել իրանցիներին»<sup>9</sup>:

Շուտով պարզ դարձավ, որ Իրանը չի իրականացնում թիվ 1696 և 1737 բանաձևերը, որն էլ ավելի լաբեց մթնոլորտը: 2007թ. փետրվարի 23-ին ԱԷՄԳ-ի տնօրեն Մոհամմեդ Է-Քարադեյը ՄԱԿ-ի ԱՆ-ին գեկուցեց, որ Իրանը ոչ միայն չի դադարեցրել ուրանի հարստացման հետազոտական աշխատանքները, այլև փորձում է մեծացնել Լաբանդի ղեկերկրյա համալիրի հզորությունը, որտեղ տեղակայված են ուրանի հարստացման համար մախատնավող գազի ցեմտրիֆուգների կասկադներ: Միևնույն ժամանակ շարունակվում են աշխատանքները Արաքում գտնվող ծանր ջրի ռեակտորի կառուցման շուրջ<sup>10</sup>:

Հաշվի առնելով ԱԷՄԳ-ի տնօրենի գեկույցը՝ 2007թ. մարտի 24-ին ՄԱԿ-ի ԱՆ-ի 5647-րդ նիստի ժամանակ կրկին օրակարգ բարձրացվեց Իրանի միջուկային ծրագրի հարցը: Նիստի հենց սկզբում ներկայացվեց, որ Իրանը չի իրականացրել 1696 (2006թ.) և 1737 (2006թ.) բանաձևերը: Ընդունվեց ևս մի բանաձև՝ թիվ 1747-ը: Հարկ է նշել, որ այս բանաձև էսպես տարբերվում էր մյուսներից, քանզի, մեր կարծիքով, այստեղ առավել սուր էին դրված հարցադրումները, միևնույն ժամանակ արդեն քա-

ցահայտորեն խտավում էր Իրանի նկատմամբ պատժամիջոցների ավելացման մասին:

Վերոհիշյալ քանաձևի 5-րդ կետով ամրագրվում էր, որ Իրանը չի կարող ուղղակի կամ անուղղակի կերպով վաճառել, հատկացնել կամ իր տարածքով փոխանցել ցանկացած տեսակի զինամթերք որևէ պետության կամ նրա քաղաքացիներին: 7-րդ կետը կոչ էր անում բոլոր պետություններին և միջազգային ֆինանսական ձեռնարկություններին նոր, հավելյալ պարտականություններ չվերցնել իրենց վրա՝ Իրանին նպաստ /սորսիդիսա/, ֆինանսական օգնություններ և արտոնյալ վարկեր հատկացնելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ ԱԷՄԳ-ի տնօրենին խնդրում էին հետևել իրադարձությունների զարգացմանը 60 օրվա ընթացքում, այնուհետև հանդես գալ զեկույցով՝ տեղեկացնելով, թե որքանով է Իրանը իրականացնում թիվ 1737, ինչպես նաև նոր ընդունված քանաձևի բոլոր դրույթները, որոնց համաձայն ամբողջովին պետք է դադարեցվեն ուրանի հարստացման աշխատանքները<sup>12</sup>: Քանաձևն իրականացնելու դեպքում, ապագայում խոստանում էին համագործակցել Իրանի հետ, օժանդակել թեթև զրի նոր տեակտորների կառուցման աշխատանքներին, ինչպես նաև կոնցրետին հիմքով և ԱԷՄԳ-ի վերահսկողության ներքո ստեղծել հինգ տարվա համար նախատեսված միջուկային վառելանյութի պահեստային պաշարներ: Բացի այդ, խոստանում էին նպաստել Իրանում ուղղակի ներդրումների մեծացմանը, նրա ինտեգրմանը միջազգային տնտեսական կառույցներին, շուկաներին, ինչպես նաև Համաշխարհային առևտրի կազմակերպությանը<sup>13</sup>:

Ի՞նչ Արտաքին գերատեսչությունն վերոհիշյալ քանաձևը որակեց՝ անօրինական և անընդունելի. «ՄԱԿ-ի ԱՆ-ի մի շարք տեղությունների թեկադրանքով ԱՆ-ն փորձում է ստիպել Իրանին հրաժարվելու իր օրինական և անկապտելի իրավունքից», նշել է ԻԻՀ ԱԳՆ-ը պաշտոնական ներկայացուցիչ Մոհամեդ Ալի Հոսեյնին<sup>14</sup>:

Եվ գոնե այս պահի դրությամբ, դեռևս չկա որևէ տեղեկատվություն, թե Իրանը դադարեցրել է ուրանի հարստացման աշխատանքները: Իրանն էլ իր կողմից մեղադրում է ԱԷՄԳ-ին, նշելով, որ 2004թ. պաշտոնական թեմերանը, որպես բարի կամքի դրսևորում, դադարեցրեց միջուկային ոլորտում իր հետազոտությունները, որոնք, ըստ ձեռք բերված պայմանավորվածության, պետք է վերակախվին 2 տարի անց: Սակայն դա չտվեց ակնկալվող արդյունքը, չբարձրացրեց վստահության մակարդակը Իրանի նկատմամբ և Իրանի գործը, ի վերջո, դրվեց ՄԱԿ-ի ԱՆ-ի օրակարգում: Միևնույն ժամանակ, Իրանը հենվելով 1968թ. հուլիսի 1-ին կնքաց Միջուկային զենքի չտարածման պայմանագրի վրա, պաշտպանում է իր օրինական իրավունքը, ըստ որի՝ բոլոր պետություններն իրավունք ունեն խաղաղ նպատակներով հարստացնել ուրան:

Այսքանով վաղիս ենք մի եզրակացության, որ թե՛ ԱԷՄԳ-ն և թե՛ Միջուկային զենքի չտարածման պայմանագիրը վերանայման կարիք

ունեն: Եթե մի պետություն, հետևելով օրենքի տառին, կարողանում է խուսափել և, ըստ երևույթին, ԱԷՄԳ-ի նման կառույցը չի կարողանում 3 տարվա ուսումնասիրություններից հետո (որի ժամանակ Իրան են այցելել 2000-ից ավելի մասնագետներ) հատակորեն հաստատել կամ մերժել Իրանում գոյություն ունեցող կամ քացակալող՝ չհայտարարագրված միջուկային նյութերի առկայությունը, ապա դա նշանակում է, որ կառույցն լուրջ և անհապաղ վերանայման կարիք ունի: Հակառակ դեպքում, շուտով աշխարհի տարրեր հատվածներում, Իրանի օրինակին կարող են հետևել նաև մի շարք այլ պետություններ, որն իրավամբ վտանգի տակ կղմի համաշխարհային անվտանգությունը:

**GOHAR ISKANDARYAN**  
(IOS)

### **ON THE RESOLUTIONS OF UN SECURITY COUNCIL ON IRAN (2006-2007)**

The attention of international society has long been focused on nuclear program of the Islamic Republic of Iran. In 2006 the Director General of IAEA reported to the Security Council of the United Nations that after nearly three years of intensive verification activity, the Agency is not yet in a position to clarify some important issues relating to the Iran's nuclear programme or to conclude that there are no undeclared nuclear materials or activities in Iran. The taking as fact the report of Director General the Security Council of the UN adopted the resolutions concerning Iran which required that Iran should realize all the points included in the reports of IAEA and resolutions of UN Security Council. Iran should collaborate with IAEA in all reprocessing activities. The Security Council and IAEA calls upon Iran to ratify promptly the Additional Protocol. Iran is unfortunately not responding to the call of the Security Council of the United Nations.

#### **ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. МИД Российской Федерации, 10 июля 2006 года, Сообщение №1030-10-06-2006, <http://www.iranatom.ru/news/media/year06/june/bolton.htm>
2. Board of Governors, GOV/2006/38, Date: 8 June 2006, For official use only Item 8(g) of the provisional agenda (GOV/2006/28), Implementation of the NPT Safeguards Agreement in the Islamic Republic of Iran. <http://www.iranatom.ru/reports/rep111.pdf>

3. Резолюция 1696 (2006), принятая Советом Безопасности на его 5500-м заседании, Нью-Йорк, 31 июля 2006 г., <http://www.iranatom.ru/reports/rep112.htm>
4. ՄԽ-ն կարող է որոշել, թե զինուժի գործածությունից զերծ ինչպիսի միջոցների է պետք դիմել իր որոշումներն իրականացնելու համար, և ՄԱԿ-ի անդամ պետություններին կոչ անել կիրառել այդ միջոցները: Դրանք կարող են լինել տնտեսական հարաբերությունների լիակատար կամ մասնակի դադարեցում, երկաթուղային, ծովային, օդային, փոստային, հեռագրային, սառչոյ և այլ կապի ընդհատում ու ղեկավարվողական հարաբերությունների խզում: Charter of the United Nations and Statute of the International Court of Justice, Chapter VII, Article 41.
5. Резолюция 1696 (2006), принятая Советом Безопасности на его 5500-м заседании, Нью-Йорк, 31 июля 2006 г., <http://www.iranatom.ru/reports/rep112.htm>
6. Советский Союз в борьбе за разоружение. Сборник документов, М., 1977, с. 43-50.
7. Nuclear agreement reached between Iran and the European Union (November 15, 2004), <http://www.iranatom.ru/reports/rep056.htm>
8. Security Council Imposes Sanctions on Iran for Failure to Halt Uranium Enrichment, Unanimously Adopting Resolution 1737 (2006) Security Council 5612<sup>nd</sup> Meeting (AM), <http://www.un.org/News/Press/docs/2006/sc8928.doc.htm>
- \* Ըստ արձանագրության ԱՅՄԳ-ի ներկայացուցիչները յուրաքանչյուր ժամանակ կարող էին մտնել Իրան և հետազոտություն անցկացնել:
9. Security Council Imposes Sanctions on Iran for Failure to Halt Uranium Enrichment, Unanimously Adopting Resolution 1737 (2006) Security Council 5612<sup>nd</sup> Meeting (AM), <http://www.un.org/News/Press/docs/2006/sc8928.doc.htm>
10. Президент Ирана: резолюция ООН - "обрывок бумаги", <http://www.emigranty.ru/news.php?nid=29731>
11. В Вене открывается сессия Совета управляющих МАГАТЭ, <http://www.iranatom.ru/news/media/year07/march/vot.htm>
12. Текст резолюции: Резолюция 1747 (2007), принятая Советом Безопасности на его 5647-м заседании 24 марта 2007 года, <http://www.iranatom.ru/news/media/year07/march/vrest.htm>
13. Там же.
14. Мид Ирана: Резолюция СБ ООН незаконная и неприемлемая, <http://www.islammews.ru/index.php?name=News&file=article&sid=4635>

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՇԱԿ  
(ԵՊԷ)

ՔԵՍԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԷ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՅԱՅՄԱՆ ՓՈՒԵՐԸ

Օսմանյան կայսրության ճգնաժամին և անկմանը, ինչպես նաև Թուրքիայում հանրապետական կարգերի հաստատմանն իրենց աշխատություններում անդրադարձել են բազմաթիվ գիտնականներ<sup>1</sup>: Փաստագրական տեղեկատվության և ուսումնասիրված աղբյուրի աշխատանքների համադրումն ու վերլուծությունն է, որ ժամանակակից հետազոտողին բույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել այդ պատմական գործընթացի վերաբերյալ: Հիշատակված ժամանակաշրջանի իրադարձությունները փոխկապված են դետեռմինացիոն կապերով և տեսական ուսումնասիրության շրջանակներում հետաքրքրող ժամանակահատվածը հնարավոր է դառնում բաժանել փուլերի՝ բաժանմամբ հիմքում քացի ժամանակագրությունից դնելով նաև տվյալ փուլին բնորոշ, էական առանձնահատկությունները: Այդպիսի մոտեցման դեպքում Մուղղոսի հաշտության համաձայնագրի կնքումից մինչև հանրապետական կարգերի հաստատումն ու 1924թ. Սահմանադրության ընդունումն ընկած ժամանակահատվածը կարելի է բաժանել մի քանի փուլերի:

Առաջին փուլը միասնական քաղաքական կազմակերպության մեջ ազգայնական ուժերի համախմբման փուլն է: Այն սկսվում է ազգայնական կազմակերպությունների միավորման առաջին հաջողված փորձերի՝ Էրզրումի և Սվազի կոնգրեսներով և դրանց արդյունքում «Անատոլիայի և Ռումելիայի ազգային իրավունքների պաշտպանության համաբուրջական ընկերության»<sup>2</sup> հիմնմամբ և ազգայնականների պահանջների համակարգված փաթեթի ընդունմամբ<sup>3</sup>: Այս փուլում քեմալականները գործում են հասարակական կազմակերպության կողմից դեկավարվող ազգայնական շարժման ձևաչափում, ակնհայտորեն չեն հակադրվում սուլթանին ու արտաքնապես պահպանում են բուրքական օրենսդրությունը: Չմայած Անատոլիայում գիաստացի իշխանության տիրապետմանը՝ փուլին բնորոշ գծերից է ազգայնականների կողմից նրկրի կառավարման ձևի փոփոխության, ինչպես նաև կենտրոնական վարչակառավարական մարմինների դերակատարման ստանձնման ակնհայտ հավակնությունների քացակայությունը: Արդյունքում քեմալականներին հաջողվեց հասնել իրենց առաջ քաշած կարևորագույն պայմանի բավարարմանը՝ խորհրդարանական ընտրությունների անցկացմանը և իրենց համար անցանկալի կառավարության կազմի փոխարինմանը: Ազգայնականների աննաման հաջողությունը, թերևս, Ստամբուլի խորհրդա-

րանի կողմից «Ազգային ուխտի»՝ Թուրքիայի անկախությունն անբազրող հռչակագրի ընդունումն էր, որը հետագայում դարձավ քեմալական գաղափարախոսության և գործողությունների ծրագրային հիմնասյուններից մեկը: Առաջին փուլն ավարտվում է 1920թ. մարտի 16-ի Ստամբուլի թունազավթումներից և մարտի 18-ի՝ պատվանմտի գործունեությունն անդրոշ ժամկետով ընդմիջելու վերաբերյալ որոշմամբ:

1920թ. ապրիլի 23-ին Անկարայում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (այսուհետև՝ ԹԱՄԺ) հրավերով սկսվում է քեմալականների իշխանության օրինականցման և նրանց միջազգային ճանաչման փուլը:

Ստամբուլի օկուպացայի փաստն օգտագործելով՝ Քեմալին հաջողվեց Անկարա տեղափոխել բուլղարական խորհրդարանը, որի նորացված կազմը, անվանափոխությունը, ինչպես նաև հետագա գործունեությունը թույլ է տալիս կարծել, որ, ըստ էության, կազմավորվել էր նոր օրենսդիր մարմին<sup>1</sup>: ԹԱՄԺ-ի հրավիրումը Քեմալը և նրա կողմնակիցները փորձում էին օրինականացնել Ստամբուլի պատվանմտի անդամներին պատգամավորի կարգավիճակով Անկարայում հավաքելով, իսկ պատվանմտի հրավերման կարգադրագրի քացակալությունը մեկնաբանում էին արտակարգ հանգամանքով՝ դաշնակիցների մոտ սուլթանի գերությանը: ԹԱՄԺ-ը հռչակեց իրեն երկրի միակ օրինական իշխանությունը, որը հենվելով ազգի կամքի վրա իր ձեռքում է կենտրոնացնում թե՛ օրենսդիր, և թե՛ գործադիր իշխանությունը: Անօրինական հռչակվեցին այն թուր պայմանագրերը, համաձայնագրերը, որոնք 1920թ. մարտի 16-ից հետո ստորագրվել էին կամ կատրագրվեին առանց ԹԱՄԺ համաձայնության<sup>2</sup>: ԹԱՄԺ-ի գումարումից հետո «Անատոլիայի և Ռումելիայի ազգային իրավունքների պաշտպանության համաբուլղարական ընկերության»՝ Ներկայացուցչական կոմիտեն ինքնադաժարվեց:

Այս փուլն աչքի է ընկնում Անկարայի և Ստամբուլի քացահայտ պայքարով, որի ընթացքում քեմալականներին հաջողվեց հաղթանակ տանել սուլթանական կառավարության ռազմական և գաղափարախոսական հակադեմոկրատիայի նկատմամբ: Այս շրջանի կարևորագույն հաջողություններն էին՝ 1920թ. հունիսի 22-ին Թուրքիա մեղրտման և գրեթե Անկարա հասած հունական զորքերի դեմ տարած հաղթանակը<sup>3</sup>, ու քեմալական կառավարության կողմից, ԽՍՀՄ-ի նման համակիր երկրի ձեռքբերումը, դաշնակիցների հետ կնքված պայմանագրերը, որոնք նախ և առաջ նորահռչակ կառավարության միջազգային ճանաչման հավաստումն էին<sup>4</sup>: Միևնույն ժամանակ, չնայած պահպանողական պատգամավորների քանքերին, Քեմալին և նրա կողմնակիցներին հաջողվեց խուսափել սուլթանի գոյություն ունեցող կարգավիճակի պահպանման կամ նրա համար որևէ նոր կարգավիճակի սահմանման անհրաժեշտության մասին որևէ կոնկրետ որոշման ընդունումից<sup>5</sup>: Վերոհիշյալ փուլն ավարտվում է 1922թ. հոկտեմբերի 11-ին Մուդանիայի հաշտության համաձայնագրի կնքմամբ, որով վերջ է դրվում հայ-թուրքական պատերազմին:

Երրորդը՝ Թուրքիայի հանրապետության հռչակման փուլն է, որն սկսվում է Մուշախիայի հաշտության կնքումից հետո: Հասունացել էր պառլամենտար ինքնակառավարման կարևորագույն խնդիրների լուծմանը՝ այդ թվում, առաջին հերթին, որպեսզի կայացնել պետության կառավարման ձևի վերաբերյալ: Կատարելով պահպանողական ուժերի դիմադրությունը՝ նրանց հաջողվեց հասնել ԹԱՄԺ-ի կողմից Մեհմեդ 6-ին գահընկեց անելու, խաղիֆայության և սուլթանության անջատման և սուլթանության վերացման մասին 1922թ. նոյեմբերի 1-ի օրենքի ընդունմանը: 1923թ. հուլիսի 24-ին Լոզանի կոնֆերանսի երկարատև ջանակցությունների արդյունք հանդիսացող հաշտության պայմանագրի ստորագրումից հետո՝ 1923թ. հոկտեմբերի 29-ին հռչակվեց Թուրքիայի անկախ հանրապետությունը, իսկ 1924թ. ապրիլի 20-ին ԹԱՄԺ-ի կողմից ընդունվեց նորահռչակ հանրապետության առաջին Սահմանադրությունը, որն իրավաբանորեն ամրագրեց երկրում տեղի ունեցած կարևորագույն փոփոխությունները: Իսկ 1924թ. մարտի 3-ին ԹԱՄԺ-ն ընդունեց օրենք խաղիֆայության վերացման և օսմանյան բազաժառանգության՝ երկրից արտաքսման մասին: Այսպիսով, Թուրքիայի Հանրապետության հռչակմամբ և նոր Սահմանադրության ընդունմամբ ավարտվում է Թուրքիայում քննադական շարժման մինչև հանրապետական վեջին՝ երրորդ փուլը: Չնսեմացնելով Թուրքիայում հանրապետական կարգերի հաստատման կարևորությունը, այնուամենայնիվ կարծում ենք, որ տվյալ փուլում քննադականների ամենամեծ հաջողակեց Թուրքիայի համար առավելագույն ձեռնադրու պայմանների ամրագրումն էր:

Ուսումնասիրելով Թուրքիայում հանրապետական կարգերի կայացման փուլերը՝ կարելի է տեսնել ոչ միայն պետության կառավարման ձևի փոփոխության, այլև ազգայնական շարժման քաղաքական կազմակերպության՝ պետական իշխանության կենտրոնական համակարգի վերափոխման պատմական մի յուրահատուկ գործընթաց: Այն առավել հետաքրքիր է դառնում, եթե ուսումնասիրում ենք ժամանակի այլսարհաքաղաքական քարոզիչական իրավիճակի համատեղությունը:

ARSHAK KARAPETYAN  
(YSU)

### THE KEMALIST MOVEMENT AND THE FORMATION PHASES OF THE REPUBLIC OF TURKEY

The subject of the article is the foundation of the republic government in Turkey. Within the scopes of the theoretic research the represented period is divided into stages considering as a basis a chronological approach and



specific features as well. As a result of the research we can see not only alteration of the form of state governance, but also a historical process of transformation of nationalist movement of the political organization into the central system of public authority.

## ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Ինճիլյան Հ.Գ., Օսմանյան կայսրության անկումը, Եր., 1984, Զաղրիանյան Ս. Թուրքիայի շաղարախան իսլամաբան 1920-1930-ական թթ. Եր., 2001, Соколовский Н., Очерки современной Турции. Ташис. 1923., Павлович М.П., Гурко Кражин В., Раскольников Ф., Турция в борьбе за независимость, М., 1925, Шамсутдинов А.М., Национально-Освободительная борьба в Турции 1918-1923 гг., М., 1966, Миллер А.Ф., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, Гасратян М., Орешкова С., Петросян М., Очерки истории Турции, М., 1983, Ушakov А.Г., Феномен Атаюрка. Турецкий правитель, творец и диктатор, М., 2002, Kinross Lord, Atatürk. The Rebirth of a Nation, London, 1965, Zürcher Erik J. Turkey. A modern history, London, 2004 և այլք:
2. Էրզրումի (1919թ. հուլիսի 23-օգոստոսի 7) և Ալազի (1918թ. սեպտեմբերի 4-11) կոնգրեսների արդյունքում ղեկավարեցին ազգային պահանջների որոշակի փաթեթ, որը դրույթներ էր պարունակում Թուրքիայի տարածքային ամբողջականության մասնատման անբուխարեղիտության, ստարիբերյա միջամտության և օկուպացիայի դեմ ազգային պայքարի, աղ պաշարում ազգային ուժերի մասնակցության՝ որպես գերակա գործոնի, Թուրքիայի մանդատային կամ պրոտեկտորային կարգավիճակի անընդունելիության, կառավարության գոյությունն առանց վերանկենսան նպատակով պատրանմանի չուսափույթ հրավիրման ամերաժշտության վերաբերյալ:
3. 1920թ. ԹԱՄԺ-6 ունեյ 338 անդամ, որոնցից 105-ը ժամանել էին Ստամբուլից, իսկ 233-ը մորթիտի պատգամավորներ էին: Տե՛ս Մամսուտանով Ա.М., Национально-освободительная борьба в Турции 1918-1923 гг., М., 1966, էջ 109:
4. Տե՛ս մույն տեղում, էջ 110:
5. 1921թ. սեպտեմբերի 13-ին, Մակարյա գետի ափին, հունական և բուլղարական բանակների միջև տեղի ունեցած ճակատամարտի խաղաղապահ վճռից ողջ պատերազմի ելքը հոգուտ բուրբոյի:
6. Խոսքը ԽԱՀՄ և Թուրքիայի միջև 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում և հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված պայմանագրերի, 1921թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը Լոնդոնում տեղի ունեցած կոնգրեսի մասին է:
7. Տե՛ս՝ Атаюрк К., Избранные речи и выступления, М., 1966, էջ 139:

ԿՆՑԱԶՅԱՆ ԴԱՎԻԹ  
(ԱԻ)

ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՄԱՆ  
ԵՎ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ  
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
1920Թ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄՈՒ ԱԴԲԵՋԱՆԻ  
ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Այս հոդվածում փորձ է արվում ներկայացնել Աղքեծքանի դիրքորոշումը Անդրկովկասի հանրապետությունների 1920թ. ապրիլի խորհրդաժողովում արտաքին քաղաքականության քննազատման գործողությունների համաձայնեցման և համադաշնության ստեղծման հարցում:

Աղքեծքանի միջազգային դրությունը 1920թ. գարնանը արագորեն քարդանում էր: Այս անգամ կրկին հիմնական վտանգը սպառնում էր հյուսիսից, բայց արդեն ոչ թե Կամավորական բանակի, այլ Խորհրդային Ռուսաստանի կողմից, որի բանակներն արդեն ընդհուպ մոտեցել էին Անդրկովկասի սահմաններին: Նման պայմաններում Աղքեծքանի առջև ծառայալ կերպի անվտանգության ամրապնդման գործում Անդրկովկասի հանրապետությունների քաղաքական և դիվանագիտական աջակցության ապահովման խնդիրը:

Մյուս կողմից 1920թ. մարտի վերջին Աղքեծքանը փորձ էր արել զենքի ուժով վերջնականապես լուծել Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցը: Արդյունքում բռնկվեց Ղարաբաղի հայության ապստամբություն, հակամարտությունն ընդունեց լայնածավալ բնույթ՝ իր մեջ ներքաշելով ԱՀ զինված ուժերի զգալի մասը: Ուստի կենսական խնդիր էր դառնում Հայաստանի հետ համաձայնության գալը՝ զորքը Ղարաբաղի լեռներից հյուսիսային սահմաններ տեղափոխելու համար: Այդ իսկ պատճառով Բաքում առանձնակի շահագրգռվածություն էր ցուցաբերում Անդրկովկասի հանրապետությունների խորհրդաժողովի գումարման հարցում:<sup>1</sup>

1920թ. ապրիլի 9-ին Թիֆլիսում բացվեց Անդրկովկասի հանրապետությունների խորհրդաժողովը:<sup>2</sup> Նրա օրակարգը հաստատվեց միայն ապրիլի 11-ին՝ կրորդ միստի ընթացքում:<sup>3</sup> Նրանում ընդգրկվեցին Անդրկովկասի հանրապետությունների մշտական օրգանի ձևավորման, արտաքին քաղաքականության ոլորտում հանրապետությունների գործողությունների համաձայնեցման և համադաշնության ստեղծման հարցերը:<sup>4</sup>

Խորհրդաժողովի ապրիլի 13-ի միստում ԱՀ պատվիրակության ներկայացուցիչ Օլգերտի բեյ Կրիկինակին ներկայացրեց նախագիծ «Անդրկովկասի հանրապետությունների Խորհրդի մասին կանոնադրություն» վերտառությամբ, ըստ որի, մշտական այդ օրգանի փազորությունների մեջ

մտնելու էին հանրապետությունների արտաքին անվտանգության, նրանց անկախության և շեղբության պաշտպանության համար իր տանելը<sup>5</sup>։

Ապրիլի 16-ի միատում մույմ պատժիրակը առաջարկեց սկզբից քննարկել արտաքին քաղաքականության կորդինացման, իսկ հետո միայն՝ տարածքային հարցը։ Վրաստանի պատժիրակությունն անմիջապես պաշտպանեց այդ միասնականությունը, մինչդեռ ՀՀ ներկայացուցիչների դիրքորոշմամբ՝ քանի դեռ չէին լուծվել տարածքային հարցերը, խորհրդատուի որոշումները իրական ուժ չէին ունենալ։ ՀՀ պատվիրակ S.Բեկզադյանը նշեց, որ եթե խորհրդատուները հանդես գալու են հանրապետությունների անկախության հանդեպ արտաքին նկրտումներով, այսինքն՝ հյուսիսից եկող վտանգի դեմ ընդհանուր պայքարի օգտին, ապա ՀՀ պատվիրակությունը կառաջարկի քննարկել հարավից եկող վտանգի հարցը, քանի որ բուրքերը դաշինքի մեջ են բուլղարիկների հետ։ Խորհրդատուները, ըստ նրա, պետք է պարզեր ԱՀ կառավարության վերաբերմունքը հայկական պետականության հանդեպ և առույգ տվյալներ ձեռք բերել ԱՀ և Թուրքիայի միջև իբրև գոյություն ունեցող պայմանագրի մասին<sup>6</sup>։ Ուստի սկզբունքորեն դեմ չլինելով արտաքին քաղաքականության մասին հարցը դնելուն՝ Բեկզադյանը խնդրեց այն ընդլայնել՝ ներառելով հարավից եկող վտանգը։ Փաստորեն հայկական կողմը ակնարկում էր այն հանգամանքը, որ, խոսելով հյուսիսից եկող վտանգի մասին, Աղլըբեջանը ոչ միայն անտեսում էր Թուրքիայից բխող վտանգը, այլև սերտ հարաբերությունների մեջ էր վերջինի հետ։

Խորհրդատուները այդ հարցին կրկին անդրադարձավ ապրիլի 19-ի միատում, որի ժամանակ ԱՀ և Վրաստանի պատվիրակությունները կրկին առաջարկեցին սկզբից քննարկել արտաքին քաղաքականության կորդինացման և հետո նոր միայն տարածքային հարցերը։ ՀՀ պատվիրակ Հ.Օհանյանյանը ընդդիմացավ դրան՝ նշելով, որ խոսել արտաքին քաղաքականության կորդինացման մասին այն ժամանակ, երբ չի կորդինացվում հանրապետությունների մեջքին քաղաքականությունը, նպատակահարմար չէ։ Նրա կարծիքը չընդունեց Վրաստանի պատվիրակ Է.Գեզեկորին՝ հայտնելով, որ մինչ իրենք կլուծեն իրենց վեճերը, կարող է վտանգվել հանրապետությունների գոյությունը։ Նա նշում էր, որ առկա է ապառնալիք հյուսիսից ու հարավից, և այն ժամանակ, երբ պետք է կորդինացվեն Անդրկովկասի ռազմական և դիվանագիտական բոլոր քայլերը, չի կարելի ժամրոտության կենտրոնը տեղափոխել ներքին վեճերի վրա։ Ուստի պետք էր ժամականավորապես մոռանալ ներքին հակասությունները ու աշխարհին ցույց տալ, որ երեք հանրապետություններն իրենց անկախության պաշտպանության գործում միասնական էին<sup>7</sup>։

Իր հերթին Աղլըբեջանի ներկայացուցիչ Ահմեդ բեկ Ադաևը նշեց, որ աղբյուրական կողմի դիրքորոշմամբ ԱՀ անկախությունը պետք է պաշտպանվեր բոլոր միջոցներով, և մյուս հանրապետությունները ևս պետք է հանդես գային մույմ նպատակով, քանի որ արտաքին վտանգը

նույնն էր քողոյի համար: Իսկ Օլգերդի քեյ կրիչինակին նշում էր, որ ինքնախաբերութեան կլիներ հավատալ, քե ներքին հարցերը կլուծվեին խորհրդատուութի ընթացքում, մինչդեռ արտաքին ըստարականութեան հարցը անհետաձգելի էր:

Սակայն հայկական կողմը մնում էր անդրդվելի: Հ.Օհանջանյանը նշեց, որ քեև որոշ ներքին հարցեր, օրինակ, հայ-վրացական տարածայնությունները կարելի էր հետաձգել, ապա կային մաս մի շարք ներքին հարցեր, որոնք ունեին արտաքին բնույթ և անհետաձգելի էին: Այսպես, հարկամաները Ղարաբաղին, Չանգեզուրին և Սուրմալուին նպատակ ունեին նախապատրաստել հարձակումը Հայաստանի վրա հարավից՝ Թուրքիայի կողմից: Եվ առանց լուծելու այդ խնդիրները, ՀՀ-ն չէր կարող խոսել արտաքին քաղաքականութեան կորոշինացման մասին:

Ե.Գեզեչեզդին, իր հերթին արձանագրելով ՀՀ և ԱՀ միջև անվտանգութեան անկայությունը, կոչ արեց կողմերին հայտարարություն անել միմյանց անկախութեան պաշտպանութեան և նրա նկատմամբ ռոմեզությունների դեմ պայքարի պատրաստակամութեան մասին: ԱՀ պատվիրակ Հ.Աղաևը, արձագանքելով ՀՀ պատվիրակութեան ակնարկներին ԱՀ և Թուրքիայի միջև Հայաստանի դեմ ուղղված փոխզոտմանը, նշեց, որ հայերի կողմից ելույթները Ադրբեջանի դեմ լինում են հենց այն ժամանակ, երբ վերջինին սպառնում է որևէ արտաքին վտանգ, որպես օրինակ քերելով այն, որ Ղարաբաղում ապստամբությունը ակտիվեց այն ժամանակ, երբ քուլակները մտածում են Ադրբեջանի սահմաններին: Իսկ ԱՀ ժյուս պատվիրակ Նուսրի խոսեցին կարծիք էր հայտնում, որ քաղաքական մերձեցման մթնոլորտ ստեղծելու դեպքում կհեշտամար ներքին հարցերի լուծումը:

Ի վերջո ադրբեջանավրացական համատեղ ջանքերով խորհրդատուութի հարցը օրակարգի մեջ դրեց հետևյալ ձևակերպմամբ. «Համրապետությունների գործադրությունների կորոշինացումը արտաքին քաղաքականութեան մեջ՝ կապված ներքին բախումների դադարեցման հետ»<sup>9</sup> Այսպիսով, տեսնում ենք, որ հարցադրումն ռոմեր փոխզոտմային բնույթ՝ թույլ չտալով Ադրբեջանին խոսափել ներքին հարցերի քննարկումից:

Խորհրդատուութի ապրիլի 21-ի նիստում ՀՀ պատվիրակությունը առաջ քաշեց մի բանաձևի նախագիծ, ըստ որի, համրապետությունների միջև բախումների պաշտամները վերացնելու համար անհրաժեշտ էր համարվում պայմանագրերի կնքում, որոնցով Անդրկովկասի համրապետությունները կպարտավորվեին չամել միմյանց անկախութեանը սպառնացող քայլեր և չկնքել անցատ պայմանագրեր ժյուս կողմերի անկախութեանը սպառնացող արտաքին ռոմերի հետ: Առաջարկվում էր կնքել պայմանագրեր վիճելի տարածքների ճշգրտման, ապրանքափոխանակութեան հաստատման, տարանցիկ առևտրի, վերաբնակեցման, աղտաձայններից օգտվելու կարգի, ՀՀ կարիքների համար ԱՀ կողմից նախարի անարգել ատարման և այլ կարևոր հարցերի վերաբերյալ: Դրանով էր

ՀՀ պատվիրակությունը պայմանավորում հատուկ պայմանագրի ստորագրումը արտաքին քաղաքականության կողմնացման մասին:

Ի պատասխան ԱՀ և Վրաստանի պատվիրակությունների փաստարկներին, որ նման պայմանագրերի մշակումը և ստորագրումը պահանջում էր երկար ժամանակ, ՀՀ ներկայացուցիչները նշում էին, որ դրանց կնքումը ամենատեղի էր կողմերի միջև վստահության մղրնությունից հաստատման տեսակետից, և քացի այդ, խոսքը գնում էր միայն սկզբունքների իրավական ամրագրման մասին, ինչը կարելի էր անել խորհրդատուների մեկ-երկու նիստերի ընթացքում: Իրականում հայկական կողմը առաջ էր քաշել այնպիսի պայմաններ, որոնց շուրջ Անդրկովկասի հանրապետությունները արդեն իսկ մեկուկես տարի է վիճակի չէին համաձայնության հասնել: Արդյունքում խորհրդատուները արձանագրեց արտաքին քաղաքականության կողմնացման հարցում համաձայնության գալու ծախսողումը:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ Անդրկովկասի հանրապետությունների քաղաքական աջակցությունը ստանալու և հակախորհրդային միասնական ճակատ ստեղծելու Ուստրբեկովի կառավարության առջև դրված խնդիրը ծախսողվեց: Տապալվեց ՀՀ կառավարության հետ քաղաքական համաձայնության գալու փորձը, որը հաջողության դեպքում կարող էր ձեռքերի ազատություն տալ Ադրբեյջանին հյուսիսային ուղղությամբ: Պատճառը նրանում էր, որ Բաքում չկարողացավ փախուտել անվտանգության մթնոլորտը և ասպացուցել իր նպատակների անվերջ լինելը հայ-ազգայնական կողմի հակասությունների հաղթահարման հարցում: Այն պայմաններում, երբ կողմերը ոչ միայն էին վիճակի չէին համաձայնության գալ Ղարաբաղի և Զանգեզուրի պատկանելության հարցում, այլև Ադրբեյջանը նույնիսկ փորձում էր չեղյալ հայտարարել ԱՀ և Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի միջև 1919թ. օգոստոսի 22-ի համաձայնագիրը, երևանը չէր գնալու քաղաքական գործակցության Բաքվի հետ:

DAVID KNYAZYAN  
(IOS)

**THE ISSUES OF COORDINATION OF FOREIGN POLICY  
AND CREATION OF A CONFEDERATION IN THE 1920  
CONFERENCE OF TRANSCAUCASIAN REPUBLICS AND  
THE POSITION OF AZERBAIJAN**

In the beginning of 1920 the Republic of Azerbaijan found itself in a difficult international situation due to the possible aggression by the Soviet Russia. In the course of the Conference of Transcaucasian Republics in April of 1920 Baku made an attempt to gain the political assistance of Georgia and

Armenia and form an anti-Soviet block. But the Conference failed to reach an agreement on the issue of coordination of foreign policy of Azerbaijan, Armenia and Georgia.

In our conclusion we should state, that the Azerbaijani delegation was not able to overcome the atmosphere of distrust between Yerevan and Baku. The opposite sides weren't able to reach even a temporary agreement on the problem of Karabagh and Zangezour, that's why the Armenian party didn't approve the Azerbaijani initiative.

### ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱՍ, ֆ.200, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, գ.365, ք.10, "Շոտո" քերթ, # 56, 1920թ. մարտի 10:
2. Խորհրդատուում ազգային պատվիրակությունների կազմը տես՝ ՀԱՍ, ֆ.200, գ.411, ք.56:
3. Նման ուղացման պատճառն այն էր, որ ՀՀ և Վրաստանի պատվիրակությունների պնդմամբ նախնադաս պետք է լուծվեր հայ-ադրբեյջանական բախումների դադարեցման հարցը, միևյուրեւ ԱՀ պատվիրակությունը մեջմում էր՝ պատճառաբանելով անհրաժեշտ փազորությունների բազակայությունը: Ի վերջո ԱՀ պատվիրակությունը ստիպված էր տեղի տալ հայ-վրացական համառոտ ճնշմանը: Տես՝ ՀԱՍ, ֆ.200, գ.411, ք.56, "Շոտո" քերթ, # 87, 1920թ. ապրիլի 20, # 88 1920թ. ապրիլի 21:
4. "Շոտո" քերթ, # 89, 1920թ. ապրիլի 22: Օրակարգի նախնական տարբերակում արտաքին քաղաքականության բնագավառում փոփոգրծակցության հարցը 2-րդ էր, իսկ համադաշնության հարվը՝ վերջինը՝ 4-րդը: ԱՀ պատվիրակությունը, շկարողանալով հասնել նրան, որ համադաշնության հարցը տեղափոխվի 2-րդ տեղ, Վրաստանի պատվիրակության աջակցությամբ ստաք բաշեց հանրապետությունների ճշտական օրգանի ստեղծման հարցը, որը դրվեց 2-րդ տեղում՝ զղանալ փաստորեն քողարկված կեղավոլ հասնելով իր նպատակին:
5. "Շոտո" քերթ, # 91, 1920թ. ապրիլի 24:
6. Պայմանագրի տեքստը տես՝ ՀԱՍ, ֆ.276, Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ, գ.184, ք.67:
7. ՀԱՍ, ֆ.200, գ.576, ք.1-3 ԱՀ պատվիրակ Վեջիլունը պաշտպանեց Բեկզադյանի առաջարկը և իր կատավարության անունից պաշտոնապես հեղրեց ադրբեյջանարուքրական դաշինքի գոյությունը՝ դա գնահատելով, որպես սաղանք:
8. Ե.Գեզելկերին նախագգոռացմում էր խորհրդատուովին, որ չկրկնվեր այն փաստը, երբ վտամզի առաքացման ժամանակ ՀՀ-Ս ճեռնպան մնաց համառոտ հանդես գալուց:
9. ՀԱՍ, ֆ.200, գ.576, ք.11-15:
10. Նույն տեղում՝ ք.16-18:

## ՀԱԿՈՔՅԱՆ ԱՐՄԵՆ (ԱԻ)

### «ՇԻՐՎԱՆ» ԵՐԿՐԱՆՎԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՁ

«Շիրվան» տեղանվան ստուգաբանության և նրա պատմաճակարային սկզբնական բովանդակության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են մի քանի տեսակետներ, որոնց հիմնավորվածությունը ճշտելու համար անհրաժեշտ է մեկ անգամ ևս անդրադառնալ դրանց փաստաբանություններին:

Դեռևս XIX դարում Ա. Բաքիխանովը<sup>1</sup>, հենվելով արաբական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա, գտնում էր, որ սկզբնապես Շիրվանն անվանվել է Անուշիրվան՝ այդ տարածքում իշխանություն հիմնած Սասանյան Խոսրով Անուշիրվան բազավորի անվամբ, որից հետագայում ընկել է «անու» մասնիկը: Պետք է նշել, տակայն, որ արևելյան աղբյուրների նմանատիպ տեղեկությունները չեն կարող հավաստի լինել, քանի որ թե՛ ուշ սասանյան և թե՛ այդ նույն պատմական ավանդույթին հետևող արաբ հեղինակները համախա չեն այս կամ այն բազավորության կամ քաղաքի ծագումը կապում Սասանյան որևէ բազավորի հետ:

Հարկ է նշել, որ աղբյուրներում տեղանունը վկայված է երկու տարբերակով՝ «Շիրվան» և «Շարվան» (Širvān, Šarvān): Վ. Մինորսկին գտնում է, որ Širvān ձևը վերջնականապես հաստատվել է XVI դարում, իսկ արաբական, ինչպես նաև վրացական աղբյուրներում այն վկայված է Šarvān ձևով<sup>2</sup>: Սակայն շարունակելով իր միտքը՝ ականափոր կովկասական թերուտ է այլ աղբյուրներում, մասնավորապես՝ «Հուդուդ ալ-Ալամ»-ում երկու զուգահեռ տարբերակների (Šarvān, Širvān) առկայության փաստը և եզրակացնում, որ դրանք աղբյուրը են կամ բարբառային տարբերությունների, կամ էլ ժողովրդական ստուգաբանության արդյունքում անհասկանալի Šarvān-ի վերածվելուն Širvān-ի («առյուծատեղի»): Այդուհանդերձ, վերջում որպես բառի ստուգաբանության հիմք, նա ընդունում է Širvān տարբերակը<sup>3</sup>: Վ. Մինորսկին նաև, «Շիրվան»-ից անջատելով տեղանուն ցույց տվող «վան» վերջածանցը, «Շիր» բաղադրիչը նմանեցնում է Դալլամում գտնվող համանուն լեռնային շրջանին (Շիր-Քուհ) և դրա հիման վրա բառի ծագումը կապում Դալլամից դեպի Արևելյան Այսրկովկաս իրանական ցեղերի հին տեղաշարժերի հետ<sup>4</sup>:

Իրանական մեկ այլ ցեղախմբի՝ սարմատների հետ է կապում քննարկվող տեղանունը Ի. Ջավախիշվիլին՝ ենթադրելով, որ հունարենում և լատիներենում «չ» տառի բացակայության հետևանքով «շար» ցեղանունը կարող էր վերածվել «սար»-ի, իսկ Šarvān տեղանունը՝ պահպանել բառի մախնական տարբերակը<sup>5</sup>:

Կասկածից վեր է այն փաստը, որ միջնադարում Արևելյան Այսրկովկասում տեղի ունեցած Շիրվանի պետական կազմավորումը (իշխանությունը, այնուհետև թագավորությունը) իր զարգացում վիճակում իրանական պատմաճշակությանին հրեալու է եղել, յնայամ է ենթարկվել է տարրեր ժամանակահատվածներում տարրեր քաղաքական ազդեցությունների: Սակայն միաժամանակ կարծում ենք, որ «Շիրվան» տեղանվան ստուգաբանությունը ստավել արդարացվամ է կապել տվյալ տարածքի մախորդ շրջանի պետական կազմավորման՝ Բուն Աղվանքի թագավորության ցեղերից որևէ մեկի անվան հետ<sup>6</sup>: Այս առումով առավել ընդունելի տարրերակ կարող է համարվել Ալ. Հակոբյանի արտահայտամ տեսակետը՝: «Արշինս, «Շիրվան» քառից առանձնացնելով «ան» վերջավորությունը, «շիրվ» քաղաղրիչի տակ ողջակիորեն տեսնում է աղվանական ցեղերից մեկին՝ ճիւղերին<sup>7</sup>:

Եւսի և սոսց արդարացվամ պետք է համարել «վան»-ի փոխարին «ան» վերջավորության անջատումը, որը պարսկերենի հոգնակիակերտ ամանցն է, և, ինչպես գրաբարյան «ք» ժասնիկը, կարող է արտահայտել թե՛ որևէ ցեղի կամ ժողովրդի անուն, և թե՛ այդ ցեղով կամ ժողովրդով քնակեցվամ վայր (ոմմա. օրինակ՝ Յնն, Daylamn, Talmn, Tatarskn և այլն):

Հավանական ենք համարում մակ «ճիրք»-ից «շիրվ» անցումը, քանի որ ք→վ (ինչպես օրինակ Արտարան-Արտավան, Շահպաղի-Շաբուր-Շավուր և այլն) և դ/→ո/ի անցումները իրանական լեզուներին քնորոշ են, իսկ ճ-ի անցումը շ-ի կարող է լինել պարսկերենում այդ հնչյունի քաակայության հետևանք:

Հարցի մման լուծումը հավանական ենք համարում մակ այնքանով, որ արաբական և պարսկական աղբյուրները հայկական և հունական աղբյուրների պատկերացրամ ճիւղքի տարածքում են տեղադրում սկզբնապես նույնպիսի փոքր տարածքով Շիրվանի թագավորությունը՝ ներկայիս Շամախի քաղաքի շրջակայքում<sup>8</sup>: Իսկ հետադարձության (ոնտրոսպեկցիա) սկզբումը որևէ տեղանվան ստուգաբանությունը քննելիս, ինչպես հայտնի է, տարածվամ երևույթ է:

Մյուս կողմից՝ այսպիսի տեսակետը չի հակասում «Շիրվան» անվան ստուգաբանության մեջ իրանական ազդեցություն տեսնել ճշտողների տեսակետին, քանի որ «ճիրք»-ի անցումը «շիրվ»-ի ինքնին ենթադրում է իրանալեզու տարրի ազդեցություն (թեկուզ և նույն լեզվախմբի մեջ մտնող Ֆրախչի, Գիլանի, Մազանդարանի քարթառների միջամտությունը): Իսկ մման ազդեցությանը կարող էին մաաստել թե՛ իրանալեզու ցեղերի (սելյուքներ, սարմատներ, մազդերներ, ալաններ և այլն) թափանցումները Այսրկովկաս տարրեր ժամանակահատվածներում, թե՛ տեղական իշխող հարստությունների իրանական մազումը<sup>9</sup>: Եշենք մակ, որ սոսլամիմիկայի սկզբունքների տեսանկյունից նույնպես քնական կլիներ



իրանականացված տարածքում արդեն այդ ֆունի վրա փոքրամասնություն կազմող որևէ ցեղի բնակության վայրը այդ ցեղի անվամբ կոչելը<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է հայկական աղբյուրներին, ապա այստեղ առաջին հայացքից քարոզություն են առաջացնում միայն «Աշխարհացույց»-ի տվյալները, որտեղ «Ճիղրք»-ից հետո բվարկվում է «Շիղրք»-ը, իսկ դրանց զուգահեռ՝ նաև «Շրան» տարբերակը<sup>12</sup>: Սակայն, ինչպես հայտնի է, «Աշխարհացույց»-ում պահպանվել են տեղեկություններ, որոնք պատկանում են տարբեր ժամանակային շերտերի, և նմանատիպ զուգահեռ այլ ձևեր նույնպես տեղ են գտել այնտեղ<sup>13</sup>: Իսկ համարելով դրանք նույն անվան ժամանակային տարբեր շերտեր՝ կարելի է փաստել, որ «Աշխարհացույց»-ը պահպանել է այդ անվանման տարբերակն իր զարգացման մեջ: Հատկանշական է, օրինակ, որ Բ. Հաղուրտյանը «Աշխարհացույց»-ի տեղեկությունների հիման վրա կազմած իր քարտեզում այդ երեք ցեղանունները տեղադրում է կողք կողքի<sup>14</sup>: Կարծում ենք, որ վերը նշվածի լուսի ներքո, դրանք կարելի է տեղադրել նույն տեղում՝ գուցե տարածքային ավելի լայն ընդգրկմամբ:

Այս հարցի պարզաբանումը որոշ հավանականությամբ թույլ է տալիս նորովի դիտարկել և ճիշտ գնահատել Արևելյան Այսրկովկասում էթնիկական գոծընթացների շղթայությունները զարգացած միջնադարի ժամանակահատվածում:

ARSEN HAKOBYAN  
(IOS)

#### ON THE ORIGIN OF THE TOPONYM «SHIRVAN»

We have several points of view on the etymology of the term *Shirvan*. The most circulated opinion is that of V. Minorsky. He suggested to divide this term to suffix "van" and component "shir" thus trying to see in the latter the consequences of the old migrants from the Shir-Kuh area of Daylam. In historical literature there is also an opinion according to which the term *Shirvan* is connected with the old tribes of Sarmats.

But we suppose that the most logical solution of this issue can be found in the already existing opinion of the connection of Shirvan and the former inhabitants of that area (around the present city of Shamakha), the Albanian Chilbs or Silvs. Such point of view is not only at variance with historical and linguistic facts but also helps us to have a new look on the ethnic processes of the Eastern Transcaucasia in the middle ages.

## ՇԱՆՈՅԱԳՐՈՒՅՈՒՆՆԵՐ

1. Бакиханов А.К., Гюлистан-и Ирам, Баку, 1926, с. 4-5.
2. Минорский В.Ф., История Ширвана и Дербента, X-XI веков, М., 1963, с. 34.
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 33-35, նշված տեղաշարժերի մասին տե՛ս V. Minorsky, La Domination des Dailamites, Paris, 1932.
5. Джавахишвили И.А., Основные историко-экономические проблемы истории Грузии, Кавказа и Ближнего Востока древнейших эпох. "ВДИ", 1939, №4, с. 40-41.
6. Նեան կարծիք, սակայն ստանց ճշգրտումների տե՛ս մահ Джидди Г.А., Средневековый город Шемаха (IX-XVII вв), Баку, 1981, с. 18.
7. Ахоян А.А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, с. 90
8. Նշենք որ կարգի աշակի լուծումը ենթադրո է շարունակ Ռ. Հաղուրդյանցին՝ Լփինքի և Գիրքերի միջև տեղադրությունից հետո (տե՛ս Ռ. Հաղուրդյանց, Լփինքի տեղադրության կարգի շուրջ, ԲԵՀ, 1971, №1, էջ 108-124): Մանրագրանք նաև նույն խնդրի մասին Տ. Դալայանի (Տ. Դալայան, Շիրական տեղամասի ստուգարանագրանքան շուրջ, Հայկական Հայագիտական Համոգի, հո. ԻՁ., Պէլլոսք 2006) վերջերս լույս տեսած հոդվածին, որտեղ ենթիմակը քննարկվող տեղիների ստուգարանությունը կապում է Խաղվանմանք հետ՝ հիմնվելով սակայն կովկասյան շրջը ցեղերի տեղադրության հնացած տեսակետների վրա:
9. Պիլնիտաի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ «...Աղվանքի տանձանից սկսած՝ լուծերի ողջ մակատով քննվում են Ճիզդեթը (Տին) ցեղերը, իսկ ալվեից ներքև՝ լիինները (Lupeni), այնուհետև ղիդորները և սոդերք» (Pun. Nat. Hist., VI, 29): Ազարանգեղոսը հայտնում է, որ Սասանյան թագավորների և հայոց խորթով աբրալի միջև պատերազմի ժամանակ վերջինս օգնության էին գալիս աղվանները, լիինները, Ճիզդեթը և կասպերը (Ազարանգեղայ Պատմություն Հայոց, աշխատությունք Գ. Տեր Ալյուշան և Ստ. Կամայանց, Տիբլիս, 1909, էջ 16-17): 450-451 թթ. իրադարձությունների կապակցությամբ Նիկիին հայտնում է, որ Երեք լուծանցքի անբացման գործում Սասանյաններն օգտագործում էին լիինների և Ճիզդեթ ուժերը (Նիկիեի վասն վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատությունք Ե. Տեր Սիմեանանի, Ե., 1957, էջ 10-11): Մովսես Դասխուզանցու «Աղտանից պատմություն» VII դարի աղբյուրը, նկարագրելով Դարսյակ եպիսկոպոսի առաջնության անցած ճանապարհը հայտնում է, որ խոմքը լիինների քաղաքից անցավ Ճիզդեթ երկիրը, ոչը գտնվում էր «առ ստեղծումով (երկին մեծի» (Մովսես Կաղանկատառացի, Պատմություն Աղտանից աշխարհի, քննական քննադրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 238-239): Ճիզդեթը՝ իրատակում է նաև «Աշխարհագրոյց»-ը Ասիական Մարմատիայի երրորդ-արևելյան շրջանի ցեղերը թվարկելիս (Աշխարհագրոյց Մովսեսի Խորենացույ Յանդրամուրք նախնայ, Վենետիկ, 1881, էջ 27):
10. Yuzbashyan K., Le Caucase et les Sassanides, Spoleto, 1996, pp 143-167; Յակոբյան Ա., «Կալկանի վեպ»-ը և Արշակունիաց թագաւորու-

րեան խնդիրը Դ-Ձ դարերի Աղուանքում, Հանդես Ամսօրեայ 2003, էջ 45-143:

11. Никонцов В.А., введение в топонимику, М., 1965, с. 40.
12. Աշխարհագրոյց Արփեսի հորինագրոյ, էջ 27:
13. Հմմտ. Տապուարանք-Տապաստափանք՝ իրեն բազմապարսեցի անձանման ձևեր (Աշխարհագրոյց Արփեսի հորինագրոյ, էջ 27; Առօրյա Ա.Ա. 6շվ աշխ., էջ 90):
14. Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), հնդ.՝ Հարությունյան Բ., Եր.2004, էջ 42-43:

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂԱՎՆԻ (ԱԻ)

### ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 1975Թ. ԼԻՔԱՆԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՄԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԿԱՏՄԱՍԻ ՆՐԱ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

1970-ականների սկզբներին Լիբանանի ինչպես սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգային-կրոնական, այնպես էլ ընդհանուր առմամբ միջարարական հակասություններով և արտաքին ուժերի ներգործությամբ պայմանավորված ճգնաժամի՞ զուգակցվելով պաղեստինյան գործունի հետ, արտահայտվեց կրոնադավանական համակարգի դեմ պայքարի շարժումներով և ծախսերյան կազմակերպությունների վերելքով: Երկրում տեղ գտած ժողովրդագրական փոփոխություններով պայմանավորվեց նաև գերակշռություն կազմող մուսուլմանների կողմից դեռևս 1943թ. «Ազգային Դաշինքով» սահմանված «status quo»-ի մերժումը: Լիբանանի ընդհանուր քաղաքական անկայուն իրավիճակն ու ներքաղաքացիական սուր պայքարը երկիրը 1975թ. ապրիլին դարձյալ մղեցին քաղաքացիական նոր պատերազմի, որի արդյունքում պետական ապարատը վերջնականապես փլուզվեց երկու ոչ միատարր ճամբարների՝ լիբանանյան ժախերին ներկայացնող «Ազգային-հայրենասիրական ուժերի» կամ «Ազգային Շարժման» և աջերին ներկայացնող «Լիբանանյան ճակատի»<sup>1</sup>:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի սկզբում ԱՄՆ-ի նախագահ Ջ.Ֆորդի վարչակազմը՝ մեծավորարևելյան օրակարգում լիբանանյան հիմնախնդրին մեծ առաջնահերթություն չտալով, հետամուտ էր երկրում առկա «status quo»-ի պահպանման քաղաքականությանը<sup>2</sup>: Առաջնորդվելով Մերձավոր Արևելքի (այսուհետ՝ ՄԱ) համատեցստում Լիբանանին լուսանցքային դեր հատկացնելու և երկրում արմատական վերափոխումներ իրականացնելու անհնարինության կանխադրույթից, Մայիտակ Տունը խորացող ճգնաժամի պայմաններում ամերիկյան ակտիվ ներգրավվածությունն աննպատակահարձար էր ընդունում՝ իր գլխավոր նպատակը համարելով տարածաշրջանային կայունությանը և ՄԱ-ում ԱՄՆ-ի կայուն գոյատևմանը ապահովող սուր ճգնաժամի կանխարգելումը<sup>3</sup>: Խնդիրն այն է, որ 1973թ. հոկտեմբերյան պատերազմից հետո Վաշինգտոնը զբաղված էր ԱՄՆ-ի պետքարտուղար Հենրի Քիսինջերի «քայլ առ քայլ» ընթանազիտության միջոցով մեծավորարևելյան մեկ այլ «առավել կարևոր»՝ իսրայելաեգիպտական հարաբերություններում առաջընթաց ապահովելու խնդրով<sup>4</sup>:

Ուշագրավ է, որ Լիբանանի ճգնաժամը ժամանակաշրջանում առումով հանդերձ կալ արաբական աշխարհում և միջազգային բառերաբանում

Պաղեստինի Դիմադրական Շարժման՝ ՊԴՇ-ի արձանագրած հաջողությունների հետ, որն Արևմուտքում ընկալվեց իբրև «Հ.Քիսինջերի (մեքսիկացիների) դիվանագիտության» հետանկարին ուղղված լուրջ սպառնալիք<sup>5</sup>: Հետևաբար որոշ քաղաքագետների կարծիքով՝ «Սինայ-1» պայմանագրի կնքումից հետո ամերիկյան դիվանագիտության հաջորդ քայլը պետք է նպատակատուղված լիներ Լիբանանում քաղաքացիական պատերազմի հրահրմանը՝ ՊԴՇ-ին և նրա ռազմավարական դաշնակցին՝ «Դիբանանյան հայրենասիրական ուժերին» կամ ձախ-մուսուլմանական ուժերին պարտության մատնելու նպատակով<sup>6</sup>: Այս առումով կարելի է ենթադրել, որ լիբանանյան ճգնաժամն այնուհանդերձ բխում էր ԱՄՆ-ի շահերից՝ արաբական աշխարհի ուշադրությունը «Սինայ-2» (1975թ. սեպտեմբեր) եզիպտահարաչելական երկրորդ համաձայնագրից շեղելու և Իսրայելի ու ԱՄՆ-ի վրա գործադրվող միջազգային ճնշումը նվազագույնի հասցնելու նպատակով<sup>7</sup>:

Լիբանանյան իրադարձությունների ուղղությամբ ամերիկացիներն անհամազուտությամբ սկսեցին ցուցաբերել միայն 1975թ. սեպտեմբերին՝ հակամարտությանը Սիրիայի և Իսրայելի ռազմական միջամտության նախանշաններն էլ հայտ գալուց հետո: Այդ ուղղությամբ 1975թ. սեպտեմբերի 30-ին, Քիսինջերի և Լիբանանի արտգործնախարար Ֆիլիպ Քալանի միջև կայացած ինքնազուտության մեջ նշվում էր, որ Լիբանանը ՄԱ-ում ԱՄՆ-ի մեքսիկացույն քարկկամն է, և վերջինս առանձնահատուկ կերպով շահագրգռված է այդ երկրի անկախության և տարածքային անձեռնմխելության, Լիբանանի ազգային միասնության և ամբողջականության հարցում<sup>8</sup>: Հայտարարությունն ակնհայտորեն հատակեցնում էր Լիբանանի ներքին իրադրության կայունության հարցում ԱՄՆ-ի շահագրգռվածությունը՝ միաժամանակ ռազմական միջամտությունից խուսափելու նախազգուշացում ծառայելով թե՛ Իսրայելին, և թե՛ Սիրիային: Դեռ ավելին, 1975թ. հոկտեմբերի 16-ին Դամասկոսում ԱՄՆ-ի դեսպանը Սիրիայի նախագահ Հաֆիզ ալ-Ասադին հայտնեց, որ Լիբանանի գործերին օտարերկրյա ռազմական միջամտությունը Իսրայելի կողմից կդիտվի իբրև մեծ սպառնալիք, որի (Իսրայելի) նկատմամբ ԱՄՆ-ն ի վիճակի չէ որևէ կերպ ազդել<sup>9</sup>: Սպիտակ Տանը, ըստ ամենայնի, մտահոգում էր Սիրիայի կամ Իսրայելի միջամտության հետևանքով ճգնաժամի առավել խորացման դեպքում գերտերությունների՝ իրենց հովանավորյալների (Իսրայելը՝ ԱՄՆ-ի հովանավորյալ, Սիրիան և Պաղեստինի Ազատագրության կազմակերպությունը՝ ՊԱԿ-ը՝ ԽՍՀՄ-ի) կողմից անխուսափելի ու միաժամանակ անցանկալի միջամտության հավանականությունը:

Մինչդեռ լիբանանյան քաղաքական ուժերին, մասնավորապես լիբանանյան ժախերին ավելի շատ մտազոհում էր ոչ այնքան օտարերկրյա միջամտության հնարավորությունը, որի սահմանափակ և

նպատակային կիրառումը կարող էր կայունացնող դեր ունենալ հակամարտությունում, որքան արտաքին (Արևմուտքի) և Լիբանանի ազ-քրիստոնեական ուժերի կողմից երկրի մասնատման միջոցով հակամարտության կարգավորման հասնելու մտադրությունները: Խնդիրն այն է, որ 1975թ. հոկտեմբերի 16-ին Քեյրուսի «Ալ-Նուսրու» շարքարարների հրապարակած տեղեկության համաձայն՝ քրանայան ժախերի առաջնորդ Քամալ Ջումբլաբը վարչապետ Ռաշիդ Քարամեի հետ հանդիպման ընթացքում ԱՄՆ-ի Կենտրոնական Հետախուզական Վարչության և սիոնիստական շրջանակների նախաձեռնությամբ Լիբանանի բաժանման ծրագրերի մշակման և դրանց իրականացման նպատակով 70-80 մլն. ԱՄՆ դոլար ետուկացնելու վերաբերյալ փաստաթղթեր և տեղեկատվություն էր ներկայացրել: Նույն աղբյուրի համաձայն՝ Լիբանանի նախկին արտգործնախարար Շարլ Մալիքը՝ եղում անելով իր ունեցած կապերի վրա, հավաստում էր արևմտյան շրջանակների պատրաստակամությունը Լիբանանի քրիստոնյաների ցանկացած՝ այդ թվում երկրի բաժանման ծրագրերի ատարման ուղղությամբ<sup>10</sup>:

Վերոնշյալի առնչությամբ Ե.Պրիմակովը ևս նշում է ԱՄՆ-ի Պետքարտուղարության կողմից Լիբանանի միասնականության ճակատի պահպանման շրջանակներում այն փաստացի բաժանման տարրերակի մշակման մասին<sup>11</sup>: Կարծիք կար նաև, որ Լիբանանի գոյատևման անկաբողջության ենթադրության հիման վրա տարածաշրջանային վեճերը մասնատումների միջոցով լուծելու անհրաժեշտությունից ելնելով՝ Լիբանանը կարող էր ռազմավարի բաժանվել Իսրայելի, Սիրիայի և պաղեստինցիների միջև՝ ծառայելով իրեն «եռոց խաղաղության դիմաց» սկզբունքի այլընտրանք<sup>12</sup>:

Արդյունքում՝ ամերիկյան քաղաքականությունը «զրոհի» ենթարկվեց Լիբանանի հակամարտող երկու ճամբարների կողմից միաժամանակ: Քրիստոնյա-աջերը Վաշինգտոնին մեղադրում էին Լիբանանում պաղեստինցիներին բնակեցնելու նպատակով քրիստոնյաների արտագաղթ հրահրելու փորձերի մեջ: Իսկ ՊՂԸ-«Ազգային Շարժում» դաշինքը գտնում էր, որ ԱՄՆ-ն Իսրայելի հետ գաղտնի փորձում է թուլացնել իրենց համատեղ ջանքերը:

Մտեղծված իրադրության պայմաններում 1975թ. հոկտեմբերի 16-ին, Վաշինգտոնի կողմից Լիբանանի բաժանման վերաբերյալ վերոնշյալ (Քամալ Ջումբլաբի ներկայացրած) ծրագրերը հեղքող հայտարարության հաջորդ օրը, Դամասկոսում ԱՄՆ-ի դեսպան Ռիչարդ Մերֆիին ճախագահ Ֆորդի հաղորդագրությունը՝ փոխանցեց Սիրիայի ճախագահ Հաֆիզ ալ-Ասադին, որով կոչ էր արվում նպատել Լիբանանի իրադրության «հավասարակշռված կարգավորմանը»: Նախագահ Ֆորդը երաշխավորում էր կարգավորման գործում աջակցել Սիրիային և խստաանում՝ Իսրայելին համոզել ղրիմակայել Լիբանանում Սիրիայի (քանակաբարության սահմաններում) դերակատարությանը:

Խնդիրն այն է, որ իսկաճարտությանը մասնակցող մտավորապես 25 խմբավորումների և մասնավոր քանակների հետ բանակցություններ վարելու և կողմերի վրա ազդելու ամենարիմության պայմաններում ԱՄՆ-ը գիտակցում էր Լիբանանում որևէ պարտավորություն ստանձնելու անիրատեսականությունը: Ուստի լիբանանյան իրադարձությունները համարելով Լիբանանի «մեղքին գործը», ԱՄՆ-ը մերժում էր արտաքին միջամտության որևէ փորձ<sup>15</sup>: Այդ մասին է վկայում 1975թ. նոյեմբերի 6-ին Հենրի Բիսինգերի՝ Լիբանանի վարչապետ Ռաչիլ Քարամնին եղված նամակը, որում, վերահաստատելով հանդերձ ԱՄՆ-ի «չափերը Լիբանանում», հասակ արտահայտվում էր ամերիկացիների դժկամությունը լիբանանյան ճգնաժամին ուղղակի ներթաշվելու ուղղությամբ:

Վերոնշյալ խնդրում ԱՄՆ-ի, և որ առավել կարևոր է Իսրայելի զապվածությունը՝ թերևս կարելի էր քաջատրել նախորդ 20 տարիներին ամերիկյան արտաքին քաղաքական շահերի, Լիբանանի և այն շրջապատող մերձավորարևելյան երկրների ուժային հարաբերակցության փոփոխությամբ, որի պայմաններում կողմնակի ցանկացած տերության պինված միջամտությունը կարող էր առավել քան երբևէ ծավալում և վտանգավոր ողջերգության պատճառ դառնալ<sup>16</sup>: Ուստի նախապատվությունը տալով չափավոր արարական երկրների, մասնավորապես Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և Բուվնյի (որոնք լիբանանյան ճգնաժամը միջարարական և ոչ թե միջազգային խնդիր էին համարում) միջոցով խնդրի կարգավորմանը, ԱՄՆ-ը խորհուրդ էր տալիս Իսրայելին, ԽՍՀՄ-ին և Եվրոպական այլ տերությունների, զերծ մնալ Լիբանանում հնարավոր որևէ միջամտությունից<sup>17</sup>:

Միաժամանակ ՊԱԿ-ի և դիմադրական շարժման աջակցությամբ լիբանանյան ծախսերի՝ «Լիբանանի ճակատի» նկատմամբ հաղթանակի հավանականությունից ելնելով, Ջերալդ Ֆորդի վարչակարգը՝ ընդունելով Լիբանանում Սիրիայի «կայունացնող» և «կառուցողական» դերակատարությունը, երկխոսություն հաստատեց վերջինիս հետ<sup>18</sup>: Այս հարցում ոչ պակաս դեր ունեցավ նաև 1976թ. սպտեմբերի սկզբին ամերիկյան այցելության շրջանակներում Հորդանանի թագավոր Հուսեյնի՝ ԱՄՆ-ում Սիրիայի լիբանանյան ներխուժման նպատակահարմարության շուրջ արված լոբբինգը, որի իսկաճայն Լիբանանի պատերազմին վերջ դնելու միակ կարող ուժ էր համարվում Սիրիան<sup>19</sup>: Այս առումով թերևս կարելի է կասկ տեսնել Հուսեյնի այցի և Հ.Բիսինգերի մշակած քաղաքականության շրջանակներում սիրիական ներխուժման և վերջինիս կողմից ՊԱԿ-ի ջախջախման դիմաց Սիրիային իրրև փոխհատույուն Գոլանները, իսկ Հորդանանին՝ Արևմտյան ափը համձնելու շուրջ եղած կարծիքներում: Վերջինիս համաձայն՝ սիրիական ներխուժմանը հաջորդելու էր տարածաշրջանում «Pax American»-ի հաստատումը, որի արդյունքում

պետք է բուլացնեն ծայրահեղական վարչակարգ ունեցող արաբական երկրները և նվազագույնի հասցվելը ՄԱ-ում ԽՍՀՄ-ի ազդեցությունը<sup>14</sup>։

Այսպիսով, Վաշինգտոնի շտաբ համաձայնությունը գործնականում նշանակում էր Լիբանանի Արևմտյան երաշխավորի կողմից սիրիական ներխուժման աստարում։ Սիրիայի և Իսրայելի միջև ԱՄՆ-ի գործադրած միջնորդական ջանքերի շնորհիվ Թեյ-Ավիվը՝ սիրիացիների կողմից Հարավային Լիբանանում Իսրայելի անվտանգության շահերի ճանաչման դեմաց (մինչև իյուլիսում անցնող Սիդոն-Ջիզզին՝ «կարմիր գիծը») համաձայնվում էր սիրիական ռազմական սահմանափակ ներխուժմանը<sup>15</sup> կանոնավոր զորքեր չուղարկելու նախապայմանով։ Հակառակ դեպքում Թեյ-Ավիվն իր հերթին սպառնում էր ներխուժել Հարավային Լիբանան<sup>16</sup>։ Փաստորեն, Սիրիայի ռազմական միջամտությունը չկործնեցին կամիսել ոչ Իսրայելը, ոչ էլ ԱՄՆ-ը, գիտակցելով, որ այն մի կողմից կբուլացնի սիրիական բանակը՝ Դամասկոսին ստիպելով նոր համաձայնագիր ստորագրել Գոլանների վերաբերյալ<sup>17</sup>։ Մյուս կողմից՝ սիրիական ներխուժումը կարող էր օգնել իրենց դաշնակիցներին՝ «Լիբանանյան ճակատի» մեջ միավորված ազգրիստոմենական ուժերին։

Այսպիսով, ԱՄՆ-Սիրիա-Իսրայել գաղտնի համազորակցությունը ստացավ «կարմիր գիծ» համաձայնություն անվանումը՝ մի չգրված, չառորագրված և Սիրիայի կողմից երդում չտրված համաձայնագիր<sup>18</sup>։

Հարկ է նշել, որ ԱՄՆ «քարայացական» կեցվածքը սիրիական ներխուժման հանդեպ քաջատրվում էր ճակ 1976թ. ԱՄՆ-ում կայանալից ընտրություններին վերընտրման նպատակով նախագահ Ֆորդի համար ՄԱ-ում ինչպես նոր ճգնաժամը կամիսելու, այնպես էլ լրջոր դիվանագիտական հաշտությունների հասնելու ամիսաժեշտությամբ։

Այսպիսով, Սիրիան հայտնվեց Լիբանանում առկա «status quo»-ն և երկրի կառավարությանը պաշտպանողի դերում՝ աջակցություն գտնելով մի երկրի՝ ԱՄՆ-ի կողմից, որին չէր զատատուճ, և մեկ այլ երկրի՝ Իսրայելի կողմից, որին ճրջվել էր ուղյակները։

## AGHAVNI HARUTYUNIAN (IOS)

### THE USA'S POSITION ON THE LEBANESE 1975 CIVIL WAR AT ITS FIRST STAGE

The USA president J. Ford's administration in its ME policy gave priority to the provision of progress in the Egypt-Israeli relations through the "step-by-step" diplomacy followed maintaining the policy of *status quo* in the first stage of Lebanese Civil War (1975). The White House mostly



was preoccupied with the task of strengthening of American positions in the ME, and preventing the deepening of crises, which could threaten preserving of the USA influence and the stability in the region. Washington sought for limiting the negative reactions from America's Arab allies, especially Saudi Arabia and Egypt and minimizing the Soviet influence in the Arab World. During the first months of Lebanese Civil war the USA adopted non-intervention policy in Lebanese "internal affairs". But later in considerations of avoiding the possibility of crises escalation into the armed conflict between the superpowers level, Washington assumed Syria's role as the only constructive, stabilizing and reconciling factor in Lebanese Civil war. The United States not only privately agreed to a limited Syria's intervention into Lebanon, but also forced Israel to follow its own course.

### ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տն՝ Նովանմիայան Ն.Հ., Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի նախնադրի դիտարկումը (1975-1982թթ.), եր., «Հայաստան», 1982:
2. Moshe Maoz and Avner Yaniv, Syria under Assad, London Sydney in association with The Gustav Heinemann Institute of Middle Eastern Studies, University of Haifa, 1986, p. 211.
3. Eamar Rabinovich, The War for Lebanon 1970-1985, Cornell University Press, Ithaca and London, 1985, p. 90.
4. Tabitha Petran, The Struggle Over Lebanon, Monthly Review Press, New York, 1987, p. 170.
5. Китай и Палестинская проблема (1964-1976гг.), Ливанский кризис 1975-1976 гг. и Пекинская позиция негативного нейтралитета, Академия Наук СССР, Институт Дальнего Востока, Информационный Бюллетень, N 103, Экз. N 00521, Москва 1979, стр. 138.
6. ТАСС, Атлас, М., 17.9.76, N 38 (1002), Ред. В.Ф.Харьков, К положению в Ливане. Бейрут, 7 сентября, стр. 24.
7. Կարապետյան Ռ., Միջա-անընդմեջ նարահրոթյունները 1967-1996, ՀՀ ԳԱԱ, երևան, 2000, էջ 72:
8. US Department of State, Bureau of Public Affairs, US Policy in the Middle East: November 1974, February 1976, Selected Documents, No. 4 (Washington, October 1976), p. 95.
9. Naomi Joy Weinberger, Syria-Foreign Relations-Lebanon, Lebanon-Foreign Relations-Syria, Oxford University Press, New York, 1986, p. 291-292.
10. «Ալ-Ջեմարա» շարաքաթերը, Բեյրութ, 16.10.1975: Մազունի զեկախարոթյունն ըստ երթյան ծրագրում էր Լեանալիթանանում՝ Բեյրութի քրիստոնեացանակ հասպածի ընդգրկեամբ ստեղծել ստանձիմ «Քրիստոնեական Լիբանանի Հանրապետոթյուն»:
11. Примаков Е.М., Анатомия Ближневосточного конфликта, М., 1978, стр. 123.

12. Ghassan Tuani, *Lebanon's Wars and Middle East Peace*, *Mediterranean Quarterly, A Journal of Global Issues*, Vol., 1, No. 3, Summer, 1990, p. 90.
13. "Յունանիտե", Փաշիզ, 25.08.1975:
14. «Նյու-Յորք քայնս», 21.1.1976:
15. Անաթիվ, 22.10.1975:
16. William L.Cleveland, *A History of The Modern Middle East*, (Boulder: Westview Press, 1994), p. 100.
17. Maria Doeb, *The Lebanese Civil War*, Praeger Publishers, New York, 1980, p. 9.
18. W.Quandt, *Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976*, Berkeley University of California Press, 1977, p. 283.
19. 'The Times', 13.09.1976, Ford Library, WHCF CD 71, Box 27, 13 April, 1976.
20. Kamal Salibi, *Crossroads to Civil War, Lebanon 1958-1976*, Caravan, Delmar, New York, 1976, p. 132.
21. «Եղիտա Ահադնմտ», 24.03.1976, «Հասարեց», 11.06.1976:
22. Հովհաննիսյան Ա., Սիրիայի ռազմական միջամտությունը լիբանանյան եսկամարտությանը 1976թ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 16-րդ հատոր, եր., 1996թ., էջ 37:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐԻ  
(ԵԳՀ)

ԹԵՈՂՈՐ ՀԵՐՅԼ-ԱՔԴՈՒԼ ՀԱՄԻԴ  
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ԸՈՒՐՁ

Սիռնիզմի հիմնադիր Թեոդոր Հերցլը հրեական պետության ստեղծման ծրագրերն իրագործելու համար սկզբում դիմում է հրեա մեծահարուստներ Մորիս դը Գիրշին և Ռոտշիլդներին, սակայն չստանալով դրական պատասխան, փորձում է հրեական պետություն ստեղծելու իր գաղափարը իրականացնել Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ Համիդի միջոցով, հաշվի առնելով, որ Պաղեստինը /հրեական պետության պտտեմնջիպ տարածքը/ գտնվում էր վերջինիս կայսրության կազմում: 1896թ. Հերցլը Վիեննայում հրատարակում է «Հրեական պետություն»՝ աշխատությունը, որտեղ ներկայացնում է հրեական պետության ստեղծման իր տեսակետը, որը, սակայն հավանության է արժանանում միայն նրա մտերիմ բարեկամ, քաղաքական փոխհիշի տեսաբան Մաքս Նորդաուի կողմից: Հայիմ Վայցմանն՝ այդ աշխատության մասին գրում է. «Հրեական պետությունը» իրենից ներկայացնում է ոչ այնքան պատմական իրադարձություն, որքան անձնական՝, այլ կեղծ պատճ Հերցլին մեծություն դարձրել է նրա կողմից Հրեական կոնգրեսի հիմնադրումը, նրա համատությունը և գործին մվիրվածությունը, բայց ոչ նրա աշխատությունը:

Սուլթանի հետ հանդիպելու համար Հերցլը շատ ցանքեր գործադրեց: Այս առումով նրան իր ժառայությունն է առաջարկել Վ. Հ. Հիլերը՝ Վիեննայի քրիստոնեական դեպարտամտան կապելանը: Նա Հերցլին առաջարկում է հանդիպում կազմակերպել Վիլհելմ 2-րդ կայսեր հետ, ինչի ժամանակ էլ Հերցլը պետք է խնդրեր, որպեսզի Վիլհելմ 2-րդն Աբդուլ Համիդին համոզեր, որ վերջինս հրեաներին հնարավորություն ընձեռեր քնակվել Պաղեստինում և զբաղվել տնտեսական գործունեությամբ»<sup>4</sup>:

Կ. Պոլսի «Օսմանիչն պատի» խմբագիր Ռոզենֆելդը ևս իր ժառայություններն առաջարկում Հերցլին: Նա գտնում էր, որ «հրեական հարցը լուծելու ժամանակն է, քանի որ Թուրքիան գտնվում է ֆինանսական ճգնաժամի մեջ»<sup>5</sup>:

Հաջորդ մարտը, ով Հերցլին իր ժառայություններն է առաջարկում սուլթանի հետ հանդիպման հարցում, Ֆիլիպ Միքայել դը Նելիմսկին<sup>6</sup> էր: Նա Հերցլին տեղեկացնում է, որ կարողացել է նրա գիրքը և այն քննարկել սուլթանի հետ, սակայն պարզվել է որ սուլթանը ավելի շուտ կբաժանվի Ամասոֆայից, բայց ոչ երբեք Երուսաղեմից և Օմարի մզկիթից: Բայց Նելիմսկին առաջարկում է նաև մեկ այլ բան. «Էիտղը սուլթանի համար ոչինչ չի մշտանկում, բայց կա սուլթանին համոզելու ուրիշ միջոց»՝ Հայկա-

կան հարցը: Բանն այն էր, որ Նևիմակին զաղտնի համձնարարություններ սուլբանից այն մասին, որ հայկական կոմիտեաներին հանձնվել են քարկվել սուլբանին, որից հետո էլ նա, իր անփական կամքով, քարկվելու մեծ կատարներ հայկական մարզերում: Հերցլն այս հարցում պետք է օգներ Նևիմակուն, իսկ վերջինս էլ սուլբանին կասեր, որ այդ ծառայության համար նա պարտական է երեսկան ազդեցությանը, ինչն էլ սուլբանը կկարողամար զնահատել ըստ արժանավայն:

Հերցլին յնաջողվեց այս հարցում ստանալ նաև Նորդատի աջակցությունը, քանի որ նա կտրուկ մերժեց այդ գործարքին մասնակցություն ունենալ:

Հերցլի նպատակը սուլբանին կաշատելու միջոցով Պաղեստինը երեսաներին տրամադրելն էր: Այդ նպատակով Նևիմակին հանդիպում է Մեծ վեզիրի հետ և մերկայացնում Պաղեստինի գնման մի ծրագիր, որը, սակայն, նա մերժում է՝ ասելով. «Երբ պարոն Հերցլը ձեզ համար այնպիսի քնկեր է, ինչպիսին դուք ինձ համար, ապա խորհուրդ տվեք նրան այդ ուղղությամբ ոչինչ չանել: Ես չեմ կարող վաճառել իդի մի քիզ անգամ, քանի որ այն ինձ չի պատկանում, այլ իմ ժողովրդին... Քող երեսներն իրենց պահեն իրենց միջաբողները: Երբ իմ կայսրությունը կբաժանվի մասերի, նրանք կարող են Պաղեստինը նվեր ստանալ: Սակայն կբաժանվի միայն մեր դիակը, իսկ մենք դեռ կանք և կենդանի երթման չենք համաձայնվի»<sup>6</sup>:

Ըստով պարզվում է, թե ինչու է սուլբանը երաժարվում Հերցլին քնդունելուց: Բանն այն էր, որ Հերցլը համագործակցել է այնպիսի քերքերի խմբագրությունների հետ, որոնք խիստ քննադատում էին Արդու Համիդին և նրա կառավարությանը: Այստեղ է, որ Հերցլը որոշում է այնպես անել, որ սուլբանը նրան քնդունի որպես իր քարկվամի, իսկ դրա համար կար մեկ ուղի. օգնել Արդու Համիդին Հայկական հարցում: Նա ձեռնամուխ է լինում Հայկական հարցի ուսումնասիրմանը և փորձում է նրա առաջնորդների հետ մտերմանալ: Նրա խնդիրները հայ հեղափոխական առաջնորդներին հանձնվելն էր երաժարվել հետագա խտություններից, իսկ եվրոպական մամուլին՝ դադարեցնել հայկական հարցի մասին քննարկումները:

Առաջինի համար Հերցլը հանդիպում է քիճիխասայ խորհրդի նախագահ Ալավերդյանի և «Հնչակ» կուսակցության առաջնորդ Ա. Նազարբեկյանի հետ: Նա փորձում է համոզել, որ քնդունեն սուլբանի առաջարկները, սակայն հայերը սուլբանին այդքան էլ չէին վստահում:

1896թ. հուլիսին Հերցլը կարողանում է որոշակի հաջողության հասնել մամուլի հարցում: Միևնույն ժամանակ Հերցլը Արդու Համիդի մակուրյան քնկեր, արևելագետ Վալերի միջոցով սուլբանի հետ հանդիպման հնարավորություն է ստանում: Բանակցությունների ժամանակ Հերցլը նշում է, որ Պաղեստինում երեսկան պետությունը, եթե այն ստեղծվի, կլինի տարածաշրջանում Քուրդիայի հավատարիմ դաշնակիցը: Արդու

Համիդի հետ զրոյցի ժամանակ նա մասնավորեցնում է, որ «կօզմի թուրքիային դուրս գալ ֆինանսական ծանր դրությամբ, փոխարենը դեռ ոչինչ չի պահանջում, միայն այն, որ թուրքիան և հրեաները մերձենան», իսկ Համիդն էլ իր հերթին հրեաներից 40 մլն ֆրանկ է պահանջում, փոխարենը խոստանալով Պարսից ծոցից մինչև Միջերկրական ծովն ընկած երկարօժի վերահսկողության կոնցեսիա տրամադրել և, որ ամենակարևորն էր հրեական կողմի համար, նրանց հնարափոխություն տալ Պաղեստինում հիմնել 70.000 կմ<sup>2</sup> տարածքով հրեական գաղութ<sup>1</sup>։

Արդու Համիդը նրան ընդունում է սիրալիր։ Այս համոզմամբ ասի-թով Հերցլը ասում է. «Սուլթանը բավականին սիրալիր է հրեաների նկատմամբ։ Ես անգամ համարձակվում եմ ասել, որ ամբողջ աշխարհում հրեաները չունեն ավելի մեծահոգի քարեկամ, քան Նորին Մեծություն, այժմյան կառավարող սուլթանը»։ Ի տարբերություն Հերցլի, Վամբրոն գրում է, որ «Այլ բանակցություններից ոչ մի լավ բան չտեսցվեց...»<sup>2</sup>։

MERY HOVHANNISYAN  
(YGU)

## ON THE RELATIONS OF TEODOR HERZL AND ABDUL HAMID

In this paper we try to introduce you one of the comparatively few studied directions of Herzl's diplomacy of creating Jewish state. It concerns to that period of time when Herzl, by all means, wanted to create Jewish state on the territory of Palestine – then part of the Ottoman Empire. The latter had not only financial but political problems and Herzl suggested his assistance to solve them. Owing to the fact that Herzl made the European press – which was continuously reporting about the Armenian question – cease corresponding, he succeeded to get an audience to sultan. The result of that was the solution of mutual aid which provided the Jewish financial assistance instead of the creation of the Jewish settlement on the 70.000 square km territory which would be extended by the Ottoman Empire.

## ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Հրեական պետություն» աշխատությունը ի սկզբանի վերնազրկված էր «Դի-մուս Ուոշիլդերին», որով Հերցլը նրանցից օգնություն էր խնդրում։
2. Քաղաքական սինոյզմի հետևորդ, Դարայելի ասացին նախագահը։

3. Вейсман Х., В поисках пути, т.-1, Моргезанн, 1983, с. 35.
4. Տես՝ Ջզոջազի՝ ք կնդր քահկամներից, Այոնա-մասունա-երես-քուրք հակահայկական քառամկյունին/ եր., 2002, էջ 19:
5. Նույն տեղում:
6. Լևն ազնվական, «Correspondence de l'Est» հրատարակիչ, «քաղմակդմանի գործակալ», աշխատել է հիշուական պնտորյունների, օմանյան սուլթանի և թողող Հերցեյի համար:
7. Տես՝ Ջզոջազի՝ ք կնդր քահկամներից, էջ 20:
8. Stewart D., The Middle East /Temple of Janus, Garden City, New York, 1971, p. 155.
9. Саркисян А., Словом от Теодора Гермак до Лорда Ротшильда и Армянской вопрс, Ереван, 2005, с. 35.
10. Տե՛ս նույն տեղում, էջ 37:

## ՀՈՎԱՍԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ (ԶԿԻ)

### ԹՈՒՐԶ-ԱԴՐԲԵՋԱՆ-ԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԶԻՆՎԱԾ ՈՒժԵՐԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՄԵՔՍՏՈՒՄ

1990-ական թթ. սկզբին դեռևս չունենալով ռազմական համագործակցության վերաբերյալ երկկողմ պայմանագրեր՝ Ղաթաթաղյան հակամարտության ընթացքում Թուրքիան զգալի ռազմական աջակցություն ցույց տվեց Ադրբեջանին՝ փորձելով ապահովել այդ երկրի լիակատար հաղթանակը: Խոսիտելով միջազգային կոնվենցիաներն ու միջազգային իրավունքի նորմերը Թուրքիան, թեև ոչ անմիջական, սակայն Ադրբեջանին տրամադրված լայնածավալ ռազմական օժանդակությամբ փորձում էր ազդել պատերազմի վերջնական ելքի վրա<sup>1</sup>: Թուրքական կողմը քավականին մեծ ներդրում է ունեցել ադրբեջանական քանակի կայացման և անրապեղման գործում, ինչը դրսևորվել է ինչպես զինվորական կարգերի պատրաստման, ուսուցանման, այնպես էլ տարրեր տիպի սպառազինության և ռազմական տեխնիկայի և ֆինանսական օժանդակության տրամադրման ձևով:

Լեռնայումս Ադրբեջանի կառավարությունն ակտիվ քայլեր է ձեռնարկում երկրի զինված ուժերի (այսուհետ՝ ՁՈՒ) ոլորտում քարեփոխումների իրականացման ուղղությամբ, ինչը նպատակ է հետապնդում դրանք ընդհանուր առմամբ համապատասխանեցնել ՆԱՏՕ-ում առկա չափանիշներին: Ադրբեջանի ռազմական քարեփոխումներն իրականացվում են Հյուսիսատլանտյան դաշինքի Անհատական գործընկերության գործողությունների ծրագրին (այսուհետ՝ ԱԳԳՄ) Ադրբեջանի մասնակցության շրջանակներում: Առաջիկայում նախատեսվում է ստորագրել 2007-2009թթ. գործողության մեջ մտնող ԱԳԳՄ երկրորդ ծրագիրը<sup>2</sup>: Ադրբեջանական քանակի քարեփոխումների իրականացման գործում լուրջ դերակատարություն է փորձում ապահովել Թուրքիան: Ադրբեջանական ՁՈՒ քարեփոխումների գործընթացում թուրքական զինվորական շրջանակները պետք է անմիջական դերակատարություն ունենան ադրբեջանցի զինվորների կրթության, սարսյակային կազմի վերապատրաստման և քանակային կառուցվածքը ՆԱՏՕ-ի չափանիշներին վերափոխելու խնդրում: Թուրքիայի համար ադրբեջանական քանակի քարեփոխումների ծրագրերն առաջին հերթին միտված են ապահովելու իր ռազմավարական շահերը՝ ձգտելով «եղջայրական երկրի» ռազմական համակարգում մեծացնել իր անմիջական ազդեցությունը:

Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը բուն կերպով ակնհայտ զարգանալ 90-ական թվականների կեսերից: Երկու երկր-

մերի միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության խնդիրները կարգավորվում են հիմնականում 1996 թ. հուլիսի 10-ին ԱՆ-կարալում ստորագրված «Ռազմական կրթության, տեխնիկական և գիտական համագործակցության» մասին պայմանագրով, 2001 թ. մարտին ստորագրված «Ադրբեջանի և Թուրքիայի կառավարությունների միջև փոխադարձ ռազմական օգնության» մասին համաձայնագրով և «Ադրբեջանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի միջև նյութական օգնության» վերաբերյալ արձանագրությամբ<sup>1</sup>: 2005 թ. Ադրբեջան կատարած այցի ընթացքում Թուրքիայի պաշտպանության նախարար Վեզրի Գյունուլը հանդիպումներից մեկի ժամանակ նշել է, որ Թուրքիայի կողմից Ադրբեջանին հատկացված ռազմական օգնությունն ընդհանուր առմամբ կազմել է ավելի քան 170 մլն դոլար<sup>2</sup>:

Այն, որ Ադրբեջանը գտնվում է Թուրքիայի աշխարհագրադասական գերակայությունների տիրույթում, հետևում է Թուրքիայի զինված ուժերի ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար Ի. Բաչբուլդի<sup>3</sup> 2005 թ. զարմանը Ադրբեջան կատարած այցի ժամանակ հնչեցրած այն հայտարարությունից, որ «Ադրբեջանը Թուրքիայի համար եզակի է քոչոր առումներով և եզակի է նաև ռազմական համագործակցությունը»: Թուրք բարձրաստիճան զինվորականն Ադրբեջանի գործընկերներին վստահեցրել է, որ Թուրքիան ադրբեջանական քանակի վերակազմավորման գործում ապահովվելու է լուրջ աջակցություն<sup>4</sup>:

Վերջին շրջանում ակտիվացան երկու երկրների միջև բարձրաստիճան զինվորականների փոխայցելություններն ու համատեղ միջոցառումները: Նկատվում է ռազմական ոլորտում բուրգ-ադրբեջանական համագործակցության այխուժացում, ինչը հիմնականում ուղղված է ԱԳԳՄ շրջանակներում ադրբեջանական քանակի բարեփոխումներում Թուրքիայի կողմից աջակցության տրամադրմանը: Ակտիվացան բուրգ բարձրաստիճան զինվորականների այցելություններն Ադրբեջան տեղում գնահատելու և քննարկելու բարեփոխումների հիմնական ուղեգծերն ու ոլորտները: 2007 թ. մարտի սկզբին Ադրբեջան այցելած Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի երկրորդ պետ Էրգին Մայգուլը ադրբեջանցի գործընկերների հետ քննարկել է երկու երկրների միջև ռազմական համագործակցության խնդիրներն ու անելիքները՝ հավաստիացնելով, որ Թուրքիան իր ակտիվ մերդրումը կապահովի ադրբեջանական քանակի վերակազմավորման գործում: Թուրք բարձրաստիճան զինվորականը երկու երկրների ռազմական համագործակցության մեջ առանցքային է համարել հատկապես զինվորական կադրերի վերապատրաստման և կրթության հարցերը<sup>5</sup>: Այցի շրջանակներում Ադրբեջանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի ՁՈՒ գլխավոր շտաբի միջև համագործակցության զարգացման վերաբերյալ փաստաբուրգ ստորագրվեց<sup>6</sup>: Նույն ժամանակահատվածում Ադրբեջան այցելած Թուրքիայի ՁՈՒ ցամաքային զորքերի հրամանատար Իլքեր Բաչբուլդ տեղում ծա-



նորանալով աղբբեջանական քանակի զարգացման և բարեփոխումների ընթացքին, ԱԳՉԾ շրջանակներում ՆԱՏՕ-Աղբբեջան համագործակցության խնդիրներին՝ վերստին հաստատել է Թուրքիայի կողմից Աղբբեջանի ՁՈՒ բարեփոխումների գործում ցուցադրվելիք աջակցության շարունակականությունը<sup>8</sup>։

Բանակի բարեփոխումների այդ գործընթացն արագացնելու և առավել սահուն տանելու նպատակով նախատեսվում է աղբբեջանական ՁՈՒ և պաշտպանության նախարարության համակարգում, որպես խորհրդակցանքեր, մի խումբ թուրք բարձրաստիճանի զինվորականների նշանակել։ Աղբբեջանական մամուլի համաձայն՝ Աղբբեջանում պատրաստվում են պաշտպանության նախարարի օգնական նշանակել Թուրքիայի ՁՈՒ մի զեմերալի, իսկ նրան և նրա հետ Թուրքիայից նկատ խնդիրն լայն իրավասություններ և աշխատելու թույլտվություն կտրվի։ Ենթադրվում է, որ մինչև 2011թ. այդ աշխատանքներում ծառայություն կկատարեն Թուրքիայի զինված ուժերի ես մի խումբ զեմերալներ<sup>9</sup>։ Բացի այդ նախատեսվում է ստեղծել թուրք-աղբբեջանական համատեղ ռազմական հանձնաժողով, որն էլ իրավասություն կունենա ծրագրել և մշակել աղբբեջանական քանակի բարեփոխումների գործընթացը՝ այն համապատասխանեցնելով ՆԱՏՕ-ական չափանիշներին։ Աղբբեջանի զինվորական շրջանակները իրենց թուրք գործընկերներից հիմնականում աջակցություն են սպասում ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխան ռազմական ռաուցման, ռազմական գործողություններում տեխնոլոգիաների կիրառման և ռազմական ոլորտում նորամուտությունների ներդրման հարցերում<sup>10</sup>։ Ամենայն հավանականությամբ թուրք զինվորական շրջանակներն իրենց դերակատարությունը կունենան նաև առաջիկայում ընդունվելիք Աղբբեջանի պաշտպանական հայեցակարգի հիմնական ռազմավարական ուղեգծերի սահմանման մեջ։

Աղբբեջանական քանակում թուրք զինվորական խորհրդակցանքների գործունեությունն ինքնին նորություն չէ։ Դեռևս 1992թ. Ասրաբադյան պատերազմի ժամանակ տասնյակ թուրք զեմերալներ և բարձրաստիճանի զինվորականներ ամսիջական մասնակցություն են ունեցել ռազմական գործողությունների մշակման և աղբբեջանի զինվորների վարժեցման գործում<sup>11</sup>։

Երկկողմ ռազմական հարաբերությունների զարգացման նպատակով նախատեսվում է ակտիվացնել նաև համագործակցությունը երկու երկրների ռազմաարդյունաբերական համալիրների միջև։ Թուրքիայի իշխանություններն ու հատկապես զինվորական շրջանակները քաջեր են ձեռնարկում Աղբբեջանի հետ համատեղ ռազմաարդյունաբերական ոլորտում համագործակցության ծավալման ուղղությամբ։ Բացվում Թուրքիայի դեսպան Թուրան Մեղալը 2006թ. հայտարարեց, որ իր երկիրը մասնակցությունն է ունենալու Աղբբեջանի ռազմաարդյունաբերական համալիրի տեղեման գործում՝ նշելով, որ ծրագրվում է ռազմական մեքենաշինությու-

յան ոլորտում համատեղ նախագծերի մշակում, քանի որ առկա են բոլոր մեխանիզմները Թուրքիայի և Ալեքսանդրի միջև ռազմական դաշինք ձևավորելու համար: Թուրք ղեկավարը նշել է, որ անհրաժեշտության դեպքում Թուրքիան ըստ արժանվույն կգնահատի ստեղծված իրավիճակն ու անհրաժեշտ քայլեր կձեռնարկի այդ ոլորտում<sup>12</sup>:

Ալեքսանդրիական մամուլի համաձայն՝ մոտ ժամանակում բուրջական «Azelsan» և «Roketsan» ռազմաարդյունաբերական խոշոր ընկերությունները համագործակցության կոնկրետ ծրագրեր կառաջարկեն Ալեքսանդրի նորաստեղծ պաշտպանական արդյունաբերության նախարարությանը: Այդ ընկերությունները ռազմական տեխնոլոգիաներ վաճառելու փոխարեն Ալեքսանդրի համատեղ արտադրության առաջարկներ կներկայացնեն<sup>13</sup>:

Այսպիսով, Թուրքիան փորձում է ռազմական համագործակցության միջոցով լուրջ դերակատարություն ստանձնել ադրբեջանական ուժային համակարգում անհրաժեշտելով իր ռազմաքաղաքական ազդեցության լծակներն ինչպես այդ երկրում, այնպես էլ տարածաշրջանում: Ուստի բուրջ-ադրբեջանական ռազմական համագործակցության զարգացումն ու ռազմական դաշինքի ձևավորումը, հատկապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության շկարզավորված լինելու պայմաններում, լուրջ խնդիր է ներկայացնում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության համար:

LEVON HOVSEPYAN

(IPR)

### AZERBAIJANI-TURKISH MILITARY COOPERATION IN THE CONTEXT OF THE REFORMS OF THE AZERBAIJAN'S ARMED FORCES

Azerbaijan is pressing ahead with plans to overhaul the country's armed forces in order to bring them up to the NATO standards. Military reforms in Azerbaijan fulfill through the country's participation in the alliance's Individual Partnership Action Plan (IPAP). Turkey, a NATO member with strong cultural ties with Azerbaijan, is ready to act as an expeditor of Baku's military reform process. Turkey first of all wants to restore and maintain a direct Turkish military role in Azerbaijan. In the reform process Turkey's support particularly will be put on training of the military personnel and establishing an army structure that meets NATO standards. Azerbaijan is asking the Turkish military to give it more assistance on meeting NATO's standards for military training, know-how and usage of

technology in military operations. The Turkish Armed Forces (TSK) and the Azerbaijan Armed Forces have intensified their co-operation in the last months with high-level visits. According recent reports in Azerbaijani press, a Turkish military high-ranking officer as an consultant will be appointed in the Azerbaijani Defence Ministry. The Turkish general would be granted significant and sweeping powers within the Azerbaijani Defence Ministry, including direct and sole control over a team of lower-ranking Turkish military officers serving as military instructors and advisers. Also Azerbaijani and Turkish militaries are expected to establish a joint commission to coordinate the Azerbaijani Armed Forces preparations for the NATO membership. Bilateral cooperation in the field of defence industry will be developed. Intensification of the Turkish-Azerbaijani military cooperation is very sensitive for Armenia from the security perspective, as Nagorno-Karabagh problem remains unresolved.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարարալյան պատերազմի ընթացքում Ադրբեյջանին թուրքերայի կողմից տրամադրված ռազմական օժանդակության ծախսն ավելի մանրամասն տես՝ Демоян Г., Турция и Карабахский конфликт, Ер. 2006.
2. Bakinsky Khazri and Muradova Mina, Azerbaijan pursues NATO integration, <http://www.eurasianet.org>, 16.03.2007.
3. CAFERSOY Nazim, Azerbaycan - Türkiye ilişkileri (1993 - 2000), <http://www.turkasem.org/tr>
4. Минасян С., Вооруженные силы Азербайджана: оценка военного потенциала и перспективы развития, <http://www.noravank.am>
5. Turkish Daily News, 18.05.2005.
6. <http://www.regnum.ru>, 01.03.2007.
7. Azerbaijani Defense Ministry and Turkish Armed Forces General Staff sign cooperation document, [http://www.turkasem.com/index.php?option=com\\_content&task=view&id=1835&Itemid=36](http://www.turkasem.com/index.php?option=com_content&task=view&id=1835&Itemid=36)
8. <http://www.regnum.ru>, 07.03.2007.
9. <http://www.zerkalo.az>, 07.01.2007.
10. Turkish Daily News, 03.04.2007.
11. Դենիս 1990-ականների սկզբին Ադրբեյջանի մայրենի ճախարակի Ա. Էլչիբեյի խորհրդակցական է նշանակվել թուրք գեներալ Յ. Դեմիրքուլաքը, որը հետագայում դարձել է մասն Ադրբեյջանի Անվտանգության խորհրդի անդամ: Տես՝ Демоян Г., նշվ. աշխ., էջ 111:
12. <http://www.regnum.ru>, 16.08.2006.
13. <http://www.zerkalo.az>, 07.01.2007.

## ՄԻՋԱՅՆԵՆԱՆ ԳՈՂԱՐ (ԵՊՀ)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ  
1980-1987 ԹԹ.

1978-1979թթ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխության հետևանքով փրոզվեց միապետական փարչակարգը, և ստեղծվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը:

Իսլամական հեղափոխությունից հետո սկսվեց մի ժամանակաշրջան, երբ իշխանության գլուխ անցած իմամ Խոմեյնին և նրա կողմակիցները ջանում էին կրթական համակարգը ձեռքբազատել և հեռու պահել արևմտյան ազդեցություններից: 1980-1987թթ. տեղի ունեցած այս գործընթացը հայտնի է որպես «Մշակութային հեղափոխություն»: Ողջ երկրով մեկ սկսվեց իսլամականացման ծրագրի իրականացում՝ ներառյալ կրթական նոր համակարգի ստեղծում:

Նոր տարվա կապակցությամբ իր ժողովրդին հղած շնորհավորական ուղերձում իմամ Խոմեյնին անդրադարձել է համալսարանների խնդիրներին և գրել. «... Ազատվե՛ք ամեն տեսակի «իզմ»-երից և «իսա»-երից, որոնք պատկանում են արևելքին և արևմուտքին: Եղե՛ք անկախ և մի՛ ականկաղք օգնություն օտարազգիներից...»<sup>1</sup>: 1980թ. հունիսի 12-ին այաթոլլահ Խոմեյնին համոզեա եկավ հետևյալ հայտարարությամբ. «... - Փաստորեն, ոչ մի քայլ չի ձեռնարկվում հեղափոխության ձեռքբերումները պահպանելու նպատակով: Իսլամական հասարակությունը մտավախություն ունի Իրանի վիճակի համար, որովհետև նման իրավիճակի պահպանման դեպքում երկրի մշակույթը կհամանվի նախկին վարչակարգի մշակույթին՝ կաշատված ու հեղինակազրկված...»<sup>2</sup>:

1980թ. հունիսին հիմնադրվեց մշակութային հեղափոխության շտաբը<sup>3</sup>. Կառույցին հանձնարարված էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի համալսարաններում տարվող մշակութային քաղաքականությունը համապատասխանեցվի իսլամական մշակույթի սկզբունքներին: Վերոնշյալ կառույցի հիմնական խնդիրներից էին՝ դասախոսների վերապատրաստումը և համալսարաններում աշխատելու համար ազնիվ անհատների ընտրությունը, համալսարաններում իսլամական մթնոլորտի ապահովումը և կրթական ծրագրերի փոփոխումը, որն ուղղված կլիներ ի շահ ժողովրդի<sup>4</sup>: Իմամ Խոմեյնին իր կուլթներից մեկի ժամանակ հայտարարել է, որ 1980-1981թթ. ընթացքում Իրանի համալսարաններում տեղի ունեցած՝ ուսանողների խորհուրդների ավելի քան 3 ընտրությունների արդյունքում ընտրվածների մեծ մասը, եթե ոչ բոլորը, դեմ էին իսլամական կարգերին<sup>5</sup>:

1980թ. ապրիլի 16-ին ԻԻՀ նախագահ Ռաֆայանցյանին Ցավորիզի քոչկական համալսարանում ուսանողների հետ հանդիպման ժամանակ ելույթ ունեցավ իսլամական հեղափոխության նպատակների ու սկզբունքների, իսլամական գաղափարախոսությունների և այլ հարցերի շուրջ<sup>6</sup>: Հենց այդ ժամանակ մի խումբ ուսանողներ, որ դեմ էին իշխող վարչակարգին, սկսեցին անկարգություններ հրահրել, այնպես որ նախագահը ստիպված էր ընդհատել ելույթը և հեռանալ դահլիճից: Սա առիթ դարձավ, որպեսզի ուսանողների մեկ այլ խմբի, որ տիրող վարչակարգի քատագովներից էին, և ընդդիմադիր ուժերին հարող ուսանողների միջև խոշոր բախումներ տեղի ունենան<sup>7</sup>: Հենց այս դեպքերն էլ ազդանշան եղան համալսարանների վրա հարձակումների համար<sup>8</sup>:

Հաջորդ օրը այս համալսարանում գործող իսլամական կազմակերպության անդամները գրավեցին Ցավորիզի համալսարանի կենտրոնական մասնաշենքը և հայտարարեցին համալսարանները փակելու մասին<sup>9</sup>: 1980-1982թթ. երկրի բոլոր համալսարանները փակվեցին:

1980թ. ապրիլի 21-ին Հեղափոխության խորհուրդը երեք օր ժամանակ տվեց քաղաքական ուժերին, որպեսզի փակեն համալսարաններում գործող իրենց գրասենյակները: Խոմենյիի և նրա կողմնակիցների կարծիքով, համալսարանները գտնվում էին հակահեղափոխական ուժերի ազդեցության տակ, իսկ իսկաաություններն այնքան էին խորացել իշխող վարչակարգի և նեքրին քաղաքական ընդդիմադիր ուժերի միջև (այդ թվում՝ համալսարանների<sup>10</sup>), որ դժվար թե դուրին լինեք համալսարանների գործելակերպի փոփոխումը՝ պետության առաջարկած ձևով: Համալսարանները վերածվել էին ընդդիմության՝ ապստով և անձեռնմխելի կենտրոնների:

Այս ընթացքում կատարվեցին նաև գաղափարախոսական և քաղաքական գտումներ: Այլախոհության համար համալսարաններից վտարվեցին հարյուրավոր որակյալ մասնագետներ, ինչը, անկասկած, քաջասական հետևանքներ ունեցավ երկրի կրթական ոլորտի զարգացման վրա: 1982թ. համալսարանները վերաբացվեցին, իսկ գտումները շարունակվեցին ևս հինգ տարի: Դրանք վերաբերում էին նաև ուսանողներին<sup>11</sup>:

Մեր կարծիքով՝ համալսարանների վրա հարձակումը մի մեծ շարժման սկիզբ էր՝ մշակութային հեղափոխության անվան տակ, որի մշակութային և գիտական հետևանքներն անտեսվեցին, քանի որ ավելի կարևոր էր շարժման քաղաքական նպատակը՝ պահպանել հեղափոխության ձեռքբերումները և իսլամական վարչակարգը:

Մշակութային հեղափոխության անվան տակ համալսարանների վրա կատարված հարձակումները քաջատապես քաղաքական բնույթ էին կրում: Համալսարանները դուրս էին պետության վերահսկողությունից, և վերոհիշյալ հարձակումներն առիթ դարձան նրանց վրա ևս հսկողություն սահմանելու համար: Կարծում ենք, համալսարանների վրա

հարձակումները շնչատեղիին իսլամականացման ծրագրի իրականացմանը: Փաստորեն, պետությունը համալսարանների գործունեությունը համարում էր իր համար վտանգավոր, այդ իսկ պատճառով էլ դրանք փակեց:

Հենց այս մույն ժամանակահատվածում հիմնադրվեց «Համալսարանների իսլամականացման հանձնաժողովը», որի հիմնական խնդիրներից էր նաև իսլամական մթնոլորտի ձևափոխումը թե՛ քննադատական և թե՛ հումանիտար գիտություններին առնչվող՝ ցանկացած թեմայի քննարկման համար<sup>12</sup>: Կրթական ոլորտում քարեփոխումների անցկացնելու նպատակով 1984թ. դեկտեմբերի 9-ին ստեղծվեց նաև Մշակութային հեղափոխության գերագույն խորհուրդը, որն իրեն ծախակեց որպես մշակութային, կրթական, գիտական հետազոտությունների վերաբերյալ որոշումներ կայացնող քարձրագույն մարմին<sup>13</sup>: Նախատեսվում էր, որ այս կառույցը պետք է մշակութային քաղաքականություն իրականացնե՛ր ողջ երկրով մեկ: Խորհրդի նպատակներից էին՝ ուժեղացնել իսլամական մշակույթի ազդեցությունը հասարակության վրա, գերծ պահել գիտական ու մշակութային հաստատություններին և, առհասարակ, երկրի մշակութային միջավայրը արևմտյան ազդեցություններից, ապահովել մշակույթի և արվեստի կենտրոնների, դպրոցների, համալսարանների զարգացումը՝ իսլամական մշակույթի սկզբունքներին համապատասխան: Խորհրդի առաջնային պարտականություններից էին համարվում ԻՀՀ մշակութային քաղաքականության վերանայումը և կրկին կրթական, գիտական, մշակութային ռազմավարությանը համապատասխան քայլերի ձեռնարկումը, զրոսաշրջության և ուխտագնացության քաղաքականության սկզբունքների մշակումը և այլն:

Բացի կրթական ոլորտներից, քարեփոխումներ կատարվեցին նաև այլ քննազավառներում: Խոմենիի պահանջով արմատապես փոխվեց ՋԼՄ-ների քովանդակությունը<sup>14</sup>: Նրա կարծիքով՝ շահի օրոք լրատվամիջոցները լուրջ վնաս էին հասցրել իսլամական գաղափարախոսությանը: Արգելվեց արտասահմանյան ֆիլմերի վաճառքն ու ցուցադրումը, արգելվեց արևմտյան երաժշտությունը և պարը<sup>15</sup>: Մշակութային հեղափոխության իրականացմամբ ամրապնդվեց մզկիթների դերը՝ որպես քաղաքական և գաղափարախոսական գլխավոր կենտրոնների: Կամանց պարտադրվեց չադրա կրելը: Դպրոցներում դասավանդվող հիմնական առարկաներից մեկը դարձավ իսլամը՝ շիա ուղղությանը: Բոլոր դասագրքերը վերահրատարակվեցին<sup>16</sup>:

Այսպիսով, մշակութային հեղափոխությունը ենթադրում էր իսլամականացման ծրագրի իրականացումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, որին հասնելու համար նույնիսկ բռնություն էր գործադրվում ժողովրդի ճնշող մեծամասնության նանդեպ: Ողջ երկրով մեկ իրականացնելով Մշակութային հեղափոխություն, Խոմենիին և նրա կողմնակիցները ձգտում էին ստեղծել «ոչ արևմտյան և ոչ էլ արևելյան, այլ իս-

լամական համակարգ: Իսլամական առաջնորդների համար անընդունելի էր արևմտյան ժողովրդավարության կրկնօրինակումը և արևմտականացումը:

GOHAR MIKAELYAN  
(YSU)  
CULTURAL REVOLUTION IN IRAN BETWEEN  
1980 AND 1987

The period of the Cultural Revolution begins after the Islamic Revolution in 1979, whereupon the Iranian theocracy purged the Western and non - Islamic influences and brought them in line with Islam.

Ruhollah Khomeini defined this movement as the Cultural Revolution. It is also known as Islamic Cultural Revolution. The main aim of the movement was purifying the Universities and educational system from foreign influence.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Roshan Nhad Nahid, Enghelabe farhangi dar Jomhuri Islamic Iran. Tehran, 1383, p. 53.
2. Նշվ. աշխ., էջ 54:
3. Նշվ. աշխ., էջ 54:
4. Նշվ. աշխ., էջ 56:
5. Նշվ. աշխ., էջ 57:
6. Այդ մասին ալեկի մանրամասն տե՛ս "Kayhan" օրաթերթ, 17 ապրիլ, 1980:
7. Mohammad Sharaf Zadeh Bardar, Enghelabe farhangi dar daneshgahhae Iran, Tehran, 1383, p. 211.
8. Հատկապես անշոք էին թե՛րանի համալսարանի զրա կատարված հայր-մակումները, որոնց արդյունքում վերավերվեց 349 և զոսվեց 3 եոզի: Այս մասին ալեկի մանրամասն տե՛ս "Kayhan" օրաթերթ, 17 ապրիլ, 1980:
9. Համալսարաններում գործող իսլամական հաստատությունների ծրագրերը պետք է համապատասխանեցվի իսլամական հեղափոխության զարգացումներին: Mohammad Sharaf Zadeh Bardar, Enghelabe farhangi dar daneshgahhae Iran, Tehran, 1383, p. 213.

10. Հարկ է նշել, որ այդ ժամանակ համալսարաններում գրչույթ էին քաղաքական ուժերի բազմաթիվ գրասենյակներ: Այսուհի հիմնականում կենտրոնացել էին ընդդիմադիր ուժերը՝ կոմունիստական, ժողովրդական գաղափարախոսությունների կողմնակիցներ, պարսիկալեզուներ, մուսուլմաններ և այլն: *Mohammed Shams Zadeh Bardar, Enghelabe farhangî dar dancshgahêso Iran, Tehran, 1383, p. 218.*
11. Այն ռաամուղները, ովքեր հաջում էին տիրող վարչակարգի դեմ հանդես ելնու կազմակերպություններին, արկվեցին ուսումը շարունակելու ենարալորությունից և փոսարվեցին համալսարաններից: Տե՛ս նշված պարբերականց:
12. *Roshan Nhas Nahid, նշվ. աշխ., էջ 61:*
13. *Նշվ. աշխ., էջ 62:*
14. *Бузов В.И., Новейшая история стран Азии и Африки (1945-2004), стр., 278.*
15. *Նշվ. աշխ., էջ 279:*
16. *Քալուրդյան Վ., Իրանի պատմություն, եր., 2005, էջ 719:*



## ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ

(ՀՀՀ)

### ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ

### ԹՈՒՐԹԱԿԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ

### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅՈՒՆԸ

Միացյալ Նահանգների Կոնգրեսում Հայոց ցեասպանության վերաբերյալ օրինագծի շրջանառման պայմաններում ԱՄՆ-ում քուրքական համայնքի և քուրքական լոբբիատական գործունեության թեման հավելյալ կարևորություն է առանում մեզ համար: Դրա հետ մեկտեղ քուրքական լոբբինգի ծավալման և զուգահեռաբար մալ աղբյուրներին կազմակերպման հարցերը օրյեկտիվորեն գիտական և ուսումնական հետազոտության առարկա են, քանի որ քուրք-աղբյուրներին «սպիտակ», (հատկապես Ամերիկայի և Բաքվի իշխանությունների ազդեցության տակ գտնվող հատվածի) աշխատանքն ունի հակահայ ուղղվածություն: Աղբյուրներից դուրս բնակվող ազերիների հետ աշխատանքները համակարգվելու մպատակով 2002թ. հուլիսին հիմնադրված «Արտասահմանում բնակվող աղբյուրների հետ աշխատանքային կոմիտե» պետական կառույցի ղեկավար Նազիմ Իբրահիմովը նշել է, որ իրենց զերատեսչության հիմնադրման առաջնահերթ մպատակներից մեկը «հայկական սպիտակին հակազդելն է»: Հայկական սպիտակից «օրինակ» վերցնելու թեզը «կարմիր թելով» անցնում է քուրք-աղբյուրներին լրատվամիջոցներում, հմարավոր առիթներով շահարկվում քարոզչության կողմից:

Արտասահմանյան պետություններում և մասնավորապես Միացյալ Նահանգներում քուրքական կազմակերպությունների գործունեության թեման ինչպես Թուրքիայի, այնպես էլ Աղբյուրների ՋԱԿ-ների ուշադրության առարկա է: Բացի այդ, նշված թեմաներով Թուրքիայում լույս են տեսել որոշ գիտական և ուսումնական ուսումնասիրություններ: Որոշ ղեկավարներ քուրք հետազոտողները քուրքական լոբբիատական կառույցների թեման ղիտարկում են Միացյալ Նահանգներում գործող այլ համայնքների և մասնավորապես հայկական համայնքի հետ միևնույն ուսումնասիրության համատեղություն<sup>2</sup>:

Ըստ առկա տվյալների, ԱՄՆ-ում քուրքական կառույցները միավորված են գլխավորապես 2 կազմակերպություններում՝ ATAA (Assembly of Turkish American Associations) և FTAA (Federation of Turkish American Associations), որոնք իրենց հերթին մի քանի տասնյակ քուրքական առավել փոքր կազմակերպությունները միավորող կառույց կամ «հովանոց» են:

ATAA Թուրք-ամերիկյան կազմակերպությունների համագումար կառույցը հիմնադրվել է 1967-ին: Այն իր մեջ է միավորում ԱՄՆ-ում գործող 62 հասարակական, մշակութային, գիտակրթական բուրժուական կազմակերպություններ (Ֆլորիդա նահանգի բուրժ-ամերիկյան միություն, Մերիլենդ նահանգի բուրժ-ամերիկյան միություն, Լոս Անջելեսի բուրժ-ամերիկյան մշակութային միություն, Կալիֆորնիայի բուրժ-ամերիկյան ասոցիացիա, Դրեմի բուրժների ամերիկյան ասոցիացիա, Մշակութային փոխանակման բուրժ-ամերիկյան ասոցիացիա, ԱՄՆ-ի բուրժ կանանց լիգա, «Թյուրքոջախը» միություն, Ստամբուլի տեխնիկական համալսարանի շրջանավարտների միություն և այլն): Կառույցի ղեկավարն է Լուրբեմ Ուրալը: ATAA-ն 1989-ից հրատարակում է «Թյուրքիշ Թայմս» անգլալեզու թերթը, որ ունի մաս էլեկտրոնային կայքէջ՝ [www.turkishtimes.com](http://www.turkishtimes.com): Հայոց ցեասպանության տարեկիցի օրերին կառույցն ԱՄՆ-ի խոշոր քաղաքներում կազմակերպում է հակահայ հավաքներ:

Թուրքական մյուս խոշոր համաամերիկյան կառույցը FTAA Թուրք-ամերիկյան կազմակերպությունների համադաշնությունն է: Դեկավարն է Աբիլա Փաքը: FTAA-ն ձևավորվել է 1956-ին: Իր մեջ ներառում է 37 կազմակերպություններ, որոնց մեծ մասը մտնում են մասնատան կազմակերպության կազմի մեջ<sup>4</sup>: 1991-ին FTAA կազմակերպության նախաձեռնությամբ հիմնվեց Համաշխարհային բուրժական կոնգրես կառույցը, որի նպատակն է մեկ զաչիների մեջ միավորել Թուրքիայի դուրս գործող բուրժական համայնքային կազմակերպությունները: Ներկայումս Համաշխարհային բուրժական կոնգրեսի գործունեությունը զբաղանցապես սահմանափակվում է քարոզչական բնույթի էլեկտրոնային տեղեկագրերի տարածմամբ:

Նշված երկու կազմակերպություններից բացի ԱՄՆ-ում գործում են Թուրքական հետազոտությունների ինստիտուտ (ITS), Թուրք-ամերիկյան գիտաշխատողների միություն (ATAS), Թուրք-ամերիկյան իսլամական միություն (TAIF), Ամերիկա-թուրքական խորհուրդ (ATC), Թուրքիայի ամերիկացի բարեկամներ (AFAT) և այլ կառույցներ<sup>5</sup>:

Թե՛ ATAA-ի և թե՛ FTAA-ի անդամ է ԱՄՆ խոշորագույն աղբյուրաբանական կառույցը՝ «ԱՄՆ-ի աղբյուրաբանական համայնք» (ASA-Azerbaijan Society of America) կազմակերպությունը: Այն հիմնադրվել է 1957-ին Նյու Ջերսի նահանգում մուսաֆարական Աղբյուրների հիմնադիր և առաջին վարչապետ Սեմեդ Էմին Ռատուլզադեի կողմից, որը տվյալ ժամանակաշրջանում քնակվել է ԱՄՆ-ում: Ներկայումս կառույցի ղեկավարն է Թոմրիս Ազերին, կենտրոնակայանը Նյու Յորք քաղաքում է: ATAA-ն յուրաքանչյուր տարի անց է կացնում խորհրդածողով և 2004-ից սկսած դրանց ընթացքում մեկ օր նվիրվում է Աղբյուրանին<sup>6</sup>: Մյուս աղբյուրաբանական կառույցներից նշենք «ԱՄՆ-Աղբյուրաբան առևտրային պալատ», «ԱՄՆ-Աղբյուրաբան կրթական և մշակութային

հիմնադրամ», «Աղբբջանի հրեաների միություն», «Աղբբջան-ԱՄՆ մշակութային միություն», «Աղբբջանական տուն», «Աղբբջանական մշակութային միություն», «ԱՄՆ-Աղբբջան բարեկամության միություն», «Մուղան» կառույցները և այլն: Ընդ որում, 2002թ-ից, ինչ հիմնվեց «Արտերկրում բնակվող աղբբջանցիների հետ աշխատանքային պետական կոմիտե» կառույցը, ԱՄՆ-ում բացվել է աղբբջանական վեց հասարակական կազմակերպություն, մինչդեռ Աղբբջանի ամկախացումից մինչև 2002-ը՝ հինգ<sup>7</sup>: Մա ևս վկայում է աղբբջանական համայնքները կազմակերպելու ուղղությամբ պետական նպատակային ծրագրի առկայության մասին: Նախորդ տարի սկսվել է «ԱՄՆ-ի աղբբջանական կազմակերպությունների համագումարի» հիմնադրման աշխատանքները, որն իր մեջ է միավորելու ԱՄՆ բոլոր աղբբջանական կազմակերպությունները: Նոր կառույցի կենտրոնակայանը գործելու է Վաշինգտոնում:

Թուրքական, ինչպես նաև աղբբջանական կառույցները «միա-համուտ» ջանքերով ձգտում են խորացնել գործընկերությունը ԱՄՆ հրեական հաստատությունների հետ: Նազիմ Իբրահիմովը նշել է, որ «Աղբբջանական և հրեական կառույցների միջև սերտ գործակցությունը համահունչ է Աղբբջանի պետական շահերին»<sup>8</sup>: Նախորդ տարվա մայիսին Իբրահիմովը մասնակցել է «ԱՄՆ Հրեական կոմիտե» կազմակերպության հարյուրամյակին նվիրված միջոցառումներին, որին ներկա է գտնվել նաև ԱՄՆ նախագահը, Գերմանիայի կանցլերը, Իսրայելի վարչապետը: Վերջին ամիսներին, Կոնգրեսում Հայոց Եղեռնի օրինագծի ներկայացումից հետո, Թուրքիան պարբերաբար բնույթ է հաղորդել այս ոլորտում ԱՄՆ հրեական կառույցների հետ շփումներին: Պետք է նաև նշել, որ ԱՄՆ ոչ բոլոր հրեական միություններն են, որ պատրաստ են սատարել ցնասպանության հարցում քուլքական կողմին:

Նորագույն իրողություն է քուլքական և աղբբջանական կառույցների համատե ցործունեությունը կամ «սերտաճումը»: Աղբբջանական վերոնշյալ պետական կոմիտեի ղեկավար Նազիմ Իբրահիմովն ասել է, թե «հայկական լոբբինգի աշխատանքին հակադրվելու միակ ուղին աղբբջանական և քուլքական «սփյուռքի» միասնականացումն է»<sup>9</sup>:

Մարտ ամսին Բազլում ընթացավ աղբբջանական և քուլքական համայնքային կազմակերպությունների ֆորում, որին մասնակցում էին «ԱՄՆ աղբբջանական համայնքի», ATAA-ի և FTAA-ի ղեկավարները: Թոմրիս Ազեթին իր խոսքում մասնավորապես նշել էր. «Աղբբջանական և քուլքական համայնքների այս ֆորումը կարևոր դերակատարում է ունենալու Աղբբջանի դեմ հայկական ազդեսիայի մասին աշխարհին խկությունը փոխանցելու և Թուրքիայի դեմ անհիմն պնդումների վերաքերյալ»: Գիտաժողովից հետո մեկնելով Թուրքիա ATAA ղեկավար Էբբյու-ման Զըլլըլը հայտաբարել էր, թե Աղբբջանը վերջին տարիներին առավել

մպատկատրված է աշխատում սեփական գաղթօջախների կազմակերպման ուղղությամբ, քան Յուրքիան:

ԱՄՆ-ում յուրքական կողմի լոբբիստական գործունեության կարևորագույն քաղկազուցիչն է նաև ԱՄՆ-ում գործող վարձու լոբբիստական կառույցների հետ պարբերական բնույթ ստացած աշխատանքը: «Քննի որ ԱՄՆ-ում յուրքերի քիվը քավաքար չէ Յուրքիայի օգտին լոբբիստական աշխատանք կատարելու համար ... լոբբիստական աշխատանքները պատվիրվում են ԱՄՆ լոբբիստական կազակերպություններին», նշում է յուրք հետազոտող<sup>13</sup>: Վերջիններիս առջև դրված հիմնական «առաքաղրանքների» թվում են Յուրքիայի շահերի պաշտպանությունը ԱՄՆ Կոնգրեսում (հակազդունը հայկական, հունական կոնգրեսական հանձնախմբերին), ռազմական, տնտեսական աշխարհաքաղաքական հարցերում ենարավոր աջակցությունը Անկարային: Յուրքական գանձարանի հաշվին վարժված լոբբիստական կառույցների ցանկում են «Հիլ ընդ Նոթոն», «Ինթերնեյշնլ ըրվայզերս», «Էլիվնգստոն Գրուպ» և այլն: 2005-ին հայտնի դարձավ, որ 1989-ին Յուրքիան Կոնգրեսի անդամ Բոբ Դոուլի առաջ քաշած Հայոց ցեղասպանության օրինագծին հակազդելու համար օգտնվել էր «Ֆիլիպ Մորիս» ծխախոտ արտադրող ընկերության լոբբիստական ծառայություններից:

Յուրքական և արքեբջանական լոբբինգի բեման արդիական է նաև ԵՄ երկրների, Ռուսաստանի, Ռուբաինայի պարագաներում: Գրեթե միանշանակ կարելի է կանխատեսել, որ առաջիկա տարիների կտրվածքով այն լուրջ գործոն կարող է դառնալ և ՀՀ ինչպես նաև սփյուռքի անվտանգության առումներով մարտահրավեր է հանդիսանում:

## HAYKARAM NAHAPETYAN (PTCA)

### ACTIVITIES OF THE US'S TURKISH AND AZERBAIJANI ORGANIZATIONS

In terms of Armenian Genocide Resolution is being circulated in the US Congress the Turkish as well as Azerbaijani Diaspora organization exert more efforts and conduct more undertakings. Thus, the issue of the US Turkish and Azeri societies gets more urgency for the Armenian side.

The Turkish non-governmental organizations of the US are united mainly in two greater structures: ATAA (Assambley of Turkish American Associations) and FTAA (Federation of Turkish American Associations). Similar of "umbrella" organization uniting the US Azerbaijani NGOs is being

created during the current period. Also we can notice the process of integration of Turkish and Azeri Diasporas, some intention to create some kind of united anti-Armenian front. Turkish side largely uses the practice of hiring lobbying private organizations, such as "Hill and Knowlton", "International Advisers", "Livingston group", etc.

## СԱՆԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. "Ибрагимов Н., создание азербайджанского лобби стоит дорого", Фихреддиноглу Э., "Эхо", 03.06.2005.
2. Şbu "Amerika'da Siyasal Yapı: Lobiler ve Dis Politika: Turk, Yunan, Ermeni, İsrail ve Arap Lobilerin ABD'nin Dis Politikasına Etkileri", Tayyar Arı, İstanbul 2000, Müjübü İsmail "Amerika Birleşik Devletlerinde Ermeniler ve Ermeni Lobisi", Senol Kantarci, İstanbul 2004.
3. Şbu' [www.assa.org](http://www.assa.org)
4. Şbu' [www.iadf.org](http://www.iadf.org)
5. "Amerika'da Siyasal Yapı: Lobiler ve Dis Politika: Turk, Yunan, Ermeni, İsrail ve Arap Lobilerin ABD'nin Dis Politikasına Etkileri", Tayyar Arı, İstanbul 2000, tp 221:
6. "24<sup>th</sup> Congress of ATAA held discussions related to Azerbaijan", [www.azertag.com](http://www.azertag.com), 03.02.2004.
7. [www.diaspora.az](http://www.diaspora.az)
8. "Сотрудничество с еврейскими диаспорами отвечает интересам Азербайджана", [www.azertag.com](http://www.azertag.com), 04.05.2006.
9. "Азербайджанская и турецкая диаспоры – объединяйтесь", Байрамова Дж., "Зеркало", 29.09.2006
10. "Amerika'da Siyasal Yapı: Lobiler ve Dis Politika: Turk, Yunan, Ermeni, İsrail ve Arap Lobilerin ABD'nin Dis Politikasına Etkileri", Tayyar Arı, İstanbul 2000, 221.

# ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱԶԵԼԻ

(ԱԻ)

## ԻՐԱՆՈՒՄ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՁ – XX ԴԱՐԻ ՍՎԻՁԲ)

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Իրանում երկաթուղային շինարարության հարցի նկատմամբ Մեծ Բրիտանիայի և Ցարական Ռուսաստանի վարած քաղաքականությունը կարելի է գնահատել որպես «փոխհամաձայնեցված», չնայած այն իրողությանը, որ նշված ժամանակահատվածում Մերձավոր Արևելքում այդ երկու տեղությունների միջև առկա էին տնտեսական, քաղաքական, ռազմավարական շահերի սկզբունքային ու խորը հակասություններ:

XIX դարի 70-80-ական թթ. շահական կառավարությունը ռուս և անգլիացի ձեռնարկատերերին Իրանում երկաթուղային շինարարություն իրականացնելու մեծաշնորհային իրավունքներ էր ընձեռել<sup>1</sup>: Անգլիայից տնտեսապես ափնի բուլղ զարգացած Ռուսաստանը, որի երկաթուղային շինարարությունն իր երկրում իրականացվում էր հիմնականում ֆրանսիական կապիտալի միջոցներով, պարտաստ չէր մրցակցության մեջ մտնելու վերջինիս հետ՝ Իրանում երկաթուղային ճանապարհներ կառուցելու հարցում՝ առավել ևս Ռուսաստանում մտավախություն կար, որ երկաթուղային գծերի առկայության դեպքում իրենք կկորցնեն մեծաշնորհային ռիսկերը հյուսիսային Իրանի շուկաներում<sup>2</sup>: Միևչուտ երկաթուղային շինարարության քաղաքականությունից էր կախված ոչ միայն Ռուսաստանի մերձավորարևելյան ամբողջ քաղաքականության ընթացքն ու ապագան, այլև ընդհանրապես Ռուսաստանի միջպետական հարաբերությունները Գերմանիայի և Անգլիայի հետ, որոնց համար տվյալ հարցն այդ ժամանակահատվածում ունեթ առաջնային կարևորություն<sup>3</sup>:

Ռուսական իշխող շրջանակների վաղեմի ծրագիրը՝ կասալից ծովից մինչև Պարսից ծոց «Անդրպարսկական» երկաթուղու միջոցով մտնեալու Հնդկական օվկիանոսի ափերին առժամանակ հետաձգվեց ռուսական կառավարության կողմից՝ 1890թ. փետրվարի 4-ին գումարված «հատուկ խորհրդակցության» կողմից կայացրած որոշմամբ: Նույն Բվականի նոյեմբերի 12-ին Ռուսաստանի և Իրանի միջև կնքվեց համաձայնագիր, ըստ որի վերջինս պարտավորվում էր տաս տարի ժամկետով Իրանում չկառուցել և այլ ընկերությունների ու մասնավոր անձանց շտրամադրել մեծաշնորհային իրավունքներ՝ երկաթուղային ճանապարհներ համար<sup>4</sup>: 1900թ. նշված պայմանագիրը երկարաձգվեց ևս տաս տարով<sup>5</sup>: Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիայի դիրքորոշմանն այս հար-

ցում, ապա քրիտանական կողմը գտնում էր, որ հյուսիսից դեպի երկրի կենտրոնական և հարավային շրջաններ կառուցվող յուրաքանչյուր երկաթուղային գծի յուրջ վտանգ է քրիտանական առևտրատնտեսական, ռազմավարական շահերին: Մինչդեռ Ռուսաստանը, Իրանի տարածքն օգտագործելով, երկաթուղային ճանապարհներով կարող էր մտածնալ ոչ միայն Պարսից ծոցին, այլև Հնդկական օվկիանոսի ավազանին, որտեղ Բրիտանիան կենսական շահեր ուներ<sup>6</sup>: Փաստորեն, այս պարագայում Ռուսաստանի կողմից իրականացվող քաղաքակառուցչային Իրանում երկաթուղային արգելիքի վերաբերյալ ընդունելի էր նաև քրիտանական ղեկավարազիտության կողմից:

Իրենց ձեռքում կենտրոնացնելով Իրանում հնարավոր երկաթուղային շինարարություն իրականացնելու ողջ գործընթացը՝ այդ երկու տերությունները փորձում էին խաչընդոտել նաև մյուս եվրոպական պետությունների կողմից Իրանին առաջարկվող երկաթուղային ծրագրերը: Քաղաքական կենսամակրությունը վաղուց կորցրած ղազարական կառավարությունն իր հերթին բուլ և անհաջող փորձեր էր անում երկրի երկաթուղային շինարարության բնագավառ նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ<sup>7</sup>, սակայն, այդ քայմերը ևս որևէ շոշափելի արդյունք չտվեցին:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Գերմանիայի կողմից առաջարկվող Բաղդադի երկաթուղու կառուցման մախազիծը, որը պետք է իրականացներ Գերմանիայի տնտեսական և քաղաքական ներթափանցումը Փոքր Ասիա, Միջագետք, իսկ ապա նաև Իրան, Պարսից ծոցի ավազան, Արարական բերակղզի և Հնդկական օվկիանոս, Ռուսաստանի և Անգլիայի համար տեղծեց Մերձավոր և Միջին Արևելքում ռազմավարական, տնտեսական և քաղաքական բնույթի յուրջ սպառնալիք<sup>8</sup>: Բաղդադի երկաթուղու կառուցմամբ Գերմանիան մեծ ազդեցություն ձեռք կբերեր նաև Մև ծովի ավազանում՝ հսկողություն սահմանելով ԲաՆթը, Դարդանեղ մեղուցների Սկառմամբ՝ վերածելով այն ռազմավարական հենակետի՝ Ռուսաստանի հարավային սահմանների մոտ: Արդյունքում առավել դյուրին կդառնար գերմանական ներթափանցումը հյուսիսային Իրանի շուկաներ, որտեղ ռուս վաճառականները մեծաշնորհային կարգավիճակ ունեին: Գերմանիան ևս կվերահսկեր տարածաշրջանի հարուստ հումքային ռեսուրսները և ընդարձակ շուկաները՝ սպառնալիքի տակ դնելով իր քաղաքական և տնտեսական փրցակից հակառակորդներին կենսական շահերը<sup>9</sup>:

Երև մինչև XX դարի սկզբը պայքարը Պարսից ծոցի ավազանում գերիշխանություն ձեռք բերելու համար ընթանում էր էիմնականում Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև, ապա գերմանացի մեծաշնորհատերերի կողմից՝ բուրքական կառավարությունից վերտիիչյալ երկաթուղու կառուցման համար մեծաշնորհ առանալուց հետո, Գերմանիան նույնպես սկսեց մեծ հետաքրքրություն ցուցարիբել Մոցի Սկառմամբ, մանա-

զանդ որ ծրագրվում էր Քուվեյթը դարձնել նախագծվող երկաթուղու վերջնական կետ<sup>10</sup>։

Գերմանիայի օրեցօր մեծացող ազդեցությունը Իրանում, ինչպես նաև Բաղդադի երկաթուղու շուրջ ընթացող դիվանագիտական պայքարը հանդիսացան այն կարևորագույն պատճառները, որոնց հետևանքով 1907թ. օգոստոսի 31-ին կնքվեց անգլո-ռուսական համաձայնագիրը՝ Իրանն ազդեցության ոլորտների բաժանելու վերաբերյալ<sup>11</sup>։ Այսուհետև Իրանում երկաթուղային շինարարության իրականացման գործում հիմնական պայքարն ընթանալու էր Ռուսաստանի և Գերմանիայի միջև։

1907-1910 թթ. ընթացքում Գերմանիայի և Ռուսաստանի հարաբերությունները բավականին սառն էին։ Մական Բալկաններում վերջինիս ռմեցած անհաջողություններից հետո գերմանամետ շրջանակների ուժգին ճնշման ներքո ռուսական կառավարությունը 1911թ. վերսկսեց դեռևս 1907թ. դնդիատված բանակցությունները Գերմանիայի հետ՝ պարսկական հարցերի վերաբերյալ<sup>12</sup>։ Նախապես Պոտոլամում կայացած բանակցությունների արդյունքում Ս.Պետերբուրգում 1911թ. օգոստոսի 19-ին կնքվեց ռուս-գերմանական համաձայնագիր՝ Իրանի վերաբերյալ<sup>13</sup>։ Համաձայնագրով Գերմանիան ճանաչում էր Ռուսաստանի հատուկ շահերը և հետաքրքրություններն Իրանում, իսկ Գերմանիան, համաձայն պայմանավորվածության, այդ երկրում պարտավորվում էր հետապնդել միայն առևտրատնտեսական շահեր։ Վերջինս պարտավորվում էր շահական կառավարությունից ձեռք չբերել երկաթուղային և այլ տեսակի մեծաչնորհներ՝ ռուսական ազդեցության ոլորտում, իսկ Ռուսաստանը, որոշակի գիշումների գնալով՝ իր հերթին պարտավորվում էր չհակադրել Բաղդադի երկաթուղու շինարարության ընթացքին։ Նաև համաձայնություն էր տալիս կառուցել Թեհրան-Իրաննեկին գիծը, որն ի դեպ, շահարկումների առարկա էր դեռևս 1902թ.<sup>14</sup>։ Նախատեսվում էր, որ այդ գիծը հետագայում միանալու էր Բաղդադի երկաթուղու հյուսիսային հատվածին։ Համաձայնագրում տեղ էր գտել նաև հատուկ կետ, ըստ որի ցարական կառավարության կողմից վերոնիշյալ երկաթգիծ կառուցումից հրաժարվելու դեպքում՝ Գերմանիան ինքը շահական կառավարությունից ձեռք կբերեր այդ մեծաչնորհը<sup>15</sup>։

Նշված համաձայնագիրը կնքելուց հետո ռուսական իշխանությունները նոր եռանդով վերսկսեցին Անգլիայի հետ համատեղ Իրանում անդրիրանական երկաթուղի կառուցելու ծրագրերի շուրջ համաձայնության գալու փորձերը, որի իրականացման դեպքում Բաղդադի երկաթուղին կկորցնեիր իր նշանակությունը տարածաշրջանում։ Երկու տերությունների կողմից ստեղծված համատեսել «Société d'Études» կազմակերպությունը՝ ֆրանսիական կապիտալի մասնակցությամբ<sup>16</sup>, պետք է շահական կառավարությունից, յուրաքանչյուրը իր ազդեցության գոտու շրջանակներում, ձեռք բերեր մեծաչնորհային իրավունքներ՝ անդրիրանական երկաթգիծ կառուցելու համար<sup>17</sup>։ Ինչ վերաբերում է չեզոք գո-



տում երկաթուղային շինարարություն իրականացնելուն, ապա Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը համատեղ պետք է մենաշնորհային իրավունքներ ստանալին իրանական կառավարությունից, որի արդյունքում կշեղոքացնեին այդ շրջանում երկաթուղիներ կառուցելու գերմանական նախագծերը<sup>18</sup>։

Ամփոփելով պետք է նշել, որ չնայած վերոհիշյալ իրողություններին Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Գերմանիա եռանկյունու քաղաքական ու տնտեսական շահերի անցնելիստ բախման հետևանքով, ուսումնասիրվող շրջանում Իրանում այդ երկաթուղային ծրագրերից և ոչ մեկն այդպես էլ կյանքի չկոչվեց։

NAZELY NAVASARDYAN  
(IOS)

ON THE ISSUE OF THE RAILWAY CONSTRUCTION IN  
IRAN  
(LATE 19TH AND EARLY 20TH CENTURY)

In the late 19th and in the early 20th century Germany proposed Bagdad railway construction project that might realize Germany's economic and political spread to the Near and Middle East.

The Bagdad railway project's realization made strategic, economic and political threat for Russia and Great Britain. That's why in the researching period the Great Britain's and Russia's policy on railway building issue in Iran can be evaluated as "cooperative" in spite of economic, political and strategic principle and deep contradictions between the following two states in the Middle East.

As a result of continuous economic and political interest's clashes between Russia, the Great Britain and Germany none of the railway building projects have been realized in Iran.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Казем-Заде Ф., Борьба за влияние в Персии, Дипломатическое противостояние России и Англии в 1864-1914, М., 2004., стр. 89-195.
2. "Красный архив", Англо-русское соперничество в Персии в 1890-1906гг., т.1., М., 1933, стр. 3-4.

3. Бестужев И.В., Борьба в России по вопросам внешней политики 1906-1910гг., М., 1961, стр. 67.
4. "Красный архив", №4, 1923, стр. 35-47.
5. Նույն տեղում էջ 48:
6. Foxe Sykes, A History of Persia, vol. II, London, 1951, p. 412-413.
7. Казем-Заде Ф., №4, 1923, стр. 85-133.
8. Բայրության Վ., «Իրանական հարցը ռուս-գերմանական դիվանագիտական հարաբերություններում 1905-1911թթ.», Մեծապար և Միջին Արևելքի հրատարակչություն, XI, Եր., 1982, էջ 23-24:
9. Бондаревский Г.Л., Багдадская дорога и проникновение германского империализма на Ближний Восток в 1888-1903гг., Ташкент, 1955, стр. 156-250.
10. Butterfield P., The Diplomacy of the Bagdad Railway, 1890-1914, Göttingen, 1932, p. 17-19.
11. Ըստ պայմանագրի. Իրանի հյուսիսային մասը՝ Ղարս-Շիրին-Յեզդ-Ձուլ-Ֆաղաբ գծից հյուսիս, նախատեսվում էր ռուսական ազդեցության տարածումը, իսկ Կարապախի մասը՝ Բանդար-Աբրահամ-Մեհրան-Ռիզվանդ-Ղազին գծից հարավ-արևելք, անգլիական ազդեցության գոտի: Կենտրոնական հատվածը հայտարարվում էր «չեզոք գոտի»՝ որպես ազատ մրցակցության դաշտ:
12. Ефремов П.Н., Внешняя политика России (1907-1914), М., 1961, стр. 314-331.
13. British Documents, The Near and Middle East on the Eve of War, vol. X, part I, London, 1936, doc. 741, p. 717-719.
14. Երբ 1902թ. նախանի դարձավ, որ գերմանացի մեծարկառուցիչները կողմից շահական կառավարությանն առաջարկվել է կազմել ժամանակավորապես կառուցել Բաղրադի երկաթուղու հովիտային և Կանկին-Բաղրադ-Մեհրան-Նաբախի գիծը, ռուս դիվանագետները փորձեցին կանխել այդ ծրագրերը՝ պատճառաբանելով, թե այդ գիծը կմեծացնի տիրապետչության դեպի շիակամ սրբավայրերը, պատճառ դառնալով երկրից մեծ քանակությամբ դրամի արտահանի, ինչը ծանր կանրադառնա ֆինանսական վիճակի վրա:
15. Հանձնարարագրի անթղթական տեղանք տե՛ս "Красный архив", т. 3, Москва-Петроград, 1923, стр. 10-13.
16. Международные отношения в эпоху империализма, Документы из архивов царского и временного правительств 1878-1917, сер. 2, т. XX, ч. 2, № 747, стр. 251.
17. Նույն տեղում, №1034, էջ 459:
18. "Красный архив," т.3, Москва-Петроград, 1923, стр. 21-22.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Թուրքիայում 2007 թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին իրականացած նախագահական ընտրությունների քվեարկության առաջին փուլը ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) դիմումի համաձայն անվավեր ճանաչվեց ՄԴ-ի կողմից<sup>1</sup>: Այս որոշմանը նախորդեցին հակակառավարական ցույցեր Անկարայում և Ստամբուլում<sup>2</sup> և հատկապես գլխավոր սպառակույտի մամլո հաղորդագրությունը՝ քողարկված սպառնալից ոճով<sup>3</sup>:

Սույն հոդվածով վերլուծվում է հանրապետության նախագահի դերը թուրքական սահմանադրական համակարգում ըստ 1982թ. սահմանադրության<sup>4</sup>: Այս սահմանադրությունը ճնշվողվել է զինվորական հեղաշրջման արդյունքում, զինվորականների ակտիվ մասնակցությամբ ինչպես նախորդ 1961թ. սահմանադրությունը: 1982թ. սահմանադրությունն ուժեղացնում է թուրքական քաղաքական համակարգ ներքափանցելու զինված ուժերի լծակները ի դեմս ԱԱԽ-ի<sup>5</sup> (1982/Ի.117-118), որը միստի է հրաձիգվում հանրապետության նախագահի գլխավորությամբ:

Թուրքիայի Հանրապետության (ԹՀ) նախագահը պետության ղեկավարն է: Ըստ երկրի սահմանադրության<sup>6</sup> նա խորհրդանշում է ԹՀ-ն ու թուրք ժողովրդի միասնականությունը<sup>7</sup> և այդ պաշտոնը աշխարհիկ պետության խորհրդանշն է<sup>8</sup>: Նախագահն ապահովում է սահմանադրության հիմնադրույթների առանց խախտումների իրագործումը և պետական մարմինների ներդաշնակ գործունեությունը:

Գործադիրի վարույթը իրականացվում է կառավարության և նախագահի կողմից, որի պատասխանատու թևը կառավարությունն է: Ընդգծենք, որ սահմանադրությունը գործադիրի վարույթը ուժեղացնելիս նախընտրել է ընդլայնել հատկապես հանրապետության նախագահի լիազորությունները:

Ի շահ պետության՝ քաղաքացու ազատությունները սահմանափակող 1982թ. Սահմանադրությունը նախագահին լիազորություններ է տալիս՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ոլորտներում, որոնք նախորդ սահմանադրության հետ համեմատելիս ամհամեմատ շատ են: Այստեղ կարևորվում է նախագահի անկողնակալ դերը՝ որպես պետության գլխավորի, մեծանում է իշխանության ու ընդդիմության միջև տեղեկված հարցերում միջնորդելու լծակները, քաղաքական ճգնաժամներում կարգավորիչ դեր խաղալու հնարավորությունները<sup>9</sup>:

Ըստ 1982թ. սահմանադրության նախագահին ընտրվում է ՅԱՄԺ-ի կազմից՝ 7 տարի ժամկետով, 40 տարին լրացած պատգամավորներից մեկ անգամ ընտրվելու իրավունքով: Որպես թեկնածու կարող է առաջադրվել նաև պատգամավոր չհանդիսացող անձը՝ ՅԱՄԺ-ի անդամների 1/5-ի առաջարկությամբ: Ընտրվելու դեպքում դադարում է նախագահի կուսակցական կամ ՅԱՄԺ-ի անդամի կարգավիճակը (1982/հ.101):

Առաջին երկու փուլերում պահանջվում է ՅԱՄԺ -ի անդամների ընդհանուր թվի 2/3-ի ձայները (367 ձայն), երրորդ և չորրորդ փուլերում ամենաշատ թվի տեսքած 2 թեկնածուները հաղթելու համար պետք է ապահովեն ձայների ընդամասնությունը (276 ձայն-1982/հ.102):

Նախագահական ընտրությունների քննական ավարտն ապահովելու համար 4 փուլ ըվարկվելուց հետո նախագահ չընտրվելու դեպքում ՅԱՄԺ-ը զբաղվում է և նշանակվում է արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Դա բույլ է տալիս խոստովել 1980 թ.-ի զինվորական հեղաշրջմանը նախորդած նախագահական ընտրությունների անադրյունավետ գործընթացի կրկնությունից, երբ խորհրդարանի երկու մեծ կուսակցությունների (ԺՀԿ և Արդարություն կուսակցություն) անհամաձայնության պատճառով հինգ ամիս ձգված ըվարկությունները հանգեցրին խորհրդարանի գործունեության անարդյունավետությանը, ներքին քաղաքական անկայունությանը:

Նախագահի «դե յուրե» վետոյի իրավունք չունենալով հանդերձ օրենքը ՄԴ-ում վիճարկելուց բացի ունի օրենքները հանրաքվեի դնելու իրավունք, որը օրենսդիր իշխանության ոլորտում 1982թ. Սահմանադրությամբ տրված նոր լիազորություն է: Հատկապես ՄԴ-ի նախնին նախագահ և հանրապետության ներկա նախագահ Սեզերը բազմիցս օգտվել է իր այդ իրավունքից: Սեզերը մինչ օրս մերժել է 66 օրենք և 751 պաշտոնի նշանակման որոշում, այն դեպքում, երբ Քեմալ Էվրենը մերժել էր՝ 27, Թուրգութ Օզալը՝ 17, Մյուլեյման Դեմիրելը 14 օրենքների հաստատումը<sup>10</sup>:

Գործադիր իշխանության ոլորտում նախագահին ունի իր նախագահությամբ կառավարության նիստ հրավիրելու, բուրբական զինված ուժերի օգտագործման հրաման արձակելու, Ազգային անվտանգության խորհրդում նիստ հրավիրելու և նախագահելու, իր նախագահությամբ հավաքված կառավարության նիստում արտակարգ իրավիճակ հայտարարելու և պարետային ժամ մտցնելու, պետական վերահսկողական խորհրդի նախագահին և անդամներին նշանակելու, իր ենթակառուցվածքային աշխատող սույն խորհրդին հետաքննություն անցկացնել պատվիր տալու, Բարձրագույն ռազմական խորհրդի անդամներին և համալսարանի ռեկտորներին նշանակելու լիազորություններ (1982/հ.104):

Դատական իշխանության քննազատում նախագահին է նշանակում Սահմանադրական դատարանի բոլոր անդամներին, Դանըշբայի

(Demotay-վարչական դատարան) անդամների բժի 1/4-ին, գլխավոր դատախազին և տեղակալին, զինվորական վճռաբեկ դատարանի անդամներին, Դատավորների և դատախազների քարձրագույն խորհրդի անդամներին (1982/հ.104):

Մրանցից բացի սահմանադրությամբ և հատուկ օրենքներով սահմանված լիազորությունների հիման վրա առաջարկված թեկնածուներից ընտրում և նշանակում է (1982/հ.104) Ռադիոյի և հեռուստատեսության բարձրագույն խորհրդի անդամներին, Աթաթյուրքի անվան մշակույթի, լեզվի և պատմության բարձրագույն խորհրդի անդամներին, Մշակույթի արժեքների և քննական ռեսուրսների պահպանման բարձրագույն խորհրդի անդամներին<sup>11</sup>: Ուշադրության է արժանի նախագահի ՄԴ-ի բոլոր անդամներին նշանակելու հանգամանքը վերջին զարգացումների համատեքստում: ԺՀԿ-ն դիմումից հետո 7:2-ի հարաբերությամբ ՄԴ-ի կողմից քվեարկության անվավեր ճանաչումը մեկնարանվեց որպես իրենց նշանակած նախագահին տրված տուրք, իսկ ՄԴ-ը նման ընմադատություններին արձագանքեց քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով սպառնալով:

Հանրապետության նախագահի բոլոր որոշումները, բացի միանձնյա ընդունած որոշումներից<sup>12</sup> ստորագրվում են վարչապետի և համապատասխան նախարարի կողմից, որոնք էլ հանդիսանում են այդ որոշումների պատասխանատուները, այդ թվում և դրանց դատական կարգով բողոքարկումների դեպքերում: Հանրապետության նախագահի՝ պետական դավաճանության (haute trahison) ընմարկում կարող է սկսվել Ազգային Ժողովի պատգամավորների ընդհանուր բժի 1/3-ի առաջարկով, իսկ որոշումն ընդունվել նվազագույնը ձայների 3/4-ով (1982/հ.105): Նախագահի կողմից երկրից բացակայելու, իր պաշտոնական պարտականությունների կատարման անհնարիմության դեպքում նրան փոխարինում է Ազգային Ժողովի նախագահը:

1982թ. սահմանադրությամբ նախագահին առընթեր տեղծված երկու նոր մարմիններն են՝ նախագահական ընդհանուր քարտուղարությունը (ԸՔ) (Cumhurbaşkanlığı Genel Sekreterliği) (1982/հ.107) և պետական վերահսկողական խորհուրդը (ՊՎԽ) (Devlet Denetleme Kurulu) (1982/հ.108): ԸՔ-ն հիմնվել է 1983թ.-ին հատուկ օրենքով: Այն բաղկացած է քարտուղարական ապարատից, ընդհանուր քարտուղարությունց, նախագահական խորհրդից, անվտանգության և հետախուզական խորհուրդներից, նախագահի հատուկ առյանից և պետական վերահսկողական խորհրդի տնօրինությունից:

ՊՎԽ և դատական մարմիններից իրավասու է կատարել աճն տեսակի հետազոտություններ բոլոր պետական հաստատություններում, բացի զինված ուժերից, այն հաստատություններում, որոնց բաժնետիրական կապիտալի 51% և ավելին պատկանում է պետությանը, արհմիություններում, քարեգործական միություններում<sup>13</sup>, ինչը կարելի է շեղում

համարել խորհրդարանական ժողովրդավարության սկզբունքից, երբ գործադիրի ոչ պատասխանատու թևի, այսինքն՝ հանրապետության նախագահի հրահանգով որևէ նախարարությանը ենթակա կառույցում կարելի է հետազոտություն և հետաքննություն անցկացնել ու հետազոտության վերջնական զեկույցը ներկայացնել կառավարությանը այն նկատառումներով, որ դրանում նշված միջոցառումները 45 օրվա ընթացքում իրականացվեն<sup>14</sup>:

Թուրքական երրորդ հանրապետության նախագահներից առաջինը՝ Ջենան Էլբեքը, զինվորական էր, նրան հաջորդած նախագահներ Թուրգութ Օզալը ու Մյուլեյման Դեմիրելը և՛ մասնավոր հատվածում և՛ որպես պետպաշտոնյա ունեին աշխատանքային փորձ, իսկ գործող նախագահ Անմուր Լեջդեք Սեզերը ՄԴ-ի նախկին նախագահն է: Թուրքիայում մինչ օրս ընտրված հանրապետության տաս նախագահներից վեցը նախկին զինվորականներ էին:

Վերջին զարգացումների արդյունքում Թուրքիայում քարճրացել է<sup>15</sup> ժողովրդի կողմից հանրապետության նախագահի ուղղակի ընտրության ծավալման և կառուցումը: Նշենք, որ նախագահական համակարգին անցնելու պահանջին<sup>16</sup>, որն օրակարգ էր բերվել դեռևս նախագահներ Օզալի և Դեմիրելի օրոք, մինչ օրս դեմ են արտահայտվում թուրք քաղաքագետների և իջավագետների մեծամասնությունը՝ թուրքական պետության քարոզությանը, խորհրդարանական համակարգին վնասելու, քաղաքացիական հասարակությունը քեռտացնելու, անջատողական հակումներ քաջալերելու, անհատական վարչակարգի պատճառ դառնալու, դեմոկրատական վարչակարգին վնասելու պատճառաբանություններով<sup>17</sup>:

Այսպիսով, Թուրքիայում սույն զարգացումները կարող են հանգեցնել ինչպես սահմանադրական շրջ փոփոխությունների, այնպես էլ 1980թ. սեպտեմբերի 12-ից հետո ԱԱԽ-ի ուղղակի միջամտությանը ընդունված 1982թ. սահմանադրությունը նորով փոխարինելուն:

PETROS CHAVIKYAN  
(YSU)

## THE PRESIDENT OF THE REPUBLIC IN THE TURKISH CONSTITUTIONAL SYSTEM

This article entitled deals with the presidential rights in the context of the last constitution adopted in 1982. The work shows the changes made in the presidential rights and the last constitution of 1982 which bestows too many rights that are beyond rational parliamentarianism.

After the 1980s, the discussion concerning the presidential system is a part of the Turkish political agenda. These discussions become more intense following the tenure of presidents Ozal and Demirel and also nowadays when Sezer's presidency comes to an end.

During the republican era, 10 presidents were chosen by the Parliament and 6 of them were former military servicemen, this demonstrates the direct connection of the politico-military system by means of president.

## ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հատկապես վերջին օրերին Արդարություն և Ջազգաբաժնի կուսակցության ճնշածանություն կազմած խորհրդարանում արագորժնախարար Աբդուլլահ Գյուլը ելալն կուսակցության նախաձեռնությամբ առաջադրվեց նախագահի թեկնածու: Ապրիլի 27-ին իրականացված 1-ին փուլի ընտրությանը ճանաչվել են 361 եղի, որոնցից 357-ը կողմ են քվեարկել Աբդուլլահ Գյուլի թեկնածությանը, ընդդիմադիր կուսակցությունները չեն մասնակցել ընտրությանը: Առաջին փուլում նախագահ ընտրվելու համար պատգամավորների ընդհանուր թվի ծայմերի 2/3-ի (367/550) ապահովման նախապայմանը որը իրականացմանի կողմից միկնարանվեց որպես նվազագույն ընտրությունների թիվ և ԺՀԿ-ը կինք ընդունելով այդ տեսակետը դինք ՄԴ-ն ընտրությանը անվավեր ճանաչելու պահանջով: Erdem T., 'Seçilir de, ne olur?' *Radikal*, 12.04.2007; Erdem T., 'Köpek tertipmasında YÖK', *Radikal*, 9.04.2007; Murat Beğen, '367', *Radikal*, 4.05.2007.
2. Ազգ, էք 1.05.2007:
3. 'Genelkurmay Başın Açıklaması', 27 Nisan 2007 No: BA-08/07 [www.tsk.mil.tr](http://www.tsk.mil.tr)
4. Türkiye Cumhuriyeti Anayasası K. 2709 K.t. 7.11.1982 Necmi Yılmazoğlu, *Anayasa Hukukunun Temel Metinleri*, İstanbul, Beta Yayınları, 2005, s.127-219.
5. Տես մանրանուն Անն Հուլսեիչյան, «Թուրքիայի ազգային անվտանգության խրոհություն արդի բարեփոխումների համատեղատուժե լիմրադիր՝ Ռ. Սաֆրաստյան), *Թուրքագիտական և Օտմանագիտական Հնարազատություններ IV*, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, էր., Աստղիկ, 2006, էք 114-121:
6. Սաֆրաստյան Ռ., «Հայ-Թուրքական Սահմանիկ Նշանակությունը», *Զոյուր*, № 2, էր., 07/08.2006. էք 37:
7. Vincent Boland, 'Laiklik demokrasiyle çetür oldu' *Financial Times*, 3.05.2007, [www.radikal.com.tr/yazici.php?haberno=220251&tsarih=04/05/2007](http://www.radikal.com.tr/yazici.php?haberno=220251&tsarih=04/05/2007)
8. Özbudun E., *Türk Anayasa Hukuku*, Ankara, Yetkin yayımları, 2000, s. 61-62.
9. Օրինակ 1997թ.-ի փետրվարի 28-ին իսլամամետ փարչապետ Նեզմեթթին էրբանանի ղեկավարած Բարբորություն-ճանաչարի (Refah-Yol) կուլիցիոն կառավարության դեմ բանակի նախաձեռնած մեղքաատմանը շափարտվեցին զինվորական ուղղակի միքամություններ՝ ի շնորհիվ այդ շքա-

մի նախագահ Այդոնյան Դեմիրելի միջնորդության: Սակայն դեպից մի քանի ամիս հետո կատարարությունը տվեց իր հրաժարականը: Serap Yazici, *Sevkiyet ve Yarı-Devletlilik Sistemleri*, İBÜY, İstanbul, 2002, s. 166-167.

10. Enis Tayman- Ebru Toktar, 'Serzer'in günahları ve sevapları', *TEMPO*, sayı:12-1007, 22 Mart 2007.
11. Gözler, *Türk Anayasa Hukuku*, Bursa, Ekin Kitabevi Yayınları, 2000, s. 515.
12. 1982թ. Սահմանադրության նախագծի հ.113-ով միանձնյա կատարվող թոշր կետերը մեկ առ մեկ նշված էին, սակայն այդ շրջանի Ազգային Անկախության հորինողը սույն կետը ոչ պիտանի համարելով՝ հանել է Սահմանադրության նախագծից Kemal Gözler, *op. cit.*, s.520.
13. Kemal Gözler, *op. cit.*, s.515.
14. Kemal Gözler, *op. cit.*, s.554-557.
15. 'Anayasa değişikliği paketi', *Sabah*, 4.05.2007 [www.sabah.com.tr/2007/05/04](http://www.sabah.com.tr/2007/05/04)
16. Yavuz K.H., *Türkiye 'de Siyasal Sistem Arayışı ve Yürütmenin Güçlendirilmesi*, Ankara, Seçkin Yayınları, 2000, s. 478.
17. Kırcalı S.S., 02.09.1982 Danışma Meclisi Konuşması, *DMTD*, c.9, Ankara, TBMM Başmevli, 1982, s.377 Yavuz K.H., *op.cit.*, s. 478.



ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՆՆԱ  
(ՀՀ ԳԱԱ ԳԿՄԸ)

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՁԻՆՎԱՏ ՈՒԺԵՐԻ  
ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ԵՈՒՐՁ

Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային խնդիրներից է համարվում Ղաթարադյան հակամարտության կարգավորումը: 1994 թ. մայիսին հաստատված զինադադարից առ այսօր չարունակվում են հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերը: Բացում ձգտում է Ղաթարադյան հակամարտությունը լուծել խաղաղ ճանապարհով՝ միաժամանակ չքաջատելով հակամարտության լուծման ռազմական տարրերակց: Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունների հիմքում ընկած են Ադրբեջանի զինված ուժերի սպառազինության և մարտունակության վերաբերյալ պնդումները, ուստի անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Ադրբեջանի զինված ուժերի կառուցվածքին և քանակի կազմավորման օրից պատագինության ու մարտունակության քարձրացմանն ուղղված միջոցառումների լուսարանմանը, որը կօգնի ճշտ գնահատել Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունները և դրանցից բխող ինտեանցները: Մանավանդ, Ադրբեջանում այն մտայնությունն է իշխում, որ հնարավոր ռազմական գործողություններն ավարտվելու են Ադրբեջանի հաջրանակով: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի ելույթում մասնավորապես ասվում է. «Ձեմնադադարը յխախտելը Ադրբեջանի ամենամեծ զիբումն է Հայաստանին: Հայաստանի տնտեսությունը գտնվում է կարվածաճար վիճակում: Հայաստանի ընթացիկ տարվա ընդհանուր բյուջեն, ըստ պաշտոնական աղբյուրների, 670 մլն. դոլար է, որը գրեթե համարվեք է Ադրբեջանի ռազմական ծախսերին: Եթե պատերազմ սկսվի, Հայաստանն այս բյուջեով պատերազմը չսիեքու ուժ չի ունենա»<sup>1</sup>:

Ադրբեջանի այս հայտարարությունները հիմնավորվում են երկու գործոնով. տարածաշրջանային տնտեսական նախագծերում Ադրբեջանի ներգրավվածությամբ և ռազմական ծախսերի անընդհատ աճով: Տարածաշրջանում Ադրբեջանի առաջնության ամրապնդմանն են միտված արդեն շահագործվող Բաբու-Յրիլիսի-Ջեյհան նավթամուղը, ինչպես նաև ապագայում Բաբու-Յրիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթգծի և Բաբու-Յրիլիսի-Էրզրում գազամուղի նախագծերի իրագործումը<sup>2</sup>: Այս նախագծերի իրագործումը օբյեկտիվորեն նպաստում է Ադրբեջանի ռազմական ծախսերի ավելացմանը. 1994 թ. մայիսին զինադադարի հաստատումից առ այսօր Ադրբեջանի ռազմական ծախսերի ավելացումը կրում է շարունակական բնույթ: Պաշտոնական տվյալների համաձայն՝

1997 թ. Աղբրեցանը իր ռազմական ծախսերի համար տրամադրել էր 74 մլն. դոլար կամ պետական բյուջեի 10%-ը: Այս ցուցանիշը անընդհատ աճել է՝ 2001 թ. կազմելով 112 մլն. դոլար կամ պետական բյուջեի 13%-ը: 2006 թ. Աղբրեցանի ռազմական ծախսերը հասնում են 650 մլն. դոլարի, իսկ 2007 թ. մախատեսվում է ռազմական ֆինանսավորումը հասցնել 1 մլրդ. դոլարի, որը համարժեք կլինի Հայաստանի պետական բյուջեին:

Ռազմական ծախսերի նման աճը միտված է Աղբրեցանի զինված ուժերի սպառազինմանը և արդիականացմանը: Աղբրեցանի սպառազինության ակունքները պետք է փնտրել 1990-ականներին, երբ Աղբրեցանը մախսկին ԽՍՀՄ-ից ստացավ զենքի ու զինամթերքի հարուստ ժառանգություն, որով էլ հիմք դրեց իր հետագա սպառազինմանը: Ծնայած 1992 թ. Տաշքենդյան համաձայնությունների ստորագրմանը և Եվրոպայում սովորական սպառազինությունների պայմանագրին միանալու փաստին, մախսկին ԽՍՀՄ-ի զենքի, ռազմատեխնիկայի և սպառազինությունների մեծ մասը քաժին ընկրավ Աղբրեցանին, ավելին, քան Հայաստանին, Վրաստանին և Լեռնային Ղարաբաղինը միասին վերցրած<sup>3</sup>:

1990-ականներին շարունակվող հայ-աղբրեցանական ռազմական գործողությունների պայմաններում էլ սկսվեց Աղբրեցանի սպառազինության ավելացումը: Արդեն 1993 թ. Աղբրեցանն ուներ ավելի շատ ռազմատեխնիկա, քան մախատեսված էր Եվրոպայում սովորական սպառազինությունների պայմանագրով<sup>4</sup>: Մինչև 1994 թ. զինադադարը Աղբրեցանը, նորանոր ռազմատեխնիկա կիրառելով, ցանկանում էր հաղթանակած դուրս գալ պատերազմից: Սակայն, պատերազմը տանուլ տալուց հետո Աղբրեցանը սկսում է ավելի շատ միջոցներ տրամադրել իր քանակի սպառազինմանը և արդիականացմանը՝ նպատակ ունենալով տարածաշրջանում առաջնային դիրք զբաղել: Աղբրեցանի սպառազինությունը իրականացվում է մալթային եկամուտների հաշվին այլ երկրներից զենքի ու զինամթերքի գնմամբ և արտաքին ռազմական ու ֆինանսական օգնությամբ:

Աղբրեցանը զենք ու զինամթերք է ներմուծում Թուրքիայից, Ռուսաստանից, Բուլղարիայից, Սլովակիայից, Ղազախստանից, նաև Հայաստանի ռազմավարական գործընկեր Ռուսաստանից և այլ երկրներից: 1992 թ. առ այսօր Ռուսաստանն մնում է Աղբրեցանի զենքի ու զինամթերքի հիմնական մատակարարը: Ռուսաստանից Աղբրեցան են ներմուծվում տանկեր, զրահամեքենաներ, ռազմական ինքնաթիռներ և այլ ռազմական արքավորումներ<sup>5</sup>: Միայն 1992-1994 թթ. Ռուսաստանից Աղբրեցան են ներմուծվել հարյուրավոր տանկեր և զրահամեքենաներ: Ռուսաստան գրադվում է նաև Աղբրեցանի հին տանկերի արդիականացմամբ<sup>6</sup>:

Արտերկրից Աղբրեցանին ամենաշատ ռազմական և ֆինանսական օգնություն տրամադրում են Թուրքիան և ԱՄՆ-ը: Թուրքիան համարվում է Աղբրեցանի ամենավստահելի ռազմական գործընկերը: Թուրքիան Աղբրեցանին ռազմական օգնություն է տրամադրել 1990-ա-

կանններից ի վեր, ինչպես նաև գրառվել է Աղբրեջանի զինվորների ու ապանների ուսուցմամբ և ռազմական համակարգերի արդիականացմամբ: Ընդհանուր առմամբ Թուրքիայի ռազմական օգնությունն Աղբրեջանին կազմում է 170 մլն. դոլար:

ԱՄՆ-ը ծախսել է 30 մլն. դոլար Աղբրեջանի ուղիղակցիոն համակարգի արդիականացման, անձնակազմի ուսուցման, նավերի վերանորոգման վրա և վերջերս հայտարարել է, որ ցանկանում է տրամադրել 135 մլն. դոլար՝ Աղբրեջանի և Ղազախստանի ծովային ուժերը բարելավվելու նպատակով<sup>1</sup>: Աղբրեջանի զինված ուժերի արդիականացման գործում զգալի է նաև Ռուսաստանի դերը, որը գրառվում է Աղբրեջանի օդային և հակաօդային համակարգերի արդիականացմամբ:

### *Աղբրեջանի զինված ուժերի կառուցվածքը*

Աղբրեջանի թանակը ստեղծվել է 1991 թ. հոկտեմբերին նախագահի հրամանագրով: Աղբրեջանի առաջին պաշտպանության նախարարը գնեռալ-մայր Վալեր Բարչարյան էր, որի օրոք սկսեցին ձևավորվել թանակի առաջին կանոնավոր զորամիավորումները: Ներկայումս Աղբրեջանի ակտիվ զինված ուժերը մոտավորապես 95000 են, պահեստային ուժերը 575000: Հավելյալ Աղբրեջանի ցամաքային զորքերը ունեն 15000 ավիադեսանտային ուժեր: 2003 թ. տվյալներով ցամաքային ուժերն ունեն 513 զրահամեքենաներ, 500 տանկեր, 410 հրետանային համակարգեր և այլ մանր ու միջին տրամաչափի զինատեսակներ: Ռազմաօդային ուժերն ունեն 7900 զինծառայող, 172 տարբեր տեսակների ինքնաթիռներ, 60 ուղղաթիռներ: 2006-2007 թթ. նախատեսված է օդային ուժերը համալրել 45 ռազմական ինքնաթիռներով և 25 ռազմական ուղղաթիռներով: ԱՄՆ-ը իրականացրել է Աղբրեջանի յոթ ռազմական օդանավակայանների արդիականացումը: Հակաօդային ուժերն ունեն մոտ 3500 զինծառայող: 2006 թ. ԱՄՆ-ը Աղբրեջանի զինված ուժերին ապահովել է ամենազինեցին ուղիղակցիոն տեխնոլոգիաներով: Նույն տարում էլ հայտարարել է Իրանի սահմանի մոտ՝ Լեքրկում և Վրաստանի սահմանի մոտ՝ Աղբարձայում գտնվող ուղիղակցիոն կայանների արդիականացման մասին: Միացյալ աշխատանք է սկսվել երկու ուղիղակցիոն կայանների վրա, մեկը՝ Ռուսաստան-Աղբրեջան սահմանագծում, մյուսը՝ Իրան-Աղբրեջան սահմանագծում՝ Կասպի ծովի երկնկուրյան մոնիտորինգի համար: Աղբրեջանն ունի նաև հեռահար իրիտային համակարգեր՝ Աղբրեջանի օդային տարածքը պաշտպանելու համար: Աղբրեջանի նավատորմն ունի մոտ 5000 զինծառայող՝ ներառյալ Կասպից ծովի ձգտիլիան և արիամերձ պահակախումբը: Ունի 7 նավատար նավեր, 7 ակնորսիչ նավեր, 6 դեսանտային ինքնագնաց նավեր, 2 դեսանտային ինքնագնաց կատերներ, 1 ռազմանավ և 1 ռազմական կատեր: 2006 թ. ԱՄՆ-ի կառավարությունը նվիրել է գերծամա-

նակակից 3 մատրանավակներ: Այսպիսով՝ վերջին 10-12 տարիների ընթացքում Ադրբեջանի սպառազինությունը հասել է այն աստիճանին, որ այժմ Ադրբեջանն ավելի շատ զենք ու զինամթերք ունի, քան նախատեսված է Եվրոպայի ռազմական ուժերի միացյալ կոնվենցիայով, որին Ադրբեջանը միացել էր 1997 թ.<sup>1</sup>:

Այժմ Ադրբեջանի ռաժդրազույն ռազմական հաստատությունները նրան հնարավորություն են տալիս իր ռազմական ուժերը համալրել ռազմական մասնագետներով<sup>2</sup>, մալ մասնագետներ պատրաստել աչ երկրների համար, մասնավորապես Տաջիկստանի: Ադրբեջանի ռազմական փորձագետ Ավաոտ Իսազադեի կարծիքով՝ այժմ Ադրբեջանի բանակը հնարավոր պատերազմին շատ ավելի պատրաստ է, քան Հայաստանի բանակը<sup>3</sup>:

Ադրբեջանի նման վարքագիծը չի կարող անտեսվել Հայաստանի կողմից, և Հայաստանը ամեն կերպ ձգտելու է սպառազինությունների հավասարակշռության, որն էլ հանգեցնելու է Հարավային Կովկասում ԽՍՀՄ-ի փլուզումից հետո սկսված սպառազինությունների մրցավազքի շարունակմանը: Այս մրցավազքը կարող է քաջասարար անդրադառնալ տարածաշրջանի երկրների անվտանգության վրա և հանգեցնել անկանխատեսելի հետևանքների:

ANNA PETROSYAN  
(NAS RA ISEC)

## THE PROBLEM OF ARMAMENTS AND THE MODERNIZATION OF THE AZERBAIJAN'S ARMED FORCES

The 13-year old cease fire agreement over the Nagorno-Karabakh conflict forced the involved parties to consider the importance of serious modernization policy of their armed forces. It is for security reasons that we need to consider the policy of Azerbaijan concerning the modernization of its armed forces and its current state of affairs. The article draws our attention to the major trends of its modernization policy.

### ԾԱՆՈԹՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Yeni Azərbaycan gazetesi, 16.02.2006, Azərbaycanın atəşkesi pozması Ermənistanın böyük güzəstdir.
2. Yeni Azərbaycan gazetesi, 6.01.2006, Silih prosesi konkret qərarlam qəbulu mərhələsinə qədəm qoymur.

3. Агаджанян М. и др., Азербайджан против народа Карабаха: Политико-правовые последствия агрессии и их влияние на перспективы региональной безопасности, Ер., 2006, ст. 94.
4. Минасян С., «Милитаризация Южного Кавказа и развитие вооруженных сил государства региона», «21-рդ ար» № 4 (6), 2004.
5. [www.today.az/news/business](http://www.today.az/news/business) -Ukraine sold heavy armaments to Azerbaijan (06 June 2006).
6. [www.bsanta-news.ukrinform.ua/newsitem.php?id=0180&lang=ru](http://www.bsanta-news.ukrinform.ua/newsitem.php?id=0180&lang=ru) – Украина и Азербайджан договорились о модернизации танков Т-64, находящихся на вооружении азербайджанской армии, Баку, 27 декабря.
7. [www.today.az/news/business/26949.html](http://www.today.az/news/business/26949.html).
8. [www.army.lv](http://www.army.lv) – Азербайджанская армия реформируется по литовскому образцу.
9. [http://en.wikipedia.org/wiki/Azerbaijan\\_Air\\_Force](http://en.wikipedia.org/wiki/Azerbaijan_Air_Force).
10. Yeni Azərbaycan gazetisi, 9.02.2006, Azərbaycan ordusu müharibni uducağa qədərdir.

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՆՆԱ  
(Ա)

ՆԱՍՐ-ԷՂ-ԴԻՆ ՇԱՀԻ ԱՅՅԸ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ  
ԳԵՐՄԱՆԻԱ 1873Թ.

19-րդ դարավերջին Իրանը գտնվում էր Անգլիայից և Յարական Ռուսաստանից քաղաքական և տնտեսական կախվածության մեջ. հարավում՝ անգլիայիցնեղը, հյուսիսում՝ ռուսները Իրանը վերածել էին իրենց ազդեցության գոտիների: Երկիրը փաստորեն կիսազաղտոթի էր վերածվել: Ուժեղանում էր պետության ապակենտրոնացումը, գնալով վատթարամում էր երկրի ֆինանսական վիճակը: Անկաակած այս բոլորը նպաստում էր Իրանի տնտեսական և քաղաքական թուլացմանը:

Նասր-էլ-Դին շահը երկրի գաղափարային և քաղաքական ճանապարհներ էր փնտրում մահ եվրոպայում: Եվրոպայի օգնությամբ նա երկրում իրականացնում է որոշ քարեփոխումներ<sup>1</sup>:

1873թ. Նասր-էլ-Դին շահի՝ Կայսերական Գերմանիա կառարած այցը ոչ միայն սկիզբ դրեց Իրանի և Գերմանիայի միջև հարաբերությունների հաստատմանը, այլ մահ հետագայում քաղաքական մոր գաղափարների ձևավորմանը: Գերմանիայի հայտնվելը Իրանում մի կողմից կատաղացներ մեծ տեղությունների տնտեսական շահերի մոր քախումներ, իսկ մյուս կողմից՝ Իրանի համար կատեղծեք հենարան «երրորդ ուժ»: Իսկ Գերմանիայի համար Իրանը մախ և առաջ մոր շուկա էր սեփական ապրանքների համար (Գերմանիան արդեն մեծ փորձ ուներ Օսմանյան կայսրությունում) և ապա մոր հող էր մախապատրաստում քաղաքական ազդեցության համար:

1873 թ. ապրիլին Նասր-էլ-Դին շահը մեկնում է Եվրոպա: Նա ծրագրել էր այցելել Սանկտ Պետերբուրգ, Բեռլին, Բրյուսել և Լոնդոն: Մինչև Բեռլին հասնելը, Նասր-էլ-Դին շահը Սանկտ Պետերբուրգ է ուղարկում իր ներկայացուցչին՝ Միրզա Աբդուլ-Ռահիմ Խանին այդ քաղաքում Գերմանիայի դեսպան Հենրի Ռոյսի մոտ՝ կնքելու գերմանա-իրանական «Բարեկամության, առևտրի և ծովագնացության» վերաբերյալ պայմանագիր, որը հիմնված էր լինելու 1857թ. հունիսի 25-ին Իրանի և «Անգլոսախին միության» միջև կնքված «Բարեկամության և առևտրի» պայմանագրի<sup>2</sup> հիմքի վրա: Պայմանագիրը ստորագրվում է 1873թ. մայիսի 28-ին: Այն քաղկացած էր 21 հոդվածից, որոնք հնարավորություն էին տալիս ազատ առևտրային մտտի և մազվազնացության իրավունք, Թեհրանում, Թավրիզում և Բուշեխում գերմանական հյուպատոսություններ քացելու թույլտվություններ և մի շարք առևտրային արտոնություններ<sup>3</sup>: Իսկ քաղաքական տեսանկյունից պայմանագրի 18-րդ հոդվածը մախատեսում էր Գերմանիայի միջնորդությունն այն դեպքում, երբ Իրանը վեճի մեջ ճաներ որևէ երրորդ պետության հետ<sup>4</sup>:

Ռաջիստագում այդ պայմանագրի վավերացման ժամանակ 1873թ. հունիսի 15-ին, Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկն իր նյութում ասաց «...Պայմանագիրը ներառում է ոչ միայն աստորային հարաբերություններին վերաբերող կետեր, այլ նաև որոշ նկատառումներ, որոնք վերաբերում են Իրանի՝ օտար երկրների հետ ունեցած կապերին, այժմ և ապագայում...»<sup>2</sup>:

1873 թ. մայիսի 31-ին Նասր-էդ-Ղին շահը ժամանեց Պոտոյամի կայսրան, որտեղ նա արժանացավ ասանձմակի շքեղ հյուրընկալության: Շահին և նրա շրախներին դիմավորելու էին եկել Կայսր Վիլհելմ I-ը, Բիսմարկը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, ինչպես նաև հազարավոր մարդիկ, ովքեր եկել էին տեսնելու այդ «ներկայացուցը»՝ «Ռաջիստագրի» քրակիցը նշում է, որ մարդիկ կարծում էին, թե շահը և նրա շրախները այնքան լավն էին, ինչպես «արաբական գիշերները»:

Բեռլինում շահի այցը տևում է 9 օր: Նա ժամանակցում է Ռաջիստագի միտին, այցելում Արտաքին գործերի նախարարություն, որտեղ և Բիսմարկի հետ փոխանակում են Սանկտ Պետերբուրգում կնքված «Բարենկամության, առևտրի և ծովագնացության» պայմանագրի տեքստերը՝

Այնուհետև շահը ուղևորվում է Էսսեն, որտեղ նրան դիմավորում է գերմանական զինամրերի խոշոր գործարանի տնօրեն Կրուպպը՝ Շանոբանալով գործարանի հետ, շահին ուղղակի ապշեցնում են գործարանի մեծ ծավալները և րազմազան տեսանկյունից<sup>3</sup>: Թերևս այս այցի նպատակն հենց դա էր՝ շահին ժամոքացնել գերմանական նոր զենքերի տեսականու հետ և նոր գնորդ ձեռք բերել, ինչն էլ հաջողությամբ է պսակվում: Գոհ Գերմանիա կատարած խոստումնալից ճանապարհորդությունից՝ շահն ուղևորվում է Բեռլին և Անգլիա<sup>4</sup>:

1873թ. սկսած Իրանը ոչ միայն փորձում է ուժեղացնել իր դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ, այլ նաև ջանքեր է գործարդում գերմանական խորհրդատուներ և ժամանակավոր հրապարակելու Իրան<sup>5</sup>:

Այսպիսով, Նասր-էդ-Ղին շահի՝ 1873թ. Գերմանիա կատարած այցը կարևորվեց ոչ միայն գերմանա-իրանական հարաբերությունների հաստատման առումով, այլ այն համընդհանրապես Իրանը դեպի արդիականացում տանելու ևս մեկ քայլ:

ANNA POGHOSYAN  
(IOS)

## THE VISIT OF NASR-ED-DIN SHAH TO IMPERIAL GERMANY IN 1873

At the end of the 19<sup>th</sup> century Iran became a country that economically and politically depended on the Great Powers: namely Russia and England that had unlimited power in Iran. The first visit of Nasr-ed-Din Shah to

Germany was the one of the important factors of the establishment of the German-Iranian relations.

The penetration of the Middle East fitted perfectly into the German national mood of the time. In the German policy a theory was being developed, which intended to make Iran Germany's target of economical influence first of all. This was exactly that which Germans had accomplished in Turkey, and that which they intended to do in Iran. The German-Iranian "Treaty of friendship, navigation and commerce" of 1873 with its arbitration clause represented a serious effort by Nasr-ed-Din Shah to secure help against English and Russian interference.

Germany slowly, but stably penetrated into Iran not only through political privileges such as the 1873 treaty but also, more importantly, through economic advantages. The establishment of Germans in Iran's political scene appeared as a serious threat to English and Russian unlimited powers, at the time turning into the "third power" for Iran.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Բայբազյան Վ., Իրանի Պատմություն, եջ. 2005, էջ 500:
2. Prussian Persian Treaty of 1857, Preussische Geheimsarchiv.
3. The German-Persian "Treaty of Friendship, Navigation, and Commerce" of 1873 (in Persian), Politisches Archiv Auswertigen Amtes (PAA), see also Soesographische Berichte über die Verhandlungen des Deutschen Reichstages. Berlin, 1873.
4. Տե՛ս նույն տեղում:
5. Martin B.G., German Persian Diplomatic Relations 1873-1912, s. Gravenhage, 1959, p.27.
6. Koelnische Zeitung, 151, June 2, 1873.
7. The Times, June 2, 1873.
8. Koelnische Zeitung, 151, June 2, 1873.
9. Տե՛ս նույն տեղում:
10. Allgemeine Zeitung, 160, June 9, 1873.
11. Koelnische Zeitung, 161, June 12, 1873.
12. Münster to Bismarck, A 2420, June 1874, Politisches Archiv Auswertigen Amtes(PAA).



## ՄԱՖԱՐՅԱՆ ՄՆԱՅԱԿԱՆ (ԱԻ)

### ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԻ ԳԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԶԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նոր պատմության ժամանակահատվածում միջազգային հարաբերությունների համակարգում պետությունների անվտանգության վրա ազդող հիմնական գործոններից են եղել դրանց ռազմաքաղաքական եզրորությունը, մշակութային զարգացման ասպեկտները և տնտեսական ներուժը: 19-րդ դարի կեսերից սկսած միջազգային հարաբերությունների համակարգում միջպետական հարաբերությունների տնտեսական քաղաքիչն աստիճանաբար սկսեց ավելի մեծ դեր խաղալ, ինչը պայմանավորված էր Բրիտանական կայսերության գաղութային համակարգի զարգացման մոդելի ծավալմամբ: Այս մոդելը հիմնված էր տնտեսական համակարգի զարգացման և գաղութների հետ հարաբերությունների արդյունքում առաջացած առևտրական կապիտալի ուժի վրա: Ամբողջ 20-րդ դարի պատմությունը վկայում է միջազգային հարաբերությունների անվտանգության համակարգում տնտեսական գործոնի հետզհետե գերակա նշանակության հաստատման մասին:

Չինաստանում 1978թ.-ին Դեն Սյաոպինի կողմից սկսած քառփոխումներով սկզբնավորված գործընթացը, քաղաքիվ միջազգային փորձագետների կարծիքով, կարող է հանգեցնել միջազգային հարաբերությունների անվտանգության համակարգի կտրուկ փոփոխությանը, կամ, այլ խոսքերով, համաշխարհային հիմնական ուժային կենտրոնների միջև նոր համակարգի ստեղծմանը: Նշենք, որ այսպիսի հիմնարար փոփոխությունները քերում են նաև միջազգային համակարգը ձևավորող ժրավորներում ներքին փոփոխությունների՝ ընդդիմաբան հասարակական-քաղաքական համակարգի ձևափոխում: Այսպիսի փոփոխությունների շարքում հարկավոր է նշել ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի երկրների ներքին պետական համակարգերի կտրուկ փոփոխությունը, որը տեղի ունեցավ Մաոը պատերազմի ընթացքում ԽՍՀՄ գլխավորած կոմունիստական համակարգի երկրների կողմից հիմնականում տնտեսական մրցակցությանը շիճանալու պատճառով, քանի որ ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում հավասարակշռությունն Արևմտյան քաղաքակրթության հետ էրմանակաճում պահպանվում էր:

Ինչպես նշում է միջազգային հարաբերությունների ամերիկացի փորձագետ Մաքս Մուելը «...այս գործընթացը մեծ հետաքրքրություն է առաջացնում քաղաքական վերլուծության և ծրագրավորման շրջաննե-

րում: Չինաստանի վերելքի հարցում ճշգրիտ մոտեցումների որոնքումը դառնում է աշխարհի ուժային կետրոնների առաջնակարգ խնդիր: Պատմության ընթացքում այսպիսի գլոբալ փոփոխությունները հաճախ հանգեցրել են պատերազմների»:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ ներկայումս ձևավորվող միջազգային հարաբերություններում Չինաստանի դերակատարության վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները քախժում են որոշակի քարոզչությունների, կապված այս երկրի ներկայիս պետական համակարգի հասարակական-քաղաքական և տնտեսական քաղաղիչների ուրույն հարաբերակցության վերաբերյալ գիտական տեսանկյունից մշակված տեսական մոդելների քաջակայության հետ: Թերևս միակ քաջաուրբյունը կարելի է համարել ՅՄՀՄ գոյության առաջին տասնամյակում մոր տնտեսական քաղաքականության (ՆՏԿ) կիրառումը խորհրդային իշխանությունների կողմից, որը, ինչպես հայտնի է, կրում էր միայն գործնական բնույթ:

Սովորարար, համաշխարհային քաղաքագիտական միտքը մասնավոր սեփականության առկայությունը կապում է հայտնի րոլոր հասարակական-քաղաքական համակարգերի հետ (միապետություն, օլիգարխիա, դեմոկրատիա և այլն) քաջատությամբ կոմունիստական հասարակարգի: Չինաստանի դեպքում մենք գործ ունենք տակավին մոր երևույթի հետ, երբ կոմունիստական համակարգը համատեղվել է շուկարական տնտեսության հիմնական մեխանիզմների, այն է՝ խոշոր և միջին մասնավոր կապիտալի առկայության հետ: Ամբողջ աշխարհում վերոյաբարդյալ գործընթացների նկատմամբ գիտական մոտեցումների ձևավորումը գնտվում է ազմմային վիճակում, քանզի անգամ Եվրոպական լուսավորության շրջանի ուտոպիստական տեսություններում մեան հասարակարգի ստեղծման կանխատեսումներ չէին կատարվել: Չինական քարեփոխումների «ճարտարապետ» Դեն Սյաուպինի հոչակավոր «Կարևոր չէ կատվի գույնը, կարևորն այն է, որ մա մկներ որսա» արտահայտությունը և «մեկ պետություն, երկու համակարգ» թեզը դարձան օրյեկտիվ իրականություն, որի հարատևության մասին արդեն իսկ շատ քչերն են կասկած արտահայտում:

Ձանի որ խորհրդային ժամանակաշրջանում ՅՄՀՄ հանրապետություններ ինքնուրույն ուղղակի հարաբերություններ չունեին արտաքին աշխարհի հետ, բնականաբար, ներքին քաղաքական հայեցակարգային մոտեցումները և գիտական միտքը չէին կարող ձևավորվել որևիչ արտաքին մեծ թե գոքր պետության հետ հարաբերությունների մշակման համար: Հայաստանի Հանրապետության անկախությունից ի վեր անցած 15 տարիների ընթացքում Հայաստանի գիտական շրջաններում դեռևս Չինաստանի մեան հզոր պետության վերաբերյալ գիտական մոտեցումներ չեն ձևավորվել, այն դեպքում, երբ ամբողջ աշխարհում այս տերության վերաբերյալ գիտական վերջին հետազոտությունները կատարվում են արդեն ծրագրային համատեքստում՝ 20-50 տարիների կտրվածքով: Վերջին ժամանակաշրջանի այսպիսի աշխատությունների

չարքում հարկավոր է նշել ԱՄՆ Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոնի և Միջազգային տնտեսության ինստիտուտի կողմից 2006թ. համատեղ հրատակարարված «Չինաստան՝ հաշվեկշիռը: Ի՞նչ պետք է իմանալ նորահայտ գերտերության մասին»<sup>1</sup> և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Հետափոր Արևելքի և տնտեսական ուսմավարությունների ինստիտուտների կողմից հրատարակված «Չինաստան-Ռուսաստան՝ 2050: Համատեղ զարգացման ռազմավարություն»<sup>2</sup> աշխատությունները:

Դառնալով աշխարհի երկրորդ գերտերություն Չինաստանը քննականաբար իր ոլորյն մտնեցումները կենսավորի աշխարհի գրեթե բոլոր տարածաշրջանների նկատմամբ՝ ցանկություն ունենալով իրազործելու իր պետական շահերից բխող քաղաքական և տնտեսական գործունեությունը: Քանի որ Հարավային Կովկասում արդեն իսկ առկա են աշխարհի հիմնական ուժային կենտրոնների՝ ԱՄՆ, ԵՄ և Ռուսաստանի վառ արտահայտված աշխարհաքաղաքական շահերը, հետևաբար շատ մոտ ապագայում Չինաստանը վերածվելով գերտերության նմանապես փորձելու է իր շահերը հետապնդել այս տարածաշրջանում: Հետևաբար, Հայաստանի ինչպես գիտական շրջանները, այնպես էլ պետական, հասարակական-քաղաքական և ձեռնարկատիրական ուժերն արդեն ներկայումս պետք է ունենան ծառայական պատկերացումներ Հարավային Կովկասի և կոնկրետ Հայաստանի նկատմամբ Չինաստանի արտաքին քաղաքականությունը ձևավորող քաղաքագիտական մտնեցումների մասին: Ավելորդ չի լինի նշել, որ Հայաստանում արդեն պետք է ձևավորվի այն քաղաքական գիտակցությունը, որը կնկնի ոչ թե միջազգային քաղաքական դաշտի Արևմուտք-Ռուսաստան կամ ԱՄՆ-ԵՄ-Ռ-Գ ձևաչափից, այլ այս գիտակցության մեջ Չինաստանին կհատկացնի իր արժանի (մյուսներին հավասար) տեղը:

Չինաստանի արտաքին ռազմավարության վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները պետք է հաշվի առնեն հետևյալ հիմնադրույթները՝

- Մեկ անբողջական Չինաստանի նստատեման զադափարը
- Ուրույն արժեքային և մշակութային համակարգի գործոնը
- Բարձր արվեստի մարկարդակ ունեցող պետական շինարարության հազարամյա փորձը և համապատասխան ազգային դասական գրական աղբյուրների գոյությունը
- Տնտեսական զարգացմամբ պայմանավորված և դրա արդյունքում տնտեսության կառուցվածքային փոփոխություններով առաջացած ազատ կապիտալի մեծ զանգվածը, որը պետք է երկրից արտահանվի, քանի որ երկրի ներսում մնալով այն կարող է «գերտաքացնել» տնտեսությունը
- Արտաքին աղբյուրներից երկրի տնտեսության զարգացման համար անհրաժեշտ քնական ռեսուրսների մատակարարումն ապահովելուն ուղղված գործունեությունը:

- Հարավային Կովկասի և դրան հարակից տարածքների համար Չինաստանի գործոնը կարևորվելու է հետևյալ հիմնադրույթներից ելնելով՝
- Չինաստան - Միջին Ասիա - Իրան - Հարավային Կովկաս - Թուրքիա - Եվրոպա տրանսպորտային ուղիների ստեղծման համատեքստում
  - Հարավային Կովկասում կապիտալի պահանջարկի և Չինաստանում կապիտալի առաջարկի հետ կապված
  - Չինաստանի կողմից արտաքին հարաբերություններում գաղափարական մոտեցումներից զերծ տնտեսական գործունեության իրականացման տեսանկյունից:

**MNATSAKAN SAFARYAN**  
(IOS)

**THE IMPORTANCE OF RESEARCH ON CHINA'S FOREIGN  
POLICY STRATEGY  
TOWARDS THE SOUTH CAUCASUS**

This paper summarizes the reasons of academic research on China's foreign political strategy towards the South Caucasus. It takes the uniqueness of China's current socio-political system as a given noting that China's rise is going to introduce new realities in many corners of the world, including the South Caucasus. As Armenia lacks independent academic research on China, the author states that this subject needs to be introduced not only to the Armenian academic communities but to the wider social, economic and political circles as well. The paper also gives general starting points on research about China's foreign strategy towards the South Caucasus.

**ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Swaine, Michael D. and Tellis Ashley J., *Interpreting China's Grand Strategy: Past, Present, and Future*, RAND, 2000, p. 1.
2. Bergsten, Fred C., Gill, Bates, Lardy R.Nicholas, Mitchell, Derek, *China: The Balance Sheet: What the World Needs to Know About the Emerging Superpower*, PublicAffairs, April 2006 [www.chinabalancesheet.org](http://www.chinabalancesheet.org)
3. Кузык Б.Н., Титоренко М.Л., *Китаёв-Россия-2050: Стратегия сотрудничества*, Институт Экономических Стратегий РАН, М., 2006.

## ՄՏԵՓԱՆՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ (ԱԻ)

### ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Իրանի հասարակական և քաղաքական կյանքի ցամկացած ոլորտի քարեփոխումները համոզիպում էին երկրում տիրող անօրինականությանը և արդարադատության երաշխիքների բացակայությանը: Ուստի այդ ծրագրերը չէին կարող պահպանվել հաջողությամբ առանց դատաիրականության ոլորտի քարեփոխումների:

XIX դարի վերջում Իրանում արդարադատության համակարգը՝ որպես այդպիսին, գոյություն չուներ: Պաշտոնապես երկրի գերագույն դատական իշխանությունը պատկանում էր շահին, որը մահաձգապետի Եշանակեյա նրանց էր վերապահում մաս տեղի դատական իրավունքները: Այսպես կոչված «աշխարհիկ» դատարանների հետ մեկտեղ երկրում գործում էին շարիաթական կրոնական դատարանները: Դատավարության իրավունք չունեցող ցամկացած գրագետ իրանցի, որը տիրապետում էր մահմեդական օրենքներին: Աշխարհիկ և կրոնական դատարանների իրավասության ոլորտները տարանջատված չէին, սակայն ընդհանուր առմամբ աշխարհիկ դատարանները վարում էին ջրեական, իսկ կրոնական դատավորները՝ գույքին և անձնական խնդիրներին վերաբերող գործերը<sup>1</sup>:

Քաղաքացիական դատարանների և աշխարհիկ օրենսդրական համակարգի պակասը լրացնելու առաջին քայլը, ինարկն, Մահմաձաղությունը ընդունում էր. Հիմնական օրենքը՝ 1906թ. և դրա Լրացումը՝ 1907թ., որի հիմնախնդիրներից էր քննչության անձի և գույքի անձեռնմխելիության ապահովումը: Համաձայն Մահմաձաղության՝ 1910թ. թվականում հիմնվեցին առաջին աշխարհիկ դատարանները: Սակայն իրազեկ դատավորների, ինչպես մաս օրենքների բացակայության պատճառով դրանք ևս առաջնորդվում էին շարիաթով<sup>2</sup>:

Դատարանների գործունեությունը խափանվում և խճճվում էր մաս կապիտուլյացիոն համակարգով, որի համաձայն օտարերկրացիներին հետ կապված քաղաքացիական և քրեական գործերը իրանական դատարանի իրավասություններից դուրս էին և լուծվում էին շահագրգիռ երկրի հյուպատոսի մերկայությամբ, որի հետևանքով օտար խորհրդականներին հնարավորություն էր ընձեռնվում՝ միջամտելու դատական գործընթացներին<sup>3</sup>:

Այնուայտ է, որ արդարադատության՝ նման անմխիթար վիճակը չէր նպաստում պետության միասնության ամրապնդմանը և հիմք էր հանդիսանում Իրանի մեկուսացման համար միջազգային հարաբերությունների ոլորտում: Միևնույն ժամանակ դատաիրական համակարգի

ձևավորումը չէր կարող բարենաշուղ ըմբանալ առանց կենտրոնական կայուն իշխանության: Մյուս կողմից էլ պետական կառավարման բարելավումը, պետական անկախությունը և դատական երաշխեցմանը կարագացնեին տնտեսության առաջընթացը:

Ուստի պատահական չէ, որ Ռեզա խանը ձեռնամուխ եղավ դատարարական բարեփոխումների իրականացման անմիջապես 1923թ. վարչապետի պաշտոնը առանձնելուց հետո: Արդարադատության ոլորտի բարեփոխումներով՝ նրա հետաքրքրությունը դրված էր ազգայնական նկատառումներով, սակայն առաջնաչին նպատակը կապիտուլյացիոն համակարգի վերացումն էր: Ապագա շահը գիտակցում էր, որ քանի դեռ Իրանը զերծ էր արևմտյան տիպի արդարադատության համակարգից, կապիտուլյացիաների վերացումը կարող էր բերել վնասակար հրապարակայնության Եվրոպայում: Այսպիսով նա հնարավորին արագ գործի դրեց բարեփոխումների՝ իր ծրագիրը: 1927թ. ստեղծված Արդարադատության նոր նախարարությունը ձեռնամուխ եղավ օրենսգրքերի պատրաստմանը, որի պատասխանատվությունը իր վրա վերցրեց Ռեզա շահի՝ Իրանը արևմտականացնելու գործի երիտասարդ կողմնակիցներից մեկը՝ Արդարադատության նախարար Դավերը<sup>4</sup>: Արդարադատության նախարարության ներքո գործող կոմիտեն՝ Դավերի գլխավորությամբ Մեջլիսին ներկայացրեց քաղաքացիական օրենսգրքի առաջին հատորը, ինչպես նաև արդարադատության համակարգի վերակառուցման մասին օրենքը, որոնք ընդունվեցին 1928թ. մայիսի 8-ին<sup>5</sup>: Արդյունքում կապիտուլյացիոն համակարգը վերացվեց, որն առաջնաչին նշանակություն ուներ երկրի կայացման համար որպես անկախ պետություն: Ինչ վերաբերում է ներքին խնդիրներին, ակնհայտ էր, որ նոր ընդունված քաղաքացիական օրենսգիրքը չէր կրում արժանապատիվ փոփոխություններ և իրենից ներկայացնում էր շարիաթի աշխարհիկացված տարբերակը:

Օրենսդրական բարեփոխումները շահմանափակվեցին միայն կապիտուլյացիոն համակարգի վերացմամբ: Դրանք նպատակ ունեին շարիաթական օրենքները փոխարինել եվրոպական իրավունքի նորմերով<sup>6</sup>: Այսպիսով ֆրանսիական և բելգիական օրենքների հիման վրա ընդունվեցին քրեական (1927) և քաղաքացիական (1928) օրենսգրքերը, որոնք Ռեզա շահի կառավարման շրջանում փոփոխվել են մի քանի անգամ: Բարեփոխումների սկզբնական շրջանում ղրանցում արտահայտված իրավական նորմերը ավելի մոտ էին շարիաթին: Չնայած, որ Սահմանադրության Լրացման 2-րդ հոդվածի համաձայն<sup>7</sup>, նոր ընդունված օրենքները չպետք է հակասեին շարիաթին<sup>8</sup>, այնուամենայնիվ, ամեն ինչ տրոհ փոփոխության ժամանակ դրանք առավելապես կրում էին արևմտյան երկրների արդարադատության համակարգի ազդեցությունը: Այդուհանդերձ, դրանք պահպանում էին նախնական գաղափարների կոթիվը՝ ելնելով Իրանի սոցիալ-տնտեսական պայմաններից, ինչպես նաև հասարակության շրջանում խորը արժատմեթ ունեցող ավանդապաշ-

տությունից և կրոնական զգացումներից: Ոչ մի այլ քննազավառում չարիաթի գաղափարներն այնքան հարատև չէին, որքան ամուսնությանը, ապահարզանին, ընտանեկան հարաբերություններին, և քարոյականության դեմ հանցագործություններին վերաբերող օրենքներում<sup>15</sup>:

Հատկանշական է, որ կապիտալացիոն համակարգի վերացումից հետո 1933թ. հունիսին Մեջլիսը հաստատեց ոչ շիաների (սուննիների, քրիստոնյաների, զրադաչտականների, հեոդայականների և այլն) ընտանեկան հարցերի վերաբերյալ օրենսդրական մախազիծը: Իսկ 1935թ. իրանահայ թեմական ազգային մարմինները Իրանի արդարադատության մախարարությանը ներկայացրեցին մի օրենսգիրք, որով այսուհետև դատական մարմինները պետք է ղեկավարվեին իրանահայերի դատական գործերի քննության ժամանակ<sup>16</sup>:

Օրենսդրական դաշտի քարեփոխումները շղեկեցվում էին դատական աշխարհիկ համակարգի կազմակերպմամբ: Կենտրոնախույս ուժերի գեներալ հնազանդեցմանը հետևեցին հաղորդակցման ուղիների քարելավումը և վարչական ու տնտեսական կապերի հաստատումը կենտրոնի հետ: Հաստատված հարաբերական կարգուկանոնի պաշտպանությանը և ամրապնդմանը պետք է աջակցեր դատարանը: Մակայն սկզբնական շրջանում նոր կառավարությունը ևս, պայքարելով հին վարչակարգի մնացորդների դեմ, կիրառում էր նրանց իսկ բռնատիրական մեթոդները՝ արդարացնելով սեփական գործողություններն ազգային շահերի պաշտպանությամբ:

Ուսումնասիրելով Իրանում դատական համակարգի կազմավորման ընթացքը, տեսնում ենք, որ երկրի տնտեսության զարգացումն առաջ էր քաշում անկախ դատական իշխանության պահանջ, որը հիմնված կլիներ որոշակի օրենսդրական նորմերի վրա և զերծ կլիներ գործադիր և օրենսդիր իշխանությունների միջամտությունից: Այնուամենայնիվ, չնայած դատական համակարգի «անկախ» կարգավիճակին, Ռեզա շահը և նրա աջակիցները գտնում էին լծակներ՝ իրենց ազդեցությունն իրականացնելու համար: Նախ՝ դատարանը զբաղվում էր այն օրենքների կիրառմամբ, որոնք ընդունում էր կառավարության ազդեցության տակ գտնվող Մեջլիսը, ուստի միջամտելու առանձնապես կարիք չկար: Երկրորդը՝ դատական համակարգի աշխատակիցների նշանակումը, ինչպես նաև նրանց առաջխաղացման ընթացքը, թեև պետք է իրականացվեին տաեմանված մրցութային կարգին համապատասխան, սակայն կատարվում էին չափի աջակիցների ազդեցության ներքո<sup>17</sup>: Օգտագործելով դատարանը սեփական քաղաքականությունը վարելու համար՝ կառավարությունը միևնույն ժամանակ ընդարկում էր իր գործողությունները իշխանությունների տարանջատման և դատարանի՝ քաղաքականությունից հեռու լինելու սկզբունքով:

Իրանում ինչպես օրենսդրական, այնպես էլ դատակազմական քարեփոխումներն իրականացվում էին Ֆրանսիայի դատական համա-

կարգի օրինակով<sup>11</sup>։ Ինչպես ֆրանսիական, այնպես էլ իրանական դատարանները բաժանվում էին ընդհանուր և հատուկ դատարանների։ «Ընդհանուր դատարանները իրավունք ունեին քննել բոլոր գործերը, բացառությամբ նրանց, որոնք օրենքով էին հանված իրենց իրավասությունների շրջանակից»<sup>12</sup>։ Ընդհանուր դատարանները բաղկացած էին առաջին ատյանի և բողոքարկման դատարաններից։ Առաջին ատյանի դատարաններ ստեղծվում էին երկրի բոլոր տարածքներում։ Որպես աջակցություն վերջիններին Արդարադատության նախարարության կողմից որոշված վայրերում ստեղծվում էին միջնորդ դատարաններ։ Սակայն, եթե նախկինում միջնորդ դատարան դիմում էին հարկադրաբար, պետական դատարանի քաջակալության պատճառով կամ կորցնելով խնդրի լուծում ստանալու հույսը, ապա Ռեզա շահի կառավարման շրջանում այդ նախաձեռնությունը պատկանում էր պետությանը։

Նոր ձևավորված դատական համակարգի կազմի մեջ էին մտնում նաև վերաքննիչ և վճարքի դատարանները, որոնք կազմավորվում էին միայն վեց մեծ քաղաքներում՝ Թեհրանում, Քավեթիզում, Շիրազում, Համադանում, Սպահանում, Մեշհեդում։

Հատուկ դատարանների շարքին էին պատկանում շարիաթական դատարանները, որոնց գոյությունն աշխարհիկ դատական համակարգին անցնելու պայմաններում քաջատրվում էր անցումային շրջանով, երբ կառավարությանը դիրքերը դեռևս կայուն չէին, իսկ պետական դատարանների կազմավորումն ընթացքի մեջ էր։ XX դարի սկզբին շարիաթական դատարանները դեռևս մեծ ազդեցություն ունեին, և նրանց իրավասությունների շրջանակի մեջ էին մտնում անձին, ընտանիքին, գույքին, ժառանգությանը, վակուֆներին (մզկիթապատկան կալվածքներ) վերաբերող գործերը, ռատի նրանք ունեին գերակշիռ դիրք աշխարհիկ դատարանների հանդեպ։ Սակայն երկրի կենտրոնացման գործընթացի ավարտից հետո, ունենալով ավելի մեծ հզորություն, կայուն հիմքեր, Ռեզա շահի վարած քաղաքականության արդյունքում շարիաթական դատարանների իրավասությունների շրջանակը հետզհետե նեղացվեց, և ի վերջո նրանք կորցրեցին<sup>13</sup> իրենց երբեմնի ունեցած դիրքերը<sup>14</sup>։

Հատուկ դատարանների թվին էին պատկանում նաև առևտրական և վարչական դատարանները։ Իրանում առաջնային խնդիրներից էին կաշառակերությունը և պետական գույքի յուրացումը, որոնք խոչընդոտում էին ցանկացած քարեփոխումների իրականացմանը և պետական կառավարման քարելավմանը։ 1929թ. կառավարության կողմից ներկայացվեց և Մեջլիսի կողմից ընդունվեց 2 օրենք, որոնք վերաբերում էին պետական ծառայողների կողմից գույքի յուրացման և կաշառակերության համար հատուկ դատարանների հիմնադրմանը, դրանց գործելակերպին և պատժամիջոցներին։ Այսպիսով, վարչական արդարադատության կազմակերպման հետևանքով ստեղծվեց չինովնիկներից բաղկացած ինքնիշխան՝ նոր բյուրոկրատական դաս, որն այդ ժամանակա-



հատվածում՝ Իրանում կիսաֆեոդալական հարաբերություններից բուրժուական հարաբերություններին անցնելու շրջանում, պետք է խթաներ բուրժուազիայի ձևավորմանը և զարգացմանը որպես գերիշխող դաս<sup>14</sup>։

Դատախրավական քարեփոխումներն արտահայտում էին Ռեզա շահի ցանկությունը՝ արդիականացնել և աշխարհիկ ուղու վրա դնել Իրանի հասարակությունը՝ երկրի միջազգային վարկանիշը բարձրացնելու և իր իսկ դիրքերն ամրապնդելու համար։ Իրանական դատաքանց, որը սերտորեն կապված էր պետական կառավարման ժամանակակից համակարգի հետ, կոչված էր մազաստելու պետականության կայացման և զարգացման գործընթացին։

Ձեռն Ռեզա շահի կառավարման շրջանում կատարված քարեփոխումներն ինչպես դատախրավական, այնպես էլ այլ բնագավառներում գերծ չէին բերություններից և քաջասական հետևանքներից, այնուամենայնիվ, դրանք կարելի է որակել որպես ղրական երևույթ, որի արդյունքում Իրանում առաջին հերթին ձևավորվեց աշխարհիկ տիպի դատական համակարգ, ինչը մալատեց ոչ միայն կենտրոնական կառավարության ղիրքերի և երկրում կայունության ամրապնդմանը, այլև Իրանի կայացմանը միջազգային հարաբերություններում։

LUSINE STEPANYAN  
(IOS)

### THE INFLUENCE OF JUDICIAL REFORMS ON THE IRANIAN SOCIETY IN THE FIRST HALF OF THE 20TH CENTURY

The impact of Western civilization upon the institutions of Iran is more apparent in the reforms of the judicial system. The first step on the way to the secular judicial system was of course the adoption of Constitution in 1906. Though till the reign of Reza Shah Pahlavi there were made some efforts to secularize the legal system but it didn't give much effect. Reza Shah's interest in legal reforms was motivated mostly by nationalistic considerations. There were several important points in the sphere of judicial reforms. The first and may be the most significant was the abolition of Capitulations in 1928, which gave extra-territorial rights to foreign representatives. Not less important was that a new Civil and Penal Codes were enacted and new secular courts set up which reflected the influence of Western Judiciary models.

The conflict between the old and new legal systems was resolved in an arbitrary fashion: the religious law (the shari'a) was displaced by secular law, which carried the influence of Western Judiciary models. But it is difficult to imagine it being resolved in any other way, because the powerful clergy could be shorn of their authority only by strong measures possible under a totalitarian government.

The newly adopted reforms not only effectively secularized the legal system of Iran, deprived the clergy of their exclusive judicial authority, but it was also an important step on the way of making Iran a strong country with stable centralized government, and independent in the field of international affairs.

### ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Абрамов С., Реформа суда в современной Персии, Баку, 1929, стр.142-143.
2. Banaji Amin, Modernization of Iran: 1921-1941, Stanford, California, 1961, p. 69.
3. Peter Avery, Modern Iran, London, 1965, p. 289, Ирандуст, Персия вчера и сегодня (2-ое издание), Москва-Ленинград, 1928, стр. 166.
4. Реза Годс М., Иран в XX веке: Политическая история, Москва, 1994, стр. 141-142, Wilfrid Klapp, 1921-1941: The Period of Riza Shah, Twentieth Century Iran (Edited by Hossein Amir-Adadegi), London, 1977, p. 49-50.
5. Peter Avery, Modern Iran, p. 289, Ирандуст, Персия вчера и сегодня, стр. 183, Реза Годс М., Иран в XX веке, стр. 137.
6. Բալթրաշյան Վ., Իրանի պատմություն, Եր., 2005, էջ 610:
7. Art. 2, The Supplemented Fundamental Laws, October 7, 1907, Constitutions, Electoral Laws, Treaties of states in the Near and Middle East, Duke University Press, Durham, N.C., 1953, p. 117.
8. Տե՛ս՝ Սահիանյան Լ., Կանանց վիճակը Ռեզա շահ Փահլավի կառավարման շրջանում, Սերնալոր և Միջին Արևելքի երկրներ և փոփոխություն, հ. XXII, Եր., 2003, էջ 145-156 հոդվածում:
9. Բալթրաշյան Վ., Իրանի պատմություն, էջ 620-621:
10. Абрамов С., Реформа суда в современной Персии, стр. 150-151.
11. Alastair R., Man and Society in Iran, Leiden, 1964, p. 159.
12. Абрамов С., Реформа суда в современной Персии, стр. 159-160.
13. Tabari A., The Role of the Clergy in Modern Iranian Politics, Religion and Politics in Iran (Collected Essays edited by Nikki R. Keddie), Yale University Press, New Haven and London, 1983, p. 60, Реза Годс М., Иран в XX веке, стр. 142, Арабаджон Э.А., Иран: власть, реформы, революция (XIX-XXII вв.), М., "Наука", 1991, стр. 49-50, Տե՛ս՝ Լ. Սոհիանյան, Արշիվականության զարգացումը Իրանում 20-րդ դարի 20-40-ական թթ. և դրա հետևանքները եզրօրհանության համար, Սերնալոր Արևելք (պատմություն, քաղաքականություն, ճյուղալույծ), Երևան, 2006, էջ 119-124:
14. Абрамов С., Реформа суда в современной Персии, стр. 161.

## ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆ ԱՐԵՆ (ԱԽ)

### ԻՐԱՆ - ԱՂԻՐԵՋԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՈՒՆՖԱԶ ԷԼՉԻԲԵՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային Միության (ԽՄ) փլուզումից հետո, ի քիվս մահվին խորհրդային հանրապետությունների, Աղրբջանը ևս հայտարարեց իր անկախության մասին (1991թ. մարտի 12-ին): Այդ ժամանակահատվածում նկատի առնելով տարածաշրջանում առաջացած նոր իրավիճակը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը (ԻԻՀ) առաջիններից մեկն էր, որը պաշտոնապես ճանաչեց իր նորանկախ հարևանին: Թեև ԻԻՀ ճանաչեց Աղրբջանի Հանրապետությունը (ԱՀ), սակայն հասկանալի էր, որ Իրանի հարևանությամբ իր անկախությունը հռչակած այդ պետության «Աղրբջան» անվանումն արդեն իսկ իր մեջ պարունակում էր քաղաքական սպառնալիք ԻԻՀ տարածքային ամրոցականությանը, ջանի որ «Աղրբջան» էր կոչվում մաս Իրանի հյուսիսում թյուրքալեզու բնակչություն ունեցող Ատրպատականի երկրամասը:

Հայտնի է, որ դեռևս 1918թ., երբ երիտթուրքական կառավարության զորքերը ռազմակալման ենթարկեցին Անդրկովկասի մահմեդարնակ շրջանները, նրանք այդ երկրամասը հեռահար նպատակով, առաջնորդվելով պանթուրքական երազանքներով, անվանեցին «Աղրբջան»: Իր քիևալի ծրագրերի համաձայն, թյուրքալեզու բնակչություն ունեցող Ատրպատականի նկայական երկրամասը «Աղրբջանի Հանրապետության» հետ միասին հետագայում պետք է միացվեր Օսմանյան կայսրությանը՝ դրանով իսկ իրականացնելով համաթուրքականների «Մեծ Թուրքիա» ստեղծելու երազանքը:

Նկատի ունենալով Իրանի և Աղրբջանի միջև մի շար ընդհանրությունները (պատմամշակութային, կրոնական, քաղաքան և այլն)՝ քվում էր, թե այդ երկու հարևան և սահմանակից երկրների միջև հարաբերությունները կզարգանան քաղաքնույթ և վերընթաց գծով: Իսկապես, ԱՀ գոյացման ակզբնական շրջանում երկու երկրների միջև ստորագրվեցին մի շարք միջպետական պայմանագրեր և համաձայնագրեր, մշակվեցին համատեղ տնտեսական ծրագրեր, սկիզբ առավ մշակութային համագործակցություն և այլն: ԻԻՀ քաղաքական դիվարությունը մեծ աջակցություն ցուցաբերեց ԱՀ նրա տնտեսական դժվարությունները գեթ ինչ-որ չափով հաղթանարելու և ամենակարևորը՝ նորանկախ պետությանը միջազգային կազմակերպությունների մեջ ներգրավելու

համար: Այսպես, օրինակ՝ շնորհիվ Իրանի քանցների, Աղբրեջանը կարճ ժամանակամիջոցում դարձավ Իսլամական Կոմիտեի Կազմակերպության (ԻԿԿ), Կասպից ծովի ավազանի Տնտեսական համագործակցություն կազմակերպության (ԷԿՕ) և մի շարք այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների անդամ՝

Իրան-աղբրեջանական հարաբերություններն Այազ Մուրադիբովի մանապահության շրջանում արժանագրեցին մի շարք կարևոր ձեռքբերումներ: Երկու եղևրներում քացվեցին դեսպանատներ, տեղի ունեցան պետական գործիչների փոխայցելություններ, հիմք դրվեց իրավապայմանագրային հարաբերություններին և այլն:

Սակայն պետք է նշել, որ ԱՀ ամկախության ձեռքբերումից հետո նորանկախ այդ երկրում ուժգին բաժնով սկսեց զլուխ քարծրացնել ազգայնականությունը, որի պարագլուխներից մեկն էր Աբուլխազ Էլիբեյը: «Վերջինս դեռևս 1988թ., այսինքն՝ ԽՄ գոյության տարիներին հանդես էր գալիս որպես այլախոս և ստեղծել էր ազգայնական մի կազմակերպություն, որն ուներ «Միավորված Աղբրեջանի միություն» անվանումը: Ծայրահեղական սկզբունքներով առաջնորդվող այս կազմակերպությունն իր առջև խնդիր էր դրել «երկու Աղբրեջանների», այսինքն՝ ԱՀ և Իրանական Աղբրեջանի (Ատրպատական) միավորումը մեկ պետության մեջ: Ընդ որում հատակ պահանջ էր դրվում, թուրքալեզու գերակշիռ քնակչություն ունեցող Իրանական Աղբրեջանը միացնել «Մայր հայրենիք» («Անա Վաթան») Աղբրեջանի Հանրապետությանը: Դժվար չէ նկատել, որ այդ ծրագրի իրագործում ընկած էր պանթուրքիզմի (համաբուրջականության) գաղափարը: «Միավորված Աղբրեջանի Միությունը» իր առջև խնդիր էր դրել համայն աշխարհին քացատրել, որ աղբրեջանցիները մինչև ռուս-պարսկական պատերազմներն եղել են մեկ միասնական ազգ և երկիր<sup>2</sup>:

1992թ. մարտի 3-ին Էլիբեյի ծայրահեղ ազգայնական «Աղբրեջանի ժողովրդական ճակատ» (ԱԺՃ) կուսակցությունը կարողացավ Այազ Մուրադիբովին հեռացնել իշխանությունից: Նախագահ իշակվելուց հետո Էլիբեյի առաջին հայտարարություններից մեկն այն էր, որ Իրանը սպառնալիք է Աղբրեջանի անվտանգության համար, ուստի Բաքուն պետք է դաշինքի մեջ մտնի Անկարայի հետ<sup>3</sup>: Նրա օրոք Աղբրեջանի կառավարությունը հանդես եկավ ռազմաշունչ ծավալապաշտական հայտարարություններով ազերիների հայրենիքի «գերության մեջ գտնվող» մասը՝ Իրանական Աղբրեջանը «ազատագրելու» և «երկու Աղբրեջանների միավորման» վերաբերյալ<sup>4</sup>: Ըստ այդմ, ԱԺՃ-ի ծրագրի մեջ մտցվեց հատուկ կետ. այսպես կոչված «Հարավային Աղբրեջանը» նորանկախ ԱՀ միացնելու անհրաժեշտության մասին<sup>5</sup>: Նախագահ Ա. Էլիբեյի ստեղծած միությունը լքվել էր եռանդուն գործունեությամբ և ձգտում էր ազերիների «ազատության պահանջի» մայրը հասցնել միջազգային հանրությանը: ԱԺՃ-ն բուռն քարոզչություն էր վարում նաև այն մասին, որ ապագայում Իրանն անխտասափելիորեն կմասնատվի, ո-

րի հետևանքով կատեղծվի մեկ միասնական 40 միլիոն ազերի բնակչության ունեցող երկիր<sup>6</sup>։

Էլչիբեյի շեշտված հակաիրանական դիրքորոշումը, սակայն, չէր սահմանափակվում լույս «երկու Ադրբեջանների միավորման» պանբյուրքիստական երազանքներով։ Նրա քաղաքական առնակատումը ԻԻՀ նկատմամբ դրսևորվում էր նաև այլ հարցերում։ Օրինակ՝ «Ասրաբադի, հայ-իրանական հարաբերությունների, «ֆիսլամական հեղափոխությունը դեպի Ադրբեջան արտահանելու» և քազմաթիվ այլ հարցերում։ Նա կտրականապես մերժում էր զարաբադյան խնդրի խաղաղ կարգավորման հարցում իրանական կողմի ցանկացած միջնորդություն կամ քաղաքական նախաձեռնություն<sup>7</sup>։

Էլչիբեյի սարդիչ քայլերի արդյունքում ազերիները, խախտելով միջազգային և միջպետական բոլոր համաձայնագրերն ու ընդունված կարգերը, ինչպես նաև ԻԻՀ տարածքային ամբողջականության սկզբունքը, սկսեցին ապօրինի կերպով զանգվածորեն ներթափանցել Իրանի տարածքը՝ երկու պետությունների միջև առաջ քերելով մեծ լարվածություն։

Էլչիբեյի որդեգրած այսպիսի քաղաքական ուղեգիծը բնականաբար չէր կարող ծաղախեղ լարվածություն չտեղծել Իրան-Ադրբեջան հարաբերություններում, մասնավոր, որ Բագրուս սկսել էր մեղադրել Թեհրանին իր ներքին գործերին միջամտելու և Ադրբեջանի տարածքում կրոնական քաղաքական ծավալելու հարցերում։ Բացի այդ Էլչիբեյի խիստ բուրժուազային կողմնորոշումը և նրա քազմիցս արած հայտարարություններն այն մասին, որ ԱՀ իր զարգացման հիմքում դնելու է «բուրժուական նշանակելը», քայքայ ոչ երբեք իրանական իսլամական կրոնական մոդելը, Թեհրանում առաջ քերեցին դժգոհություններ։ ԻԻՀ լուրջ մտախոգություն էր պատճառում նաև Էլչիբեյի կատավարության մերժեցման քայլերն ԱՄՆ-ի և Իսրայելի հետ։ Իրանի իշխանությունները գտնում էին, որ Ադրբեջանի միջոցով այդ երկրների մուտքը տարածաշրջան ուղղակի հակասում է Իրանի շահերին։ Այդ առթիվ իրանական պաշտոնական և ոչ պաշտոնական ժամույլում հայտնվեցին հողվածներ և քաղաքական վերլուծություններ, որոնցում խիստ քննադատության էր ենթարկվում Էլչիբեյի որդեգրած հակաիրանական քաղաքականության ըմբռացը։ Նույնիսկ տեղ գտան արտահայտություններ, որ անհրաժեշտ է Ադրբեջանի նկատմամբ կիրառել պատժամիջոցներ, ստեղծել նրա հետ տնտեսական և քաղաքական հարաբերությունները և այլն։ Իրան-Ադրբեջան հարաբերությունների հարցը նույնիսկ դարձավ իրանական խոտիդդարանի՝ մեջլիսի հատուկ քննարկման առարկա։ Նրա ամբիոնից հնչեցին սուր քննադատական խոսքեր Էլչիբեյի դրսևորած հակաիրանական տրամադրությունների վերաբերյալ։ Այս առթիվ հատկապես սուր քննադատությամբ հանդես եկավ մեջլիսում Թավրիզի պատգամավորը, որը կտրուկ արտահայտություններով դատապարտեց ազերի ազ-

գայնականների և նրանց պարագլուխ Էլչիբեյի պանթուրքիստական նկրտումներով տոգորված քաղաքականությունը:

Իրանի կառավարությունը բն ռոշակիորեն անհանգստացած էր «երկու Ադրբեջանների միավորման» ԱՀ սադրիչ քաղաքականությանը, ժամականը որ ազերի ազգայնականների ծավալապայտական կարգախոսները որոշ աջակցություն էին գտնում ինչ-ինչ ուժերի կողմից, քայքայում համդերձ, թեհրանում հիանալի գիտակցում էին, որ հիշյալ ծրագրերը արկածախնդրական են և չունեն կյանքում կենսագործվելու իրական հնարավորություններ: Ի՞նչ ղեկավարների կարծիքով վերոնշյալ ծրագրերը միտված են ապակայունացնելու ոչ միայն Իրանի ներքին վիճակը, այլ նաև տարածաշրջանային կայունությունն ու խաղաղությունը:

Ադրբեջանում կան նաև այնպիսի պետական գործիչներ, որոնք համոզված են, որ «Հարավային Ադրբեջանը» «Հյուսիսային Ադրբեջանի» հետ միավորելու երազանքներն անիրականամանալի ու սին են: Այսպես, օրինակ՝ Իրանում ԱՀ մախկին դեսպան Նասիբ Ջադեն «Մուսավաթ» բերքին 1997 թ. սեպտեմբերին տված հարցազրույցում նշել է. «Գերմպատակին հասնելու համար (երկու Ադրբեջանների միավորումը) առկա է երկու խոչընդոտ. առաջինը՝ Իրանում ապրող քոլոր ազգերի միջև կա կրոնական, պատմական և մշակութային մեծ ընդհանրություն, որը մեծ արգելք է Իրանի ներքին պատակտման համար, և երկրորդ խոչընդոտն այն է, որ Իրանում ապրող ազերիներն ավելի շատ հակված են ԱՀ միացմանը Ի՞նչ»:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը, կարևոր ենք համարում նշել, որ իրանական ժողովուրդը և պետությունը լի է վճռականությամբ՝ պաշտպանելու իր երկրի տարածքային ամբողջականությունը և դիմագրավելու ազերի ազգայնականների՝ Իրանին ներկայացվող քոլոր մարտահրավերներին:

AREN VARDERESYAN  
(IOS)

FROM THE HISTORY OF IRAN-AZERBAIJAN  
RELATIONS DURING THE PRESIDENCY  
OF ABULFAZ ELCHIBEI

The article presents that the country named "Azerbaijan" has been created thanks to the panturkistic long-range dreams. It is mentioned in the article that in this context the Iranian side though being a little worried by the Azeri nationalists' provocative slogans of "Unification of two Azerbaijan", i.e. the unification of Iranian Azerbaijan (Atrapatakan) and the Republic of

Azerbaijan in one state, which were favoured by the president Elchibei's adopted policy, however IRI is full of decisiveness to resist all the challenges.

## ԾԱՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Maleki Ab., *Iran and Russia: Neighbors without Common Borders. Russia and Asia: The Emerging Security Agenda*, Oxford University Press, 1999, pp. 230-265.
2. Մեծադիյան Բ.Ա., Ռաֆայել-ն Իրան վա ըմհոթի-ն Ազերայրան, Թեհրան, 1384 թ., էջ 417-418 (պարսկ.):
3. Обзор отношениИ между Исламской Республикой Иран и республикой Азербайджан, "Аму-Даря" 1999, И 2, с.19.
4. Բալբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան. հարևանն"ր, չե՞ աշխարհագրադարական ու աշխարհաանոնական անդամնեչ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 22, եր., 2003, էջ 10:
5. Բալբուրդյան Վ., նույն տեղում:
6. Մեծադիյան Բ.Ա., նշվ. աշխ., էջ 419-420:
7. Բալբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 10:
8. Ստեփանյան Հ., Պանրուրդիզզն, Թեհրան, 1384 թ., էջ 152 (պարսկ.):

## ՓԱՇՏԱՅԱՆ ԱՐԱՔԱՅ (ԱԻ)

### ՄԱՈՒԴՅԱՆ ԱՐԱՐԻԱՆ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

2003-ից ի վեր Սաուդյան Արաբիայում մեծ թափ ստացան քարեփոխումներին միտված գործընթացները: Իրենց հարցադրումները տեղադրելով կրոնական-քաղաքական նոր հարթության մեջ, քարենորոգիչները (կամ իսլամական ազատականները), ընդհանուր առմամբ, կոչ են անում երկրում ստեղծել քաղաքացիական հասարակություն՝ մտցնել համընդհանուր ընտրական իրավունք, ստեղծել սահմանադրություն, ընտրովի խորհրդարան, տարանջատել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները, ստեղծել անկախ դատական համակարգ, պայքարել կոռուպցիայի դեմ, քաղաքական ռոտումների ընդունմանը մասնակից դարձնել հասարակությանը: Նրանք առաջ են քաշում ժողովուրդի իրավունքների, խոսքի ազատության պահանջներ, կոչ են անում վեր հանել սաուդական հասարակության մեջ առկա ծայրահեղականության պատճառներն ու մշակել դրանց կանխմանն ուղղված քայլերը, միջոցներ ձեռնարկել ազատականացնելու տնտեսությունը, պայքարել մեծ թափ ստացող գործազրկության դեմ: Բարենորոգիչների պատկերացմամբ՝ ահաբեկչությունն ու անհանդուրժողականությունը ենթադրելի կլինի հաղթահարել կրթական և սոցիալական համակարգերի քարեփոխման և արդիականացման միջոցով:

Բարենորոգչական շարժումը առաջ է քաշում վերանայել երկրի պետական գաղափարախոսության հիմքում ընկած գաղափարախոսության՝ վահաբականության դոգմները՝ որպես առաջընթացը խաղողատու ուժ: Նշենք, որ կրոնական հարձեղումները վերահսկում է երեք կարևորագույն կրթական, դատախազական և քարոզչական ոլորտները:

Սաուդյան Արաբիայում իր քնուկուկ անմախաղապ քարենորոգչական շարժումն արտահայտվեց հրապարակային ելույթներով, քողոքի ակցիաներով ու հրապարակված քաղաքիկ քողոքագրերով: Բարենորոգչական գաղափարների տարածման հարցում կարևոր ներդրում ունեցան սաուդյի բոլակիցները, համալսարանական դասախոսները, նաև որոշ չափով արևմտականացված և Արևմուտքում կրթություն ստացած առանձին շրջանակներ<sup>1</sup>:

Չնայած խոսքի ազատության, մարդու իրավունքների, էթնոգափանական փոքրամասնությունների նկատմամբ շարունակվող սահմանափակումներին, կարելի է ասել, որ քարենորոգչական շարժումը որոշակի հաջողությունների հասավ Սաուդյան Արաբիայի պես պահպանողական մի երկրում:



Ընդատաք գնալով Ներքին մարտահրավերներին՝ սատարական էլիտան իրականացրեց որոշ քարենորոգչական մախածնոնություններ: 2003թ. օգոստոսին քազավորի հրամանով ստեղծվեց Արդ Ալ-Ազիզ քազավորի Ազգային երկխոսության կենտրոնը, որի նպատակն էր հասարակական հրատապ քեմաների վերաքերյալ քննարկումների կազմակերպումը, առկա հիմնախնդիրների մշակումն ու համակարգումը, իսկ քազաժառանգ Արդալլահի կարծիքով՝ կենտրոնի քացումը պատմական ձեռքերում էր՝:

Ընդատաք գնալով Ներքին ճնշումներին՝ 2005թ. քազավորությունում առաջին անգամ տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մասնակի ընտրություններ, նկատվեց հասարակական-քաղաքական առանձին քեմաների վերաքերյալ առկա տարտի նահանգ, քաղաքատարկյալներին քատերն ազատ արձակվեցին:

Քարենորոգչական շարժման ամենալուրջ հակառակորդը, սակայն, շարունակում է մնալ կրոնական *խթմրչխմնթթ*, որը քարենորոգումները դիտարկում է որպես սպառնալիք իսլամական սկզբունքների վահարական մեկնությանը և սեփական դիրքերին: Դրան մեծապես աջակցում է Ներքին գործերի մախարաբության շրջանակներում գործող կրոնական ոստիկանական կառույցը՝ Առաքինության վահակառության և անքարոյականության ղեմ պալքարի կոմիտեն, որի գործակալները կարող են առանց դատավարության հրապարակայնորեն պատժել վահարականության սոցիալական և կրոնական սկզբունքները խախտողներին<sup>1</sup>: Այս հարցում նրա հենարանն են քազավորական ընտանիքի մի շարք անդամներ, մասնավորապես երկրում քարեփոխումների ամենաարժատական ընդդիմախոս և քազավորական գահի նավակնորդ Ներքին գործերի մախարաբ էմիրը *Նալիլը*<sup>2</sup>, որոնց ուլյնպես մտահոգում է սեփական դիրքերի թուլացումը: Նրանց աջակցում է միջին դասին դուրս եկած պահպանողականների շերտը, որ ներգրավված է հիմնականում վարչարարական մեքենայում և քիզնետում:

Քարեփոխումների ընդդիմախոսները հանդես են գալիս հայտարարություններով, որոնցում քննադատության քիրախ են քարենորոգչները: Ասվածի ապացույցն է 2006թ. մայիսի 23-ին սատարական իսլամիստական մի կայքէջում տեղ գտած քարեփոխումները դատապարտող հայտարարությունը, որ ստորագրել են 61 սատարյի շեյխեր՝ համալսարանի տեկտորներ, պրոֆեսորներ, իրավաբաններ, դատավորներ, գործարարներ: Դրանում ռեֆորմիստներն անմանկում են արտաքին քշմամուն ժառայող և սատարական հասարակությունը «վնասերնիպալիալի» նքարկող ուժեր: Սատարական իշխանություններին և կրոնական իսթերիշմներին կոչ է արվում արգելքներ ստեղծել նրանց գործունեության համար<sup>3</sup>:

Հայտարարությունը որոշակի հասարակական արձագանք գտավ: Սատարյի շատ թթականներ հայտարարության տակ ստորագրողներին

նույնացրին իսլամիստների հետ<sup>6</sup>, քանի որ գործողությունները նույնպես այդքն են ընկնում մոլեռանդությանը և ծայրահեղականությանը<sup>7</sup>:

Բարենորոգչական շարժման սոցիալական բազայի կարևոր բաղադրիչն են կին ռեֆորմիստները, ովքեր փորձում են (առանձին ղեկավարում նաև աֆյուտքից) աշակցել կանանց իրավունքների համար մոլոր ջանքերին<sup>8</sup>: Նրանց մեջ կան շատերը, ովքեր ճանաչված են նաև բազալվորության սահմանների դուրս<sup>9</sup>:

Առանձին շերտ են կազմում կին քրթակիցները, ովքեր կանանց իրավունքների նկատմամբ առկա սահմանափակումների հարցում մեղադրում են կրոնական քարոզիչներին և հեղինակություններին<sup>10</sup>: Մինչդեռ վերջիններս հետևողականորեն պայքարում են, որպեսզի արևմտյան արժեքները չմեղրափանցեն հասարակություն, իսկ կանանց առնչվող խնդիրները մեկնարանվեն բացառապես իսլամական սկզբնաղբյուրների և շարիաթի տեսանկյունից (որն, ըստ նրանց մեկնության, արգելում է կնոջն աշխատել տամից դուրս այլ տեղ):

Սաուդյան Արաբիայում կանանց ներգրավվածությունն աշխատանքում կազմում է ընդամենը 5 տոկոս, որն ամենացածր ցուցանիշն է ողջ աշխարհում, այն ղեկավարում, երբ սաուդական քարձրագույն հաստատություններում սովորողների 70 տոկոսը իզական սեռի ներկայացուցիչներ են: Վերջին շրջանում իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ նպատակ ունեն մեծացնել կանանց ներգրավվածությունն ընդհանրապես սոցիալական ոլորտում<sup>11</sup>:

Սաուդյան Արաբիայում քարեփոխումների հարցում կարևոր գործոն է սաուդական հասարակությունը, որը պահպանողական և ավանդույթային է: Ուստի, հասարակության մեջ քարեփոխումների անհրաժեշտության գիտակցության և առկա կարծրատիպերը հաղթահարելու համար որոշակի ժամանակ է անհրաժեշտ: Բացի այդ, քարեփոխումների համար պետք է լինի հասարակական պահանջ:

Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ Սաուդյան Արաբիայում չկա արևմտյան ժողովրդավարության կամ աշխարհիկ հասարակության որևէ փորձ, իսկ ազատական (առավել ևս՝ աշխարհիկ) գաղափարները հասարակության մեջ այնքան էլ զանգվածային քնույր չեն կրում:

Քարեփոխումների հարցում կարող է բացասական նշանակություն ունենալ նաև ԱՄՆ-ի գործունը: Հնարավոր է, որ սատորական հասարակությունը քարեփոխումները ղեկավարելի որպես Արևմտյան կողմից ներդրված և չափակցի դրանց:

Միևնույն ժամանակ, ադաբական աշխարհում քարեփոխումների պահանջով նաև կան եկող Վաշինգտոնից առանձին ղեկավարում (այդ թվում՝ Սաուդյան Արաբիայի պարագայում) ձեռնադր չեն արժատական քարեփոխումները կամ ժողովրդավարացման գործընթացները, ինչը կարող է իշխանության քերել ԱՄՆ-ի համար անցանկալի վարչակազմերի:

Ինչ վերաբերում է թագավորական ընտանիքին, ապա նրա համար ջիհադականների և կրոնական մոլեռանդ զադաիւարների դեմ պայքարի հաջողությունը, ինչպես նաև սեփական իշխանության պահպանումը (թեև ուղիղ ինչ-որ չափով ձևափոխված տարրերակով) շատ դժգոհություն կախված է քաղաքական, սոցիալական, տնտեսական և կրթական ոլորտների ազատական քարեփոխումներից:

ARAKS PASHAYAN  
(IOS)

### SAUDI ARABIA BETWEEN CONSERVATISM AND MODERNITY

The article analyzes the recent reformist activity in Saudi Arabia especially active after 2003. Posing their questions in a new religious-political format, the reformists (mainly Islamo-liberals) managed to create a new political discourse. At large they call for the creation of a civil society, introduction of common (all-inclusive) suffrage, development of a constitution, establishment of an elected parliament, differentiation of legislative, executive and judicial bodies, establishment of an independent judicial system, fighting corruption, and participation of the society in political decision-making. They raise issues of human rights (including gender equality) and freedom of speech, call for bringing up causes of radicalism and extremism in the Saudi society, work out steps towards preventing development of these tendencies, take measures to liberate the economy, and fight against wide-spread unemployment as a factor advancing radicalism. The most serious opponent of the reforms is the wahhabi establishment, as well as a number of conservative members of the royal family, views reforms as a threat for Islamic values and loss of position. At the same time it should be recognized that Saudi Arabia does not have any experience in Western democracy or secular society, and that liberal (especially secular) ideas are not wide-spread in the country. An important factor hindering reforms in Saudi Arabia is its highly conservative and traditional society. Thus it will take some time before the society becomes conscious of the necessity of reforms and puts aside the present stereotypes and prejudices. As to the Royal family, in many cases the success of their struggle against jihadists and religious fanaticism, as well as security of their own power and position (at least in a more or less altered form) depends on the effectiveness of political, social, economic and educational reforms.

1. Տէն Փաշայան Ա., Հատարական-քաղաքական զարգացումները Սաուդյան Արաբիայում, Նորավանք գիտակրթական էմմառաջամբ տեղեկագիր, 10/16, եր., 2005, էջ 55-65:
2. Saudi Arabia to Establish a National Dialogue Center, <http://www.islamonline.net/English/News/2003-08/04/article08.shtml>
3. Country Reports on Human Rights Practices Released by the Bureau of Democracy, Human Rights and Labor, February 25, 2004; <http://www.state.gov/p/drl/rls/hrrpt/2003/27937.htm>
4. Saudi Oppositionist: King 'Abdullah is Trying to Keep Prince Na'if From Acceding to the Throne, <http://memri.org/bin/articles.cgi?Page=countries&Area=saudi-arabia&ID=SP138906>
5. A Deviant, Junta Has Taken Hold of the Saudi Media and is Endangering Islamic Society and Its Values, [www.islamlight.net](http://www.islamlight.net)
6. L. Azari, Debate on Reform in Saudi Arabia, The Middle East Media Research Institute *Inquiry and Analysis Series - No. 294*, September 21, 2006, No.294
7. Երկրում ընդդիմադիր ուժ համալիր իսլամիստները նույնպես որոշակի ակտիվություն են ցուցաբերում: 2007թ. ֆետրվարի 2-ին նրանց կապադարակած շոտլանդացում (19 մարտի ստրագորոյամբ) Արդարացի բազմությունը պահանջում էր երկրում տնտեսական, սոցիալական և քաղաքական բարեփոխումների անցկացում: Իսլամիստներն առաջադրում են հասարակությանը մասնակից դարձնել որոշումների կայացմանը, անցկացնել ազատ պարլամենտական ընտրություններ, պայքարել աղքատության դեմ: Հաջորդ օրը շոտլանդացի ձեռնակներից մի քանիսը ձեռքարկվեցին՝ մեղադրվելով սահաբեկական գործողությունների համար ֆինանսական միջոցների հավաքագրման մեջ, նշվեց, որ նրանից մի քանիսն աջակցել են Իրաքում քիմիական շարժմանը: Այս մասին տես՝ Saudi Petition Calling for Reforms Issued by Islamists who Support Terrorism, The Middle East Media Research Institute, February 16, 2007, No.1467, <http://memri.org/bin/articles.cgi?Page=countries&Area=saudi-arabia&ID=SP146707>
8. Սաուդյան Արաբիայում կանայք ընտրելու իրավունք չունեն: Ռացի այդ, նրանց արգելված է ավտոմեքենա վարել, ժամկոտողել, կյուրանոցում ապրել, իրենց երեխաներին անվանակոչել, ամենափոքր ստանալ դոքա զալ տեից, աշխատանքի ընդունվել, ամուսնանալ, փոխել աջախաչ՝ իսլամական համար չանկաչին հաշիվ բացել առանց թուղտոթյան: Միավարության առանձին քաղաքներում կանայք պարտավոր են երեսն թող գցել, նրանք պետական սեկտորում աշխատելու զնայում չպետք է առաջատար դիրք կամ կրթաբարձակյին կույրներ ունենան և այլն:
9. Նրանցից է կին գրող և կրթաբարձակյանու, խոցի ազատության ձեռնարկակիր Վաջիհա Ալ-Հուսայրաբը: 2006թ. օգոստոսի 4-ին Սաուդյան Արաբիայի բազմալոր Արդարացի քիմ Արդ Ալ-Ալիջի ինագորացիայի օրը վերջինս փողոցում միայնակ կազմակերպեց շոտլի ակցիա՝ ձեռքին ունենալով «Կամանց տվեք իրենց իրավունքները՝ կարգախոսը՝ դա հանար պատժվելով: Տես՝ A. Dankowitz, Saudi Writer and Journalist Wajeha Al-

Huwalid Fights for Women's Rights, The Middle East Media Research Institute, December 28, 2006, No.312, <http://memri.org/bin/articles.cgi?Page=countries&Arce=saudiArabia&ID=IA31206>

10. Saudi Women Columnists Protest Against Oppression of Women in Saudi Arabia, The Middle East Media Research Institute, May 4, 2007, No. 1570, <http://memri.org/bin/articles.cgi?Page=countries&Arce=saudiArabia&ID=SP157007>
11. 2004թ. Հոգրայի խորհուրդն ընդունեց 120 բանաձևը, որը կատարարության ստաց խնդիր է քարոզագնում սահմանելու այն որոշումները, որտեղ կանայք կարող են վերապատրաստվել և ապա՝ աշխատել: 2006-ին Իշխանություններն ընդլայնեցին այն որոշումները, որտեղ կարող են կանայք աշխատել: Բացի այդ, հրանց միայն սատղի կանանց թույլատրեցին աշխատել որպես վաճառողուիմներ կանանց նագրատի և կոմմալիկայի խանութներում: Sbu' L. Azur, Public Debate in Saudi Arabia on Employment Opportunities for Women, The Middle East Media Research Institute, November 17, 2006, No.300, <http://memri.org/bin/articles.cgi?Page=countries&Arce=saudiArabia&ID=IA30006>
12. Arab News (Saudi Arabia), December 21, 2006.

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԷՄՄԱ  
(ՌՀԱՀ)

ԻՐԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԴԱՄԱԿԱՆ ԱՐԱԲԵՐԵՆԻ  
ԼԵՋՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ

Ռուս լեզվաբան Ֆ.Ֆ.Ֆորտունատովը /1848-1914/ լեզուների տիպարանական դասակարգման համատեղությամբ առանձնացրեց արաբերենը՝ որպես բերական և կցական լեզու՝, մաս՝ համադրական՝ բառերի և մասնիկների փոփոխմամբ համդերծ:

Արաբերենի տիպարանական բնութագիրն ամբողջանում է բերման ռոնակությամբ: Լեզուն մտ յաթ է, այսինքն՝ փոփոխվող է՝ ըստ բերման. նրանում բառավերքի ձայնանշանները փոխախվում են ըստ բառի արտահայտած քերականական իմաստների՝: Ի յաթը՝ քերականագիտական տերմին է. դրա իմաստը մտ յաթ բառի վերջավորության ձայնանշանի փոփոխությունն է՝ ըստ նրա ռազիթայի՝: Ի յաթը փոփոխականությունների տեսություն է՝ կապված բառերի փոփոխությունների հետ՝:

Արաբերենի լեզվաբանական ավանդություն մահում՝ և ի յաթը միևնույն գործողության երկու կողմերն են՝. ի յաթը բննում, պարզաբանում է մահուի ուսումնասիրած միջոցները՝ անվանելով բառը՝ ցանկացած թաղթիում՝ ըստ նրա՝ թաղթիի ներսում ունեցած ռազիթայի: Դիցուք, մահում ենթադրում է, որ արաբերենի բառերը երեք տեսակի են, սահմանում է պայմանի, վարձանքի, քացատան միջոցները, անցյալ, մերկա, հրաձայական ժամանակները, ենթական, որոշիչը, խնդիրը, պարագան և այլն: Նահում, օրինակ, բնորոշում է անվանական նախադասությունը հետևյալ կերպ. դա այն է, որը սկսվում է անվամբ: Անվանական նախադասությունը քաղկացած է անունից, որն ընկած է նրա սկզբում և կոչվում է մտքադաշ, դրան հետևում է յաթաթը, որն ավարտում է դարձնում նախադասության իմաստը: Արդ, ո՞րն է ի յաթի կապը վերոնշյալի հետ: Ի յաթի ենթարկենք «Մուհամմադում ռառուլուն» նախադասությունը, որտեղ «Մուհամմադունը» մտքադաշ է, «ռառուլունը» յաթաթ: Նկատելի է, որ ի յաթով ոչ մի նոր բան չավելացվեց մահուին,

ոչ մի նորություն չստացվեց քառքրի մեջ, սուկ վերլուծվեց այն վազեխան, որը սահմանել է *ճահտեմ* բառի համար: Ուրեմն, *ի'րաբ* դերը սահմանափակվում է հետևյալի մեջ՝ վերլուծել այն վազեխան, որոնք սահմանում է *ճահտեմ* բառերի համար: Կարելի է ենթադրել, որ *ի'րաբ* տալիս է յուրաքանչյուր բառի մասին այն, ինչ արդեն տվել է *ճահտեմ*: Այլ կերպ ասած, նմանեցնելով *ճահտեմ* և *ի'րաբ*՝ վերահաստատում ենք մեք պնդումը, որանք միևնույն գործողության երկու կողմերն են: *ի'րաբ*՝ բառի վազեխան քննելուն հետևում է այն հատուկ նշանների պարզաբանումը, որոնք սահմանում է *ճահտեմ* յուրաքանչյուր վազեխանի համար: Եւթտեմ անվանում է բառերը ուղղակյանացված, հայցականացված, անտականացված, ջազմավորված, և *տախթ*, *ժապրթ*, *ջատթ*, *ջազնթ*<sup>10</sup>, ունեն իրենց հատուկ նշանները /*դամմա*, *խարիս*, *քառոտ*, *սուբուն*:/

*ի'րաբ* քննում է այն, ինչ սահմանում է ճահտեմ բառի համար նախադասության մեջ կամ սահմանում է որչ նախադասության համար<sup>11</sup>: Համաձայնենք այն պնդմանը, որ «ճիշտ» *ի'րաբ* պայմանավորված է բառերի համար *ճահտեմ* սահմանած վազեխանների իմացությամբ, և այն իրականացվում է միայն նախադասության մեջ բառերի փոխհարաբերության իմացությամբ<sup>12</sup>: Կարելի է եզրակացնել, որ «ճիշտ» *ի'րաբ* պայմանավորված է *ճահտեմ* իմացությամբ, և որ *ի'րաբ* իր քոլոր կողմերով և ձևերով հանդերձ նախադասության մեջ բառի վազեխանի ըմբռնումն է, այսինքն՝ արարերենի լեզվաբանական ավանդույթում բառի վազեխանի իմացությունը հենց *ի'րաբ* է. *ի'րաբ* և վազեխան միևնույն երևույթի երկու կողմերն են: Առերևույթ է *ի'րաբ* մեջ առկա դժվարությունը. միակ բարդությունն այն է, որ չիմանալով նախադասության մեջ բառի վազեխան և բառերի փոխհարաբերությունը, անտարբանական է հասնել «ճիշտ» *ի'րաբ*<sup>13</sup>:

EMMA KHACHATRYAN  
(RASU)

## THE FRAMES OF I'RAB IN THE LINGUISTIC TRADITION OF CLASSIC ARABIC LANGUAGE

The *nahu* and the *i'rab* are two aspects of the same action as *i'rab* and *wazifa* in the linguistic tradition of Arabic language. The *nahu* defines the words inside of *tarkib* or out of it, and the *i'rab* analyses the word only inside of *tarkib* - in the context of relations with the other words. The *i'rab* doesn't add anything new in grammar, but examines, explains those *wazifa*,

which defines the nahu for the words or for the whole sentence. The i'rab is the correct understanding of the word's wazifa. The correct i'rab is conditioned with nahu knowledge.

## ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քեցական է որովհետև նրանում քերականական կարգերը արտահայտվում են մեղրին քերմամբ, կրական է որովհետև բառերը փոփոխվում են ըստ իրենց եկող օգտագործված մասնիկների ազդեցության, որովհետև քերման ձևերը բավարար լին հոլովական ձևեր արտահայտվող համար: Այս մասին մանրամասն տես՝ Зверинцев В., История арабского языкознания, М., 1985г.
2. Ըստ գերմանացի լեզվաբան Ելեգեի Ա.Վ. /1767-1845/ համադրական են այն լեզուները, որոնցում բառերի քերականական ինաստեմբը արտահայտվում են հենց բառերի քերականական մնազորմամբ՝ մասնիկների և ելրիմ քերման միջոցով:
3. Ալ-լուգարույ սուսրիյա, Ալ-քիթաբույ աուսայ, Հալիպ, 1986, էջ 11:
4. Ի յապր քերականական վերլուծում է կամ փոխլուծում ըստ քերման:
5. Հազրիթայթ իմաստը բառի վերլուծումն է՝ իր գոյծատյոքի տեսակետից՝ որպես ենթակա, ստորոգյալ, խնդիր, պարագա և այլն: Այս մասին տես՝ Դուստա Ֆիլ ի յապր, Արուս Բաքր Այն Արջ Ալ-Ալիմ, Կահիրե, 2002, էջ 231:
6. Մանրամասն տես՝ Габучян Г., О проблеме слова в свете факторов литературного языка, М., 1968г.
7. Կանոն ալբարբեբեում նշանակում է՝ քերականություն: Կանոն գիտություն է խոսքի կազմության օրենքների մասին, իսկ Ի յապր խոսքի մասերի վերլուծությունն է: Այս մասին տես՝ Մուհամմադ Ալ-Ամադի, Ալ-Ալիմայ Ֆի ալ-Ֆառիհի ռա ալ-ի յապրի, Բեյրութ, 1978, էջ 3:
8. Դուստա Ֆիլ ի յապրի, նույն տեղում, էջ 3:
9. Քառերից արաբերենում նշանակում է՝ կատյուց, համադրություն:
10. Ուղղական, սեռական, հայցական հոլովները և բարձր ի յապր տեսակներն են: Այս մասին տես՝ Արջայաթ Ալ-Քուտալի, Ուլ Կա ալ-Ալիմ ալ-լուգարիյա, Կահիրե, 2004, էջ 65-67, Ալ-լուգար ալ-աուսրիյա, Հալիպ, 1986, էջ 13-21:
11. Խոսքը ի յապրում պաշտոն ունեցող մախադասությունների մասին է: Այս մասին տես՝ Դուստա Ֆիլ ի յապրի, նույն տեղում, էջ 237-238:
12. Մադի Մուսնուլ, Ալ-աուսրիյա, Թեհրան, Էնթաթ ի 1372թ., էջ 89:
13. Օրինակ՝ «Դարաա ալ-խազինե մուսրի աճա մախադասության ի յապր լի հարույլի, երի լուսարբեբեը մերկա ժամանակի բայը, ենթական, ձևի պարագան և դրանց ի յապրի նշանը: Հաստատապես գիտենք, որ «Ռեյթա Մուհամմադաճե» մախադասության մեք ըրիթան հարցման անուն է, անհրաժեշտաբար գործածվել է մախադաս Խաբարի ըրիթում, որովհետև այն իսկ ալ-ճապար է, իսկ Մուհամմադաճե իմաստըս մուսրաբար է երկու անունների միջև կապի իմաստությունը նպաստում է «Ռեյթա ի յապրի»:



## ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԻԼԻԹ (ԵՊԿ)

### ՆԱԽԳԱՍՈՒԹՅԱՆ ԸՄՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԲԱՂԱԿԻՉՆԵՐԻ ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՀԱՐԱԳՐՈՒՄԸ ԸՍՏ ԳԵՐԱԳԱՍ ԲԱՂԱԿԻՉԻ /Al-Amil/ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ

Խոսքի շղթայում ցանկացած բառի ձևափոխությունն աղարական լեզվաբանական ավանդույթում (այսուհետ՝ ԱԼԱ) պայմանավորված է որևէ բառով, որը հանդես է եկել նախորդող դիրքում և ընկալվում է որպես տվյալ բառի կատավարող կամ գործոն, որը բացահայտում է նրա ձևը և առաջացումը խոսքում: ԱԼԱ-ում դիրքերի հարադրման ամբողջությունը, որը կապված է «գործոն»՝ *al-Amil*<sup>1</sup> հասկացության հետ, եվրոպական արաբագիտության մեջ ընդունված է անվանել գործոնների տեսություն<sup>2</sup>: Այսպիսով՝ գործոն՝ *al-Amil* անվանվում է բառը, որը կատավարում է իրեն հաջորդող, հնարավոր է նաև ոչ անմիջական, բառերին քառափոխությամբ, իսկ հաջորդող բառն անվանվում է *al-ma'nu*<sup>3</sup>: Ի դեպ, նույն բառը, որպես կատավարող, կարող է հանդես գալ բառերի ամբողջ շարքի նկատմամբ: Յուրաքաչյուր բառի համադրման հնարավորությունները խոսքում<sup>4</sup>, այսինքն նրա պոտենցիալ հնարավորությունները կարող են իրացվել տարբեր չափանիշների ազդեցությամբ և որոշակի հաջորդականությամբ, ինչը ստեղծում է բառերի գծային շարքի որոշակի փոխդասավորվածություն, որոնցում բոլոր տարրերը որոշակի կարգով կապված են միմյանց հետ կատավարման հարաբերությամբ՝ որպես կատավարող գործոններ և կատավարվողներ: Որպես կատավարող գործոն, կարող են հանդես գալ անունները, բայերը, բայանունները, (դերբայները ու մասդարները), նախդիրները և այլն: Այլ-Ձուրջանին այս գործոնների շարքում որպես նախադասության քերականական կաղապարի վրա ազդող գործոն առանձնացնում է սպորտգումը՝ *al-ism*<sup>5</sup>-ը: Կատավարումը իրագործվում է ինչպես առաջընթաց, այնպես էլ հետընթաց ուղղությամբ: Հետընթաց ուղղությամբ ներգործում են միայն անունները ու քայերը՝ կապված նախադասության կազմում նրանց շարահյուսական դերից, նախդիրները ներգործում են միայն առաջընթաց ուղղությամբ<sup>6</sup>:

Դ.Վ.Յրոլովը, անդրադասնալով Սիբաուեյիին «Գրքում» արծարծված խոսքի կառույցի ուսումնասիրմանը, գրում է, որ Սիբաուեյիին այս հարցում իր խնդիրը տեսնում է ոչ թե քարդության տարբեր աստիճաններով շարահյուսական կառույցների առանձնացման և նրանց ձևային հատկությունների նկարագրման, այլ լեզվական միավորների՝ բառերի

համառոտման կամ զուգորդման կանոնների հարցադրմանը և այդ համառոտման գործընթացում քառափոխադրյալն<sup>6</sup>։

Գ.Մ.Գարուչյանը մախադասության շարահյուսական պատկերի ձևավորումը դիտարկում է որոշյալության ու անորոշության լույսի ներքո, առանձնացնում ԱԼԱ-ում առկա շարույթների երեք ձև՝ ստորոգական, որոշյալին, հատկացուցչային, մյուս կողմից մեզ տրված են քազմաթիվ արտաբերման կանոնիկ մախադասություններ, որտեղ կարելի է առանձնացնել տարբեր շարույթներ և նրանք առանձնացանել ըստ շարահյուսական կառույցների նշված դասերի<sup>7</sup>։

Ալ-Ջուրջանին (XI դար) «Ալ-Ջեմալ ալ-ուս'» աշխատությունում կատարում է մախադասության շարահյուսական պատկերը ձևավորող բոլոր գործոնների դասակարգում։ Նա համարում է, որ դրանք հարյուրն են, որոնք քաժանվում են երկու ալ-ու'անույա (նմրադրյալ խնդրատության) և ավելի ստվար քանակություն կազմող ալ-լաֆշիյա (կատավարող գործոնի առկայությամբ), վերջինս էլ քաժանվում է ալ-քշիյասիյա (կանոնի համապատասխան կազմված) և ալ-սամա'իյա (առմամուրյամբ, նախօրոք առկա գործածության ձևով պայմանավորված)։ Վերջինիս մեջ մտնում են 91 գործոն և ալ-քշիյասիյա-ն յոթ գործոն, իսկ հարյուր գործոնից մնացած երկուսը քաժին են ընկնում ալ-ու'անույա-ին։ Ալ-սամա'իյա խմբի 91 գործոնը քաժանվում են 13 տեսակի։ Ալ-Ջուրջանին վերջիններիս ևս - մանրամասն անդրադարձում է<sup>8</sup>։

Նախադասության կազմում նրա անդամների վրա ազդող հարյուր գործոններից երկուսը ալ-ու'անույա են՝ ենթակայի (ալ-տաբաժա) և ստորոգյալի (ալ-խաբար) վրա ազդող։

Այս կապակցությամբ առաջին ուսմունքի հետևորդները կարծում են, որ դա ենթակայի (ալ-տաբաժա) և ստորոգյալի (ալ-խաբար) վրա ազդող գործոնն է, այսինքն ստորոգումը՝ (ալ-իսոժ), որի շնորհիվ էլ անունը հանվում է արտաբերվող ալ-լաֆշիյա գործոնների խմբից, և որն էլ համարվում է ենթակայի և ստորոգյալի վրա ազդող։ Այս գործոնն իր ճանաչումը գտնում է տրամաբանությամբ և ոչ արտաբերմամբ<sup>9</sup>։

Երկրորդ ուսմունքի հետևորդները կարծում են, որ ենթակայի (ալ-տաբաժա) գործոնը իմաստով պայմանավորված է (ալ-ու'անույա), որի հետևանքով էլ անունը զատվում է մախադասության անդամների վրա ազդող քառափոխական արտասանվող ալ-լաֆշիյա գործոնների շարքից, իսկ ստորոգյալի վրա ազդող գործոնը արտասանվող է, որն է ենթական՝ ալ-տաբաժա-ն։ Այս ուսմունքի համաձայն՝ ենթակայի (ալ-տաբաժա) վրա ազդող գործոնը իմաստով պայմանավորված է, իսկ ստորոգյալի (ալ-խաբար) վրա ազդող գործոնը՝ առկա՝ արտաբերվող։

Երրորդ ուսմունքի կողմնակիցները գտնում են, որ ենթական ազդում է ստորոգյալի վրա, իսկ ստորոգյալն էլ՝ ենթակայի։

Այսպիսով, կատարումը, որպես ստորադասական կապակցության եղանակ, առանձնացվում է ձևական-ափանդական և զործառական-չարահյուսական ձևերով: Ըստ կատարվող ստորոշյալ քաղաղրիչ՝ քերականական ձևավորումն այն բնորոշում է որպես հոլովատություն, երբ կատարվող ստորադաս բառն ունի հոլովական ձևավորում, և արտահայտվում է որևէ հոլովամեծով, օրինակ՝ հաբ յա-ին հաջորդող անունը՝ կապատություն: Գերադաս բառի պահանջով կապի և վերջինիս համապատասխան հոլովի առկայությունը կոչվում է հոլովակապատություն՝ *kultu litaliben*:

Ըստ գերադաս բառի ստեղծած շարահյուսական կառույցի՝ կատարումն արտահայտվում է իբրև «ենթակատություն», «ստորոգաստություն», «խնդրատություն», «պարագաստություն»<sup>16</sup>:

LILIT HARUTYUNYAN  
(YSU)

THE SUBORDINATE COMBINATION OF SYNTACTICAL  
CONSTITUENTS  
OF THE SENTENCE ACCORDING THE INFLUENCE  
OF THE PREFERABLE CONSTITUENTS OF A 'ĀMIL

The form *'awāil*, which is the verbal noun of the verb *'awāla*, literally means "effect", and as a technical grammatical term designates "the effect of the *'āmil* on the case endings of the mood endings of the imperfect verb." The *'awāmil* effecting case and mood endings are divided by the grammarians into two groups: *al-'āmil al-lafziyy*—"the literal *'awāmil*" and *al-'āmil al-m'anauiyy*. When the *'āmil* is a word, its effect is produced only when a syntactical or a syntactical and logical connection exists between the *'āmil* and the word effected by it. For example: the *'awāmil* known as *hawāf al-ğarr* produce the genitive in the noun following them, since they are connective particles which join the noun following them to a preceding verb or noun.

ՇԱՆՈՅԱԳՐՈՒՅՑՈՒՆՆԵՐ

1. Այս միավորն արարագիտական ուսումնասիրությունն էր ընդունված է մեկնացանել որպես բառափոխիչ: Այս երևույթին է անդրադարձել VIII դարում Բասրայի քերականական դպրոցի մեթոդաբանուհի Ալ-Ջալիլ Բեմ Ահմադը *Kitāb al-'Āmil* (Գիրք կատարման մասին) գրքում: Մեջբերումը

- ըստ Գարեգյանի Գ.Մ.՝ արաբական քերականագիտության հարցի մասին հորվածից (Семитские языки. вып II., часть I, Москва 1965 стр. 38):
2. Фролов Д.В., Арабская филология: грамматика, стихосложение, хорасоведение. Статьи разных лет. Москва 2006, стр. 14.
  3. Արաբական քերականական ավանդույթում ասարացավ *al-'imil* կառավարող և *al-ma'tmil* կառավարվող գործոնների մասին տեսությունը, որն իր հետագա զարգացումը ստացավ Ալ-Ջուհրանիի Ալ-'Ամալի *al-mia'* («Հարյուր գործոն») գրքում:
  4. Յուրաբանյալը տիրու դիտելով որպես խոսքային գործունեության ավարտում արտադրանք՝ այն պետք է ուսումնասիրել տարրեր ղիբրերից: Որպես ելքային կնիս ընդունելով լեզու-խոսք երկնայալոսումը, մենք համարում ենք, որ խոսքը ձևավորվում է խոսքային գործունեության չնրայրում և փորձնական էինք է ցանկացած լեզվի ուսումնասիրության համար: Մեքրեումը ըստ՝ Храковского В.С., Очерки по общему и арабскому синтаксису, М., 1973, стр.5
  5. Serh antuzaj fi as-nahu, If'amati az-Zamakhshari, al-Andabin Jamal ad-Din, 1990, p 32.
  6. Фролов Д.В., Арабская филология: грамматика, стихосложение, хорасоведение. Статьи разных лет. М., 2006, стр.13.
  7. Габучан Г.М., Теория артикли и проблемы арабского синтаксиса, М., 1972, стр. 117.
  8. Sheykh khalid Al-Azhari Al-Jurjani, Al-'Ummil al-mia', p.3.
  9. Al-Awmmil al-mi'a al-nahasiya fi usul 'ilm al-arabiya bi abd alnasir al-Gurgani, sharih Sheykh Khalid al-Azhari Al-Gurgani , dar al-ma'arif, al-Qahira, p. 312.
  10. Տիրիմները՝ ըստ Հարությունյան Հ.Ա., Կառավարումը ժամանակակից հայերենում, Եր., 1983, էջ 21:

ՄԱՆՐԱՍՏՅԱՆ ԼԻԼԻԹ  
(ԵՊՀ)

«ԿԱՌՈՒՅԵԼՈՎ ՏՈՒՆԸ ԵՐԿՆՔԻ ՄԵՋ»  
ՎՏԱՐԱՆԴԻՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԳՈԼԻ ԹԱՐԱՂԻԻ  
ԱՐՉԱԿՈՒՄ

...Եվ դեռ ես  
Մարմնիս արմատների չէի մխրճել  
Նրազննոյն ավազի մեջ,  
Երբ ճամփա ընկա.  
Ստորաբ Մեփնճրի, Ճամփորդությամ՝

Արդի իրանական արծակի քազմարովանդակ թեմատիկայի մեջ առանձնակի հնչելություն ստացան վտարանդիության և նրա հետ սերտորեն առնչվող՝ ազգային, մշակութային, կրոնական, զենդեռային ինքնության պահպանման խնդիրները: Թեև այսօր Իրանի ներքին և վտարանդի գրաչուկան ողողված է նորահայտ հեղինակների վերտիչյալ խնդրի հետ՝ աղեքաղո քազում հուշապատումներով ու պատմվածքներով, այնուամենայնիվ, գրականագետների ուշադրության կենտրոնում են մեծամուն պարսիկ արձակագիրներ՝ Էսմայիլ Չասիհի, Հուշանգ Գուչիրի<sup>2</sup> և Գուլ Քարադիի ստեղծագործությունները:

Գուլ Քարադին իրանական գրականություն մուտք գործեց 1960-ականների վերջերին, հրատարակելով «Ման համ Չեղևարա հասարան» («Ես մույնպես Չեղևարան եմ») (1969) և «Խարե զեմեսարանի» («Չմեռվա քունը») (1973) նովելների շարքը:

Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո տասնյակ հազարավոր տարագիր հայրենակիցների նման հայտնվելով օտարության մեջ, Քարադին իր հայացքը անեռն վտարանդիության ցավալի խնդիրներին: Ինչպես նշում է գրականագետ Մ. Լանունփարվարը. «Գուլ Քարադիի արձակը Իրանի սահմաններից դուրս քնակվող իրանցիների ներկա կյանքն արտացոլող նզակի արձագանքն է»<sup>3</sup>:

Հետեղավոխական տարիներին լույս ընծայված «Մասթերիայի վտարացանդե», («Քրված հուշեր») (1990), «Ջայե դեզար» («Մեկ ուրիշ վայր») (2001) և «Դո դոնյա» («Երկու աշխարհ») (2002) պատմվածքների ժողովածուներում զետեղված հուշագրություններն ու պատմվածքները առանձնաձևում են իրենց քացատիկ թեմատիկ գաղափարական ուղղվածությամբ, որտեղ հեղինակը պատկերում է հայրենի տնից հեռու, օտարության մեջ քնակվող պարսիկ կնոջ ներքին ցավն ու մոլ իրականության մեջ՝ կրոնական, մշակութային, ազգային ինքնությունը պահպանե-

լու նրա դժվարությունները: Յեւ հեղինակը խուսափում է փորձարարություններից, այնուամենայնիվ, նրա պատմվածքները առանձնաձևում են ռեալիստական բարոյությամբ և խոր զգացմունքայնությամբ: Մասամբ ինքնակենսագրական բնույթ ունեցող թարաղիի պատմվածքներից միանշանակաբար են թախծի ու ծիծաղի, ավանդակաճի ու արդիականի, կարոտի ու մոռացության իրար հակասող երևույթներով:

Վտարանդիության, մարդկային կեցության հակասությունների, երիտասարդ ու միայնակ մոր համար օտար աշխարհում իր տեղը գտնելու խնդիրներին է նվիրված «Մաղամ Գորգ» («Տիկին Գայլը») ինքնատիպ պատմվածքը: Այն թարաղիի կյանքի հուշերից ցաղված մի պատառիկ է, որտեղ պատկերված է փարիզյան բաղամասերից մեկում ապաստան գտած երիտասարդ պարսկուհու և նրա երկու զավակների՝ նվրթակյան բարձրին, աշխարհընկալմանը, կենսակերպին ընտելանալու դժբարին սկիզբը:

«Ելանքն օտարության մեջ Փարիզում լի է տագնապներով, նաև մեղքի զգացումով, որ մի օտարական, աշխարհի մյուս կողմից եկել է ու տեղացիների տեղը զավթել, մի տեսակ պարտադրված ներդրամտություն ու մահանց ու նաև զսպված մի գայլույթ, որ քաջություն չունի երևան գալու, և ներքին մի ծաղր որ խայթում ու փոխարեժի է կոչում, և մի ինքնասիրություն, որ երկու հազար հինգ հարյուր տարվա պատմություն ունի...»,- խորհում է հեղինակը<sup>4</sup>:

Այլարանության (ալեգորիայի) սկզբունքով կառուցված և գրոտեսկային տեսարաններով լեցուն այս պատմվածքում հատակապես ընդգծված է ֆրանսիացի տանտիրուհու կերպարը, որին հեղինակը հեզմանքով անվանում է օտիկին գայլ: Իրանուհու պնդմամբ կանանցից խիստ տարբերվող տիկին Գայլի համար խորթ էին արևելյան բարձրը ու աշխարհըմբռնումը: Նա ունակ չէր ընկալելու երիտասարդ պարսկուհու տառապանքն ու հայրենի տան, հարազատների հանդեպ ունեցած սերն ու անհագ կարոտը: Միայնակ, սառն ու մշտապես գերնյարդային վիճակում գտնվող այս փարիզուհուն անտանելի էր թվում յուրաքանչյուր փոքր տեղաշարժ:

Վտարանդիության մեջ հայտնված, մարդկային մտեքմության կարոտ երիտասարդ կինը իր փոքրիկ զավակների հետ միասին, «որոնց տատիկի, մորսորդ ու մի աշխարհ սիրո ու գործվանքի գրկից խել ու արտորել է նա սառը, տխուր ու անսեր աշխարհը», իրեն զգում էր լքված ու անպաշտպան՝ անկարող հաշտեցնելու հին ու նոր ինքնության միջև ընթացող անվերջ պայքարը:

«Այնտեղից, որտեղից հենց նոր ենք եկել՝ նվրթակյան մանրունքներին անտեղյակ, մի մեծ բակ ու ծառ ունեցող տնից, ընտանիքի ու բարեկամների գրկից, աշխարհի այս ծայրն ենք մետովել. քնահամ եղած մարդկանց մնան հողի պես պտտվում ենք ու շփտենք, թե ինչպե՞ս կարելի է առանց իրար անհասկացանքնելու կամ բախվելու ապրել»<sup>5</sup>:

«Տիկին Գալլո» պատմվածքում Քարաղին առանձնահատուկ նրբությամբ է ընդգծում պարսկուհու ազգային հպարտությունն ու արժանապատվությունը, ով փորձում էր խոնարհարար տանել նոր իրողության մեջ արժատացած օտար բարքերը: Ինչպես հեղինակն է նշում. «Մանավանդ ես՝ իրանցիս, անհայտ կերպով ամրաստանված ու նախապես դատապարտվածս որևէ բողոքի իրավունք չունեմ...»<sup>6</sup>:

Առանձնակի ուշադրության է արժանի նաև Քարաղիի պատմվածքներում արժարժվող տարեց մեղքների հարկադրված վտարանդիության խնդիրը: Նմանատիպ պատմվածքներից է հեղինակի «Յրված հուշեր» պատմվածքների ժողովածուում զետեղված «Ժանն դար ասեման» («Տունը երկնքում») պատմվածքը, որտեղ հեղինակը անդրադառնում է Իրան-իրաքյան պատերազմի մղձավանջային տարիներին զավակների նսապաշտական որոնումների թելադրանքով օտարության մեջ հայտնված ծեր մոր հոգևոր ու ֆիզիկական վտարանդիության խնդրին:

Իրան-իրաքյան պատերազմի տարիներին բազում իրանցի տարեցների նման օտարության մեջ հայտնվելով՝ Մահին Բանուն դառնում է «բախտական գնչու», որին երբևէ վիճակված չէր նորից տեսնելու հարազատ տունը: Ինչպես ցանկացած իրանացի մայր, Մահին Բանուն նույնպես օտար իրականությանը չհարմարվելու իր կակիծն ու հայրենի օջախի կարոտը խեղդում էր հոգու մեջ՝ հարազատ զավակներին ցավ ու անհարմարավիտություն չբառնառելու մայրական ցանկությամբ:

Քարաղին պատմվածքում վարպետորեն է պատկերում ծեր մոր կեցպարը, նրա ներքին դրաման, հոգում կուտակված սերը, հայրենի հողի անհագ կարոտն ու մանկության տարիների վերտույղ, որոնք դարձել են գլխավոր հերոսուհու՝ Մահին Բանուի քափառական օրերի ուղեկիցներն ու սիրտփանցը: Այս մեծ աշխարհում իր ծերունական անկյունը երբևէ չունենալու ծեր մոր երազանքը այն երկնային ապաստանն էր, որտեղ կզաններ իր հավերժական հոգեկան անդորրը: Իր պարզունակ դիպաշարի մեջ «ապաստանը» ունի մի բարդ ճնշակառուցվածք: Այն մերկացնում է իրանական մշակութային նորմերի խճճված սարդուտայանը, որը կնջող վերածում է իր ցանկություններն և նախասիրություններն ի կատար ածելու մեջ հոգեպես և օրինապես անուռնակ էակի:

Նույն ցավալի թեման է շոշափում հեղինակի «Ամար քանու վա փեսարիայալ» («Տիկին Նուռը և յուր տղաները») խորագրով հանճարեղ պատմվածքը: Պատմվածքի մեջ Քարաղին ի հայտ է բերում իր տեղծագործական խառնվածքի բոլոր վառ նրանգները: Այս պատմության հիմքն ու առանցքը հեղինակի հուշերն են: Քեռերանի օդանավակայանում հավաքված ուղևորների մղձավանջային աճապարանքի մեջ հեղինակը հանդիպում է ծեր ու ինքնատիպ մի կնոջ՝ Նուր Մայրիկի հետ, որը Յազդեց մեկնում էր Եվրոպա հարազատ զավակներին տեսակցելու: Մեփական անունն անգամ զրեղ անկարող, անօգնական, փխրուն ու

պարզամիտ կինը երազում էր տեսնել իր անհնազանդ որդիներին և այն «կորուսյալ սառցի աշխարհը», որտեղ նրանց տասներկու տարի քարկեցիկ կյանք էին փնտրում: Սակայն հիվանդ մորը երբևէ վիճակված չէր մորից հանդիպելու սիրելի զավակներին: Անար Բանուն այդպես էլ մնում է անդեկ դեգերումների մեջ, մոլորվելով աշխարհի տարբեր ծայրերը հատող օդանավակայանների անժամոք սպասարահներում: Նրա համար հարազատ զավակների մոտ տանող ճանապարհը վերածվում է ճակատագրական վերջին համզրվանի:

«Անար Բանուն և յուր որդիները» պատմվածքում հատուկ ուշադրություն սևեռելով երիտասարդ զավակների և հարազատ մոր միջև երկարատև քաժանման իրողությանը, թարաղին ընդգծում է մեր օրերի արդիական խնդիրներից մեկի՝ մարդկային օտարման, խորթացումի՝ հոգևոր, հոգևրամական և քարոյական հիմքերը:

Ողորդություն, երգիծանք, դրամատիզմ. սեռ պատկերման այն երեք ճևերը, որոնցով իր հետեղափոխական շրջանի պատմվածքներում Գուլի թարաղին հյուսում է վտարանդիության դառապարտված իրանցի կնոջ անհատական կենսափորձն ու տատապանքը: Հայրենիքից հեռու, անորոշ ու անդեկ դեգերումների ճանապարհին թարաղիի քուրաքանչյուր հերոսուհի իր «ճոթ չիղիկական տան» պատերի ներքո կատուցում է երազների այն երկնային ապաստանը, որ հավերժ կապեր իր հուշերին ու հայրենի տան կարոտին ամուր զգված:

LILIT SAFRASTYAN  
(YSU)

**"BUILDING A MANSION IN THE SKY": THE PROBLEM OF  
EXILE  
IN THE PROSE OF GOLI TARAGGI**

Goli Taraggi is one of the renowned modern Iranian fiction writers. In the first collection of her short stories, "Man ham Che Guevara hastam", and a structured novel, "Khab-e Zemestani" published respectively in 1969 and 1973, were fairly popular and elicited favorable commentary from the critical establishment in Iran.

In the post-revolutionary fiction of Goli Taraggi the problems of immigration and exile became the most dominant issues. In some of Taraggi's new stories such as "Madam Gorg", "The Mansion in the Sky", "Anar Banu and Her Sons" author deals with the acculturation process and the heartbreak of uprooting and displacement. In above mentioned stories the longing for a



lost home turns into a nostalgic search for the past and homeland, and the sense of home is transformed into immigration and exile.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սոհրաբ Մեհլեքի, Կամալ Շավաղ, պարսկերենից թարգմանեց Է. Հախվերդյանը, Եր., 2000, էջ 93:
2. Խոսքը արդի իրանական արձակի մեծամեծ Փոպոզիրենը Է. Ֆասիի և Հուշանց Գուշերիի նեանդալիթյալան շրջանում թյս ընծայված «Մորաչա դար յոմա» («Մորաչան կոմալի մեջ») (1985) և «Ալեհնեայի դարաբո» («Ղոնապատ հայելիմեթ») (1992) վտարանդիության խնդիրները շոշախող հայտնի վեպերին:
3. Faridoun Farrokhi and M.R. Ghanoonparvar, Portraits in exile in the fiction of Esmail Fassihi and Goli, Taraghi, in Asghar Fathi, Iranian Refugees and Exiles Since Khomceni, Costa Mesa, CA: Mazda, p. 293.
4. Գոլի Ֆարադի, Խաթիրաթի վարարամդի: Ճագմուչի դես, յալի վանդոմ, Էմթեչարաթի Նիլուխար, Ֆեհրան, 2003, էջ 140-41; ՄՊուրաթի ճամվան: Իրանի ժամանակակնից պատմվածքը, Եր., 1996, էջ 165-76:
5. Նույն տնդոմ:
6. Նույն տնդոմ, էջ 143:

## ՄԻՄՈՆՅԱՆ ՄԱՐԹԱ (ԵՊՀ)

### ԱՀՄԱԴ ՇԱՄՆՈՒԻ ՊՈԵԶԻՆ

Նիմա Յուչիցից հետո Ահմադ Շամլուն (1925-2000) ժամանակակից պարսից պոեզիայի ամենաարգասավոր և ամենաակնառու ներկայացուցիչն է, որը նշանակալից ազդեցություն է ունեցել 20-րդ դարի Իրանի քանաստեղծական մտածելակերպի վրա:

Շամլուն «Ալեխի Մոքե» (Ա. Ատալոտ) գրական անունը գործածում էր մինչև 1953թ.-ը, դրանից հետո նա հասնոյս էր գալիս «Ալեխի Բամդադ» (Ա. Արշալոյս) գրական անունով:

Նա Նիմա Յուչիցի գաղափարների աչակերտն ու խանդավառ հետևորդն էր: Շամլուն միաժամանակ գրում էր նաև ավանդական պոեզիայի հունով:

Ա. Շամլուն պարսից գրականության մեջ քանաստեղծական կադապրի մի տեսակ է շրջանառության մեջ դրել և կատարելության հասցրել որը կոչվում է «սայիտակ քանաստեղծություն»: Այն լուսնի արեգի շափ և քանաստեղծական չափերից ոչ մեկի հիման վրա չի կառուցվում, քնն ներքին ռիթմ ունի:

Իրանի հասարակական կյանքի էական իրադարձությունները գեղարվեստական անդրադարձ են գտել Շամլուի ժամանակահատված քանաստեղծություններում: Պատահական չէ, որ իրանցի գրականագետ դոկտոր Ռեզա Բարահենին գրում է. «Նրա պոեզիան մեջ (Իրանի-Ա.Մ.) հասարակության կենսագրությունն է և ինչն իր՝ քանաստեղծի կենսագրությունն է, իր բոլոր անկումներով ու վերելքներով, սերերով ու առելուքներով, սկիզբներով ու ավարտներով, իր նորոգումների ծիլերով»<sup>1</sup>: Ոչնչոր ծանոթ են արդի պարսից պոեզիայի զարգացման պատմությանը, հավանաբար կհամաձայնեն Շամլու-քանաստեղծի, մտավորականի փաստակի այս գնահատականին: Ավելին, նրա ստեղծագործությունները կարծես ժամանակի զգայաչափը լինեն և հստակ պատկերացում են տալիս Իրանի տարբեր խավերի տրամադրությունների մասին, արտահայտում են ժողովրդի ապագայի վերաբերյալ հայրենասեր քանաստեղծի պայծառ ակնկալները:

Շամլուի «Ցարն օդ» (Հավայե քազե) քանաստեղծական ժողովածուն, որը լույս տեսավ 1957-ին, քանաստեղծի կյանքում շրջադարձային կետ էր: Համեմատելով այն նրա նրիտասարդական շրջանի գործերի հետ հստակ երևում է, թե որքան խորը զարգացում է ապրել Շամլու արվեստագետի աշխարհայացքը և փարպետությունը կարճ ժամանակահատվածում: Այս ժողովածուն ակնհայտորեն կրում է Նիմայի ազդեցությունը, ինչը պետք է ընդունում էր<sup>2</sup>:

Շամլուն հատուկ պատկերացում ուներ կյանքի և հասարակության մասին: Նրա քանաստեղծություններում կենտրոնական տեղը զբաղեցնում են ժողովուրդն ու հասարակությունը, նրանց վտերն ու տառապամբը, անկա անարդարություններն ու թոմությունները: Նա երագում էր մի հասարակության մասին, որտեղ տիրում է սեր, խաղաղություն և հավասարություն, որտեղ «ամեն մարդ ամեն մարդու համար եղբայր է...»<sup>1</sup>: Մարդկության համար այդպիսի իդեալական պետություն տեղծելու գաղափարը Շամլուն տեսավ սոցիալիզմի մեջ՝ բառերով և բոքի վրա: Եվ դա նրան դրոշեց Ֆրանսայու Իրանի կոմունիստական «Ցուղե» կուսակցությանը: Սակայն քանաստեղծմբ ընդմիջտ թողեց այդ կուսակցությունը, երբ հայտնի դարձավ, որ «Ցուղե»-ի ղեկավարների շարքերում դավաճաններ են հայտնվել: Քանի որ քաղաքական իրավիճակն այնպիսին էր, որ ղեմնկրատական հասարակություն ունենալու քանաստեղծի երագանցը ճնշվում էր ավելի ու ավելի, ապա ստիպված էր այդ երագանցներն արտահայտել ոչ այդ կերպ, քան աչքարանքերն: «Փերիները»<sup>2</sup> (Փարիս) գողտրիկ պոեմում, որը ժողովրդական ու մատչելի արտահայտչածնի մի հիանալի նմուշ է, խարտսիկորեմ պարզ ու մանկական պատմությունը կարծես մի անոթ լիմի, որը պարունակում է շատ հեռուն գնացող աչքարանքություն: Այստեղ, լույսն ու խավարը, տերն ու ստրուկը, փերիներն ու մարդիկ լիակատար հակադրություններ են, ինչպես լեզենդն ու իրականությունը: Ծամորանալով Իրանի ժամանակակից պատմությանը՝ ըմթերցողը պոեմում տեսնում է մուտալուտ հեղափոխության կամիխատեսում:

1953-ի քաղաքական հեղաշրջումից հետո երկրում հալածանքներ սկսվեցին ղեմնկրատական շարժման մասնակիցների նկատմամբ: Ի բիվս մյուս քանաստեղծական ժողովածուների, որոնց բնորոշ գիծը պեսսիմիզմն էր, Շամլուի պոեզիայում ևս դրսևորվեց հոտտեսական տրամադրություն<sup>3</sup>: Նրա համար կար երկու պատճառ: Նախ, մեծաթիվ մտավորականներ ցնցված էին Մոհամմադ Ռեզա Փահլավի շահի իշխանության գլուխ վերադառնալու հանդեպ ժողովրդի հնազանդ վերաբերմունքից: Եվ երկրորդ պատճառը նրա հուսաբեկությունն էր «Ցուղե»-ի ղեկավարների դավաճանության և ստոր փախուստի հետևանքով, որը Շամլուն համեմատում էր «թիկունքին հասցված դաշույնի հարվածի հետ»<sup>4</sup>:

Պարտությունից առաջացած դառնությունը, վիատությունն ու վիշտը հասան այն աստիճանին, որ Շամլուն թիկունք դարձրեց այն մարդկանց, որոնք մի ժամանակ նրա «ամենամեծ սերն են եղել»<sup>5</sup>: Աիդայի սերը փոխարինեց այն ժողովրդին ու հասարակությանը, որի մուտ նա ընդունելություն չգտավ: Պոետի կյանքի ամենավառ պահերին այդ սերն օգնեց, որ հուսահատության ու ծարավի ամենամեծ անապատներում մի շնն օսգիսի հասնի և նրա մեջ կրկին ապրելու փափագ առաջացնի:

Շամլուի կյանքում մի ուրույն ժամանակաշրջան են կազմում «Աիդան հայելում» (1964) և «Աիդա. մառը, դաշույնը և հիշողությունը» (1965)

ժողովածուները, որտեղ միջավայրի ստորոջումն ու անմաքրությունը, պղծությունն ու աշխարհակոթությունը խառնված են սիրո մաքրության և լույսի, վեհության ու ազնվության հետ և բացահայտում են սոցիալական դատը իրողությունները: Եվ այդ երկակիությունը հատուկ խորություն և շքեղություն է հաղորդել բանաստեղծություններին: Քիչ բանաստեղծություններում է, որ Շամլուն չի ուրվագծել միջավայրի խավարը, այլ խորասուզված է միայն սիրո մեջ: Լույնիսկ իր սիրելիի համբույրը, նրան հիշեցնում է այն համբույրների մասին, որոնք ընկերներն «իրենց արմակարմիր վիրավոր շուրթերով հողին դրեցին»<sup>6</sup>:

«Շամլուի սիրային բանաստեղծությունները համարվում են ամենագեղեցիկը պարսից լեզվի և գրականության մեջ: Դրանք նման են գարնանային երկնքի, մեկ երակարեր ամպերը սիրում են որոտալ, խավար է ու տրտմություն, անձրևում է ու անձրևում, մեկ էլ մի վճիտ ու կապույտ երկինք է բացվում՝ ոսկե արևով պայծառացած»<sup>7</sup>:

Սիրո հետ մեկտեղ Շամլուի բանաստեղծություններում կան մահվան հիշատակություններ: Հատակ է, որ պոետը համակված է նման գաղափարներով: «Այն մարդու երզը, որ գնաց, և նրա երզը, որ տեղում մնաց»<sup>8</sup> բանաստեղծության մեջ, գտնվելով մահի հետ դեմ հանդիման, Շամլուն հաջողվել է մեծ վարպետությամբ «մահ» հասկացողությանը նյութականություն հաղորդել և մարդու մտավոր ընկալմանը շոշափելի ու զգալի դարձնել:

Շամլուի համար մի հատուկ հմայք ուներ Քրիստոսի կյանքը, որը նա նույնացնում էր այն հազարավոր անանուն հերոսների հետ, որոնց դավաճանեցին և կտոսանքների ենթարկեցին նրանց ազատ հոգիների և մարդկության հանդեպ ունեցած սիրո պատճառով: «Հուշատախտակում»<sup>9</sup> պոետը Քրիստոսին նույնացնում է այն բանաստեղծի հետ, որի լուրին ուշադրություն չեն դարձնում: Իսկ 1966-ին լույս տեսած «Փյունիկն անձրևի տակ» (Լողնուս դար քարան) ժողովածուի «Լազոփրեցու մահը»<sup>10</sup> բանաստեղծության մեջ նա Հիսուսին հետևելով դեպի Երախա խաչելության բլուրը, Հիսուսի ծառայեղ մենակոթյունը ներկայացնում է ռպես բոլոր «մերթալաված» մտավորականների մենակոթյան խորհրդանիշ, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին մարդկանց համար: Այն մարդիկ, ում Հիսուսը եկել էր փրկելու, գտնում էին՝ «Գանահարն՝ Երանան» կամ «Փշի պսակ դրն՝ Երա գլխին»: Հիսուսի կերպարին, որին ներկայացնում է որպես կարեկցանքի, մաքրության և անարատության մաքրմացում, Շամլուն հակադրում է «Լազարոսի»<sup>11</sup> կերպարը՝ որպես կարծրաստության ու ավերախտության մաքրմացում:

«Լազոփրեցու մահը» վերջին և ամենաեղաշալի բանաստեղծությունն է, որտեղ Շամլուն կերտել է Հիսուսի խորհրդանիշը:

MARTA SIMONYAN  
(YSU)

THE POETRY OF AHMAD SHAMLU

Ahmad Shamlu is the most prolific and popular poet in Persian poetry after Nima Yushij (1895-1960). He has had a significant influence on the poetical mentality of the 20-th century's Iran.

Essential events of the life of Iranian society found their artistic reflection in his works of genius. It is not without reason that Shamlu's poetry is compared with a mirror, which distinctly helps us to understand about moods of different classes of Iranian society and express patriot poet's bright hopes and expectations for his people and motherland.

Shamlu used and brought to perfection a type of a poetic form in Persian poetry which is named "white poem". There are no metres in these "white poems", though they have some internal rhythm.

Being unable to express his dreams for democratic society directly, he always used allegories. Even in his amorous poems, which are considered as the most beautiful ones in Persian poetry, the love is extolled in the context of life and society. In the moments of his great despair he also thought about death. And he could very successfully attach materiality to the concept of death and make it perceptible for man's mental apprehension.

The character of Christ had a special appeal for Shamlu, which he identified with those nameless heroes, who were betrayed and tortured because of their free spirits and having love towards mankind.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անգա Բարսեղյանի, Թալա դար մա, Թեհրան 1980, էջ 316:
2. «...ին Հափայի բազմ-ույ, որն հրատարակած բանաստեղծությունների նրբորդ կամ չորրորդ մտրվածում էր, բանաստեղծություններից շատերի լեզուն Նիմայի լեզուն է, տեսանկյունը Նիմայի տեսանկյունն է, բաները Նիմայինն են, միայն միտքն է ինձ...»-Nacmi Schall, Ahmad Shamlu: A poet in exile (Internet)
3. Սիմադ Եամլու, Հափայի բազմ, Օֆորդ տուլան, Թեհրան, 2000, էջ 179:
4. Սիմադ Եամլու, Հափայի բազմ, Փարիս, էջ 167:
5. Кляшторина В.Б., Современная персидская поэзия, Очерки, Москва 1952, стр. 16-17.
6. Հափայի բազմ, Արարդի մարտի քն բաննա քն սան մի սալադ, էջ 316:
7. Թալի Գուլամադարյան, Աաֆար դար մնն, Թեհրան, 2003, էջ 122:

8. Ամնադ Շամլու, Աիդա. դերախոր խանգարո խաթիբ, Շարանի (Դարիդա լնսան), Քեհրան 1999, էջ 26:
9. Քաղի Փուրնամդադյան, Սախար դար մեհ, Քեհրան 2003, էջ 131, 132:
10. Ամնադ Շամլու, Աիդա. դերախոր խանգարո խաթիբ, Սերուդի ան մադրի քե շախր վա սոդուդի ան քասի քե քե զախի խոդ մանդ, Քեհրան, 1999, էջ 63:
11. Ամնադ Շամլու, Մաջմուե՛ն ասար, Դավթարի երոմ, Շե՛րիա, Լոտ, Քեհրան, 2003, էջ 582:
12. Ամնադ Շամլու, Մաջմուե՛ն ասար, Շե՛րիա, Դոդմուս դար քարան, Սարգե Նասերի, էջ 613:
13. Շամլում արտոնդ հեռացել է Դազարոսի աստվածաշնչյան կերպարից, քանի որ Դազարոսը և՛ միմյալ իր մանչ, և՛ Քրիստոսի պարզամե հարությունից հետո, Քրիստոսի անմեղելի հետևորդներից էր: Տես՝ Ավետարան ըստ Հովհաննիսի, գլ. 11:

## ՓԱՇԱՅԱՆ ԱՆԻ (ԳԻ)

### ԱՐԵՎԵԼՅԻՆ ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՍՏԵՐՍԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արևելյան նկարագրով քաղմաքիվ հերոսներ կան Այվազյանի ստեղծագործություններում: Դա առաջին հերթին թիֆլիսաբնակն է՝ վառ արտահայտված այդ կերպարն իր արտաքին և ներքին հատկանիշներով («Արևելյան դուքան», «Կովկասյան էսպերանտո», «Մուխամբազ դուդուկով», «Տաղ ի վերայ Հովնաբանյան գերդաստանին» և այլն): «Կինտո Գործուն սիրեց քաղդու Օլային ու ամեն գիշեր հավաքում էր քառասուն դուդուկյի ու Հավաքարում երգ երգում, Սալար-Նովա երգում, Բեսիկի երգում, որ քաղդու գեղեցկուհու դեմքին մի բեթև ժպետ երևա, մի քիչ մայի իր կողմը բախժուտ այլերով...»: Կամ. «Հենց առաջին օրը անկողնում Ջարուան վախեցավ հաճույքի չափից, ասես Միրանի հետ մեկտեղ անկողին էին մտել Թիֆլիսի վտղոցներում քափված գաղթականները՝ իրենց խոնավ այլերով, պատառուտած հագուստով»<sup>2</sup>:

Այվազյանը սիրով է հայացք գցում արևելյան, պեղում նրա ներքը, դիտում և զննում նրա վարքը, ինչպես ինքն է ասում. «Հայացքս ուղղում եմ դեպի Արևելք»<sup>3</sup>: Ահա Օմար Խայամի նկարագիրը «Պարսկական մանրանկար» պատմվածքում. «Ոգեխոս և գինեմու, փռչի ու հող Օմար Խայամ, ըս մեջ են հունցված Եան Արասի կեռ դաշույնն ու Պարսկաստանի գեղեցկահորաչ դեցուհիների պորտը, մարմնագույն աղյուծն ու ճոխրագույն ավանակը, սափորն ու սազը, կարտուն ու վախը...»<sup>4</sup>:

Քաղմաքիվ կերպարների մեջ առանձնանում է Ջիրոն՝ «Արևելյան դուքանի» պանդոկապետն իր արևելյան հյուրասիրությանը ու միատուկացով. «Կարմրաբուլ ու բարեհամբուլք, կակղամիս ու քնկոտ դուքանդարին էլ Ջիրոն էին անվանում: Եվ ուրիշ բան պետք չէր ասիացի ու եվրոպացի թիֆլիսեցուն: Խինկալը՝ համով, գինին՝ անուշ, քաղցր խաքը՝ լիքքերան, Ջիրոն՝ արտաբաց... Պետք լիներ՝ միսիս էր տալիս, պետք լիներ՝ ծրի, տեղը գար՝ մի բան էլ վրան ինքը կավելացներ...»<sup>5</sup>:

Մի քանի ստեղծագործություններում նկատվում է հատկանշական շատ կարևոր ևս մի գիծ՝ գեղեցկության նկատմամբ սերը և նրա պահպանումը հավերժության համար: Դա հստակ զգացվում է «Տաղ ի վերայ Հովնաբանյան գերդաստանին» պատմվածքում: Ապրում են Թիֆլիսի ջրմաղ գեղեցկուհիները, և նրանց գեղեցկությանը ասքում է քաղաքը: Երբ կնճռուտվում է գեղեցկուհիներից մեկը, տխրում ու հուզվում է քաղաքը, կսկիծ են ապրում քողերը:

Հստակ է նաև Այվազյանի արևելյան հերոսի սերը հարազատ քաղաքի նկատմամբ: Դա դառնում է այն կենտրոն-ամբողջությունը, որտեղ

կարևորվում են անգամ քաղաքի բույրը, շրջապատի իրերը, մեղեդիները, մարդկանց հայացքներն ու ինքնատիպ հարաբերությունները: «Թույլերը և բույլերը» պատմվածքում հերոսը հեռանում է հարազատ քաղաքից, ու կարտոդ խնդրում է նրան: Այս կերպարն իր մեջ է կուտակում շատ հերոսանքի հավաքական կերպարները («Տաշուխա», «Աղի կամար», «Մուրք ճշմարտություն» և այլն): «Նա բժրածորեն մեղմիկ ծպտաց ինձ և առավ իր մտտ ու փափուկ գրկի մեջ... Բայց ես գիտեի, որ նա փարզել է ոչ թե ինձ, այլ թիֆլիսեացուն, իր մանկության երկար կյանքի մի երանգին...»<sup>4</sup>, կամ. «Անդամի շուրջը տարրեր մարդիկ էին. մեկը փինաչի էր, Յակի-մանկայի մի փորթիկ խցիկում կռչիկ նորոգող, մյուսը բծիչկ էր... Փինաչին այրի պղչով ինձ էր նայում և ուզում էր որոշել, թե Թիֆլիսի որ մասին է իմ կերպարանը հարմարեցնելը»<sup>5</sup>:

Հետաքրքիր դրսևորում ունեն մտրացկանները «Սայաթ-Նովա» էստեում. «Թուրքի մեյդանը հայկական Հավաքարքի հետ կապում էր էշի կամուրջը: էշի կամուրջի վրա միշտ իրենց տեղերն ունեին երկու մտրացկան. մեկը ես գլխին էր նստում, մյուսը՝ եմ: Երրոդն էլ կար. շարժուն մտրացկանն էր... Կամուրջի ես գլխին մի անդամալույծ կարմրաչիկ պարսիկ էր նստում, եմ գլխին՝ կույր հայ կին, շարժունն էլ հաբարտության շատությունից խնցրը պակասած վրացի էր: Մեյդանից Հավաքար գնալու համար Սայաթ-Նովան ամեն Ատոծու օր անցնում էր էշի կամուրջով ու երեք մտրացկանի միջով»<sup>6</sup>:

Թարի, կրակոտ, նվիրված ու միամիտ են Այվազյանի արևելցի հերոսները, երբեմն քաղո, քայց այդ բուրդի մեջ ինքնատիպ առանձնացում ունի թիֆլիսյան նկարագրով տիպը՝ 'Իցուց' «նու էս մեր թիֆլիսեցի տականը Գրպոն պատվում էր Օրթանալայի քաղերի շրջակայքում և նայում էր ծեծված շան մման, հոտոտում, մերս քաշում բուրձումըները, աղմուկը, շուկները, շնչառությունը...»<sup>7</sup>:

Գիշտ է նկատել գրականագետ Ա. Եղիազարյանը, որ Այվազյանը «թիֆլիսյան շարքը ներկայացնում է չափազանց գունազեղ կենցաղային պատկերներով, և այդ սրված կուլտիտայնությունը հուշում է, որ դեպքերի եծտևում կա ինչ-որ ավելի մեծ, ավելի կարևոր բան...»<sup>8</sup>:

Արևելյն իր կուլտիտով ու տեսակով խոր ազդեցություն է բողել Արևմուտքի վրա: Եվ հակառակը, արևելյան մշակույթը ևս ազդել է այլ մշակույթներից: Այս երևույթը պարզորոշ երևում է նաև Այվազյանի մի քանի պատմվածքներում: «Թիֆլիսը ուրախ քաղաք էր... Չինացիները բակում խոկումներ էին ցույց տալիս՝ կրակ էին ուտում, իտալացիները երգում էին «երկվանտո», ժամողիման և կիբատ նվագում... Բուսպացիները ու չինացիները կամաց-կամաց կորան կամ դարձան թիֆլիսեցի, ով գիտի, ու կրակ էին ուտում ու մոնղոլիմա նվագում ծայերը, վրացիները, ռուսները...»<sup>9</sup>:

Արևելցի կինը ևս՝ զուտա ու չափավոր, զերծ չէ եվրոպական կնոջ ազդեցությունից: «Մուրք ճշմարտություն» պատմվածքում այսպես է



պատկերված. «Յիջիսեցիները այդ խորհրդավոր գեղեցկուհիներին դուստմ, իրենց կողքին, քացեիքաց դեռ չէին զգացել: Դեռ չէին համեմատվել թաքունն ու ընդունելին, դեռ չէր հայտնաբերվել անցանկալի կարգինն ու ցանկալի անոթալին: Յիջիսի համար մի նոր հայացք՝ քաղցր ու խենթ, ամենակարող ու երկչուտ, խելոք ու խենթ, խորամանկ ու հասարակ, կրակոտ ու մրսած: Յիջիսեցի տիկիները ու օրիորդները պատուհաններն էին շտապ փակում, ու մի քանիսը միայն վարազուրի արանքներից դիտում էին այդ ահավոր երթը: Ու նույնիսկ նրանց մեջ առաջանում էր մի անհասկանալի քան...»<sup>12</sup>.

Գրողը քաջահայտ սիրում է Արևելքը: Դա զգացվում է նրա ինքնատիպ արձակում: Երև ավելացնենք, նաև, որ փարպիստերն է օգտվում Յիջիսի քաղցրտից, քերականական ձևերից ու դարձվածքներից, գործածում է արևելցուն բնորոշ քաղմաթիվ հատուկ անուններ, ապա պարզ կդառնա այն նորույթը, որը հայ արձակ բերեց Ադասի Այվազյանը. «Պարսկաստանի արևտակի քամին ացելում է իմ պատշգամբը... Մի բոտ դեղմավուն հող... Աղավնու երկու ձու... Մի կարմիր վարդ... Արևելքի քամին այցելում է իմ պատշգամբը...»<sup>13</sup>: Այսպես է ավարտվում նրա «Պարսկական մանրանկար» պատմվածքը:

ANI PASHAYAN

(II.)

## THE EASTERNER IN THE WRITINGS OF AGHASI AYVAZYAN

The paper deals with study of Easterner - as a type of man in the works of prominent Armenian writer Aghasi Ayvazyan. There are many heroes with eastern mentality, traditions and appearance in his works. It is first of all the inhabitant of Tiflis. The writer loves and appreciates the East.

The research is based on the following stories: "Arevelyan Dukan", "Tashukha", "Tuyere ev tuyere", "Tagh iveray Hovnatanyan Gerdastanin", "Surb chshmartutyun", "Parskakan Manrankar" etc.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այվազյան Ա., Ընտից երկեր, Եր., 1987, էջ 321:
2. Նույն տեղում, էջ 329:
3. Այվազյան Ա., Տոկի, Եր., 2003, էջ 82:

4. Նույն տեղում:
5. Այվազյան Ա., Թղթի ամիսը, եր., 1989, էջ 48:
6. Նույն տեղում, էջ 39:
7. Նույն տեղում, էջ 40:
8. Այվազյան Ա., Problema, եր., 1995, էջ 7:
9. Այվազյան Ա., Ընտիք երկեր, եր., 1987, էջ 362:
10. Եղիազարյան Ա., Գեղարվեստական պատում, եր., 1986, էջ 187:
11. Այվազյան Ա., Ընտիր երկեր, եր., 1987, էջ 359:
12. Այվազյան Ա., Նույն տեղում, էջ 361:
13. Այվազյան Ա., Տոխի, նշվ. ստեղծ., 2003, էջ 82:

ՀԱՅԿ ԳՆԱԿԱՐԱՆ ԱԿՏ. ԳՐԱԳ.



220092513